Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
(ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

Պատմության և Քաղաքագիտության ամբիոն

Վ.Հ. Վիրաբյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ՃԱՐՏԱՐԱԳԵՏ
2013

ՀՏԴ 941(479.25) (07)
ԳՄԴ 63.3(2Հ) g7
Վ 680

Հրատարակվում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի 27.12.2012թ. գիտական խորհրդի նիստում հաստատված 2013թ. հրատարակչական պլանի համաձայն

Գրախոսներ՝ պ. գ. դ, պրոֆեսոր՝ Հ. Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

պ. գ. դ, պրոֆեսոր՝ Վ. Գ. ԹՈՒՆՅԱՆ

Վիրաբյան Վ.Հ.

Վ 680 ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: Ուսումնական ձեռնարկ/ Վ.Հ. Վիրաբյան, ՀՊՃՀ. - Եր., Ճարտարագետ, 2013. -160 էջ:

Ուսումնական ձեռնարկում վերհանվել են Հայոց պատմության դասընթացի կարևորագույն հիմնահարցերը: Ուսումնական ձեռնարկը նախատեսված է ուսանողության և պրոֆեսորա-դասախոսական կազմի, պատմաբանների համար:

ՀՏԴ 941(479.25) (07)
ԳՄԴ 63.3(2Հ) g7

ISBN 978-9939-55-916-2

© ՃԱՐՏԱՐԱԳԵՏ 2013
© Վիրաբյան Վ.Հ. 2013

ԱՌԱՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը նրա անցած ուղու խտացված հիշողությունն է: Առանց այդ հիշողության ժողովուրդը դատապարտված է ուծացման, հոգևոր և ֆիզիկական ինքնաոչնչացման: Հարազատ ժողովրդի պատմության իմացությունը և դրանից համապատասխան լիարժեք դասեր քաղելը հզոր ազդակ է հատկապես այն ժողովրդի համար, որը բռնել է ազգային-պետական անկախության վերականգնման ու ամրապնդման դժվարին ուղին: Հայոց պատմությունը արդի հայ հասարակության համակողմանի և լիարժեք առողջացման հիմնախնդրում ունի բարոյադաստիարակչական և բարոյակրթական կարևոր դեր: Այն ունի ազգային անփոխարինելի և անանց արժեք: Հայոց պատմիչների վարքագրությունից և ստեղծած պատմաժամանակագրությունից, հայրենագրությունից լիովին ակնհայտ է դառնում, որ առանց սեփական հայրենիքի պատմության համակողմանի և լիարժեք իմացության, հայ ժողովուրդը դատապարտված է հայտնվելու մտավոր-հոգևոր խավարի գրկում, չի կարողանա գտնել իր արժանի տեղը և դիրքը ազգերի համաշխարհային ընտանիքում, դիմագրավել ապագա դարերի մարտահրավերներին և բազմաբնույթ, բազմաշերտ գլոբալացման գործընթացներին: Պատմահայր **Մովսես Խորենացին** իր ժամանակին խիստ կարևորել է Հայոց պատմության տեղն ու դերը՝ ելնելով ազգային-պետական քաղաքականության ընբռնման մեկնակետից, սեփական Հայրենիքի պատմությունը գրելն ու վերարտադրելը համարելով մարտական-քաղաքացիական մեծ սխրանք, իսկ այն հովանավորող պետական այրերին համարել է լուսավորյալ պետական գործիչներ, գտնելով, որ նրանք արժանի են փառաբանման ու ներբողների, քանզի մտածել են **«իրենց ժամանակները գրով և պատմությամբ հաստատել»**: Մովսես Խորենացին մեծ տեղ էր հատկացնում Հայոց պատմությանը՝ ելնելով այն կարևոր հանգամանքից, որ այն, ըստ էության, տալիս է բոլոր կարևոր հիմնահարցերի պարզաբանումը, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս, ինչ հիշարժան գործեր են կատարել մեր պատմական նախնիները: Նրա «Հայոց պատմությունը» հայոց պատմագրության գլուխգործոցն է, հայոց ազգային հիշողության՝ հայ ազգի տոհմաբանության առաջին և կարևորագույն համակարգված շարադրանքը, որն սկսվում է հայերի ծագումնաբանությունից և ավարտվում V դարի կեսերին՝ Մ. Խորենացու ապրած ժամանակով: Այն Հայոց ազգային հիշողության առաջին դասականացված և խստորեն համակարգված պատմաժամանակագրությունն է, որի հիմքում ընկած են միանգամայն հավաստի և արժանահիշատակ աղ-

բյուրներ: Պատմահայրը ազգային պատմության (ասել է թե՝ հիշողության) հիմքում դրել է սեփական ազգային մեծագույն «Ես»-ը, հանդես գալով հայերի՝ որպես ուրույն էթնիկական ընդհանրության ինքնատիպության հիմնավորմամբ: Պատմաքաղաքական առումով չափազանց հայտնի այդ աշխատանքի գլխավոր արժանիքներից մեկն էլ հենց ազգային հիշողության հիմքում գաղափարախոսական նպատակաուղղվածության տեղադրումն է՝ այն հագեցնելով ազգային արժեքների ուրույն համակարգով: Մեսրոպյան կամ Ոսկեդարյան հայերենով շաղախված իր «Հայոց պատմության» հիմքում Խորենացին որպես հիմնարար արժեք դրել է ազգային ավանդական բարոյականության ոգին, որը ներկայացված է հռչակավոր «Ողբի» միջոցով, ինչը այդ ժամանակաշրջանի հայ հասարակության բոլոր խավերի անխնա ձաղկման և խիստ արդարացի քննադատության դասական օրինակ է՝ նպատակադրում ունենալով կրթել և դաստիարակել հետագա սերունդներին ազգային վեհ արժեքների համաբույլով՝ հիմնաքարում դնելով Հայոց Ազգային Հիշողությունը՝ ասել է թե Հայոց Պատմությունը:

Հայոց պատմության սույն ձեռնարկը նախատեսված է ոչ հումանիտար բուհերի համար: Կառուցվածքային առումով ամբողջ դասընթացը բաժանված է առանձին թեմաների: Յուրաքանչյուր թեմա ստորաբաժանված է ենթահարցերի, որոնք ուսանողը հանձնարարվող գրականության հիման վրա պետք է յուրացնի և պատասխանի գործնական պարապմունքների ժամանակ: Այստեղ ուսումնամեթոդական մեծ օժանդակություն կարող է ցույց տալ ենթահարցերի շուրջ կատարված գիտամեթոդական աշխատանքը, որը Հայոց պատմության համակարգված շարադրանքի ձև ունի: Ուսումնական ձեռնարկի նպատակն է ուսանողին կողմնորոշել տվյալ թեման կամ ենթահարցը ավելի դյուրին և խորությամբ յուրացնելու համար: Այն օգնում է ուսանողին տարբերակել պատմական նյութի կարևորն ու երկրորդականը և նրա ուշադրությունը հրավիրել Հայոց պատմության հանգուցային հարցերի վրա: Այդ նպատակով ուսումնական ձեռնարկում բերված են փաստական նյութեր, կատարված են ամփոփումներ ու եզրահանգումներ: Առանձին դեպքերում թեմայից բխող հարցերի քննարկումը և պարզաբանումը, անշուշտ, կարող է նպաստել տեսական և գործնական պարապմունքների առավել բանավիճային անցկացմանը:

Ուսումնական ձեռնարկը ուղեցույց կարող է հանդիսանալ «Հայոց պատմության» համընդգրկուն և հնարավորինս ամբողջական դասընթացի կամ դասախոսությունների կազմակերպման համար:

<u>ԹԵՄԱ 1</u>. ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

1. *Պատմական Հայաստանի աշխարհաքաղաքական նկարագիրը՝ դիրքը, տարածքը, ռելիեֆը, սահմանները, ճանապարհները, հարակից երկրները, կլիմայական պայմանները, բնական հարստությունները: Պատմաաշխարհագրական գործոնի ազդեցությունը հայ ժողովրդի ճակատագրի ընթացքի վրա*
2. *Հայ ժողովրդի կազմավորումը: Ցեղային միությունները, առաջին պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհում*
3. *Հին և միջնադարյան Հայաստանի պետականությունների և թագավորական դինաստիաների ընդհանուր բնութագիրը*
4. *Քրիստոնեության տարածումը Հայաստանում: Քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչումը և պատմաղաքական հետևանքները: Հայոց գրերի գյուտը և նրա քաղաքական ու մշակութային նշանակությունը*
5. *Հայ ազատագրական շարժման առաջին քայլերը 15-17-րդ դարի 1-ին կեսերին: Ազատագրական պայքարի երեք ուժերը (օջախները)*
6. *Հայաստանի ազատագրության հարցը և Իսրայել Օրին*
7. *Ազատագրական պայքարը Արցախում և Սյունիքում (1722-1730 թթ.)*
8. *Հայ ազատագրական շարժման հնդկահայ գաղթօջախը: Հովսեփ Էմինի գործունեությունը*
9. *Հայաստանի ազատագրության ծրագրերը 18-րդ դարի երկրորդ կեսին*

1. Այս ենթաթեմայում անհրաժեշտ է բացահայտել առհասարակ պատմաշխարհագրական գործոնի դերը ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի կյանքում, որտեղ որոշակի դեր է հատկացվում լեռնաշխարհագրական պայմաններին, կլիմայական, բնական-հանքային հարստություններին, և դրանց կարևորությունը աշխարհաքաղաքական խնդիրների լուծման գործում: Պետք է ցույց տալ, որ Հայաստանի կլիման որոշակիորեն ազդել է ժողովրդի բնավորության, նկարագրի և ազգային խառնվածքի առանձին հատկանիշների վրա, իսկ բուսական, կենդանական աշխարհը, օգտակար հանածոները՝ մարդկանց զբաղմունքի, նրանց կողմից էներգետիկ խնդիրների լուծման վրա և այլն, դրա հետ մեկտեղ ցույց տալ ջրային ռեսուրսներով հագեցվածության կարևորությունը հայ ժողովրդի համար: Միաժամանակ անհրաժեշտ է պարզաբանել որոշ ջրային կարևոր բնական ավազանների (Սևանա լիճ՝ Գեղարքունի կամ Գեղամա ծով), Վանա լիճ (Բզնունյաց ծով), Ուրմիա լիճ (Կապուտան ծով) ժողովրդատնտեսական էական նշանակությունը հայ ժողովրդի համար ծայրահեղ լարված, ծանր պահերին (սով, պատերազմներ և տարբեր կատակլիզմներ, մասնավորապես իբրև օրինակ բերել

Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.) և Արցախյան պատերազմի ժամանակ (1992-1994 թթ.) Սևանա լճի ձկնային և ջրային ռեսուրսների խաղացած կարևոր դերը ազգապահպանման խնդիրների իրականացման գործում): Բացի այդ, պարզաբանել նաև այլևայլ ջրային ռեսուրսների՝ բազմաթիվ գետերի նշանակությունը ոռոգման և այլ նպատակներով: Ի վերջո, գալ հետևության, որ հենց այդ կարևոր հանգամանքներն էլ պայմանավորեցին Հայկական լեռնաշխարհի՝ մարդկության քաղաքակրթական նախաօրրան, կենտրոնատեղի և հայ ժողովրդի բնօրրան լինելը: Աշխարհագրական գործոնի դերը բացահայտել համակողմանիորեն՝ ցույց տալով նրա երկակի դերը ժողովուրդների կյանքում: Մի կողմից՝ պետք է բացահայտել, որ նրա աշխարհագրական միջավայրը պատնեշող դեր է կատարել օտար նվաճողների դեմ, իսկ մյուս կողմից՝ հարուցել է զգալի խոչընդոտներ հայկական միասնական ու ամրակուռ պետականության ստեղծման ճանապարհին: Այդ ամենը էապես ազդել է նրա հոգևոր կերպարի, բնավորության կերտվածքի վրա: Աշխարհագրական դիրքը կապող հանգույցի դեր է կատարել: Պատմաաշխարհագրական գործոնի կարևորությունը երևում է նրանից, որ գտնվելով պատմության քառուղիներում, հայ ժողովուրդը ենթարկվել է դրա թե՛ նպաստավոր և թե՛ բացասական, հարափոփոխ ազդեցություններին: Ակնհայտ է, որ մի կողմից նշված հանգամանքը նպաստել է, որ Հայաստանում զարգանան թե՛ պետականությունը, թե՛ տնտեսությունն ու մշակույթը, առևտուրն ու քաղաքները, ճանապարհներն ու տարանցիկ ուղիները, իսկ մյուս կողմից՝ երկիրն ու ժողովուրդը ենթարկվել են ինչպես քաղաքական հարափոփոխ իրադրությունների, այնպես էլ այդ պատմուղիներով անցած օտար ավարառու ցեղերի նվաճողական քաղաքականության կործանարար ազդեցությանը: Հայաստանն ինքը, հանդիսանալով քաղաքակրթության բնօրրան, դարերի ընթացքում կապող օղակի դեր է կատարել ասիական և եվրոպական քաղաքակրթությունների միջև, նպաստել մշակութային, տնտեսական և առևտրական փոխհարաբերությունների զարգացմանը:

Ենթաթեմայում պետք է նաև հատուկ նշել Հայկական լեռնաշխարհի՝ Մեծ Հայքի պատմաաշխարհագրական հասկացության ընդգրկումների համընկնման մասին, որն ունի պատմաճանաչողական կարևոր նշանակություն, ընդգծել նաև, որ Մեծ Հայքը զբաղեցրել է ավելի քան 300 հազար քառ. կմ տարածք:

Պետք է նշել, որ պատմական Հայաստանը գրեթե միշտ ունեցել է քիչ թե շատ կայուն վարչատարածքային բաժանում. Մեծ Հայքի բաղկացուցիչ մասերն են կազմել 15 նահանգներ կամ աշխարհներ. Այրարատ, Տուրուբերան (Տարոն), Վասպուրական, Աղձնիք, Ծոփք, Բարձր

Հայք, Գուգարք, Սյունիք, Արցախ և այլն: Վերջում հարկ է տալ նաև Փոքր Հայքի և Կիլիկիայի դերը հայ ժողովրդի կյանքում: Ցույց տալ նաև, թե ի՞նչ երկրների հետ է անմիջական հարևան Հայաստանը (Աղվանք, Վրաստան, Պարսկաստան, Թուրքիա և այլն), ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել դարերի ընթացքում, աշխարհաքաղաքական ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում և այլն:

2. Բացահայտել առասպելների տեղը հայ ժողովրդի ծագումնաբանության պարզաբանման հարցերում, ինչպես նաև հայ ժողովրդի տեղը հնդեվրոպական ընտանիքում, իսկ վերջինիս հայրենիքը տեղադրել Հայկական լեռնաշխարհում՝ ժխտելով հայերի եկվոր լինելու մասին թյուր, հակագիտական տեսությունները:

Վերջապես, անհրաժեշտ է հաստատագրել, որ հայ ժողովրդի կազմավորման գործընթացը, սկսվելով մ.թ.ա. 6-4-րդ հազարամյակներում, իր փաստածի ավարտվել է մ.թ.ա. 1-ին հազարամյակում՝ միասնական համահայկական պետականության հաստատումով:

Կարևոր է ընդգծել, որ մի քանի հազարամյակ ներառող այդ բարդ գործընթացում Հայկական լեռնաշխարհում ապրող ազգակից ցեղերը և ցեղային էթնիկ միավորումները աշխատանքի հասարակական բաժանման և տնտեսատարածքային փոխառնչությունների զարգացման շնորհիվ միաձուլվում են մի էթնիկական կայուն ընդհանրության մեջ և վերջապես ձևավորվում է համազգային հայերեն լեզուն: Բացահայտել հայ ժողովրդի կազմավորման գործընթացում հայկական մի շարք ցեղային միությունների՝ Հայասա, Արմե-Շուպրիա, Նաիրի և այլ կազմավորումների խաղացած դերը: Բացատրել «հայ» անվանման ծագումնաբանությունը, միաժամանակ ցույց տալով, որ հայերը Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներն են: Տալ անհրաժեշտ պարզաբանումներ այն մասին, որ հայ ժողովրդի կազմավորման գործընթացը միանշանակ չի եղել, որ այն տևել է երկար ժամանակաշրջան: Համակողմանիորեն բացահայտել Հայք, Հայաստան, Արմենիա և այլ անվանումների ստուգաբանությունը, ցույց տալ դրանց փոխկապակցվածությունը: Միաժամանակ ցույց տալ ընթերցողին, որ հայ ժողովրդի ծագումը և կազմավորումը ընթացել են Հայկական լեռնաշխարհի հայտնի աշխարհաքաղաքական ընդգրկումների շրջանակներում:

3. Անհրաժեշտ է բացահայտել, որ հայ ժողովրդի հին և միջին ֆարերի պատմաքաղաքական զարգացման պատմության ուսումնասիրությունը նրա պետականությունների զարգացման պատմությունն է, որի սկիզբը դրվում է մ.թ. առաջ 9-6-րդ դդ. և շարունակվում ընդմիջումներով մինչև 11-րդ դարը, ապա եզրափակվում Կիլիկյան փուլով, և վերջապես

վերսկսվում 1918 թվականին՝ շարունակելով իր հերոսական ոգորումները մինչև այժմ՝ Երրորդ հանրապետությունը ներառյալ: Հայկական պետականության զարգացման փուլերն են. 1. Արարատյան թագավորություն (մ.թ.ա. 9-6-րդ դդ.), 2. Հայկյանների կամ Երվանդունյաց հարստություն (մ.թ.ա. 6-3-րդ դդ.), 3. Արտաշիսյան (մ.թ.ա. 2-րդ դ.- մ.թ. 1 թվ.), 4. Արշակունյաց դինաստիայի ժամանակաշրջան (մ.թ. 1 - 5-րդ դդ.), 5. Բագրատունյաց (մ.թ. 9-11-րդ դդ.), 6. Կիլիկյան պետականություն (մ.թ. 11-14-րդ դդ.), 7. Հայաստանի Առաջին Հանրապետություն (1918 թ. մայիսի 28 - 1920 թ. դեկտեմբերի 2. Երկրորդ կամ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (1920 թ. դեկտեմբերի 2 - 1991 թ. սեպտեմբերի 21), 9. Երրորդ հանրապետություն (1991 թ. սեպտեմբերի 21- առ այսօր): Պետք է նշել, որ հայ ժողովրդի զարգացման, նրա պետականության կայացման վաղ փուլերից մեկը հենվել է Արարատյան թագավորության (Ուրարտու կամ Վանի թագավորություն) պետական կառույցի վրա, որ Արարատյան պետականության կառույցն է եղել հենց այն հայկական հիմնաքարը, որի վրա բարձրացել են ինչպես Երվանդունիների, այնպես էլ Արտաշիսյանների, Արշակունիների և Բագրատունիների կառուցած հայկական պետական կառուցվածքներն ու հաստատությունները:

Շեշտել այն, որ նորագույն հետազոտությունները ևս ակնբախորեն վկայում են այն մասին, որ պատմաքաղաքական հայտնի գրականության մեջ «Ուրարտու» անվանված պետությունը առաջացել է Հայաստանում և բռնել է պատմական Հայաստանի գրեթե ամբողջ տարածքը, այլ խոսքով ասած՝ աշխարհագրական-տարածքային առումով Ուրարտուն Հայաստան էր: Նշել նաև այն, որ Արարատյան տերության սահմանները լիովին համընկնել են ոչ միայն Հայկական լեռնաշխարհի բնական, այլև նրանում կազմավորված հայ ժողովրդի էթնիկական սահմաններին: Վերջապես, պետք է գալ այն հետևության, որ Արարատյան պետականության կազմավորման և զարգացման բազմադարյան պատմությունը Հայկական լեռնաշխարհում բնակվող հայկական ցեղերի համախմբման, միաձուլման և հայ ժողովրդի կազմագոյացման զուգաժամանակյա պատմությունն է:

Հայ ժողովրդի զարգացման վաղ փուլերից մեկը, եթե, իհարկե, չխորանանք պատմության ավելի հին ծալքերի մեջ, հենվել է **Արարատյան թագավորության** (Ուրարտու, Վանի թագավորություն) պետական կառույցի վրա, որն առ այսօր բազմաթիվ օտար հեղինակների ու ոչ օտարների կողմից ներկայացվել է որպես ոչ հայկական: Սակայն գոյություն ունեն անհերքելի պատմահնագիտական, լեզվաբանական, մարդաբանական, աղբյուրագիտական այլ լուրջ ու ծանրակշիռ ապացույցներ (մասնավորապես՝ Քուռ-Արաքսյան մշակույթին պատկանող հուշարձաններ, որոնք անառարկելիորեն ապացուցում են, որ որոշակի առումով Հայկական լեռնաշխարհը եզակի ընդհանրական, ինքնատիպ մշակույթի բնօրրան է, որը շարունակվել է հազար տարուց ավելի և հայտնի է «Քուռ-Արաքսյան մշակույթ» անվանումով (Ք. Ա. IV հազարամյակի երկրորդ կեսից): Այս ամենը հաստատում է ոչ միայն հայ ժողովրդի անդրենածին, տեղաբնիկ լինելը Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական հայտնի տարածքում, այլև այն, որ Արարատյան կամ Վանի թագավորության հենց այդ հզոր կառույցն է եղել այն ամուր պատվանդանը, հայկական հիմնաքարը, որի վրա բարձրացել են Երվանդունիների, այնուհետև՝ Արտաշիսյանների կառուցած պետական ավելի նոր, ամուր և հուսալի հայկական կառուցվածքներն ու հաստատությունները: Դա է եղել այն կարևորագույն պայմանը, որն ապահովել է հայ ժողովրդի տնտեսական և մշակութային աննախընթաց վերելքն այդ ժամանակաշրջանում, նրա տեղն ու դերը համաշխարհային քաղաքականության և քաղաքակրթության խաչմերուկներում:

Կարևորել պատմաքաղաքական այն իրողությունը, որը ակնբախորեն հաստատվում է նորագույն հետազոտություններով, ըստ որոնց պատմաքաղաքական հայտնի գրականության մեջ «Ուրարտու» կոչված պետությունը առաջացել է Հայաստանում և գրավել է պատմական Հայաստանի գրեթե ամբողջ տարածքը. այլ կերպ ասած՝ աշխարհագրական-տարածքային առումով Ուրարտուն Հայաստանն էր՝ այսինքն՝ Արարատյան երկիրը: Հայտնի աղբյուրների հիման վրա միանգամայն պարզորոշվում է, որ սեմական լեզուներում, և մասնավորապես՝ աքքադերեն արձանագրություններում և Քումրանի արամեերեն ձեռագրերում հիշատակվող Ուրարտու, Ուրաշտու, Ուրարատ, Ուրարտ, Արարտ ու Արարատ անվանաձևերն անվերապահորեն առաջացել են Հայոց միջնաշխարհի հնամենի Արարատ (Այրարատ) բնանվանումից: Այստեղից էլ հերքվում է այն կեղծ, ոչ գիտական տեսակետը, ըստ որի Ուրարտական պետության մեջ հայեր՝ հայկական ցեղեր անշուշտ եղել են, սակայն քաղաքական-իրավական իշխանություն ու պետություն ստեղծել և տնօրինել են ուրարտական ոչ հայ թագավորները: Հայերը եղել են Հայկական լեռնաշխարհի բնիկները հնագույն ժամանակներից սկսած, Արարատյան թագավորության ու պետության գոյության ժամանակաշրջանում շարունակել և իր տրամաբանական ավարտին են հասցրել, իբրև ժողովուրդ կազմավորվելու դարեր առաջ՝ Ուրարտական պետության և այլ հայկական պետական կազմավորումների առաջացումից էլ շատ ավելի

վաղ սկսված պատմաէթնոգենետիկ գործընթացները: Հետևաբար, Հայաստանի պատմական տարածքում բնակվող մյուս ցեղերից և ոչ մեկը կանգնած չէր ժողովուրդ դառնալու ճանապարհին, այդ իսկ իմաստով էլ զուրկ էր պատմաքաղաքական հեռանկարից, և որ Հայկական լեռնաշխարհի հետ գրեթե նույնացած Հայաստան պատմաաշխարհագրական տարածքում պատմականորեն կազմավորված առաջին և միակ ժողովուրդը եղել և մնում է հայ ժողովուրդը: Այսպիսով, հնագույն տեղեկությունները և հատկապես հնագիտական պեղումների արդյունքները հաստատում են, որ Արարատյան միասնական տերության սահմանները հիմնովին համընկել են ոչ միայն Հայկական լեռնաշխարհի բնական, այլ նաև նրանում կազմավորված հայ ժողովրդի էթնիկական սահմանների հետ: Արարատյան միասնական պետականության կազմավորման և զարգացման բազմադարյան պատմությունը Հայկական լեռնաշխարհում բնակվող հայկական ցեղերի համախմբման, միաձուլման և հայ ժողովրդի կազմագոյացման զուգաժամանակյա պատմությունն է: Արարատյան միասնական պետությունը շրջադարձային դեր է խաղացել Հայկական լեռնաշխարհի կամ Մեծ Հայքի ցեղերի և ցեղային իշխանամիություններ (Հայասա-Ազզի /համաձայն որոշ տեսակետների, «Հայ» և «Հայաստան» [«Հայք»] անվանումները առաջացել են հենց «Հայասա» անվանումից/, Արմե-Շուպրիա /«Արմեն» կամ «Ուրմե»-ից ծագել են «Արմանի», «Արմինա», «Արմենիա» անվանումները/, Նաիրյան («Գետերի երկիր». այդ նույն երկիրը նույնական է «Ուրուատրի», «Ուրարտու», «Արարատ» և այլ ցեղային կազմավորումների անվանումների հետ) համախմբման, նրանց միաձուլման և հայ ժողովրդի կազմավորման ավարտի գործում: Շատ ուսումնասիրողներ, գիտնականներ հենվելով խեթական, ասորեստանյան, այսպես կոչված՝ «ուրարտական» և այլ ցեղերի սեպագիր ու այլ բնույթի արձանագրությունների, զանազան վկայությունների վրա՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքական կազմավորումների շարքում են դասում առաջին հերթին մ.թ.ա. XV-IX դարերում դրանցում բազմիցս հիշատակված Հայասա-Ազզի, Արմե-Շուպրիա, Նաիրյան և ուրիշ ցեղային-էթնիկական միավորումները: Մ.թ.ա. XIII-IX դարերում Ասորեստանյան պետության բռնազավթումների և այլ ցեղերի ավերիչ բարբարոսական միջամտությունների, շարունակական բնույթ կրող պատերազմների հետևանքով Հայկական լեռնաշխարհի տարածքային-քաղաքական կազմավորումների, ցեղային-էթնիկական ընդհանրությունների համախմբման և միասնական պետականության կերտման պատմաքաղաքական գործընթացների ներքին բովանդակության տեսանկյունից բավականաչափ խաթարված և երկարաձգված պատմաընթացքը մոտեցավ իր խիստ տրամաբանական հանգուցալուծմանը: Ընդհանուր թշնամիների դեմ մղած ազատագրական կռիվները և տևական բնույթ կրող հակամարտությունը էապես նպաստեցին Հայկական լեռնաշխարհում բնակվող ազգային-ցեղական ընդհանրությունների սերտ մերձեցմանը և էթնիկական-պետական ընդհանրության մասին գիտակցության ձևավորմանը, և կայուն ու շատ խորքային ազգային հիմքերի արմատավորմանը: Իսկ արդեն IX դարի նախաշեմին Հայկական լեռնաշխարհում ստեղծվեցին բոլոր անհրաժեշտ նախադրյալները, որոնք, վերջ ի վերջո, հանգեցրին առաջին միասնական /համազգային/ պետության՝ Այրարատյան կամ Արարատյան հզոր տերության հիմնադրմանը: Այն դարձավ տարածաշրջանի ամենահայտնի, ազդեցիկ և կայուն պետություններից մեկը, որի հետ ստիպված էին հաշվի նստել հին աշխարհի ուժեղագույն տերությունները: Արարատյան պետությունն իր հզորության բարձրակետերից մեկին հասավ **Արամեի** ժամանակ (մ.թ.ա. 860-840 թթ.), որը ոչ միայն բավականաչափ հաջողությամբ դիմագրավեց աշխարհատենչ Ասորեստանի ավազակային, զավթողական բնույթի ծանր ու տևական պատերազմներին, մեկը մյուսի ետևից ձեռնարկվող հարձակումներին, այլև **«Մայրաշխարհի»** անվիճելի հավակնությամբ գլխավորեց Հայկական լեռնաշխարհի հայտնի ցեղերի և ցեղային իշխանապետությունների համախմբման համապատմական ընթացքը և վստահությամբ կերտեց Արարատյան միասնական պետության հիմքերը, որի վեհաշուք և վստահ կեցվածքը, անկոտրում դիրքն ու ռազմավարությունը արժանի հարգանքի արժանացան հարևանների կողմից: Վերջինները, թեկուզև ներքին դժկամությամբ ընդունելով այդ փաստը, հարկադրված էին իրապես հաշվի նստել պատմական իրողություն դարձած այդ կարևորագույն պատմափաստի հետ [կազմավորվել էր մի յուրօրինակ պետություն, որի զինվորական ծառայության ենթակա բնակչության ընդհանուր թիվը կազմել է 350 հազար մարդ (բնակչության ընդհանուր 1,5-2 միլիոն թվի պայմաններում), իսկ մշտական զորքի հիմնական կորիզը կազմել է մոտ 50 հազար ռազմիկ, որը խաղաղ պայմաններում տեղակայվում էր արքունական բերդերում, ամրոցներում և սահմանային զորակայաններում]: Պատմաքաղաքական այդ կարևոր իրադարձությունը, դարակազմիկ այդ էական շրջադարձը հստակ արձանագրվել են նաև ժողովրդական հինավուրց ասքերում /ավանդազրույցներ, վիպերգեր/, որոնցից առանձին պատառիկներ բանաքաղել և իր նշանավոր «Հայոց պատմություն» երկում զետեղել է Մեծն Խորենացին: Հետևաբար, կարելի է գալ հիմնարար եզրահանգման, որ Արարատյան միասնական պետությունը շրջադարձային կարևոր դեր է խաղացել Հայկական լեռնաշխարհի կամ Մեծ Հայքի իրարից տարանջատ ցեղերի ու ցեղային միությունների և կազմավորումների համախմբման, նրանց

միաձուլման և հայ ժողովրդի կազմավորման ավարտի գործում: Այդ հզոր և կենտրոնացված պետականության կառույցի ընդերքում հայկական ցեղերը և ցեղային կազմավորումները ձեռք բերեցին տնտեսաքաղաքական և հոգևոր-մշակութային սերտ կապեր, անխափան փոխհաղորդակցություն և համակեցություն: Պատմական այս ժամանակաընթացքում ձևավորվեցին և հիմնավորապես արմատավորվեցին հայ ժողովրդի ազգային կերպարանքը լիովին բնորոշող հատկանիշները՝ ընդհանրական լեզուն և ինքնանվանումը, միասնական հոգևոր և քաղաքական հայրենիքն ու այն պաշտպանելու վեհ գաղափարները, միասնական տնտեսությունը, մշակույթը և կրոնը, կենցաղը, սովորույթներն ու ավանդույթները, ազգային հոգեբանության յուրահատուկ գծերն ու հատկանիշները, համոզմունքները, աշխարհայացքը, բարոյաքաղաքական սկզբունքները, կենսական ձգտումները, համազգային տոնախմբությունները, ազգային շահերի և նպատակների հանդեպ չափազանց կայուն միասնական կողմնորոշումը և այլն:

Ներկայացնելով Հայկական պետականության զարգացման Հայկյան կամ Երվանդունյաց փուլը (մ.թ.ա. 6-3-րդ դդ.), **Պարույր Սկայորդու, Երվանդ Սակավակյացի** և այլ հայտնի Երվանդունիների պատմաքաղաքական գործունեությունը, միաժամանակ կարևորել այն միտքը, որ պատմաաշխարհագրական ընդգրկումների առումով Արարատյան և Երվանդունյաց պետական կառույցները նույնանում են:

Բացահայտել պետական մեծ վերելքի արմատները Արտաշիսյանների ժամանակ, որոնց օրոք Հայաստանը դարձավ Հին աշխարհի հզորագույն պետություններից մեկը **Արտաշես Մեծի** (մ.թ.ա. 189-160 թթ.), Տիգրան Մեծ արքայից-արքայի (մ.թ.ա. 95-56 թթ.) ժամանակաշրջանում:

Նշել խիստ այժմեական նշանակություն ունեցող Արտաշես Մեծի պետական բազմահմուտ գործունեության մասին Հայոց աշխարհի վերամիավորման և հողահավաքման բնագավառում, թվարկել նշանավոր բարենորոգումները երկրի վարչական բարեկարգման և բարենորոգման, հողաբաժանման և այլ ուղղություններով, Արտաշատի հիմնադրումը:

Նշել հայկական պետականության աննախընթաց և չգերազանցված հզոր վերելքի փուլի մասին **Տիգրան Մեծի** ժամանակ, ներքին ու արտաքին նպաստավոր պայմանների մասին:

Եվ վերջապես, նշել Հայկական պետականության թուլացման մասին **Արտավազդ II-ի** և նրա հաջորդների օրոք, բարձրացող Հռոմի ամենակուլ ռազմավարությունը Հայաստանի նկատմամբ և պետականության անկումը:

Ցույց տալ պարթևահռոմեական մրցակցությունը Հայաստանում և Արշակունիների գահակալումը որպես քաղաքական փոխզիջում: Նշել, որ այդ ժամանակաշրջանում ընթացավ դժվարին և համառ պայքար պետականության ամրապնդման և կողմնորոշումների առումով: Նշել Պարսկաստանում 226 թ. պետական հեղաշրջման պատմաքաղաքական իմաստի և նշանակության, Արշակունիների տապալման արմատական, անշրջելի բնույթի և դրա փաստացի բացասական հետևանքների մասին Հայաստանի պետականության համար:

Թեման ամփոփելիս ներկայացնել **Արշակ II, Պապի** և մյուս խոշոր պետական գործիչների համառ, հերոսական պայքարը ազգային կենտրոնացված պետականության պահպանման համար, ինչպես նաև ներքին և արտաքին աննպաստ իրադրությունը, որը վերջիվերջո հանգեցրեց պետության անկմանը և Հայաստանի 387 և 591 թթ. բաժանումներին:

Անդրադառնալ նաև պետականության զարգացման Բագրատունյաց փուլին (9-11-րդ դդ.), ցույց տալով, որ այն էական նշանակություն ունեցավ Հայաստանի տնտեսաքաղաքական և մշակութային զարգացման բազմադարյան ուղենիշներում: Հարցը ավարտել՝ ցույց տալով կենտրոնախույս-անջատողական տրամադրությունների ուժեղացումը, երկրի մասնատվածության խորացումը և դրանց խիստ բացասական հետևանքները երկրի քաղաքական շահերի ապահովման տեսանկյունից, ներքին կյանքում բյուզանդական միջամտության զորեղացումը և Բագրատունիների անկումը:

Վերջապես, ներկայացվող ենթաթեմայի լիարժեք բացահայտման առումով կարևոր է ցույց տալ Կիլիկիայի հայկական պետականության տեղն ու դերը հայ ժողովրդի քաղաքական պատմության համակարգում: Հարկավոր է նշել, որ դա, ըստ երևույթին, համաշխարհային պատմության այն եզակի ու աննախադեպ իրադարձություններից էր, երբ հինավուրց մի ժողովրդի որոշակի հատվածներ, ունենալով ռազմավարական որոշակի նպատակադրումներ և ելնելով 11-րդ դարի վերջին Հայաստանի և հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական, միջազգային անբարենպաստ պայմաններից, բուն Հայաստանից դուրս՝ Միջերկրական ծովի մի հարմար ափեզրին ստեղծեցին նոր հայրենիք և նոր պետականություն, հզոր ռազմականացված յուրատեսակ ռազմաքաղաքական պետկառույց: Ցույց տալ, որ այդ պետականությունը ստեղծող հայ ժողովրդի այդ հատվածը 11-14-րդ դարերում հասավ աննախընթաց պետական, տնտեսական, մշակութային և հասարակական-քաղաքական վերելքի, հանդես գալով որպես Վերածննդի ժամանակաշրջանի սկզբնավորողներից մեկը: Նշել, որ դրանով իսկ Կիլիկիայի հայությունն իր արժանի ու ծանրակշիռ ներդրումն ունեցավ համաշխարհային քաղաքակրթության մշակութային գանձարանում:

4. Առանձնահատուկ կերպով անդրադառնալ հայկական պետականության զարգացման 3-րդ դարի վերջի - 4-րդ դարի սկզբի իրադարձություններին՝ կապված քրիստոնեության ընդունման հետ, նշել դրա ընդունման պատմաքաղաքական և հոգևոր-մշակութային ճակատագրականությունը հայ ժողովրդի կյանքում, ինչպես նաև այն, որ վերջինս իրողություն դարձավ պարսկահռոմեական ուժգնացող մրցակցության պայմաններում և ուներ քաղաքական վերակողմնորոշման նպատակադրում, որ այն Հայաստան մտցվեց դրսից: Պարզաբանել, որ 301 թվականին պետական մակարդակով ընդունելով քրիստոնեական կրոնը և հրաժարվելով սեփական աստվածներից, հայերը և Հայաստանը բռնությամբ ներքաշվեցին միջազգային աշխարհաքաղաքական հարաբերությունների սկզբունքորեն նոր և խճճված հորձանուտի մեջ: Եզրակացնել, որ քրիստոնեության քողածածկույթի տակ որոշակի աշխարհաքաղաքական ուժեր ու խմբավորումներ օտարածին քաղաքականություն և հոգևոր-քաղաքական հոսանքներ ու տրամադրվածություններ մտցրեցին Հայաստան, ձգտելով այն էլ ավելի ջլատել, կազմաքանդել պետականությունը, այն իմաստավորող կառույցները, և վերջնականապես այն ենթարկել իրենց շահադիտական, հայ ժողովրդի իսկական նպատակադրումներին անհարիր գործընթացներին: Ցույց տալ, որ դրանով Հայաստանը և հայ ժողովուրդը քաղաքականապես ու մշակույթով ավելի են կապվում Հռոմեական կայսրության և նրա արժեքային համակարգի հետ, իսկ դրան հակառակ՝ վատթարանում են հարաբերությունները Սասանյան Պարսկաստանի հետ:

Ամփոփելով ասելիքը, գալ հետևության, որ սակայն հենց քրիստոնեությունը դարձավ հայ ժողովրդի հետագա 1700-ամյա գոյության պատմական իրողությունը: Ցույց տալ, որ հետագա դարերում հայ առաքելական քրիստոնեական եկեղեցին նկատելի դրական դեր խաղաց ազգապահպանության գործում, ժամանակ առ ժամանակ փոխարինելով կորսված պետականությանը: Բացահայտել Հայաստանյաց առաքելական եկեղեցու դերը երկրի միասնության ու անկախության, հայ ազգի, լեզվի, կրթության, գիտության ու մշակույթի պահպանման ու զարգացման գործում:

Ընդգծել, որ ազգային ինքնության և պետականության պահպանման համար մղված արյունոտ ու հերոսական պատմության մեջ, հայ ժողովրդի պատմական ճակատագրում չափազանց մեծ նշանակություն ունեցավ Հայոց գրերի ստեղծումը պատմական մեծագույն այր Մեսրոպ Մաշտոցի կողմից: Սեփական գիրը փրկեց հայ ժողովրդին ուծացումից և պատմության թատերաբեմից հեռանալուց, և դա է մեր պատմության մեծագույն խորհուրդը: Նշել հատկապես, որ այդ առումով բոլորովին էլ

պատահական չէր, որ հայոց գրերի ստեղծման անհրաժեշտությունը առաջացավ ոչ թե 4-րդ դարում, երբ դեռ գոյություն ուներ քիչ թե շատ անկախ հայկական պետականություն, այլ հենց 5-րդ դարում, երբ Հայաստանի պետականությունն ընկավ: Ընդգծել, որ սեփական գրերի ստեղծումով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ազգային մշակույթի, գրականության, պատմագրության և գիտության զարգացման համար: Ցույց տալ, որ գրերի ստեղծումով Հայոց աշխարհում ծավալվեց լուսավորչական հզոր շարժում, բացվեցին մայրենի լեզվով ազգային դպրոցներ և առաջին ուսուցիչը եղավ ինքը՝ մեծն Մ.Մաշտոցը: Հատուկ շեշտել, որ հենց այդ իմաստով էլ շատ դժվար է հայոց բազմադարյան պատմության մեջ առանձնացնել մի այլ ակնառու և կարևոր իրադարձություն, որ կարելի լիներ համեմատության մեջ դնել Հայոց գրերի, գրականության ու պատմագրության ստեղծման հետ: Ցույց տալ նաև Հայ Առաքելական եկեղեցու խաղացած դերը մայր հայրենիքի և Սփյուռքի փոխառնչություններում: Գալ կարևոր եզրակացության, որ հենց հայոց գրերն են, որ հայ ժողովրդի գոյատևման կարևոր պայման եղան, և հենց այդ է մեր պատմության մեծագույն խորհուրդը, նրա գլխավոր դասը և անցած դժվարին ուղու հիմնական իմաստը: Ամփոփելով հարցի պարզաբանումը՝ ցույց տալ, որ ապազգայնացման և ուծացման այն քաղաքականությունից, որ վարում էին քրիստոնեական Բյուզանդիան և զրադաշտական Պարսկաստանը, հնարավոր էր պաշտպանվել և ըստ էության հաղթանակել՝ ապավինելով միայն հայոց գրերին ու եկեղեցուն: Սակայն պետք է նաև հատուկ նշել, որ շատ պարզունակ են պատմագիտական այն տեսակետները, համաձայն որոնց Մաշտոցը, իբր թե համոզվելով, որ հայ ժողովրդին իրապես լուսավորելու և հատկապես քրիստոնեական գաղափարները տարածելու, պետական գործերը վարելու, մայրենիով ժամասացությունը կատարելու, «Աստվածաշունչը» թարգմանելու համար անհրաժեշտ է ունենալ մայրենի գիր ու գրականություն, ձեռնամուխ եղավ հայոց գրերի արարմանը. արդեն ընդգծել ենք, որ ամենաառաջնայինը այդ հանգամանքները չէին, և դժվար է կարծել, որ ազգային գրերի ստեղծումը պայմանավորված էր քրիստոնեական արժեքների պահպանմամբ (թեկուզև քրիստոնյա առաջնորդների և տեսաբանների համար դա շատ կարևոր հիմնախնդիր էր): Պետք է կարևոր եզրակացության գալ, որ այն պատմաքաղաքական առումով խստորեն պարտադրված էր ազգապահպանական, հայապահպանական բնույթի հզոր գործոններով, հայոց բովանդակ աշխարհի առաջ կանգնած ռազմավարական նուրբ ու հեռահար նպատակադրումներով: Մեսրոպ Մաշտոցին հետևեցին ուրիշները, որոնք կռեցին շատ ավելի հզոր ու կատարյալ մի զենք, քան կարող էին այդ անել Հայաստան աշխարհի ամենահմուտ զինվորականները

ազգապահպանության համար մղվող ծանր ու հետևողական պայքարում: Դա գիտակցում էին նաև առավել խոհեմ ու հեռատես հայ հասարակական շրջանները՝հայոց գրերի արարումը համարելով տնտեսապես և քաղաքականապես մասնատված ու թուլացած Հայաստանին կոփող, միավորող այն իրապես «ցեմենտող» հզոր ուժը, որը կարողացավ իրար լծորդել քաղաքական տարբեր ազդեցությունների տակ ընկած ցրված հայության հասարակական-քաղաքական կյանքը: Այս առումով էլ պատահական չէ, որ հայ գրի ու գրականության ստեղծման անհրաժեշտությունն առաջացավ ոչ թե IV դարում, երբ դեռ գոյություն ուներ քիչ թե շատ անկախ պետականություն, այլ հենց IV-V դարերի սահմանագծին, երբ Հայաստանում պետականությունն ընկավ, և սկսվեց լարված պայքար ազգային ինքնուրույնության համար, որի ծայրակետերը հանդիսացան 451 թ. մայիսին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտը, 481-484 թթ. և հետագա ժամանակաշրջանի հերոսամարտերը: Դրանք հայ ազատագրական պայքարի պատմության փայլուն էջերն են: Ազատասեր հայ ժողովուրդը, չհաշտվելով օտար բռնակալության հետ, բազմիցս պայքարի է ելել ոչ թե բարոյական, այլ քաղաքական հաղթանակներ տանելու՝ պետականությունը վերականգնելու համար: V դարը եղավ ինչպես հայ մատենագրության, այնպես էլ հայ ժողովրդի ազատատենչ ու անկախ պետականության վերականգնման համար մաքառումների իսկական ՈՄԿԵԴԱՐԸ:

5. Բացատրել, որ Հայաստանի բաժանումները, որոնք արտացոլվեցին 1555 թ. Ամասիայի և 1639 թ. Դիարբեքիրի հաշտության պայմանագրերում, ամրագրեցին Արևմտյան և Արևելյան Հայաստանների պետականազուրկ վիճակը որպես առանձին միավորներ: 11-րդ դարում պատմության փոքրասիական թատերաբեմում հայտնված թյուրքական ցեղախմբերը չարիք դարձան բազմաթիվ ժողովուրդների համար: Բացահայտել թեման, ցույց տալով, որ առավել մեծ վնաս հասցվեց նրանց կողմից հայ ժողովրդին, որ նրանց կողմից պարտադրված հետամնաց սոցիալ-տնտեսական կարգերը արգելակում էին հայ ժողովրդի բնականոն զարգացումը:

Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ ժողովուրդները մեռնում են միայն այն ժամանակ, երբ հրաժարվում են պայքարից, սեփական անկախության և պետականության վերականգնման ուղիների որոնումից: Դրա հիմքերը դրվեցին դեռևս 15-րդ դարում, սակայն առավել իրատես հնարավորություններ ստեղծվեցին 17-18-րդ դարերում: Հատկանշական է, որ այդ գործում էական դեր սկսեց կատարել եկեղեցին, կառույց, որի մասին մենք 4-րդ դարի սկզբի իրադարձությունների կապակցությամբ տալիս ենք հակասական ու բևեռացված պատմաքաղաքական գնահատումներ, սակայն նոր ժամանակներում այն դառնում է հայ ժողովրդի

կյանքի ազատագրական պայքարի իրողություններից մեկը: Ցուցահանել նաև հայ իշխանական տների (մելիքությունների) և գաղթօջախների դերը:

Վերջում եզրահանգել, որ Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո ընկած ժամանակահատվածում ոչ մոնղոլ-թաթարական, ոչ թուրքական, ոչ պարսկական նվաճողները ամենևին էլ չսասանեցին հայ ժողովրդի աներեր հավատը բուն Հայաստանում պետականության վերականգնման ուղիների որոնման դժվարին պայքարում:

6. 17-18-րդ դդ. միջազգային հարաբերությունների մեջ տեղի ունեցած նկատելի փոփոխությունները, ինչպես նաև շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի ռազմաքաղաքական աստիճանական թուլացումը և Ռուսաստանի զգալի հզորացումը որոշակի նախապայմաններ ստեղծեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վերելքի համար: Հարկ է ցույց տալ, որ ազգային-ազատագրական ուղիների որոնման ճանապարհին կարևոր սահմանագծային ուղենիշներ հանդիսացան 1677 թ. Էջմիածնի և 1699 թ. Անգեղակոթի ժողովներըհոգևոր և աշխարհիկ 12 այրերի մասնակցությամբ: Դրանցում նշմարվեցին որոշակի ծրագրեր՝ նպատակառղղված պետականության վերականգնմանը Հայաստանում: Համակողմանիորեն բացահայտել Իսրայել Օրու գործունեությունը ազգային-ազատագրական կողմնորոշումների որոշակիացման հարցում: Ցույց տալ նրա գործունեությունը եվրոպական երկրներում և Ռուսաստանում, տալ ձեռք բերված իրական արդյունքների գնահատականը: Ամփոփելով թեման՝ պարզաբանել, որ Իսրայել Օրու գործունեությամբ ակնհայտ դարձավ եվրոպական պետությունների օգնությամբ հայ ժողովրդի ազատագրման բոլոր փորձերի սնանկությունը, և ընդհակառակը, 18-րդ դարի սկզբին Հայաստանի ազատագրման խնդրում տեղի ունեցավ շրջադարձ դեպի Ռուսաստանը, և հայերի մեջ աստիճանաբար ձևավորվեց ռուսական քաղաքական կողմնորոշումը:

7. Հայ ազատագրական պայքարի ծրագրերը մշակելիս 18-րդ դարի սկզբներին հայերի քաղաքական կողմնորոշումներում տեղի ունեցան էական փոփոխություններ՝ կապված բարձրացող և հզորացող Ռուսաստանյան կայսրության արևելյան քաղաքականության ձևավորման և ուժեղացման հետ, որի բաղկացուցիչ մասն էին շուտով դառնալու Անդրկովկասը և Հայաստանը: Մասնավորապես, Արցախի և Սյունիքի հերոսամարտի մասնակիցների ռազմաքաղաքական սպասումները պայմանավորված մնացին ռուսական զորքի հաղթանակից, որի մուտքը Անդրկովկաս ուշացավ, քանի որ Ռուսաստանյան կայսրությունը դրա համար դեռևս իրական հնարավորություններ չուներ և ի վիճակի չէր լուծելու այն հիմնախնդիրները, որ կանգնած էին ռուսական պետության

առաջ, իսկ դա էլ համապատասխան ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ողջ հետագա ընթացքի վրա:

Սակայն կարևոր է ենթաթեմայում ընդգծել, որ այս փուլում հայ ժողովրդի կողմից մղվող ազգային-ազատագրական պայքարը ստացավ ավելի գործնական և հեռահար բնույթ: Այդ պայքարի տրամաբանական կիզակետը 1720-1730-ական թվականներին Արցախի և Սյունիքի հերոսամարտն էր, որի ընթացքում այդ հատվածների հայերը ազգային կարկառուն դեմքեր **Դավիթ-Բեկի, Մխիթար սպարապետի, Ե.Հասան-Ջալալյանի** գլխավորությամբ նպաստավոր ռազմաքաղաքական իրավիճակի ստեղծման հետևանքով նույնիսկ կիսաանկախ վիճակի հասան: Դա այն վստահությունը ներշնչեց հայ ժողովրդին, որ, անկախ քաղաքական իրավիճակից և հանգամանքներից, անհրաժեշտ է ապավինել սեփական ուժերին: Հենց դա էլ հայ ժողովրդի պատմության կարևորագույն դասերից և ազգային-ազատագրական պայքարի գլխավոր արդյունքներից է:

8. Ազատագրական պայքարի նոր վերելքը 18-րդ դ. երկրորդ կեսին պայմանավորվեց հնդկահայ գաղթօջախի և մասնավորապես **Հովսեփ Էմինի** հանդես գալով: Ներկայացնել հնդկահայ և ռուսահայ գաղթավայրերը որպես ազատագրական պայքարի մշակման կենտրոնատեղիներ: Ցույց տալ Հովսեփ Էմինին՝ որպես ազատագրական պայքարի նոր գաղափարախոսի, որն անցնելով գրեթե այն ճանապարհները, ինչ որ Ի.Օրին, հետամուտ եղավ և հանգեց այն մտքին, որ հայերի կողմնորոշումը պետք է լինի ռուսական և ոչ թե եվրոպական՝ հենվելով նաև հայ-վրացական համագործակցության վրա: Նա, սակայն, շոշափելի արդյունքների չհասավ, իսկ հիմնական պատճառները նույնն էին: 18-րդ դ. հայ ժողովուրդը դեռևս չուներ ազատագրական պայքարի հարկավոր լիցքը, իսկ Ռուսաստանը իր ռազմաքաղաքական ուղենիշներում դեռևս օրակարգի հարց չէր դարձրել Կովկասյան լեռներից հարավ շարժվելու գաղափարը:

9. Կարևոր է այս թեմայում նշել Մադրասի հայրենասիրական խմբակի գործունեությունը 18-րդ դ. երկրորդ կեսին: Էական էր Հայաստանի ազատագրության խնդիրների արծարծումը Մադրասի խմբի հրատարակած գործերում՝ **«Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»** և **«Որոգայթ փառաց»**: Ցույց տալ սեփական ուժերին ապավինելու, լուսավորության, ռազմական գործը սովորելու միջոցով սեփական հայրենիքի ազատագրության խնդիրներին վերաբերող գաղափարների տարածումը, Ռուսաստանի և Վրաստանի օգնությանը կարևորություն տալու խնդիրը: Պարզաբանել, որ վերջնական նպատակադրումն էր՝ հանրապետական կարգերի հաստատումը Հայաստանում, որ եվրոպական պառլամենտական

համակարգի հաստատման ուղիով հեղափոխական-քաղաքական զարգացման արդյունք էր: Եվ վերջապես, պետք է բացատրել, որ 18-րդ դ. 80-ական թթ. ծրագրերի մեջ կարևոր տեղ են գրավում նաև **Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի** «Հյուսիսային ծրագիրը» (որ առավելապես կարելի է որակել որպես ռուսական ծրագիր), և **Շահամիր Շահամիրյանի** «Հարավային ծրագիրը» (մադրասյան-հնդկական ծրագիր):

Պարզաբանելով այս ծրագրերի իմաստն ու բովանդակությունը՝ նշել, որ այս ծրագրերն էլ չարժանացան Ռուսաստանի կառավարական շրջանների ուշադրությանը, չիրագործվեցին կյանքում և մնացին սոսկ որպես պատմական վավերագրեր, քանի որ Ռուսաստանը Անդրկովկասում և Արևելքում առաջնորդվում էր իր սեփական աշխարհաքաղաքական նպատակադրումներով, միայն իր սեփական ռազմաքաղաքական շահերի իրատեսական գիտակցումով:

ԹԵՄԱ 2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 1800 -1870 -ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. *Հայ ժողովրդի վիճակը 19-րդ դարի սկզբին*
2. *1804 -1813 թթ. և 1826 -1828 թթ. ռուս-պարսկական պատերազմները: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանյան կայսրությանը և դրա պատմական նշանակությունը*
3. *1806 -1812 թթ. և 1828 -1829 թթ. ռուս-թուրքական պատերազմները: Արեմտահայերի մեծ գաղթը*
4. *Արևելահայության և արևմտահայության սոցիալ-քաղաքական դրությունը 19-րդ դարի 30-70-ական թվականներին: Հայկական մարզը (1828-1840 թթ.): Յարիզմի գաղութային քաղաքականությունը Արևելյան Հայաստանում*
5. *Հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի 1850-1860-ական թթ.*
6. *Արևմտահայերի ազգային սահմանադրությունը և նրա նշանակությունը*
7. *1862 թ. Զեյթունի ապստամբությունը և նրա նշանակությունը*

1. Պետք է բացատրել, որ Հայոց պատմության բախտորոշ իրադարձություններից էր Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանյան հսկայածավալ կայսրությանը, որն արդյունք էր հայ ժողովրդի և Ռուսաստանի կայսերական շահերի համընկնման, նրա արևելյան քաղաքականության ուժեղացման: Այն առաջ բերեց նոր էական տեղաշարժեր ու փոփոխություններ հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու հոգևոր կյանքում, որին խորամուխ լինելու նպատակով ընթերցողը պետք է իմանա Արևելյան Հայաստանի ծանր վիճակի մասին մինչև միացումը, ազգային-կրոնական բռնավիճակը: Ինչպես նաև ցույց տալ հայերի ռուսական կողմնորոշման ուժեղացումը, հուսահատությունը արևմտաեվրոպական երկրներից ակնկալվող օգնության առնչությամբ: Միաժամանակ ցույց տալ Արևմտահայաստանի հայության սոցիալ-տնտեսական ծանր կացությունը 19-րդ դարի սկզբին, բացահայտել ազգային-կրոնական բռնությունների արմատները Օսմանյան պետությունում: Հարկ է ընդգծել, որ նույնիսկ այդ ծանր իրավիճակում չի դադարել հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալական վարչակարգի դեմ:

Ամփոփելով հարցը՝ պարզաբանել, որ Հայաստանի այդ երկփեղկված վիճակը բացասաբար էր անդրադառնում ազգային ինքնագիտակցության վրա, ժողովրդին հաճախ դնում էր ճակատագրական երկընտրանքի առաջ՝Ռուսաստան, թե՞ Եվրոպա:

2. Այդ ամենից հետո, համառոտակի անդրադառնալ 1804-1813 թթ. և 1826-1828 թթ. պատերազմներին, հայերի բարոյական և զինական աջակցության հարցերին ռուսական զորքերին՝ դրական ռազմաքաղաքական արդյունքների ակնկալիքով: 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագիրը դիտել որպես լուրջ սահմանագիծ հայ-ռուսական հարաբերություններում և բարեկամության խնդիրներում: Ուսանողին ցույց տալ, որ Ռուսաստանին միացվելուց առաջ Արևելյան Հայաստանում պատմաքաղաքական ճակատագրի բերումով հայերը կազմում էին փոքրամասնություն՝ ընդամենը 34 տոկոս, իսկ միացումից հետո տեղի ունեցան կարևոր ժողովրդագրական փոփոխություններ, հայերի թվաքանակն աճեց և կազմեց շուրջ 59 տոկոս: Բացատրել, որ այդ տեղաշարժը բնակչության ժողովրդագրական կազմում էական էր հայ ժողովրդի ապագա քաղաքական նպատակադրումների առումով: Բացի այդ, ստեղծվեց նաև քիչ թե շատ ամբողջական մի տարածք՝ Հայկական մարզ, որը և մոտ ապագայում դարձավ ազգահավաքման ու ազգապահպանման մի օջախ: Միաժամանակ, բացատրելով, որ այդ միացումը կարևոր էր նաև երկրամասի արտադրողական ուժերի ու մշակութային զարգացման համար լուրջ երաշխիքներ ապահովելու տեսանկյունից, ցույց տալ, որ արևելահայությունը, միևնույն է, դրանով վարչական կամ քաղաքական անկախություն ձեռք չբերեց և չունեցավ այն քաղաքական ազատությունները, որ կարող էր ունենալ ինքնուրույն երկիրը: Ի մի բերելով վերը ասվածը՝ պետք է ցույց տալ, որ, համենայն դեպս, դա այդ ժամանակաշրջանի ամենալուրջ պատմաքաղաքական իրադարձությունն էր և օբյեկտիվորեն դրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի նպատակադրումների ապագայի տեսանկյունից:

3. Այս ենթահարցում բացահայտել 1806-1812 թթ. և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի քաղաքական պատճառները, կողմերի նպատակադրումները: Ցույց տալ հայերի ակտիվ մասնակցությունը 1828-1829 թթ. ռազմական գործողություններին: Նշել, թե ինչքան հայ կամավորներ են մասնակցել պատերազմին, բերել համապատասխան օրինակներ: Անդրադառնալ պատերազմական խոշորագույն գործողություններին, և մասնավորապես 1829 թ. հունիսի Բայազետի հերոսական ինքնապաշտպանությանը և ռուսական զորքերի հակահարձակմանը, ինչպես նաև հայ կամավորների ակտիվ մասնակցությանը այդ իրադարձություններին: Նշել, որ այդ պատերազմն ավարտվեց 1829 թ. սեպտեմբերի 2(14-ի) Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով, որով հայկական տարածքներից Ռուսաստանին անցան միայն Ախալցխան և Ախալքալաքը, ինչպես նաև իրավունք տրվեց արևմտահայերին գաղթել և բնակության հաստատել Ռուսաստանին՝ միացած տարածքներում:

Վերջում բացատրել, թե ինչու պատերազմում հաղթած Ռուսաստանը հարկադրված Թուրքիային զիջեց գրավված տարածքների մի զգալի մասը՝ Կարսը, Արդահանը, Մուշը, Բայազետը, Ալաշկերտը և այլն: Պարզաբանել, որ այն կատարվեց Ռուսաստանին ընդդիմադիր խոշոր տերությունների ճնշման տակ, որից դժգոհ էին նաև ռուս զորահրամանատարները (Պասկևիչ և ուրիշները): Թեման եզրափակել՝ նշելով, որ պատերազմի արդյունքներով շուրջ 80 հազար հայ 1829-1830 թթ. գաղթեց Կարինի, Կարսի, Բայազետի շրջաններից, տեղեկացնել դրա առաջ բերած հետևանքների մասին:

4. Նշել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ընկած ժամանակահատվածում կատարված վարչաքաղաքական փոփոխությունների և հատկապես Հայկական մարզի ստեղծման մասին՝ այն որակելով որպես իր ժամանակի համար առաջադիմական քայլ: Անդրադառնալով Արևելահայաստանում կատարված բարեփոխումներին (Հայկական մարզ, Երևանի նահանգ և այլն), ժողովրդագրական կարևոր փոփոխություններին (հայերի թիվը երկրամասում նշված ժամանակահատվածում 34-ից հասավ - 59 տոկոսի), միաժամանակ հատուկ ընդգծել ցարական վարչակարգի կամայական որոշումների և մասնավորապես, 1836 թ. մարտի 11-ի եկեղեցական կանոնադրության մասին, որով սահմանվում էին հայ եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու և պետության փոխհարաբերությունները:

Դրան զուգահեռ վերհանել կարևոր սոցիալ-տնտեսական, մշակութային առաջընթացի երևույթները արևելահայերի կյանքում 1840-1870-ական թվականներին: Նշել նոր առևտրատնտեսական և մշակութային կենտրոնների (Երևան, Ալեքսանդրապոլ, Նախիջևան և այլն) առաջացման մասին: Անդրադառնալ նաև ցարիզմի գաղութային քաղաքականությանը, տալ նրա ընդհանուր բնութագիրը: Հակիրճ տալ նաև 19-րդ դարի 30-70-ական թթ. երկրամասի դրական և բացասական աշխարհաքաղաքական գործընթացների ամբողջական նկարագիրը և գնահատականը: Ընդհանուր գծերով անդրադառնալ 1861 թ. ռեֆորմին Ռուսաստանում և դրա հետևանքներին: Ցույց տալ դրա գործադրումը Արևելյան Հայաստանում 1870 թ. մայիսի 14-ի օրենքի համաձայն: Ցույց տալ բարեփոխումների կիսատ-պռատությունը, անկատարությունը: Վերհանել 19-րդ դարի 2-րդ կեսի վարչական, քաղաքական, դատական և այլ առաջադիմական բարենորոգումների արմատները Արևելյան Հայաստանում, դրանց անլիարժեքությունը: Բարենորոգումները դիտարկել որպես ապրանքակապիտալիստական հարաբերությունների զարգացման նախադուռ:

Ցույց տալ Արևելյան Հայաստանի, ինչպես և ամբողջ Անդրկովկասի ընդգրկումը համառուսական և համաշխարհային ապրանքաշրջանառության ու ապրանքադրամային հարաբերությունների ոլորտում: Այնուհետև ցույց տալ արևմտահայության հասարակական-քաղաքական անիրավահավասար դրությունը Թուրքիայում, բնաջնջման ու ուծացման այն քաղաքականությունը, որ վարում էին թուրքական իշխանությունները: Պարզաբանել, որ 19-րդ դարի 30-50-ական թվականներին Օսմանյան Թուրքիայում ձեռնարկված «թանզիմաթ» կոչված բարեփոխումները և արտաքուստ եվրոպականացման, զանազան նորոգումների փորձերը բխում էին ոչ թե հայերի դրությունը բարելավելու փարիսեցիական ծրագրերից, այլ առաջին հերթին կայսրությունը պահպանելու նպատակադրումից, ներքին ու արտաքին դժվարություններից դուրս գալու ձգտումներից:

Միաժամանակ բացատրել, որ Օսմանյան Թուրքիայի «եվրոպականացմանը» ուղղված այս բարենորոգումների ծրագրերը թուրքական իրականության պայմաններում վիճակված չէին հետևողականորեն կենսագործվելու, հետևաբար մնացին թղթի վրա: Գալ եզրակացության, որ Թանզիմաթից հետո էլ Օսմանյան Թուրքիան շարունակեց մնալ որպես ռազմաավատատիրական բռնապետություն, հետամնաց ասիական երկիր: Այստեղ պետք է ցույց տալ, որ տակավին 1850-1860-ական թվականներին Թուրքիան մնում էր հետամնաց երկիր, որ կարիք էր զգում լուրջ սահմանադրական-քաղաքական բնույթի վերափոխումների, ինչն արտահայտվեց ծավալված, այսպես կոչված «սահմանադրական» շարժմամբ, որը ևս գործնականում ձախողվեց և քաղաքական փակուղի մտավ:

Անդրադառնալ 1865 թ. Ստամբուլում հիմնադրված «Նոր Օսմանների ընկերության» գործունեությանը, որի որդեգրած գաղափարը օսմանիզմի դոկտրինան էր և, որի ոգին դարձավ Միդհատ փաշան: Բացատրել, որ թեև նոր օսմանները, ձգտում էին փրկել Թուրքիան կործանումից, սակայն ելնում էին կայսրության ամբողջականության պահպանման հակադեմոկրատական գաղափարից, ասելով, որ Օսմանյան կայսրությունը այնտեղ ապրող բոլոր ժողովուրդների ընդհանուր հայրենիքն է (Օսմանյան Հայրենիք), իսկ այդ ժողովուրդները, անկախ իրենց լեզվից և դավանանքից, օսմանցիներ են: «Նոր օսմանները» բացառիկ նշանակություն էին տալիս իսլամին, իսկ հպատակ ժողովրդների ազատագրական շարժումներին հակադրում էին օսմանյան ընդհանուր հայրենասիրության գաղափարը, ի վերջո ելնում էին իրենց հիմք դրած թուրքիզմի գաղափարախոսությունից: Վերջում գալ այն եզրահանգման, որ օսմա-

նիզմի գաղափարախոսությունը ազգայնական շարժում էր, որը գաղափարական հենք հանդիսացավ երիտթուրքերի համար:

5. Հայ հասարակական-քաղաքական հոսանքները հայ կյանքի զարգացման բնականոն արդյունքն էին՝ որ բարձրացել էին նեի հեղաբեկման պատվանդանի վրա: Տալ 1850-1860-ական թթվականների նկարագիրը՝ որպես հայ իրականության մեջ հասարակական-քաղաքական հոսանքների ձևավորման ժամանակաշրջան՝ պահպանողական, ազատամիտ (լիբերալ) և հեղափոխական (արմատական): Շեշտել, որ դրանք բոլորն էլ ունեին ազգային-քաղաքական հենք, տարբեր էին մոտեցումները և նրանց կողմից առաջադրած խնդիրների լուծման եղանակները:

ա) Վերհանել պահպանողական հոսանքի (**Գ. Այվազովսկի, Հ. Չամուռճյան (Տերոյենց)** և ուրիշ.) նկարագիրը՝ որպես տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի հին կացութաձևերի կողմնակից, բացահայտել առօրյա կյանքում նրանց կողմից հայոց լեզվի, եկեղեցու և ազգային սովորույթների դերի կարևորումը:

բ) Ազատամիտ հոսանքի (**Ստ. Նազարյան, Ն. Ռուսինյան, Գր. Օտյան** և ուրիշներ) մասին խոսելիս բացահայտել ազատամիտների դերը որպես բարեփոխումների (ռեֆորմներ) ճանապարհով հինը նորով փոխարինելու կողմնակիցների:

գ) Հեղափոխական (արմատական) հոսանքը ներկայացնելիս բացատրել, որ դրա ներկայացուցիչները (**Մ. Նալբանդյան, Հ. Սվաճյան**) հանդես էին գալիս տիրող անարդար կարգերը բռնի կերպով վերացնելու գաղափարով, այսինքն՝ հեղափոխության միջոցով: Բացահայտել Մ. Նալբանդյանի բացառիկ դերը հայ ազատագրական մտքի հորձանուտում, նրա ազդեցությունը ապագա սերունդների վրա: Եվ վերջապես, առհասարակ պարզաբանել բոլոր հոսանքների խաղացած դերը ապագա հայ քաղաքական կուսակցությունների առաջացման գործում: Այդ կապակցությամբ էլ հատուկ պետք է նշել, որ հենց հասարակական-քաղաքական հոսանքների ձևավորումը նպաստեց անհրաժեշտ սոցիալ-քաղաքական նախադրյալների ստեղծմանը հայ քաղաքական կուսակցությունների՝ պատմաքաղաքական գործունեության ասպարեզ դուրս գալու համար: Կապված հեղափոխական-դեմոկրատական հոսանքի, և մասնավորապես Մ. Նալբանդյանի գործունեության հետ, հարկ է արտահայտել մի նկատառում. հայտնի է, որ Մ. Նալբանդյանի հրապարակախոսական և գրական ազատաշունչ երկերը տոգորված են արմատական հեղափոխականաշունչ գաղափարներով, որոնք նկատելի դեր են խաղացել հայ մտավորականության մի շարք սերունդների դաստիարակության ազգանվեր գործում: Եվ այդ իմաստով բոլորովին իրավացի չեն

այն հեղինակները, ովքեր գտնում են, որ հենց **Մ.Նալբանդյանի** անվան հետ է բացառապես կապված հեղափոխական հոսանքի գոյությունը հայ իրականության մեջ, որն իբր թե օտարամուտ և օտարամետ էր: Մ. Նալբանդյանը շատ հետևորդներ ունեցավ, նրա կողմից արմատավորած իրապես խոր ազգային նպատակադրումներ ունեցող լուսավորչականությունը և մարտաշունչ գաղափարները, որոնք ներծծված են ազատության վեհ շաղախով, տասնամյակներ շարունակ ծառայել են արևմտահայության, նաև արևելահայության ազգային-ազատագրական պայքարի, և այսօրվա սերնդի, երիտասարդության ազատության վեհաշունչ գաղափարներով դաստիարակության ռազմավարական մեծ արժեք և նշանակություն ունեցող գործին: Միաժամանակ դրանք ընկան հայ ժողովրդի կյանքի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական արմատական վերափոխման հեղափոխական վերակառուցման հիմնախնդիրներին ծառայելու հիմքում:

6. Բացահայտել 1860 թ. մայիսի 24-ին հանդիսավոր պայմաններում Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի և պատրիարքի կողմից հաստատված **«Ազգային սահմանադրության»** տեղն ու դերը հայ հասարակական, քաղաքական կյանքում, դիտարկելով այն որպես հայ քաղաքական մտքի աչքի ընկնող հուշարձան: Բացահայտել նրա թողած բարերար ազդեցությունը հայ հասարակական մտքի և ազատագրական գաղափարաբանության ձևավորման վրա: Եզրահանգել, ցույց տալով, որ հենց այդ սահմանադրական շարժման ընդհանուր մթնոլորտում էլ հասունացավ և բռնկվեց Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:

7. Բացահայտել 1862 թ. Զեյթունի ապստամբության դերը որպես հայ ազատագրական շարժման լավագույն էջերից մեկը: Զեյթունի օրինակը դիտարկել որպես ազգային ինքնագիտակցության աճի դրսևորում: Զեյթունի ապստամբությունը դիտել որպես հետագա շրջանի ազգային-ազատագրական պայքարի նախադուռ: Ցույց տալ, որ Զեյթունի հերոսամարտը ոգևորիչ ազդեցություն ունեցավ հայկական ազատամարտի մյուս օջախների՝ Սասունի, Տարոնի, Վասպուրականի, Կարինի վրա: Պարզաբանել նաև, որ Զեյթունի հերոսամարտը հայ գրողների համար դարձավ ստեղծագործական բուռն ոգեշնչման աղբյուր և հայ ազատագրական գաղափարաբանության ձևավորման զորավոր կռվան:

ԹԵՄԱ 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ: ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ, ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. *1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի առաջացումը*
2. *Հայ ազատագրական-հայրենասիրական խմբակներն ու կազմակերպությունները 1870-1880- ական թթ.*
3. *Հայ ազգային քաղաքական կուսակցությունների ձևավորումը և հայ ժողովրդի ազատագրության խնդիրները*
4. *Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման վերելքը 19-րդ դարի 90-ական թթ.: Ֆիդայական շարժման ձևավորումը և դրա պատմաքաղաքական նշանակությունը: Բարեփոխումների մայիսյան ծրագիրը և մեծ տերությունների դիրքորոշումը*
5. *1894 թ. Սասունի ապստամբությունը և նրա նշանակությունը*
6. *Հայերի զանգվածային կոտորածները Օսմանյան կայսրությունում 1894-1896 թթ. և դրանց հետևանքները*
7. *Արևմտահայերի ապստամբական-ինքնապաշտպանական մարտերը (Զեյթունի ապստամբությունը, Վանի ինքնապաշտպանությունը): Զեյթունի (1895 թ.) և Վանի (1896 թ.) հերոսամարտերը որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի գագաթափուլեր*

1. Այս ենթաթեմայում բացահայտել սուլթան Աբդուլ Համիդ II-ի արյունոտ ներքին և արտաքին քաղաքականությունը: Ցույց տալ, որ 19-րդ դարի երկրորդ կեսի կարևոր իրադարձություններից էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Հայկական հարցի առաջացումը և միջազգայնացումը: Բացահայտել, որ այն թուրքական լծից Արևմտահայաստանի ազատագրման և ինքնուրույն հայկական պետության ստեղծման հարց էր: Ցույց տալ, որ միանգամայն անիրավացի են այն հեղինակները, ովքեր Հայկական հարցի առաջացումը կապում են հայ ժողովրդի ծագման կամ միջին դարերի հայ ազատագրական պայքարի հետ: Հայկական հարցը կարող էր առաջանալ և առաջացավ հայ ժողովրդի կողմից՝ պետականության բացակայության պայմաններում և տարածքային կորուստների իրավիճակում: Բացատրել, հետևապես, որ Հայկական հարցը ծագել և միջազգային հարաբերությունների ու դիվանագիտության մեջ է մտել որպես Օսմանյան կայսրության վարչաքաղաքական կազմում գտնվող Արևմտահայաստանին վերաբերող հարց, ուր ապրող և գոյատևող հայ ժողովրդի մեծագույն հատվածը զրկված էր պատմական հայրենիքի այդ մի պատկառելի մասի ճակատագիրը տնօրինելու իրավունքից: Ավարտել միտքը՝ ցույց տալով, որ Հայկական հարցի տեսական պատմաքաղաքական մշակումն ու լուծման ուղիների որոնումն իրենց համակողմանի արտացոլումը գտան հայ հասարակական-քաղաքական մտքի տարաբնույթ դրսևորումներում՝ իրենցով համակելով բոլոր քաղաքական հոսանքներն ու կուսակցությունները, դարձավ նրանց ծրագրային նպատակադրումն ու գործունեության հիմնական բովանդակությունը: Ցույց տալ, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն իր բացահայտ դրսևորումն ունեցավ երկու հիմնական ուղղություններով՝ Հայկական հարցի միջազգայնացումով (Բեռլինի կոնգրես 1878 թ.) և հետագա ժամանակաշրջանում՝ մինչև Հայկական հարցի վերաբացումը 1912-1914 թթ., 1920 թ.՝ Սևր և այլն, և Օսմանյան Թուրքիայի դեմ ազատագրական, ֆիդայական զինված պայքարի ուղիով:

Եզրակացության գալիս Արևմտահայաստանի ազատագրումը և ազգային-պետական անկախության նվաճման գաղափարը դառնում են 19-րդ դարի վերջի և հետագա ժամանակաշրջանի հայ ժողովրդի քաղաքական պատմության բնութագրական բովանդակային գիծը և էությունը:

2. 19-րդ դ. 80-ական թթ. դիտարկել որպես ազգային-ազատագրական շարժման վերելքի շրջան, բացահայտել ազգային ինքնագիտակցականության վերելքի պատճառները: Ազգային-քաղաքական խմբակների ու կազմակերպությունների առաջացումը ներկայացնել որպես պատմաքաղաքական ու գաղափարական բարենպաստ մթնոլորտի արդյունք: Բերել օրինակներ Ալեքսանդրապոլի (Գյումրի) «Բարենպատակ ընկերություն» (1869 թ.), Ղարաքիլիսայի (Վանաձոր) «Հայրենիքի սիրո կոնտորա» (1874 թ.), Վանի «Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպության (1872 թ.), Կարինի «Պաշտպան հայրենյաց» (1881 թ.), Մոսկվայի «Հայրենասերների միություն» խմբակի (1882 թ.) և այլ կազմակերպությունների, ընկերությունների ու խմբակների գործունեությունից, տալ դրանց քարոզչական, գործնական աշխատանքի գնահատականը, ձեռք բերված արդյունքները: Ներկայացնել հասարակական-քաղաքական մտքի զարգացման առանձնահատկությունները 19-րդ դարի վերջին: Ցույց տալ հասարակական-քաղաքական մտքի զարգացման միտումները, կողմնորոշումները և ձեռք բերված արդյունքները: Արևելյան և Արևմտյան Հայաստանների օրինակներով ցույց տալ իշխող տրամադրությունները ազգային հասարակական-քաղաքական մտքի հորձանուտում, նշել դրանց կենտրոնատեղիների ու հասարակական խմբերի մասին:

3. Բացահայտել առաջադրված խնդիրը՝ ելնելով նրանից, որ արդեն 19-րդ դ. 80-ական թթ. հայ հասարակական-քաղաքական միտքը հասունացում ապրեց, և ազգային կազմակերպությունների ու ընկերությունների առաջացումով էական նախադրյալներ ստեղծվեցին քաղաքական կուսակցությունների առաջացման համար, և, որ դրանք իրենց հերթին ազդակ հանդիսացան հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր փուլի սկզբնավորման համար: Ցույց տալ, որ ազգային երեք կուսակցությունների՝ Արմենական (Արևմտահայաստան, Վան, 1885 թ.), Հնչակյան (Շվեյցարիա, Ժնև, 1887 թ.) և Հայ Հեղափոխական Դաշնակցության (Թիֆլիս, 1890 թ.) ձևավորումը իրականացվեց արևմտահայության ազատագրական հիմքերի վրա: Դրանով իսկ հայ եկեղեցու դերը հասցվեց նվազագույնի, այն փոխարինվեց քաղաքական կուսակցությունների գործունեությամբ, ազատագրական պայքարի կազմակերպչի ու առաջնորդի դերը ստանձնեցին կուսակցությունները, որոնց էլ պետք է փոխարինելու գար կազմակերպված պետականության համակարգը: Այնուհետև եզրահանգել, որ ազգային-ազատագրական պայքարը այդ ամենով թևակոխեց քաղաքականապես ավելի հասուն փուլ՝ ուղեկցվելով ազգային-քաղաքական ուղղվածության շեշտակի խորացմամբ:

4. Բացահայտել սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականությունը 1890-ական թվականներին, դրա դեմ հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Մատնանշել Կ.Պոլսում կազմակերպված Գում Գափուի, Բաբը Ալիի ցույցերը: Սակայն կառավարության վրա խաղաղ ճնշում գործադրելու այդ փորձը ձախողվեց, դրան սուլթանական կառավարությունը պատասխանեց՝ այն գնդակոծելով: Նշել, որ չնայած այն հանգամանքին, որ 1895 թ. հոկտեմբերին մեծ տերությունների ճնշմամբ հաստատվել էր Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, բայց այն չիրագործվեց և ինչու:

Այնուհետև բացատրել, որ երկրորդ փորձը, որ կատարվեց թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու առումով, Հայկական հարցի լուծման վրա հրավիրելու առաջատար տերությունների ուշադրությունը, **«Բանկ Օտոման» գործողությունն** էր, որը գլխավորեց **Բ.Սյունին**: Տալ նրա ձախողման պատճառները և հետևանքները, ինչպես նաև պարզաբանել տերությունների դեսպանախմբերի վարքագիծը այդ գործընթացում, դրանցում առկա հակասականությունը և կիսատ-պռատությունը և որոշիչ իրական պատճառները:

Բացատրել, որ բնականաբար որպես սկսված սուլթանական վայրագությունների տրամաբանական պատասխան բռնկվեցին հուզումներ, սկզբնավորվեց **ֆիդայական-հայդուկային** շարժումը: Ուսումնասիրվող

ենթաթեմայում պարզաբանել **«Դեպի երկիր»** շարժման խորիմաստ էությունը, դրանում կուսակցությունների ակտիվ մասնակցությունը (արմենականներ, հնչակյաններ, ՀՀԴ): Պարզաբանել, որ շարժումը դրսևորվում էր զանազան ելույթների, բողոքների, ահաբեկումների, մեծ ու փոքր ինքնապաշտպանական կռիվների ձևով: Այդ շարքում առանձնացնել 1890 թ. սեպտեմբերին նորաստեղծ Հ.Հ.Դաշնակցության նախաձեռնությամբ կազմակերպված **Սարգիս Կուկունյանի** խմբի արշավանքը, որի 125 հոգանոց ջոկատը փորձում է մտնել Արևմտյան Հայաստան, նպատակ հետապնդելով ոտքի հանել իրենց տաճկահայ եղբայրներին: Սակայն սահմանագլխին այդ հերոսական խմբի գործունեությունը ձախողվում է, դրա մասնակիցներին աքսորում են Սիբիր և Սախալին: Թեմայում միաժամանակ բացահայտվում է ռուսական իշխանությունների երբեմն երկդիմի քաղաքականությունը այդ հարցում նշված ժամանակաշրջանում: Ցույց տալ նշանավոր հայդուկներին և հայդուկապետերին (**Աղբյուր Սերոբ, Անդրանիկ, Հրայր, Գ. Չաուշ** և ուրիշներ), նրանց հերոսական-անձնական և գործնականում ռազմաքաղաքական արդյունքների ձեռքբերման տեսանկյունից հուսահատ-անարդյունք գործունեության նշանակությունը արդի սերնդի պատմաքաղաքական նպատակադրումների ընտրության տեսանկյունից:

Ամփոփելով ցույց տալ, որ ֆիդայական շարժումը ժողովրդական վրիժառության ձև էր, օսմանյան բռնապետական համակարգի դեմ ուղղված յուրատեսակ հայկական ահաբեկչություն, միաժամանակ դրա հետ մեկտեղ համադրել այն այլ երկրների պատմաքաղաքական փորձի հետ՝ բերելով օրինակներ ուրիշ ժողովուրդների, մասնավորապես Բալկանյան ժողովուրդների կյանքից: Պարզաբանել, որ այդ շարժման տարածված վայրերն էին Տարոնը, Մասունը, Վասպուրականը և որ այն գլխավորում էին հայ ազգային կուսակցությունները: Ենթահարցի շրջանակներում ցույց տալ, որ հայ քաղաքական կուսակցությունների գործունեության ամենաակնառու երևույթը ապստամբական ելույթների կազմակերպումն էր Արևմտյան Հայաստանում:

5. 1894 թ. ազատագրական պայքարի կենտրոնատեղին դարձավ Մասունը, ուր Հնչակյան կուսակցությունը կանգնեց այդ ժողովրդական շարժման գլուխ, գլխավորեց այն: Սակայն միևնույն ժամանակ ցույց տալ, պարզաբանել, որ այդ հերոսամարտը ձախողվում է ոչ այնքան կազմակերպվածության, որքան ուժերի չափազանց անբավարար լինելու հետևանքով: Թուրք-քրդական համատեղ ուժերը, **«համիդիե»** ջոկատները արյան մեջ են խեղդում այն, իսկ ղեկավարներին՝ բանտարկում: Վերջում ամփոփել ազգային-ազատագրական շարժման պատմաքաղաքական արդյունքները, տալ գնահատականներ:

Բացատրել, որ հենց այս իրադրությունից ելնելով՝ եվրոպական տերությունները, նկատի ունենալով իրենց սեփական քաղաքական շահերը, հաճախ միջամտում էին Բարձր Դռան գործերին: Ցույց տալ այն 1890-ական թթ. Արևմտահայաստանում ստեղծված տագնապալից և խռովահույզ իրավիճակի օրինակով: Հիմք ընդունելով 1894 թ. Սասունի իրադարձությունները՝ Կ.Պոլսի դեսպանահանձնաժողովը ուսումնասիրում է Սասունի դեպքերը՝ գալով այն եզրահանգման, որ կատարվել է եղեռնագործություն: Դրանից էլ ելնելով՝ երեք մեծ տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը մշակեցին Արևմտահայաստանի 6 նահանգներում այսպես կոչված «մայիսյան բարեռորոգումների» նախագիծը, որը նշանակում էր Հայկական հարցի վերաբացում: Այնուհետև փորձել պարզաբանել, թե ինչու այդ նախագիծը չիրագործվեց: Բացատրել, որ Թուրքիան ստեղծված իրավիճակում գնում է կեղծավոր կիսաքայլի՝ առաջարկելով բարեռորոգումներ անցկացնել ոչ միայն հայաբնակ շրջաններում, այլև երկրի բոլոր մասերում, որ դրանց անհրաժեշտությունը զգացվում է ողջ երկրի մակարդակով: Ամփոփելով թեման՝ բացատրել, որ դա Հայկական հարցը չլուծելու տարբերակ էր, քաղաքականություն, որն իրագործելու ոչ մի ցանկություն սուլթանական կառավարությունը չուներ:

6. Ենթահարցում պետք է բացահայտել միջազգային հարաբերությունների առկա վիճակը Բեռլինի կոնգրեսից հետո ընկած ժամանակաշրջանում: Հարկավոր է ընդգծել, որ Բեռլինի կոնգրեսից հետո, ուր մեջտեղվեց Հայկական հարցը, օգտվելով մեծ տերությունների թողտվական քաղաքականությունից, Աբդուլ Համիդ II-ի ռեժիմն էլ ավելի անտանելի դարձավ, ուժեղացան ոստիկանական բռնությունները, արգելվում էր ոչ միայն բողոքի ցույցերի անցկացումը, այլև արգելվեցին հայկական մշակութային մի շարք հաստատությունների գործունեությունը և «հեղափոխություն», «ազատություն» բառերի օգտագործումը: Ցույց տալ, թե ինչպես քրդական ավարառու հրոսակախմբերից ստեղծվեցին այսպես կոչված «համիդիե» ջոկատները, ուժեղացվեց պանիսլամիզմի քաղաքականությունը: Բացատրել, թե ինչպես թուրքական իշխանությունները այդ ջոկատներն օգտագործեցին հայերին հնազանդության մեջ պահելու և ազգային-ազատագրական պայքարի ու քաղաքական մտքի, ազատախոհության ամեն մի դրսևորում արյան մեջ խեղդելու համար: Բացատրել, որ ամեն մի փորձ, իսկ այդպիսիք արվեցին, եզրեր գտնելու քրդական քաղաքական շրջանների հետ, կանխելու համար հայ-քրդական հակամարտությունը, ինչպես նաև եզրեր գտնելու ազգային այլ խմբերի հետ, հաջողություն չբերեց հայ քաղաքական ուժերին, և գլխավորապես քրդական շրջանների անբայացակամության և չկամեցողության դրսևորման հետևանքով: Փորձել խնդիրը արդիականացնել, կապեր և ընդհանրություններ տեսնել հայ-քրդական ժամանակակից հարաբերությունների հետ:

Թեմայում բացահայտել, որ մեծ տերությունների թողտվության պայմաններում սուլթանական կառավարությունը ոչ միայն Հայկական հարցը շրջափակում է արգելքներով, այլև իրականացնում զանգվածային բռնություններ ու կոտորածներ, որոնց զոհ է գնում շուրջ 300 հազար մարդ, ինչը պարզապես գործնականում Հայոց մեծ եղեռնի ցավալի սկիզբն էր: Պարզաբանել նաև, որ դրան հակազդել որևիցե ռեալ բան ո՛չ արմենականները, ո՛չ հնչակյանները, ո՛չ էլ Հ.Հ.Դաշնակցությունը այդպես էլ ի վիճակի չեղան, չէին էլ կարող, քանզի աշխարհաքաղաքական մեծ որոգայթները անհաղթահարելի խոչընդոտներ էին հարուցել դրանց իրագործման ճանապարհին: Բացատրել, որ մեծ տերություններից յուրաքանչյուրն ուներ իր նպատակադրումը, Ռուսաստանը նոր շահեր էր հետապնդում Հեռավոր Արևելքում, կայզերական Գերմանիան մուսուլմանական քաղաքականության աջակցի դերում էր հանդես գալիս, Անգլիան իր յուրահատուկ շահերն ուներ, և դա էլ հենց աղետաբեր եղավ Հայկական հարցի լուծման ճանապարհին:

7. Բացատրել դարավերջի հայկական ինքնապաշտպանական կռիվների տեղն ու դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունում: Առանձնացնել դրանցից առավել նշանավորները՝ 1895-1896 թթ. Զեյթունի և 1896 թ. Վանի հերոսամարտերը: Ցույց տալ, որ Զեյթունի հայերի հերոսական պայքարը ղեկավարում էին հնչակյանները: Բացատրել Զեյթունի դերը որպես հայկական հերոսականության անառիկ ամրոց: Նկարագրել այդ դեպքերը՝ մատնանշելով, որ 1895 թ. հոկտեմբերին սկսված հերոսամարտն ավարտվում է 1896 թ. սկզբներին, եվրոպական դեսպանների և Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի միջնորդությամբ պատերազմը դադարեցվում, է և հակամարտող կողմերը գնում են փոխզիջումային հաշտության:

Այնուհետև ցույց տալ 1896 թ. Վանի նշանավոր հերոսամարտի ողբերգական ավարտը, որի հետևանքով թուրք-քրդական ավազակային հարձակման հետևանքով զոհվում են 1400 վանեցիներ, արմենական կուսակցության անդամներ: Ցույց տալ նաև Խանասորի 1897 թ. ամռան Հ.Հ.Դաշնակցության կողմից ձեռնարկված արշավանքի նշանակությունը՝ որպես պատասխան Վանի հերոսամարտի մասնակիցների եղեռնական վախճանին:

Վերջում, ամփոփել, տալ գնահատականներ, արժևորել պատմության դասերը:

ԹԵՄԱ 4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ 1900 -1914 ԹԹ.

1. *Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը Արևելյան Հայաստանում: 1903 թ. հունիսի 12-ի օրենքը և հակացարական ելույթները*
2. *Արևելյան Հայաստանը 1905 -1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության ոլորտում: Հայ-թաթարական ընդհարումները*
3. *Հետադիմության հալածանքները և Դաշնակցության գործը*
4. *Արևմտահայերի ազատագրական կռիվները 1900-1907 թթ.*
5. *1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և դրա հետևանքները հայ ժողովրդի համար*
6. *Հայկական հարցի վերարծարծումը 1912 -1914 թթ. և աշխարհաքաղաքական հետևանքները*

1. Բացահայտել կապիտալիզմի զարգացման արդյունքները Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում: Ցույց տալ երկաթուղու, հաղորդակցության ուղիների, քաղաքների, արտադրության (պղնձագործություն, բամբակագործություն, կաշեգործություն, գինու-կոնյակի) զարգացումը և այլն:

Ցույց տալ նաև հայ բանվորության առաջացման օջախները, նրանց ընդհանուր վիճակը: Բացահայտել բանվորական, գյուղացիական, ինչպես նաև ազգային-քաղաքական շարժումների պատճառները: Ցույց տալ հայ իրականության մեջ սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական խմբակների ու կազմակերպությունների առաջացման հիմնական դրդապատճառները, դրանց կողմնկիցների տրոհումը երկու ուղղությունների՝ ռեֆորմիստական-մենշևիկյանի և արմատական-հեղափոխական (**բոլշևիկյան**): Բնութագրել 1903 թ. ձևավորված սոցիալ-դեմոկրատական-բանվորական հայ կազմակերպությունը («**Սպեցիֆիկներ**»):

Հատուկ ընդգծել, որ սոցիալ-դեմոկրատիայի երկու ուղղություններն էլ էական նշանակություն չէին տալիս ազգային հարցին: Պարզաբանել, որ նրանց համար առաջնայինը հասարակության սոցիալական և տնտեսական-ընկերային հիմնախնդիրներն էին, իսկ ազգային՝ երկրորդական էր: Բացատրել, որ այդպես էին վարվում ու այդ գործելակերպն ունեին նաև հայ մարքսիստներ **Թ.Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ս.Սպանդարյանը, Ա.Մելիքյանը, Ս.Կասյանը** և ուրիշներ:

Ենթաթեմայում բացահայտել ցարիզմի հայահալած քաղաքականությունը 20-րդ դ. սկզբին. դպրոցների փակում, գրահրատարակչական գործունեության սահմանափակում, խիստ գրաքննություն, հայ եկեղեցու իրավունքների ոտնահարում և այլն: Ցույց տալ 1903 թ. հունիսի 12-ի

հակաեկեղեցական օրենքի հակահայկական ուղղվածությունը (հայ եկեղեցու կալվածքների ու գույքի բռնագրավում):

Ցույց տալ Հ.Հ.Դաշնակցության և հնչակյան կուսակցությունների գլխավորությամբ հայ ժողովրդի պայքարն այդ օրենքի դեմ, հակացարական միտինգների անցկացումը Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Ալեքսանդրապոլում, Շուշիում, Բաքվում, Երևանում, Թիֆլիսում, Գանձակում և այլուր: Ամփոփելով նյութը, տալ Հնչակյան և Հ.Հ.Դաշնակցության ձեռնարկած ահաբեկչական գործողությունների ընդհանուր պատկերը որպես պատասխան ցարիզմի հակահայ քաղաքականության, որի հետևանքով էլ ի վերջո 1905 թ. օգոստոսի 1-ի ցարական հրամանագրով չեղյալ է հայտարարվում 1903 թ. հունիսի 12-ի օրենքը:

2. Այս ենթահարցում բացահայտել ռուսական հեղափոխության դրդապատճառները, նրա բնույթը և հակաինքնակալական ուղղվածությունը, ինչպես նաև հիմնախնդիրները: Ցույց տալ հայ ազգային կուսակցությունների և, մասնավորապես, Հնչակյան և Դաշնակցության կուսակցությունների մասնակցությունը հեղափոխությանը, վերջինիս կողմից հատուկ պլանի՝ «**Կովկասյան նախագծի**» մշակումը: Տալ Հայաստանում և Անդրկովկասում հեղափոխական շարժումների ընդհանուր պատկերը, բացահայտել դրանց բնույթյան իրական պատճառները: Թեմայի շրջանակներում կարևորել հեղափոխական ընդհանուր մթնոլորտի պայմաններում հրահրված հայ-թաթարական (աղրբեջանական) ընդհանրումների արմատների վերհանումը: Տալ հայ ինքնապաշտպանական խմբերի գործունեության նկարագիրը այդ լարված իրավիճակում, վեր հանել այն հերոսականը, որ կար **Նիկոլ Դումանի, Վարդանի, Դրոյի** և այլոց գործունեության մեջ նշված ժամանակաշրջանում:

Եզրահանգումներում բացահայտել հեղափոխության անկման ու պարտության պատճառները, ինչպես նաև ցարական զիջումների դրդապատճառները (Պետական դումայի հրավիրում, 1906 թ. նոյեմբերի 9-ին **Պ.Ստոլիպինի** հրապարակած գյուղացիական ռեֆորմի մասին օրենքը և այլն): Միաժամանակ տալ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքի բնութագիրը, որով Արևելյան Հայաստանում իրականացվում էին ստոլիպինյան ագրարային քաղաքականության հիմնադրույթները, դրա կիսատ-պռատությունը: Ամփոփելով թեման, տալ հետհեղափոխական վիճակի բնութագիրը: Բացահայտել ռեակցիայի ժամանակաշրջանի (1907-1910 թթ.) ընդհանուր նկարագիրը:

3. Ցույց տալ հեղափոխության պարտության և ռեակցիայի պայմաններում Հ.Հ.Դաշնակցության մեջ սկսված գաղափարական ճգնաժամի ու պառակտման վտանգի պատճառները: Պարզաբանել, թե ովքեր

էին «միհրանականները» իրենց մարտավարությամբ և «երիտասարդ դաշնակցականները»: Ի վերջո, պարզաբանել ներդաշնակցական պառակտումը, դրա հետևանքները: Ցույց տալ, որ ռեակցիայի ժամանակաշրջանը նմանատիպ խմորումներ առաջ բերեց նաև ՌՍԴԲԿ-ում, հնչակյանների և այլ կուսակցությունների շարքերում:

Ամփոփելով թեման՝ ներկայացնել ցարական իշխանությունների հակահեղափոխական գործունեությունը, հատկապես բռնարարքները ազգային կուսակցությունների նկատմամբ: Մասնավորապես անդրադառնալ Հ.Հ.Դաշնակցության նկատմամբ 1907-1912 թթ. իրագործված դատավարության նյութերին: Տալ նաև առաջին աշխարհամարտի նախօրյակին ցարական իշխանությունների՝ հայերի նկատմամբ սիրաշահման քաղաքականության արմատները:

Հանգամանալից բացարել, որ Ռուսաստանյան կայսրության մեջ հայտնի ռեակցիայի՝ հետադիմականության դարաշրջանը, որը համընկավ Ստոլիպինյան ռեֆորմների իրականացման ժամանակաշրջանի հետ, առաջ բերեց նաև հայ իրականության հետառնչվող հիմնախնդիրներ: Հեղափոխության անկումից հետո ռեակցիոն ուժերը հարձակման անցան, հետադիմականության թիրախ դարձավ նաև հայ իրականության մեջ հայտնի ամենաազդեցիկ կուսակցությունը՝ Հ.Հ.Դաշնակցությունը, որի թիվը Ներքին գործերի ժանդարմական վարչության տվյալներով, 1907 թ. հասնում էր 165 հազարի: Ցարական հետադիմականության հարձակումների հետևանքով 1907-1912 թթ. հենվելով իրենց ձեռքի տակ առկա ոստիկանական-քննչական մարմինների տվյալների վրա, որին նպաստեցին նաև բազմաբնույթ զրպարտագրերը, հենց ՀՀԴ ներսում առկա երկապառակտչական քաշքշուկները և բացահայտ մատնությունները, ինչպես նաև Դաշնակցության ներսում բուն դրած անհամերաշխությունը և տարաձայնությունները ռազմավարական խնդիրներում, ցարական իշխանությունները կազմեցին մի ստվարածավալ (40 հազար էջ) դատական գործ, որը պատմության մեջ հայտնի է որպես **«Հ.Յ. Դաշնակցության գործ»** անվանումով.այն վարում էր Նովոչերկասկի նահանգային դատարանի հատուկ գործերի քննիչ **Լիժինը**, իսկ դատապաշտպանների դերում՝ ապագա Ժամանակավոր կառավարության լիդեր և հայտնի փաստաբան **Կերենսկին, Պերեվերզևը, Մակլակովը** և այլք: Դատավարությունը պատմության մեջ մտավ որպես «Լիժինյան դատավարություն» անվանումով: Դատավարության ընթացքում մեղադրանքներ ներկայացվեցին 159 մարդու, այդ թվում **Հովհ. Թումանյանին, Համո Օհանջանյանին, Ավետիս Ահարոնյանին, Սարգիս Մանասյանին, Սիմոն Զավարյանին, Յովհ. Ղազարյանին**: Հարկ է նշել, որ դատավարության

պահին մեղադրյալներից ոմանք, այդ թվում **Ս. Զավարյանը, Նիկոլ Դումանը, Հովհ. Բագրատունին, Դրոն, Մ. Վարանդյանը** և ուրիշներ գտնվում էին արտասահմանում: Ներկայացված մեղադրանքների հիման վրա կալանվածների մի մասը աքսորվեց Սիբիր, մի մասն էլ բաց թողնվեց: Իսկ հետագայում վերահաս Առաջին աշխարհամարտի պարտադրած քաղաքական իրավիճակի փոփոխման և մասնավորապես Հայկական Հարցի վերաբացման հետ կապված՝ շատ մտավորական-հեղափոխական գործիչների նկատմամբ վերաբերմունքը փոխվեց: Նրանց հնարավորություն տրվեց ետ վերադառնալ աքսորից, բանտերից և արտասահմանից:

4. Ցույց տալ արևմտահայության սոցիալ-տնտեսական և անիրավահավասար քաղաքական ծանր վիճակը, սկսված դեգրադացիայի երևույթները, արտագաղթի և այլ բացասական գործընթացների իրական պատճառները: Բացի այդ, համեմատության եզրեր անցկացնել Արևելյան և Արևմտյան Հայաստանների միջև, ցույց տալով ցարական և սուլթանական կառավարության քաղաքականությունների նմանությունն ու տարբերությունները:

Գալ եզրակացության, որ սուլթանական կառավարության քաղաքականությունը հետամուտ էր ջարդարարության, ինչն էլ հանգեցրեց ապստամբական ելույթների առաջացմանը. ամենացայտուն օրինակներից է **1901 թ. Առաքելոց վանքի կռիվը (Մուշ)**: Բացատրել, որ դրանով ազգային-քաղաքական հիմնախնդիրները չլուծվեցին, և 1904 թ. ծավալված իրադարձությունները Սասունում դրա վառ ապացույցն են: Ցույց տալ, որ այն կրում էր զուտ ինքնապաշտպանական բնույթ, իսկ վերջ ի վերջո՝ դատապարտված էր պարտության՝ ուժերի խիստ անհավասարության ու անհամապատասխանության պատճառով, որ դա փոքրաթիվ հերոսական խմբի անհավասար կռիվն էր կազմակերպված պետության դեմ, ինչը բարոյա-քաղաքական մեծ արժեք ուներ:

Ամփոփելով ենթաթեման, տալ հայ ազգային-քաղաքական կուսակցությունների ընդհանուր մարտավարության ճշմարիտ գնահատականը, ինչպես նաև իրատեսորեն արժևորել ձեռք բերված արդյունքները, որոնք ունեն խիստ այժմեական նշանակություն:

5. Նշված պարագրաֆում պարզաբանել թուրքական այսպես կոչված «1908 թ. հեղափոխության» շարժառիթները, դրանում 1889 թ. առաջացած «Միություն և առաջադիմություն» (երիտթուրքեր) կուսակցության հետամտած նպատակները և Հ.Հ.Դաշնակցության մասնակցության շարժառիթները:

Ցույց տալ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման արդյունքները, տալ ձեռնարկված բարեփոխումների և հայերին, հայկական կուսակցություններին, և մասնավորապես Հ.Հ.Դաշնակցությանը տված խոստումների քաղաքական իրատեսական արժեքավորումը:

1908 թ. հուլիսին Մակեդոնիայում գտնվող թուրքական բանակային զորամասերի ապստամբությունը երիտթուրքերի գլխավորությամբ հանգեցնում է սուլթանական ռեժիմի տապալմանը, որի հետևանքով վերականգնվում էր 1876 թ. սահմանադրությունը և հռչակվում էին ժողովրդավարական կարգեր: 1908 թ. երիտթուրքական պալատական-պետական հեղաշրջումից հետո, որին ոչ անտարբեր վերաբերմունք ունեցան, այլ ընդհակառակը, որոշակի ակտիվություն ցուցաբերեցին նաև հայ ժողովրդի արևմտահայ հատվածը ներկայացնող Հայ հեղափոխական դաշնակցությունն կուսակցությունը և այլ հասարակական-քաղաքական ուժեր, հրավիրվեց մեջլիս՝ խորհրդարան, որտեղ ներկայացվելու հնարավորություն ստացան նաև թուրքահպատակ հայերը: Իթթիհաթականների հետ մի ընդհանուր բլոկ կազմած՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը գնաց դեպի Օսմանյան Թուրքիայի խորհրդարանի՝ պառլամենտի ընտրություններին՝ խիստ կարևորելով դրանք, այն ակնկալիքով որ այդ հանգամանքը բարերար ազդեցության կունենա հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, կարևորելով նաև այն հանգամանքը, որ երիտասարդ թուրքերը իրենց նկատմամբ բարեկամական տրամադրվածություն ունեն: **Թուրքական խորհրդարանի կազմում ընտրվեցին 10 հայ երեսփոխաններ**, որոնցից երկուսը իթթիհատականներ էին՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներ էին, ***4-ը՝ դաշնակցականներ, 1-ը՝ հնչակյան, 1-ը՝ հնչակյան այսպես կոչված «անկախներ»*** և այլն: Պառլամենտի երեսփոխան դարձան Կ.Պոլսից ընտրված հայտնի գրող անկախ թևի ներկայացուցիչ, փայլուն հռետոր **Գրիգոր Զոհրաբը** և **Պ. Հալաճյանը**, որին առաջարկվեց հանրային շինարարության նախարարի պաշտոնը, Իզմիրից՝ անկուսակցական **Սպարթալը** և **Հակոբ Պապիկյանը**, որոնք երկուսն էլ Իթթիհաթական կուսակցության անդամ էին, սակայն Պապիկյանը կապված Ադանայի և Հայկական Կիլիկիայի այլ վայրերի աղետալի եղեռնասպան գործողությունների պառլամենտական հետաքննության հետ 1909 թ. հուլիսին իր տանը՝ խորհրդավոր պայմաններում «հանկարծամահ» եղավ, Քոզանից՝ հնչակյան հայտնի գործիչ **Մուրատը** ***(Համբարձում Պոյաճյան)***, Էրզրումից՝ Բանկ Օտոման օպերացիայի հայտնի մասնակից, դաշնակցական **Արմեն Գարոն** ***(Գարեգին Փաստրմաճյանը)*** և **Վարդգեսը**, Մուշից՝ **Գեղամ Տեր-Կարապետյանը**, Սեբաստիայից՝ դոկտոր **Տաղավարյանը**, Վանից՝ **Վահան Փափազյանը** ***(Կոմս)***: Օսմանյան պառլամենտի հայ պատգամավորները, գրեթե առանց բացառության, հայ ժողովրդի ազգային-քաղաքական շահերին նվիրված մարդիկ էին: Հարկ է այս կապակցությամբ նաև ընդգծել մի հատկանշական փաստ. խոսքը վերաբերում է **Անդրանիկ Օզանյանին**, որին առաջարկեցին իր թեկնածությունը առաջադրել թուրքական պառլամենտի պատգամավոր դառնալու համար, սակայն նա կտրականապես մերժեց առաջին հայացքից պատվաբեր թվացող այդ առաջարկը, պատճառաբանելով, որ այդ պառլամենտ կոչվածը ընդամենը երիտթուրքերի կողմից պատրաստված մի նոր ծուղակ է հայության համար: Ընդսմին Անդրանիկը ընդգծում էր այն հանգամանքը, որ վաղ թե ուշ երիտթուրքերը բոլորի գլուխներն էլ կտրելու են, ինչը անհիմն դուրս չեկավ և լիովին հաստատվեց: Այդուհանդերձ, 1908 թ. դեկտեմբերի 17-ին բացված թուրքական խորհրդարանի առաջին նիստով սկսվեց Օսմանյան կայսրության «ժողովրդավարացման» գործընթացը: **Թուրքական պառլամենտի 266 երեսփոխաններից 20-ը հույներ էին, 12-ը՝ հայեր, 5-ը՝ հրեաներ, 4-ը՝ բուլղարներ, 3-ը՝ սերբեր, մեկական երեսփոխան ունեին ուլահները, դրուզները և մարոնիթները: Մնացած 219 պատգամավորները թուրքեր և մահմեդականներ էին:**

Ահա այսպիսի կազմի առկայության պայմաններում էլ հայ պատգամավորները սկսեցին իրենց գործունեությունը թուրքական պառլամենտում: Դատելով առկա փաստերից, կարելի է գալ այն եզրահանգման, որ հայ պատգամավորները օսմանյան պառլամենտում ծավալել են որոշակի օգտաշատ և գնահատելի գործունեություն, մասնակցելով խորհրդարանական տարբեր հանձնախմբերի, և հատկապես ելեմտական և հանրային շինության, երկրագործության բաժինների աշխատանքներին: Օսմանյան պառլամենտում համարձակ և քննադատական բնույթի ելույթներով աչքի են ընկել **Գ.Զոհրապը**, **Գ.Փաստրմաջյանը**, **Վարդգեսը**: Հարկ է, սակայն, ասել, որ հայ երեսփոխանների եռանդուն գործունեությունը գործնականում կենտրոնացած էր վարչատնտեսական բարեփոխումների խնդրի շուրջ: Այն նպատակամղված էր այսպես կոչված «Օսմանյան հայրենիքի» բարեկարգմանը, հայության շահերը շոշափող ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես, Գ. Զոհրապը որպես հեղինակավոր օրենսգետ, հանդես եկավ դատական համակարգի բարեփոխման և վերակառուցման նախաձեռնությամբ, որը օսմանյան պետության աքիլլեսյան գարշապարն էր և երկրում անօրինականության հիմքը, ինչն առավելապես զգացվում էր քրիստոնյաների և առաջին հերթին հայերի նկատմամբ վարվող քաղաքականության մեջ: Հետաքրքիր է նշել, որ **Արմեն Գարոն** էլ կապված ամերիկյան մի ընկերության պլանների

հետ Թուրքիայում, ակտիվորեն ձեռնամուխ եղավ այդ խնդրի իրագործմանը, ձգտելով զարկ տալ եպկաթուղագծերի ծրագրերի իրագործմանը, որի դեպքում արևմուտքից-արևելք շուրջ 3 հազար կմ ձգվածությամբ Ալեքսանդրեթը կապվելու էր պարսկական սահմանի հետ: Օսմանյան պառլամենտի անդամ **Վ.Փափազյանի** կողմից բավականին հեռանկարային և օգտավետ առաջարկներ ներկայացվեցին երկրով մեկ տարբրական նորագույն դպրոցների մի ճյուղավորված ցանց բացելու մասին, տալով դրան աշխարհիկ ուղղվածություն: Վերջինիս կողմից անգամ բավականին առաջադիմական խնդիր առաջադրվեց մեծահասակների համար երեկոյան դասընթացներ բացելու մասին: Կրթական այս առաջադիմական համակարգի մասը պետք է կազմեին արհեստագիտական և ճարտարվեստի միջին ու բարձր դպրոցները, որոնք, սակայն, թուրքական հետամնաց իրականության պայմաններում անիրագործելի մնացին: Նշել, որ հայ պատգամավոր դոկտոր **Տաղավարյանի** կողմից հանրօգուտ առաջարկներ ներկայացվեցին երկրի երկրագործության զարգացման վերաբերյալ, փաստացի համեմատություններ անցկացնելով Թուրքիայի տարբեր մարզերում, որոնք ևս կիսատ մնացին և չկենսագործվեցին: Ընդգծել այն կարևոր փաստը, որ **Գ. Զոհրապին** անգամ առաջարկվեց դատական նախարարի պաշտոնը, սակայն հանգամանքներն ավելի զորեղ գտվեցին և այն ձախողվեց, իսկ **Գ. Փաստրմաջյանը՝ Ա. Գարոն**, մերժեց ստանձնել հանրօգուտ շինության նախարարի պաշտոնը, փոխարենը նույն պաշտոնը պատրաստակամորեն ստանձնեց **Պ. Հալաճյանը**. առաջարկվեց Վանա լճի հարավ-արևմտյան անկյունում իրականացնել ջրանցքաշինարարության մի յուրօրինակ ծրագիր, որի շնորհիվ Վասպուրականի հարավային ափի մի շարք հողամասեր փրկվելու էին հեղեղվելու վտանգից, սակայն այն ևս, շատ այլ ծրագրերի հետ միասին չիրագործվեց: Օսմանյան պառլամենտի հայ պատգամավորները, կենսականորեն շահագրգռված լինելով Թուրքիայի ընդհանուր նորացման և պետաքաղաքական մեքենայի ու տնտեսության բարեփոխման և վերակառուցման ծրագրերի իրականացմամբ, ինչից կշահեր նաև հայ բնակչությունը, հավասարակշռված և հաշվարկված առաջարկներ ներկայացրին հարկային բարենորոգումների վերաբերյալ, խելամիտ լուծումներ առաջադրելով զանազան տուրքերի թեթևացման, որոշ հին տուրքերի անհատույց մարման և դուրսգրման, բանվորական իրավունքների պաշտպանության, գյուղական վարկային բանկերի հիմնադրման և այլնի վերաբերյալ, որոնք քննարկման նյութ դարձան պառլամենտի 1-ին և 2-րդ նստաշրջանների ընթացքում, ընդ որում հայությանը հուզող առաջնային հարցերը մղվում էին հետին պլան: Այդ իսկ պատճառով ընդհանուր

բնույթի հարցադրումներ էին արվում, որոնք կենտրոնանում էին օսմանյան պառլամենտի ճնշված դասակարգերի մասին ելույթների վրա, ծրագրային զարգացումներ առաջադրելով «Օսմանյան հայրենիքի» ամբողջականության» շրջանակներում իրականացվող վարչական մեխանիզմի ապակենտրոնացման, տնտեսական և վարչական մեքենան կանոնավորելու վերաբերյալ, ինչը սակայն հանդիպեց մահմեդական պատգամավորների խուլ դիմադրությանը, որոնք կամեցողություն չդրսևորեցին գործակցել հայերի հետ և անգամ շատ հարցերում հակառակվեցին:

Տեղին է ավելացնել, որ հայերը ներկայացված էին անգամ օսմանյան պառլամենտի Ծերակույտում (այսպես կոչված «Այանում»), որոնց թվում էին հինգ հոգի՝ 1913 թ. Թուրքիայի արտաքին գործերի նախարար դարձած Գաբրիել Նորատունկյանը, Ազարյանը, Երամյանը, Հյուրմյուզ Զ. Տիլպեր էֆենդիները: Սակայն, այդ ծերակուտականներից հայության հետ ամենասերտ առնչություն ունեցավ միայն Գ. Նորատունկյանը:

Մնում է սակայն ավելացնել, որ Հայ Հեղափոխական Դաշնակցության գործիչների մի մասը հաշտվեց ստեղծված իրողության հետ: Այդ իրավիճակից կարծես թե կարելի էր գոհ լինել, հայերը խորհրդարանում մի քանի ձայն ունեին, և դրա համար երախտապարտ էին «սահմանադրական» պայքարի իրենց «եղբայրներին»՝ երիտթուրքերին, և դրանից ելնելով նրանք իրենց ընդդիմախոսներին առաջարկում էին իջնել ինքնապաշտպանության կազմակերպման ահաբեկչական տարբերակի դիրքերից, հրաժարվել ուժի գործադրումից և ապավինել կրթությանը՝ լուսավորչականությանը, ձեռնամուխ լինելով վերջինիս սերմանմանը ժողովրդի մեջ: Գնալով զիջումների՝ հայ քաղաքական կուսակցությունները ճանաչում են թուրքական պետության տարածքային ամբողջականությունը՝ համապատասխան ծրագրային բնույթի փոփոխություններ մտցնելով իրենց ծրագրերում: Ըստ այդմ դադարեցվեց ահաբեկչական-պարտիզանական պայքարը, օրակարգից հանվեց արևմտահայության ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստման հարցը: Հ.Հ.Դաշնակցությունը փոխում է կայսրության տարածքում գործող իր մարտական ղեկավար կենտրոնների գործելակերպը՝ մասնավորապես Տարոն-Վասպուրականի և Կ.Պոլսի Ցուցական-ահաբեկիչ պատասխանատու մարմինների՝ դրանց գործելակերպը հարմարեցնելով նոր իրավիճակին: Սակայն պատմաքաղաքական հետագա գործընթացները ըստ էության միայն բացահայտեցին խորքային քողածածկված գործառույթների ներքին իսկական էությունը, ցույց տվին, թե որքան մեծ է եղել մոլորվածության աստիճանը, որ պատրանքների հետ են նրանք զուր տեղը հույս կապել և և ոչ մի իրապաշտություն չի եղել քաղաքական գոր-

ծիչների գործունեությունում, որ գուցե և պատմահոգեբանական պատճառաբանվածություն և իրականության հետ որոշ խախտում եզրեր ուներ, սակայն վերջ ի վերջո ամենևին էլ արդարացված չէր, ինչը պետք է հանգամանալից բացահայտել և ներկայացնել ընթերցողին: Ըստ այդմ պետք է փաստարկել և ցույց տալ ակնկալվող հայ-թուրք համագործակցության փորձերի սնանկությունը, որի լավագույն ապացույցն էր իշխանությունների թողտվությամբ իրականացված Կիլիկիայի Ադանա նահանգի հայության կոտորածը. սա եղեռնագործության ընդհանուր թուրքական պլանի մասն էր և սկիզբը, որից հետո միայն դաշնակցականները 1911 թ. իրենց կապերը լիովին խզեցին նրանցից:

Ամփոփելով միտքը, հարկ է ընդգծել, որ **Մ. Վարանդյանի** այն տեսակետը, թե «1908 թ. ոսկե տառերով» արձանագրվեց համաշխարհային պատմության էջերում, նոր հորիզոններ բացվեցին Ազատության գաղափարի առաջ, որ մարդկանց նոր զանգվածներ վեր բարձրացան քնից ու անեության անդունդներից և բարձրացրին համաշխարհային քաղաքակրթության դրոշը, ամենևին ապացուցում չգտան պատմական մոտ հեռանկարում, ընդհակառակը թուրքական պատմության այդ էջերը գրվեցին արյունոտ տառերով՝ ոչնչացնելով հայ ցեղի գենոֆոնդի զգալի մասը: Եվ չնայած երիտթուրքերի հետ Հ.Հ. Դաշնակցության անկեղծ համագործակցությանը, դրա դիմաց երիտթուրքական պարագլուխները պարզապես վարձահատույց եղան սպանդով և աքսորներով, տեղահանությամբ ու այլ կարգի բռնություններով: Հ.Հ.Դաշնակցությունը հեռացավ երիտթուրքերի հետ համագործակցության այդ խախտում ճանապարհից շատ ուշ, այն է 1911-1912թթ. հայոց մեծ ցեղասպանության՝ **ԳԵՆՈՖԻԴԻ** նախօրյակին:

Ցույց տալ, որ երիտթուրքերը իրենց հակահայկական ազգային քաղաքականությունում ելնում էին պանթուրքիզմի ծայրահեղ հետադեմ, մարդատյաց գաղափարախոսությունից, որում թուրքալեզու ժողովուրդների միավորման խնդիր էր դրվում՝ «Մեծ Թուրանի» ստեղծման նպատակադրումով՝ Բայկալ լճից մինչև Բալկաններ, և հետևաբար հայության նկատմամբ նրանց ռազմավարությունը ներքուստ խարսխված էր ստի և խաբեության վրա, և այդ ծրագրերում հայերին տեղ չկար: Ընդգծել պանթուրքիզմի վտանգավորությունը հատկապես հայության համար, միաժամանակ բացահայտել դրա այժմեականությունը:

6. Պարզաբանել 1912-1914 թթ. (**Գևորգ V կաթողիկոսի** դիմումագիրը Կովկասի փոխարքային) հայ քաղաքական շրջանների կողմից Հայկական հարցի վերաբացման դրդապատճառները, որի հովանավորողի դերում հանդես եկավ Ռուսաստանը: Բացահայտել այդ քաղաքականության

հետամտած նպատակադրումները՝ կապված Բալկանյան պատերազմների առաջացրած ընդհանուր ոգևորիչ իրավիճակի հետ:

Տալ հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման ռուսական, թուրքական, հայկական և այլ ծրագրերի քաղաքական բնութագիրը, առավելությունները և թերությունները:

Բացահայտել Հայկական հարցում Գերմանիայի ցուցաբերած բացասական դիրքորոշման պատճառները, եսասիրական և եսակենտրոն շահարկումները և Թուրքիայի հետ բարեկամությունը, որը դրսևորվեց նաև ռազմական ձևով: Դրան զուգահեռ ցույց տալ ռուսական ծրագրի պոզիտիվ նկարագիրը, նկատելի հայամետ քաղաքական կուրսը:

1913 թ. ամռանը Կ.Պոլսի ռուսական դեսպանատունը ներկայացրեց հայկական բարենորոգումների նախագիծ, որը պատմության մեջ հայտնի է որպես **«ռուսական» կամ «Մանդելշտամի» նախագիծ** անունով: Ըստ դրա նախատեսվում էր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներից կազմել մեկ նահանգ թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ: Ըստ այդ նախագծի նահանգում կողք-կողքի պետք է գործեին քրիստոնյա և մահմեդական համայնքների ներկայացուցիչները, վերացվելու էին «համիդիե» ջոկատները, թուրքերենի կողքին թույլատրվելու էր նաև հայերենի և քրդերենի օգտագործումը և այլն:

Իսկ արդեն 1913 թ. կեսերին թուրքական իշխանությունները ներկայացրին իրենց նոր նախագիծը, համաձայն որի հայկական վիլայեթները բաժանվելու էին երկու սեկտորների (հատվածների), առանց սահմանագծումների, և որոնց գլուխ որպես կառավարիչներ նշանակվելու էին եվրոպացի վերատեսուչները՝ թուրք օգնականով: Ի վերջո, 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված համաձայնագրի հիման վրա կազմվեց Հայկական հարցի լուծման փոխզիջումային մի տարբերակ, որով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու վարչական հատվածների. մեկն ընդգրկում էր Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի, իսկ մյուսը՝ Էրզրումի, Տրապիզոնի և Սվազի վիլայեթները՝ եվրոպացի քրիստոնյա նահանգապետների գլխավորությամբ /դրանք եղան հոլանդացի **Լ.Վեստենենկը** և նորվեգացի **Ն. Հոֆը**/, 10 տարի ժամանակով: Հետաքրքիր է նշել, որ նրանց նշանակումը այդ պաշտոններում պետք է հաստատվեր սուլթանի կողմից, ինչն էլ հենց վկայում էր այդ բարեփոխումների անլիարժեքության մասին:

Ամփոփելով պարզաբանել Արևմտահայաստանի 6 նահանգներում բարենորոգումներ իրականացնելու նպատակադրումով ընդունված 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի քաղաքական իմաստն

ու նշանակությունը, դրա չափավոր բնույթը: Բացահայտել փոխզիջումային այդ տարբերակի թերությունները, ինչպես նաև առկա տարբերությունները նախորդ՝ ավելի առաջադիմական բարենորոգչական ծրագրերից:

Հանրագումարի բերելով պատմափաստերը, ցույց տալ նաև ընդունված վերջին տարբերակի դատապարտվածությունը, ողջ կիսատպռատականությունը, որը վերջին հաշվով, մեծ տերությունների եսամոլական քաղաքականության միագումարն էր: Սակայն Առաջին աշխարհամարտը անուժ դարձրեց բոլոր նախագծերը, այդ թվում և վերջնական տարբերակը, որով Հայկական հարցը վերաբաղվեց:

<u>ԹԵՄԱ 5</u>. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ (1914 -1918 ԹԹ.)

1. *Ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում*
2. *Հայերի մասնակցությունը պատերազմին: Հայկական կամավորական շարժումը*
3. *1915 թ. Հայոց մեծ եղեռնը և արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերը*
4. *Հայոց ազգային խորհրդի հիմնումը և գործունեությունը*
5. *«Թուրքահայաստանի մասին» դեկրետը (առասպել և իրականություն). Հայկական հարցը 1918 թ.*
6. *Սարդարապատի հերոսամարտը: Հայաստանի անկախության հռչակումը 1918 թ.*

1. Նախքան առաջին աշխարհամարտի սկսվելը և բուն ռազմական գործողություններին անդրադառնալը, հարկ է պարզաբանել, թե որոնք էին դրա ծագման իրական պատճառները և ինչու այն ընդունեց համաշխարհային բնույթ ու մասշտաբ: Խնդիրն այն էր, որ նոր դարաշրջանում տնտեսական և ապրանքաշուկայական հարաբերությունները աշխարհի պետությունների միջև այնքան էին խորացել, որ առանձին հակամարտության ծագումը այս կամ այն պետությունների միջև բնականաբար դիպչում էր մյուսների տնտեսաքաղաքական շահերին՝ առաջ բերելով համընդհանուր աշխարհաքաղաքական ճգնաժամ և ռազմաքաղաքական ուժերի բախում: Բացի այդ, 20-րդ դարասկզբին աշխարհն արդեն բաժանված էր հզոր պետությունների բլոկների միջև, և պայքար էր գնում այն կրկին վերաձևելու շուրջը: Այդ հիման վրա մինչ պատերազմի սկսվելը ձևավորվել էին երկու խոշոր ռազմաքաղաքական խմբավորումներ: Մեկը Եռյակ համաձայնությունն էր կամ **Անտանտը** (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան), իսկ մյուսը **Եռյակ միությունը** (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա): Այն բանից հետո, երբ Եռյակ միությանը հարեցին Թուրքիան և Բուլղարիան, իսկ 1915 թ. Իտալիան հեռացավ այդ խմբավորումից, այն կոչվեց Քառյակ միություն (դաշինք): Ինչպես տեսնում ենք, Թուրքիան, որը կառավարում էր երիտթուրքերի կուսակցությունը, որդեգրեց գերմանամետ ընդգծված կողմնորոշում և իր ընդհանուր ռազմավարությամբ հարեց Քառյակի դաշինքին:

Պետք է իմանալ, որ երկու խմբավորումներն էլ հետապնդում էին նվաճողական նպատակներ: Սակայն առանձնապես ագրեսիվ էր տրա-

մաղրված գերմանական խմբավորումը: Մեզ հատկապես պետք է հետաքրքրեն Օսմանյան Թուրքիայի նկրտումները: Երիտթուրք ղեկավարները, առաջնորդվելով պատերազմի նախօրյակին առաջ քաշված պանթյուրքիզմի գաղափարախոսությամբ, նպատակ էին դրել գրավել Կովկասը, այնուհետև շարժվել դեպի Միջին Ասիա՝ մինչև Անդրբայկալ և հիմնել թուրքալեզու ժողովուրդներից բաղկացած, այսպես կոչված, «Մեծ Թուրան» պետություն: Հասկանալի է, որ այդ ճանապարհին պետք է վերացվեր՝ հայկական սեպը: Ինչպես տեսնում ենք, պանթյուրքիզմի դոկտրինան ուղղված էր ոչ միայն Հայաստանի և հայ ժողովրդի, այլև Ռուսաստանի դեմ:

Հայտնի է, որ առաջին համաշխարհային պատերազմը սկսվել է 1914 թ. հուլիսի 19-ին (ն. տ. օգոստոսի 1-ին): Պատերազմի գործուն ռազմաճակատներից էր Կովկասյանը, որտեղ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ռազմական գործողությունները սկսվեցին հոկտեմբերի 29-30-ին: Այդ գործողությունները ընթանում էին հիմնականում Հայաստանի տարածքում, որից մեծապես տուժում էր հայ ժողովուրդը: Այս հարցը լուսաբանելիս ուշադրություն պետք է դարձնել Կովկասյան ճակատի ռազմական գործողություններին և հայտնի ճակատամարտերին, որոնցից խոշորագույնը 1914 թ. դեկտեմբերից մինչև 1915 թ. հունվարը ընթացած Սարիղամիշի հայտնի ճակատամարտն էր: Այն պատմության մեջ հայտնի է Սարիղամիշի ռազմական գործողություն (օպերացիա) անունով: Մի բան ակնհայտ էր, որ ռուս-թուրքական բոլոր պատերազմներում էլ Ռուսաստանյան կայսրությունը ռազմապես Թուրքիային ծնկի բերելու որևէ խնդիր չի ունեցել: Այդպես եղավ նաև այս պատերազմի ժամանակ: Ռուսական զորքերը հաղթանակներ տարան ոչ միայն Սարիղամիշի մոտ, այլև զարգացնելով ռազմական գործողությունները, 1915-1916 թթ. ընթացքում գրավեցին Արևմտահայաստանի կարևորագույն բնակավայրերը՝ Ալաշկերտը, Մանազկերտը, Բաշկալեն, Վանը, Բիթլիսը, ռազմավարական կարևոր կենտրոն Էրզրումը և այլն: Այնպես որ, երբ 1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում ստորագրվեց զինադադար, ռազմաճակատի գիծը ձգվում էր Տրապիզոն-Երզնկա-Մուշ-Վանա լճի հարավային ափերով դեպի Ուրմիա լիճը՝ ընդհանուր հաշվով 750 կմ երկարությամբ: Այդ նշանակում էր, որ մինչև 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած ճակատագրական իրադարձությունները՝ Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների ամենակուլ հորձանուտների մեջ ընկնելը, գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանը գրավված էր ռուսական շուրջ կես միլիոնանոց զորքերի կողմից: Ռուսական զենքի հաղթանակի գործում, ինչ խոսք, իր մասնակցությունը բերեց նաև հայ ժողովուրդը:

2. Հարկ է նշել, որ կամավորական շարժումը ինքնանպատակ չէր հայության համար, այլ նպատակային ռազմավարություն: Ինչպես հայտնի է, ռուս-թուրքական և ռուս-պարսկական գրեթե բոլոր պատերազմների ժամանակ հայ ժողովուրդը, ձգտելով ազատագրվել պարսկա-օսմանյան լծից, միշտ էլ բազմակողմանի աջակցություն է ցույց տվել ռուսական զորքերին: Այնպես որ առաջին աշխարհամարտի ժամանակ նույնպես հայ ժողովրդի մեծամասնությունը բնազդորեն կողմնորոշվեց դեպի Ռուսաստանը: Սակայն այստեղ հիմնախնդրի բարդությունն այն էր, որ հայության երկու հատվածները հայտնվել էին երկու տարբեր ռազմական խմբավորումներում (արևելահայերը՝ Անտանտի, իսկ արևմտահայերը՝ Քառյակ դաշինքի) և իրենց կամքից անկախ պետք է կռվեին իրար դեմ:

Ռուսական կայսրության սահմաններում ապրող շուրջ 2 մլն հայ ազգաբնակչությունից ռուսական բանակ զորակոչվեց մոտ 250 հազար մարդ: Ուշագրավն այն է, որ բացի այդ, պատերազմի առաջին օրերից իսկ սկիզբ առավ կամավորական շարժումը, որի կազմակերպիչն էր բազմակուսակցական հիմքով գործող Թիֆլիսի հայ Ազգային բյուրոն: **Անհրաժեշտ է նշել, որ ստեղծվեցին ընդամենը 8-10 հազար հոգուց բաղկացած 7 կամավորական ջոկատներ (խմբեր, գնդեր), որոնց հրամանատարներն էին՝ Անդրանիկը, Դրոն, Համազասպը (Սրվանձտյան), Քեռին, Վարդանը (Մեհրաբյան), Գ. Ավշարյանը և Հ.Արղությանը:** Հետաքրքիր է իմանալ, որ Սիրիայի ու Լիբանանի տարածքում գործում էր հիմնականում հայ զինվորներից կազմված նշանավոր Արևելյան կամ Հայկական լեգեոնը, որը անգլո-ֆրանսիական զորքերի շարքում քաջաբար կռվում էր Թուրքիայի դեմ: Մյուս կողմից չպետք է անտեսել, որ մի քանի տասնյակ հազար արևմտահայեր, կատարելով իրենց քաղաքացիական պարտքը, ծառայել են թուրքական բանակում, և նրանցից ոմանք անգամ արժանացել են թուրքական պետության կողմից շնորհվող բարձրագույն պարգևների՝ շքանշանների և մեդալների: Ընդ որում, ռուսական բանակում գործող հայ կամավորները հիմնականում փորձառու հայդուկներ էին, որոնք աչքի ընկան Սարիղամիշի, Դիլմանի, Վանի, Ռևանդուզի, Բիթլիսի, Մուշի, Խնուսի և այլ կռիվներում: Պետք է ցույց տալ, որ կամավորական շարժման նպատակը, ռուսական զորքերին աջակցելով, Արևմտյան Հայաստանի ազատագրությունն էր: Սակայն այդ շարժման դերը ոչ պետք է գերագնահատել և ոչ էլ թերագնահատել, չմոռանալով նշել դրանց ստեղծման բարոյաքաղաքական շարժառիթները:

Հայկական կամավորական շարժման հարցում գոյություն ունի նաև մի թյուր տեսակետ: Հայ և օտարազգի մի շարք հեղինակներ զարգաց-

նում են այն թյուր տեսակետը, թե իբր, եթե չլինեին հայկական կամավորական խմբերը, հայերի միակողմանի ռազմաքաղաքական և բարոյական աջակցությունը Ռուսաստանին, ապա հավանաբար չէր լինի նաև 1915 թ. երիտթուրքերի կողմից «խնամքով» ծրագրված և իրագործված ցեղասպանությունը՝ մեծ եղեռնը: Այնինչ առկա փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան երիտթուրքական կառավարությունը վաղուց էր ծրագրել հայերի բնաջնջման ռազմավարությունը, իսկ կամավորական շարժումը և 1915 թ. առանձին ինքնապաշտպանական կռիվները ընդամենը հարմար առիթ էին իրենց հակահայկական և հայաջինջ ծրագրերը իրականացնելու համար: Ամփոփելով ենթահարցը, կատարել անհրաժեշտ հետևություններ:

3. Այս ենթագլուխը վերաբերում է երիտթուրքերի կողմից իրականացված զանգվածային կոտորածներին և այդ նույն ժամանակ արևմտահայերի մղած առանձին ինքնապաշտպանական կռիվներին: Հանգամանալից փաստարկել, որ 1915 թ. հայ ժողովրդի պատմության ամենառողբերգական էջն է, որ այն ի սկզբանե կազմակերպել և իրականացրել են երիտթուրքական կառավարության պարագլուխներ ***Էնվերը, Թալեաթը, Ջեմալը, Նազիմը, Բեհաեդդին Շաքիրը*** և ուրիշներ: Օգտվելով պատերազմի քողածածկույթից և ռազմական թռուցիկով ստեղծված իրավիճակից՝ նրանք իրականացրին իրենց ջարդարարական դիվային ծրագիրը, որին զոհ գնաց ավելի քան 1.5 մլն մարդ, իսկ 800 հազար հայ էլ դարձավ գաղթական: Փաստերով ներկայացնել հայ ժողովրդին հասցված նյութական, հոգևոր-մշակութային վիթխարի կորուստները:

Հարցը յուրացնելիս ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքի վրա, թե ինչ պլանով ու մեթոդներով է ընթացել այդ մեծ ոճիրը / օրինակ, պարզաբանել իշխանությունների կողմից նահանգներն ու գավառներն ուղարկված այսպես կոչված «հրամանների և հակահրամանների» իմաստը և հետամտած նպատակները, բացահայտել և ընթերցողին ներկայացնել հայ զինվորականության ոչնչացման երիտթուրքական տեխնոլոգիան և այլն/: Ընդգծել, որ այդ հրեշավոր քաղաքականությունը իրագործվել է երեք փուլով: Առաջին հարվածը ուղղվել է հայ մտավորականության դեմ, երբ 1915 թ. ապրիլի 24-ին Կ.Պոլսում և Զմյուռնիայում ձերբակալվեցին ավելի քան 800 հայ մտավորականներ, որոնք աքսորվեցին Թուրքիայի խորքերը և տարբեր պատրվակներով գազանաբար հոշոտվեցին: Նրանք գիտության, գրականության, արվեստի առավել ճանաչված գործիչներ էին /Գ.Զոհրաբ, Դ.Վարուժան և շատ այլ նշանավոր հայ մտավոր-հոգևոր գործիչներ, որոնք զգալի ավանդ ունեին նաև Օսմանյան Թուրքիայի մշակութային, տնտեսական և քաղաքական

կյանքի տարբեր ոլորտներում/: Թուրքական իշխանությունները երկրորդ հարվածն ուղղեցին հայազգի զինվորների դեմ /տարբեր տվյալներով 60-200 հազար մարդ/: Որպես վտանգ ներկայացնող ներուժի՝ նրանց զինաթափեցին և տարբեր եղանակներով կոտորեցին, այդ թվում ոչնչացնելով Բեռլին-Բաղդադ երկաթգծի շինարարության ժամանակ: Եվ, վերջապես, հարվածի երրորդ սլաքն ուղղվեց բուն արևմտահայ խաղաղ բնակչության դեմ, որի գլխավոր դրսևորումներից հանդիսացավ տարբեր խարդախ պատրվակներով իրագործված հայ բնակչության զանգվածային տեղահանությունը և սարսափազդու բռնագաղթը դեպի արաբական անապատների խորքերը, որտեղ իբրև յուրահատուկ բացօթյա համակենտրոնացման ճամբար ծառայեց Դեր-Զորը: Երիտթուրք կառավարության հրահանգները, փաստական նյութը, տեղացի և օտար ականատեսների հուշերը և այլ վավերագրեր ուղղակիորեն հաստատագրում են, որ 1915 թ. իրականացվել է պաշտոնապես ծրագրված ցեղասպանություն, որը մինչև օրս Թուրքիան չի ցանկանում պաշտոնապես պետական մակարդակով ճանաչել: Ներկայումս խիստ արդիական է Հայ դատի գաղափարը, որի մեջ մտնում է միջազգային առումով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը տարբեր երկրների պառլամենտների կողմից և դրա հետևանքը հանդիսացող հայկական հողերի պահանջատիրության ու հատուցման խնդիրը: Սա հայ ժողովրդի ամենանվիրական ու ամենակենսունակ հիմնախնդիրներից է, որին այժմ հետամուտ են և Հայաստանի Հանրապետությունը, և Սփյուռքը:

1915 թ. արևմտահայերի հերոսական ինքնապաշտպանական մարտերը Եղեռնի պատմաշինարարության բաղկացուցիչ և նվիրական բաղկացուցիչն են: Եղեռնի օրերին հայաբնակ առանձին շրջաններ, «Մահ կամ ազատություն» կարգախոսով դիմեցին անձնազոհ և հերոսական ինքնապաշտպանության: Առանձնապես պետք է ուշադրություն դարձնել Վանի հերոսամարտին, որտեղ քաջարի և համառ վանեցիները կարողացան մեկ ամիս շարունակ պաշտպանվել Վանի նահանգապետ Ջևդեթ բեյի գլխավորած 12 հազարանոց զորքի գրոհներից, և որի արդյունքում ավելի քան 120 հազար վան-վասպուրականցիներ փրկվեցին թուրքական կոտորածներից: Սակայն ինքնապաշտպանական կռիվները Մուշ-Սասունում (Դուրան-Բարձրավանդակ), Անդրանիկի ծննդավայր Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռում և այլուր հիմնականում ավարտվեցին անարդյունք, թուրքական բազմաքանակ զորամասերը արյան մեջ խեղդեցին դրանք, և հայության փոքրաթիվ բեկորներ մազապուրծ ապաստան գտան այլ երկրներում: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ 1915 թ. ինքնապաշտպանական կռիվները համարվում են

արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի օրգանական շարունակությունը և կարևոր բաղկացուցիչ մասը, մի անձնազոհ պայքար և նվիրում, որը վկայում է հայ ժողովրդի ազատատենչ ոգու մասին:

4. 1917-1918 թթ. Անդրկովկասի և Հայաստանի քաղաքական կյանքը անխզելիորեն շաղկապված է եղել բուն Ռուսաստանում ծավալվող իրադարձությունների ընթացքին: 1917 թ. փետրվարի 27-ին տապալվեց ցարական ինքնակալությունը, բուրժուադեմոկրատական հեղափոխությունը հաղթեց և խոր հետք թողեց ռուսական քաղաքական գիտակցության ծալքերում, իսկ ինն ամիս անց բոլշևիկների կուսակցությունը **Վ. Լենինի** և **Լ. Տրոցկու** գլխավորությամբ, հմտորեն օգտագործելով հաշտության, հողի, հացի, ազատությունների մասին կարգախոսները, շոշափելի քաղաքական ազդեցություն նվաճեցին և նույն թվականի հոկտեմբերի 25-ին (ն.տ. նոյեմբերի 7-ին) սրընթաց հեղափոխություն կատարեցին ու իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքներին, որ Ռուսաստանում ստեղծված անկայունությունը մեծ լարվածություն և տագնապալից վիճակ առաջ բերեց հայ մտավորական-քաղաքական շրջանակներում, մեծ անհագստություն ապրելով, որ դրանով հարվածի տակ կդրվի ոչ միայն ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի ճակատագրի հարցը, այլև արևելահայության ֆիզիկական անվտանգությունը՝ կապված ակնկալվող թուրքական ներխուժման վտանգի հետ դեպի Անդրկովկասի խորքերը: Անհրաժեշտություն կա լուսաբանել Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (***ՕԶԱԿՕՄ***) և Թիֆլիսի Հայոց կենտրոնական Ազգային խորհրդի գործունեությունը, ինչպես նաև գնահատել **«Թուրքահայաստանի մասին»** դեկրետը:

5. Պարզաբանել, որ հետհոկտեմբերյան իրավիճակը արմատական փոփոխություններ մտցրեց Անդրկովկասյան աշխարհաքաղաքական քարտեզում: Փոփոխված աշխարհաքաղաքական իրավիճակում հայկական որոշ քաղաքական շրջաններ սկսեցին հույսեր կապել Խորհրդային Ռուսաստանի, Լենինի գլխավորած կառավարության հետ՝ լուծելու համար Արևմտահայաստանի հիմնահարցը: 1917 թ. նոյեմբերին Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների խորհուրդը ստեղծեց հանձնաժողով (**Ի. Ստալին, Պ. Պոռշյան, Ռոստոմ, Վ.Ավանեսով, Վ. Տերյան**), որի անմիջական խնդիրը հանդիսացավ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ դեկրետի նախագիծ մշակելը: Ըստ այդ հանձնաժողովի կողմից մշակված ծրագրի, Արևմտյան Հայաստանը պետք է ստանար անկախություն, իսկ Արևելյան Հայաստանը մնար Ռուսաստանի կազմում՝ ներքին ինքնավարության իրավունքներով: Հանձնաժողովի

կողմից Ռուսաստանի Ժողկոմխորհուրդի քննարկանը ներկայացված **«Թուրքահայաստանի մասին» դեկրետի** նախագծում պաշտպանվում էր հայության լիակատար ազգային ինքնորոշման և Արևմտյան Հայաստանում անկախ հայկական պետություն ստեղծելու անքակտելի իրավունքը, միաժամանակ տալով նախնական երաշխիքներ հայ ժողովրդի ինքնորոշման ապահովման համար: Նախագծի հեղինակները Արևմտյան Հայաստանում անկախ և ինքնուրույն հայկական պետության ստեղծման հիմնախնդրի իրագործման համար ենթադրում էին անհապաղ և անմիջապես ձեռնամուխ լինել հայ փախստականների վերադարձի կազմակերպմանը հարազատ բնակության վայրերը, միաժամանակ կազմակերպելով արևմտահայերի խորհուրդ, որը պետք է գլխավորապես զբաղվեր հայ փախստականներին իրենց նախկին բնակավայրերում վերաբնակեցման հարցերով, որոնց համար ռազմական համապատասխան ֆոնդերից պետք է տրամադրվեին վարկեր, որոնց չափաբաժինը որոշելու էին Արևմտյան Հայաստանի խորհուրդը և գլխավոր կոմիսարը փոխադարձ համաձայնությամբ: Ըստ դեկրետի նախագծի, Արևմտահայաստանի այդ հիմնախնդիրների իրագործման համար անհրաժեշտ էր, որ Արևմտյան Հայաստանում շարունակեին մնալ որոշակի բավարար քանակությամբ ռուսական զորամասեր, որոնք գլխավորապես պետք է տեղակայված մնային Էրզրումում, Վանում, Բիթլիսում:

Մանրամասնել, որ 1917 թ. դեկտեմբերի 20-ի և 23-ի քննարկումներից հետո, որոնց ընթացքում ծագեցին որոշակի տարաձայնություններ Ժողկոմխորհուրդի ներսում, **դեկտեմբերի 29-ին Խորհրդային կառավարությունը, հայ քաղաքական գործիչներ Ստ. Շահումյանի, Վ. Տերյանի, Հ. Զավրիյանի** և այլոց ջանքերով, ընդունեց **«Թուրքահայաստանի մասին» դեկրետը**, որը սակայն իր նախնական տարբերակի համեմատ, փոփոխության էր ենթարկել որոշ կարևորագույն դրույթներ, մասնավորապես կապված Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի առկայության և վարկեր տրամադրելու խնդրի հետ: Դեկրետի իրականացումը դրվում էր Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանի վրա: Դրանով խորհրդային կառավարությունը պաշտպանում էր Ռուսաստանի կողմից օկուպացված Արևմտահայաստանի կամ Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրավունքներ, ընդհուպ մինչև լիակատար անջատում: Սակայն դրա կենսագործման համար ժողովրդական կոմիսարների խորհուրդը անհրաժեշտ էր համարում ռուսական զորքի դուրս բերումը Արևմտահայաստանից: Բացի այդ, Արևմտահայաստանի բնակչության անձնական ու գույքային անվտանգությունը ապահովելու նպատակով ենթադրվում էր հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպում: Նախատես-

վում էր իրականացնել հայ գաղթականության վերադարձը դեպի հարազատ բնակության վայրերը: Անհրաժեշտ էր համարվում կազմել Տաճկահայաստանի ժամանակավոր ժողովրդական կառավարություն՝ ժողովրդի կողմից ընտրված: Ըստ այդ հրովարտակի՝ Թուրքահայաստանի աշխարհագրական-քաղաքական սահմանները որոշվելու էին հայ ժողովրդի և մուսուլմանական շրջանների բնակիչների ներկայացուցիչների համաձայնությամբ կովկասյան գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի հետ միասին: Սակայն ձևով գեղեցիկ այս հրովարտակը միս ու արյուն չստացավ: Ռուսական զորքերի վաղաժամ հեռացումը մերկացրեց ռազմաճակատը, որն սկսեց սրընթացորեն քայքայվել և Տրապիզոնից մինչև Ուրմիա լիճը ձգվող 750 կմ երկարությամբ Կովկասյան ռազմաճակատը անռազմունակ ու անպաշտպան դարձավ: Հրովարտակը մնաց որպես սոսկ քաղաքական նրբորեն ձևավորված փաստաթուղթ, իսկ այդ փաստաթուղթը դարձավ չարագուշակ մահաթուղթ հայ ժողովրդի համար, իրականություն դարձնելով թուրքական սպառնալիքը: Դրանով իսկ լիովին ակնհայտ դարձավ Արևմտահայաստանի լենինյան ինքնորոշման իրավունքի ողջ իմաստը: Պարզորոշ դարձավ այդ հրովարտակի հետամտած ողջ ռազմաքաղաքական էությունը, դրա աղետաբերությունը հայերի համար:

Նշել, որ շուտով Խորհրդային Ռուսաստանի ռազմական ժողկոմ Լև Տրոցկու (Լև Դավիդովիչ Բրոնշտեյն) անհավասարակշիռ, խարդախ և վտանգավոր դիրքորոշումը պատերազմի և խաղաղության հարցերում բավարար եղավ, որ առաջին աշխարհամարտում գործնականում պարտություն կրած Գերմանիան նախահարձակ լինի, բոլշևիկյան նոր ձևավորվող զորքերին ջարդուփշուր անի և սպառնա Պետրոգրադին, որի հետևանքով պարտադրված նոր աշխարհաքաղաքական իրողության զոհերի թվում էին նաև հայերը: Գերմանական կողմը այդ հանգամանքը հմտորեն օգտագործեց և բոլշևիկյան Ռուսաստանին պարտադրեց Բրեստ-Լիտովսկի 1917 թ. դեկտեմբերի բանակցությունները, որտեղ բանակցող կողմերն էին Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան, Բուլղարիան Խորհրդային Ռուսաստանը: Ինչքան էլ որ վրդովված էին հայ հասարակական-քաղաքական և մտավորական շրջանները, որոնք զգացմունքային դաշտում փնտրտուքներ էին կատարում և անտեղի ապավինում եվրոպական ու ռուսական կարծեցյալ մարդասիրական դրսևորումներին քաղաքականության ոլորտում, նոր աշխարհաքաղաքական իրողությունները այլ բան պարտադրեցին: Բանակցությունների նախնական փուլում կարծես թե արդարանում էին հայ մտավորական-քաղաքական շրջանների ակնկալիքները, քանզի խորհրդային պատվիրակությունը ներկայացնելով իր կառավարության դիրքորոշումը և

սկզբունքները տարածքների խնդրում, առաջարկեց արգելել պատերազմի ժամանակ գրավված տարածքների բռնակցումը, պարտավորվելով իր զորքերը դուրս բերել գրավված տարածքներից, նույնը առաջարկելով իր ընդդիմախոսներին, ինչը սակայն վերջիններիս կողմից կտրուկ մերժվեց: Ավելին, կայզերական Գերմանիան պարզապես պահանջեց Հայկական հարցը չդարձնել քննարկման առարկա: Դրանից էլ օգտվելով, Թուրքիան բացառեց Հայկական հարցի գոյությունն ընդհանրապես՝ Արևմտահայաստանի տարածքը համարելով Օսմանյան կայսրության արևելյան նահանգներ: Գերմանական կողմի հարձակումը և խորհրդային զորքերի պարտությունը էլ ավելի համարձակ դարձրին Քառյակ միության երկրներին, որոնք վերջնագրի ձևով Ռուսաստանից պահանջեցին Թուրքիային վերադարձնել նրա արևելյան նահանգները, ինչ գործնականում նշանակեց Արևմտյան Հայաստանը հանձնել թուրքերի ողորմածությանը. շատ շուտով Գերմանիան պահանջեց ռուսական զորքերը դուրս բերել նաև Կարսից ու Արդահանից:

Վերջապես, 1918 թ. մարտի 3-ին բոլշևիկյան Ռուսաստանը ընդունեց Քառյակ միության ներկայացրած բոլոր պահանջները: «Թուրքահայաստանի մասին» տխրահռչակ դեկրետից հետո 1918 թ. մարտի 3-ին խորհրդային կառավարության կողմից հաստատված Բրեստ-Լիտովսկի հայտնի հաշտության պայմանագիրը էլ ավելի կործանարար հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար: Ռուսաստանի և Գերմանիայի միջև սեպարատ բանակցությունները Կովկասյան տունը զբաղեցնող ժողովուրդներից հատկապես հայերին կանգնեցրին ճակատագրական երկընտրանքի առաջ: Դա ծանր հարված էր Հայկական հարցի լուծման կողմնակիցներին: Չար աղետ էր վերոհիշյալ պայմանագրի չորրորդ կետը Հայաստանի և Անդրկովկասի համար: Դրանում ասվում էր հետևյալը. «Ռուսաստանը կանի իրենից կախված ամեն ինչ, որպեսզի ապահովի Արևելյան Անատոլիայի գավառների մաքրումը և նրանց օրինական վերադարձը Թուրքիային: Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգները ևս անհապաղ պիտի մաքրվեն ռուսական զորքերից: Ռուսաստանը չպետք է խառնվի այդ օկրուգների պետական իրավական և միջազգային իրավական հարաբերությունների նոր կազմակերպման մեջ»: Թուրքիայի և Ռուսաստանի միջև ըստ էության վերականգնվում էր այն սահմանագիծը, որը գոյություն էր ունեցել մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Հայաստանը հայտնվեց «համաշխարհային հեղափոխության» զոհասեղանին: Այդ բացահայտ առևտուրը շահեկան դուրս եկավ թե՛ բոլշևիկյան Ռուսաստանի և թե՛ Թուրքիայի համար: Առաջին աշխարհամարտում հաղթած Ռուսաստանը, հայտնվելով հոկտեմբերյան հեղափոխության կործանարար հորձանուտներում, ունեցավ շոշափելի տա-

բածքային կորուստներ, աշխարհաքաղաքական իրավիճակը փոխվեց հօգուտ քեմալական Թուրքիայի: Թուրքիային վերադարձվեց ռուսական զորքերի կողմից գրաված Տաճկահայաստանը, ինչպես նաև Կարսը, Արդահանը, Բաթումը: Հայաստանը դատարկվեց, իսկ հայ ժողովրդին հասցվեց մարդկային, բարոյահոգեբանական ու նյութական ահռելի վնաս:

1918 թ. փետրվարի 10-ին իր աշխատանքները սկսեց **Անդրկովկասյան Սեյմը (խորհրդարանը)**, որտեղ ներկայացված էին երկրամասի ազգային-քաղաքական կուսակցությունները. Սեյմի 125 անդամներից 32-ը մենշևիկյան, 30-ը՝ մուսավաթական, 27-ը՝ Հ.Յ. Դաշնակցության, 19-ը՝ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունների (էսէռներ) անդամներ էին: Անդրկովկասյան Սեյմի նախագահ ընտրվեց վրաց մենշևիկ **Ն .Չխենկելին**:

Բրեստ-Լիտովսկը սանձազերծեց թուրք նվաճողներին, և 1918 թ. հունվարի վերջերին խախտելով Երզնկայի (1917 թ. դեկտեմբերի 5-ի) զինադադարը վերջիններս անցան հարձակման: Կարճ ժամանակամիջոցում, ընդամենը երկու-երեք ամսում թուրքերի կողմից վերագրավվեց փաստորեն ամբողջ Արևմտահայաստանը (Երզնկան, Բաբերդը, Մուշը, Խնուսը, Մանազկերտը, Վանը, Էրզրումը և այլ հայկական տարածքներ) և գարնանը թուրք զավթիչները ուղղություն բռնեցին դեպի Անդրկովկաս: Փոքրաքանակ հայկական կորպուսը փորձում էր խոչընդոտներ հարուցել այդ զավթողական նկրտումների իրականացման ճանապարհին: Ստեղծվեց անչափ լարված աշխարհաքաղաքական իրավիճակ: Թուրքական առաջխաղացումը կասեցնելու նպատակով և գոնե նախապատերազմյան, 1914 թ. սահմանավիճակը պահպանելու համար Անդրկովկասյան իշխանությունները 1918 թ. մարտին ձեռնարկեցին բանակցություններ Թուրքիայի հետ Տրապիզոնում: Հարկ է ընդգծել, որ մինչ բանակցությունները, հրապարակ եկավ Բրեստ-Լիտովսկի չարաղետ 1918 թ. մարտի 3-ի պայմանագիրը, որով հայաթափվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև 40 տարի առաջ Ռուսաստանին անցած Կարսի մարզը, ընդհուպ մինչև Ախուրյան գետը: Անդրկովկասյան Սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրի՝ Անդրկովկասյան երկրամասին վերաբերող հոդվածները և որոշեց սեպարատ բանակցություններ վարել Թուրքիայի հետ: 1918 թ. մարտի 14-ին Տրապիզոնում սկսված բանակցություններում Անդրկովկասի պատվիրակությունը գլխավորում էր արտաքին գործերի նախարար **Ա. Չխենկելին**, որին ուղեկցում էին պատվիրակության անդամներ **Հ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը**: Թուրքական կողմը անդրկովկասյան պատվիրակությունից կտրուկ պահանջեց ընդունել Բրեստ-Լիտովսկին հաշտության պայմանագրի

պայմանները, ըստ որոնց նախատեսվում էր զորքերը դուրս բերել Կարսի, Արդահանի, Բաթումի շրջաններից: Հենց դրանից էլ ելնելով, Թուրքիան էլ ավելի վճռականորեն պահանջեց Անդրկովկասը անկախ հայտարարել, որպեսզի բացառի դրսի միջամտությունը և հանգիստ իրագործի իր ռազմավարական նպատակադրումները: Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը Օսմանյան պետության շրջանակներում թուրքական կողմն անընդունելի էր համարում՝ այն համարելով Թուրքիայի ներքին գործ: Միաժամանակ, ելնելով Վրաստանի վեհապետական շահերից, վրաց մենշևիկները ամեն ջանք գործադրեցին, որպեսզի Թուրքիայի տարածքային նկրտումները բավարարվեն ի հաշիվ Կարսի, Կաղզվանի, Օլթիի շրջանների: Բանակցությունների ընթացքում, Չխենկելին ճարպկորեն մանևրելով, Սեյմի կողմից ստացավ արտակարգ լիազորություններ, ինչը նրան հնարավորություն տվեց ընդառաջ գնալու թուրքերին և պատրաստակամություն արտահայտելու վերջինիս հանձնելու Օլթիի շրջանը, Արդահանի շրջանի հարավային և Կաղզվանի շրջանի արևմտյան մասերը: Սակայն թուրքական կողմն անզիջում գտնվեց և պահանջեց 48 ժամվա ընթացքում ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և հայտարարել Անդրկովկասի անկախությունը: Այդ մասին տեղեկացվեց Անդրկովկասի կառավարությանը, որը համաձայնվեց զիջել Կարսի մարզը և Արդվինի շրջանը: Սակայն Թուրքիան դրանով չբավարարվեց և նոր վերջնագիր ներկայացրեց Անդրկովկասյան Սեյմին: Չսպասելով Թիֆլիսից ստացված պատասխանին, Չխենկելին անդրկովկասյան պատվիրակության անունից ամբողջությամբ ընդունեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Թուրքիան չբավարարվեց եղածով և ոգևորված իր զորքերի հաջողություններից, պահանջեց Կարսի, Կաղզվանի, Արդահանի, Բաթումի անվերապահ վերադարձ: Նման իրավիճակում Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը մտավ փակուղի և բանակցությունները ընդհատվեցին: Ելնելով ստեղծված իրավիճակից, Անդրկովկասյան Սեյմը դիմեց բնակչությանը՝ թուրքական պահանջների և նոր հարձակման դեմ համախմբվելու կոչով: Տրապիզոնի բանակցություններն ավարտվեցին անարդյունք, և դրանից հատկապես տուժեցին Հայաստանը և հայ ժողովուրդը: Սեյմում միաբանություն չկար, և ստեղծված իրավիճակում Անդրկովկասն ինքնաբերաբար մղվեց դեպի քաղաքական անկախություն, ներքին և արտաքին քաղաքականության մի շարք հիմնախնդիրներում անհամերաշխությունը և ազգային- քաղաքական տարբեր ուժերի տարբերակումը հանգեցրին Անդրկովկասյան Սեյմի փլուզմանը և ազգային նոր պետությունների ձևավորմանը:

6. Այս ենթագլխում պարզաբանել, թե ինչ ռազմաքաղաքական հանգամանքներ նպաստեցին 1918 թ. հունվարի վերջից թուրքերի հակահարձակմանը Կովկասյան ռազմաճակատում: Ինչպիսի՞ ռազմավարություն ուներ Անդրկովկասյան նորաստեղծ կառավարությունը 1918 թ. մարտի 3-ի վավերացված Բրեստի հաշտության պայմանագրի գործադրման ընթացքում: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց հայկական զինուժը թուրքական զորքերի առաջխաղացմամբ ստեղծված իրավիճակում: Հանգամանալից բացահայտել Թուրքիայի քաղաքականությունը Տրապիզոնի և հետագա բանակցությունների ժամանակ, և հստակ պարզել, թե ինչու էր վերջինս ցանկանում անջատ հաշտություն կնքել Անդրկովկասի անկախ պետության հետ:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Մայիսյան հերոսամարտերը, ուր ըստ էության դրված էր Հայաստանի և հայության լինել-չլինելու հարցը: 1918 թ. մայիսի վերջին տասնօրյակում հայկական զինված ուժերը գերմարդկային ճիգերով կարողացան կասեցնել թշնամու առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքերը: Հիրավի, անանց նշանակություն ունեցան Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Ուշագրավ է հերոսամարտի համաժողովրդական բնույթը: Դրվատանքի են արժանի հմուտ և քաջարի հրամանատարները /**Դանիել բեկ Փիրումյան, Մովսես Սիլիկյան, Կ.Շենուր, Դրո** և այլ նվիրական ռազմաքաղաքական գործիչներ/: Հերոսամարտերի ողջ խորհուրդը արտահայտվում էր նրանով, որ այդ հաղթական ճակատամարտերով հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու մարդկային և ազգային-պետական իրավունքը: Սարդարապատի հերոսական ճակատամարտաշարքը որոշակի առումով կարելի է համարել Հայոց Հայրենական պատերազմն ընդդեմ թուրք ոսոխի Ավարայրի, իսկ մեր ժամանակներում արցախյան պատերազմի ու Շուշիի ազատագրման հետ:

Այս ենթագլխում պետք է ներկայացնել Հայաստանի անկախացման գործընթացը, որը իրենից ներկայացնում էր պատմական օբյեկտիվ օրինաչափություն, հանդիսանալով նախընթաց պատմաքաղաքական զարգացման արդյունքը և հետևանքը: Անդրադառնալով անկախության խնդրին, հարկ է ընդգծել, որ նախ 1918 թ. ապրիլի 9-ին (ն.տ.22-ին) Թուրքիայի պահանջով Անդրկովկասը հռչակեց իրեն անկախ հանրապետություն: Սակայն վրացիներից, հայերից և ադրբեջանցիներից կազմված այդ դաշնակցային հանրապետությունը բավականաչափ կենսունակ չգտնվեց արագ փլուզվեց, քանզի այդ երեք ժողովուրդները մեկ պետա-

կանության մեջ չկարողացան իրար հետ համերաշխ լինել և համագործակցել ռազմաքաղաքական և տնտեսական ոլորտներում, ինչը նրանց տարաբնույթ և իրարամերժ քաղաքական կողմնորոշումների արդյունք էր, և դրանից ճարպկորեն և հմտորեն օգտվեց Անդրկովկասի խորքերը թափանցող Թուրքիան, որը հեռահար նպատակներ ուներ տարածաշրջանում:

Պարզաբանել, որ ինքնին հասկանալի ռազմաքաղաքական հանգամանքներում, կարճ ժամանակամիջոցում երեք ազգային-տարածքային միավորներից կազմված անհամերաշխ և տարակարծություններից ներքուստ տրոհված և բզկտված Անդրկովկասյան դաշնությունը քայքայվեց և հերթականությամբ՝ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հռչակեցին իրենց անկախությունը: **Հայաստանի անկախության վճիռը կայացվեց 1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից, որը կազմվեց Ն. Ադբալյանի կողմից**: Այդ հռչակագրին իրական և քաղաքական ներուժ տվեց Մայիսյան հերոսամարտը: Միաժամանակ փաստել, որ միայնակ և անօգնական, ներքուստ տագնապալի և վեհերոտ քայլերով առաջխաղացման ձգտող նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, հունիսի 4-ին Թուրքիայի հետ կնքեց Բաթումի ոչ շահավետ և մինչև վերջ խորապես չհաշվարկված հաշտության պայմանագիր շատ ծանր պայմաններով, կարծես թե դրանով իսկ անտեսելով Սարդարարապատյան հերոսամարտի հաղթական ռազմաքաղաքական արդյունքները: Ներկայացնել Բաթումի հաշտության պայմանագրի կետերը և համեմատել Բրեստի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հատվածին:

Ամփոփելով, կարելի է նշել, որ այդուհանդերձ, վեցդարյա ընդմիջումից հետո վերականգնվեց Հայոց անկախ պետականությունը, որով, փաստորեն, սկսվում է մի նոր ժամանակաշրջան հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ:

ԹԵՄԱ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

1. *Հայկական պետականության կազմավորումը: Իշխանության մարմինների ձևավորումը*
2. *Պետական անվտանգության համակարգի ձևավորումը*
3. *Հայաստանի կառավարության արտաքին քաղաքականությունը և Հայկական հարցը*
4. *Արցախը և Զանգեզուրը 1918-1921 թթ.*
5. *1920 թ. Մայիսյան ապստամբությունը և դրա հետևանքները*
6. *1920 թ. թուրք-հայկական պատերազմը և Հայաստանի Հանրապետության անկումը*

1. Սկզբում պետք է անդրադառնալ այն պատմաքաղաքական իրադրության և հանգամանքի ներկայացմանը, թե ինչպիսի բարդ աշխարհաքաղաքական պայմաններում ձևավորվեց հայոց պետականությունը, երբ սրընթաց պատմաքաղաքական զարգացումները հաջորդում էին մեկը մյուսին, իրենց ամենակուլ հորձանուտների մեջ առնելով հատկապես փոքր ժողովուրդներին, որոնք չգիտեին ինչպես դիմագրավեն իրենց ճանապարհին հանդիպող փորձություններին: Ընդամենը 12 հազար քառ. կմ տարածքի վրա հառնեց հայկական պետականությունը ի դեմս Առաջին հանրապետության, որը չորս կողմից շրջափակված էր թուրք-թաթարական մութ և հակահայկական տրամադրություններով լեցուն զանգվածներով: Երկրում ապաստան էին գտել 300 հազար գաղթականներ: Համընդհանուր տնտեսական քայքայումը, սովը և աղքատությունը սովորական երևույթ էին:

Անգամ անդրանիկ կառավարությունը դրսում էր ստեղծվել, որը հուլիսի երկրորդ կեսին դժկամությամբ ժամանեց հայրենիք, դժվարությամբ համակերպվելով նոր զարգացումներին: Հանգամանալից ներկայացնել այն կարևորագույն պատմական փաստը, որ 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որի անդրանիկ կառավարության լիազորություններն ստանձնած Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդն իրեն հռչակեց հայկական գավառների գերագույն կառավարիչ և իր առաջնակարգ խնդիրներից մեկը համարեց պետական կառույցների ստեղծումը: Այդ գործընթացը բարդ էր, հակասական և ոչ միանշանակ, ինչը պայմանավորված էր տարածաշրջանում գործող աշխարհաքաղաքական ուժերի որոշակի փոխդասավորությամբ և նրանց միջև մղվող պայքարի ուժգնությամբ: Մեծ ջանքերի գնով ձևավորվեցին պետական իշխանության մարմինները՝ կառավարությունը, խորհրդարանը,

դատարանները, տեղական ինքնավարության մարմինները (զեմստվոնները), բանակը, դիվանագիտական կապերը, պետականության խորհրդանիշները և այլն: Ցույց տալ, որ պետական կառուցվածքի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը պառլամենտական ժողովրդավարական հանրապետություն էր, որտեղ առկա էին՝ բազմակուսակցական քաղաքական համակարգ, խոսքի և մամուլի ազատություն, միտինգների, ցույցերի, գործադուլների անցկացման իրավունքներ և այլն: Խորհուրդ է տրվում ուսանողին փորձ կատարել համեմատություն անցկացնելու Հայաստանի առաջին և մերօրյա հանրապետությունների քաղաքական համակարգերի ու ժողովրդավարության մակարդակների միջև: Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ են նկատվում:

2. ՀՀ անկախության պաշտպանության առաջնահերթ գործերից էր Զինվորական նախարարություն (1918 թ.) ձևավորման գործընթացը: ՀՀ զինվորական նախարար **Ռուբեն Տեր-Մինասյանի** տվյալներով Հայկական բանակի ընդհանուր թիվը 40 հազար էր, որից սակայն միայն 25 հազարն էին կանոնավոր մարտական ուժեր, մոտ 6 հազարը՝ զանազան խմբեր էին:

Կարելի է ավելացնել, որ հայկական բանակի իրական թվակազմը, նրա իրոք մարտունակ կորիզը, կարծում ենք, տատանվել է 16-18 հազարի շրջանակներում: ***Այսպես, ըստ համահավաք տվյալների, հայկական բանակի ճակատային (այսինքն՝ ռազմաճակատային խնդիրներին պիտանի) զինվորների թիվը 1920 թ. հասնում էր 24.715 մարդու, սպաներինը՝ 1515-ի, վարչական սպաներինը՝ 309-ի, կամավորներինը՝ 4023 մարդու և այլն: Ընդհանուր առմամբ, ըստ ընդհանուր հաշվարկի ստացվում է այդ նույն 40 հազարանոցից քիչ ավելի թիվը:***

Այդ ճանապարհին կարևոր քայլ էր նաև ՀՀ պետական անվտանգության համակարգի տարբեր օղակների ստեղծումը և ուղղորդումը: Պետք է բացատրել, որ հնարավոր չէ պատկերացնել մի պետություն, որը զուրկ լինի ազգային-պետական անվտանգության համակարգից և նրա բաղկացուցիչ մաս կազմող հետախուզական ու հակահետախուզական ծառայություններից: Հայաստանի Հանրապետության հետախուզության կարկառուն դեմքերից մեկը՝ ***Տիգրան Դեվոյանցը, շատ դիպուկ նկատել է, որ*** «հետախուզությունը պետության աչքն ու ականջն է»: Հենց այդ նկատառումներից ելնելով՝ ՀՀ կառավարությունը 1918 թ. երկրորդ կեսին ձեռնամուխ եղավ պետական-ազգային անվտանգության համակարգի մարմինների ձևավորմանը՝ որոշակի գումարներ հատկացնելով իր չափազանց աղքատիկ բյուջեից: Եվ այսպես. 1918 թ. օգոստոսի 13 -ին ՀՀ նախարարների խորհուրդը, քննարկելով զինվորա-

կան նախարարության միջնորդությունը՝ ավիացիայի, հետախուզության, ռադիոհեռագրի համար հատկացնել 6 միլիոն ռուբլի, այդ թվում 20 հազար ռուբլի հետախուզության համար, ևս 20 հազար ռուբլի՝ հակահետախուզության համար, 1919 թ. սեպտեմբերի 1-ի նիստում որոշվեց հատկացնել 535 հազար ռուբլի, 1920 թ. մայիսի 8-ին՝ 657 հազար ռուբլի:

1919 թ. ապրիլի 14-ի հրամանագրի համաձայն հետախուզական բաժանմունքի խնդիրները որոշակիացվեցին: Հետախուզական և հակահետախուզական մարմիններն ստեղծվեցին ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի կազմում, որն ուներ հետևյալ բաժինները՝ ընդհանուր (պետ՝ կապիտան **Մ.Ի.Դվեռնիցկի**), օպերատիվ (պետ՝ փոխգնդապետ Վ. Պրիտոմանով), հետախուզական (պետ՝ փոխգնդապետ **Ա.Կ.Շնեուր** (եղել է հայկական զորքերի Սարդարապատի զորախմբի շտաբի պետ), 1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. ապրիլ՝ կապիտան **Վ.Գ.Սուրադյան** (անկուսակցական), 1920 թ. ապրիլից մինչև հունիսի վերջը՝ կապիտան **Տ.Թ.Դեվոյանց** (ՀՀԴ անդամ, Դրոյի դասընկերը), 1920 թ. հուլիսից մինչև ՀՀ խորհրդայնացումը (դեկտեմբերի 2-ը)՝ պորուչիկ **Մ. Ն. Դոդոխյան**):

Հետախուզական բաժնի համակարգում աշխատեցին նաև պոդպորուչիկ **Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը** (հանձնարարությունների գծով սպա, այնուհետև՝ հետախուզության մշտական գործակալ Վրաստանում, հայ մեծ նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի որդին), Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչության պետ, հետախուզության գծով գործերի ուղղորդիչ մարմնի դեկավար գեներալ **Հ.Ա.Քիշմիշյանը**, ենթասպա **Արշակ Սարգսյանը** (մշտական գործակալ Բաքվում), **Գրիգորի Երամովը** (դիտորդ Վրաստանում), պոդպորուչիկ **Սիմոն Հովսեփյանը** (գրասենյակի և Ղամառլուում հետախուզության վարիչ) և ուրիշներ: Հակահետախուզության գործունեությունը դեկավարում էր Նորին Մեծության ռումինական ռազմածակատի զորակայանին կից Սևծովյան նավատորմի գլխավոր հրամանատարի շտաբի հետախուզության և հակահետախուզության բաժնի նախկին պետ, գործերի բերումով ծովակալ Կոլչակին անձամբ լավ ճանաչող, ծովակալության գծով պորուչիկ **Արտեմի Նիկիտայի Հովհաննեսովը՝ *Հովհան Խան-Կատուրսկին***, որը, գալով հայրենիք, նվիրվեց երկրի անվտանգության համակարգի ստեղծման գործին:

Այդ համակարգն սկսեց աշխատել և դարձավ հետախուզության գործի կազմակերպման կարևոր օղակ ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ մասնավորապես Վրաստանում, ինչ-որ չափով Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում, Թուրքիայում, Իրանում և այլուր:Այս առումով պետք է կարևորել, օրինակ, գնդապետ **Մ.Մ. Զինկևիչի, Տ.Դեվոյանցի** և այլոց դերը վրաց-հայկական 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմում, փոխգնդապետ **Ա.Կ.Շնեուրի** ակտիվ մասնակցությունը 1919 թ. սկզբին Նոր Բայազետի գավառի մահմեդականների խռովության ճնշման ուղղությամբ ձեռնարկված «Զոդ-Բասարգեչարյան» հրաշալի օպերացիային: Միանգամայն օրինաչափ է, որ հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի աշխատակիցները վերահսկեցին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկու թշնամական գործունեությունը և գաղտնազերծեցին նրա կողմից Բաքու ուղարկված մի շարք ծածկագրված հեռագրեր՝ նպատակաուղղված Հայաստանի շրջաններում հակապետական ելույթների կազմակերպմանը, Զանգիբասարում ապստամբական դրության սրմանը, ՀՀ իշխանությունների տապալմանը և ՀՀ տարածքի օրինական ու անբաժանելի մասը կազմող Զանգիբասարի շրջանի բռնակցմանը Ադրբեջանին

Հայկական հետախուզական ծառայության ջանքերով է գործնականում հաջողվել կանխել Ադրբեջանի Հանրապետության ագրեսիան ՀՀ նկատմամբ 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսած մինչև 1920 թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած տևական և համառ մարտերում (նշված հիմնախնդիրը հայ պատմագիտության բոլորովին, բացարձակապես չուսումնասիրված հիմնահարցերից է): Վերջին հաշվով, այստեղ կարևորն այն է, որ հայ հետախույզները այս պարագայում պարզապես հաջող են գործել և 200-300 հազար ռուբլու դիմաց ձեռք բերել կարևորագույն տեղեկատվություն՝ Զանգեզուրի վրա ենթադրվող հարձակման պլանը, որ գործնականում իր դերն է խաղացել **Գ. Նժդեհի** կողմից գլխավորվող զորամասերի կողմից Ադրբեջանի դեմ տարած վճռորոշ հաղթանակում՝ ապահովելով ՀՀ անվտանգությունը և պաշտպանունակությունը Զանգեզուրի սահմանագծում:

Հայկական հետախուզական ծառայության պատմության ուշագրավ էջերից է դեպի էրզրում, Վան և Արևմտյան Հայաստանի այլ կարևոր քաղաքներ 1919 թ. գարնանը կապիտան **Տիգրան Դեվոյանցի** կատարած այցը, նրա արդյունավետ գործունեությունը Կոստանդնուպոլսում, որտեղից Հայաստան ուղարկվեց կարևոր տեղեկույթ տարբեր քաղաքական փոփոխությունների, քեմալական ուժերի ձեռնարկումների և դաշնակիցների վերաբերմունքի ու դիրքորոշման մասին, ինչ ուղղութեամբ եւ երբ թրքական ուժերը պէտի յարձակուէն Հայաստանի վրայ ու գրաւեն Կարսը, Օլթին, Սարիղամիշը, Արդահանը, Իգդիրը եվ այլն: 1919 թ. դեկ-

տեմբերի մոտերքը Տիգրան Դեվոյանցը ՀՀ զինվորական նախարարության ղեկավարության պահանջագրով ետ է կանչվում Կ. Պոլսում իր կարևոր առաքելությունից, ուր պետք է մնար մինչև 1920 թ. մայիսը:

Հետախուզական այդ փաստաթղթերի իրական արժեքը նաև այն է, որ դրանք փաստում են, որ հայկական բանակի անհաջողությունների և սայթաքումների անմիջական մեղավորները հետախուզության սպաները չէին, թեկուզև և նրանք էլ այդ ամենից բոլորովին անմասն չէին. այստեղ առաջին հերթին մեղավոր և մեղսակից էին կաբինետային գեներալները և կուսակցական-քաղաքական առաջնորդները, որոնք չափազանց մեծ և ոչ արդարացված վստահություն ունեին Անտանտի եղբայրակիցների նկատմամբ:

Ակներև է սակայն, որ հատուկ ծառայությունների թուլությունն արտահայտվեց նրանում, որ մասնավորապես 1920 թ. աշնանը բռնկված թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, համեմատաբար աղոտ պատկերացումներ ունեին թուրքական բանակի թե՛ թվաքանակի, թե՛ պլանների ու առհասարակ շատ հարցերի վերաբերյալ: Հետևանքն այն եղավ, որ չկարողացան անհրաժեշտ արդյունավետությամբ հակազդել **Ք. Կարաբեքիրի** բանակի հետախուզական մարմինների գործունեությանը: Այդ փաստը խիստ մասնակիորեն հաստատվում է թեկուզ նրանով, որ տարբեր հեղինակներ հակասական տվյալներ են բերում այդ ժամանակաշրջանի թուրքական բանակի իրական կազմի և թվաքանակի մասին: Արխիվային փաստաթղթերն ակնհայտորեն վկայում են, որ ՀՀ հետախուզական ծառայությունը ոչ միայն աշխատել է արժեքավոր տեղեկատվություն հայթայթել թշնամական ուժերի կողմից նախապատրաստվող ու ծրագրավորվող սադրանքների մասին, այլև, ձեռք բերելով թանկարժեք և լուրջ տեղեկատվություն՝ որոշակի քայլեր է ձեռնարկել՝ հակազդելու թշնամական գործողություններին՝ մերկացրել և կանխել հակառակորդի լրտեսների ծավալած գործունեությունը ՀՀ տարածքում, հնարավորինս արդյունավետ ու գործուն միջոցներ է ձեռնարկել բանակը զորեղացնելու ուղղությամբ, փորձել է շտկել նրանում տեղ գտած թերությունները: Այդ է վկայակոչում **Ա.Գյուլխանդանյանը**: Հետախուզական ծառայության հայթայթած տեղեկատվության կարևորությունը հաստատում է նաև **Ս. Վրացյանը**:

Ավելին, **Ռ. Հովհաննիսյանը**, բերելով փաստեր թուրքական նախապատրաստությունների և այն մասին, որ դեռ 1918 թ. Թուրքիայի ռազմական նախարարը արտոնել էր Անդրկովկասում գտնվող բանակային սպաներին ծառայության մտնել Հյուսիսային Կովկասի և Ադրբեջանի հանրապետության զորքերում, իսկ նոյեմբերին թույլատրեց ի դեմս Նուրի

փաշայի վերջինիս հետ պայմանագիր կնքել, որով թույլատրվում էր օսմանյան բանակի սպաներին ու զինվորներին հոժարակամ ծառայության մտնել ադրբեջանական բանակում, որոնք հետագայում գործուն դեր խաղացին հայ-ադրբեջանական սահմանային կռիվներում, ինչպես նաև մասնակցել Երևանի նահանգում հրահրված խռովություններին, հաստատում է, որ հայկական հետախուզությունը տեղեկացված էր այդ մասին: Այնուհետև այդ կապակցությամբ **Ռ. Հովհաննիսյանը** նկատում է, որ հենց դրանում էր «իրավացի» Ք. Կարաբեքիրը, գտնելով, որ հայերը երբեք չէին կարող այնքան պարենամթերք ու պաշարներ ձեռք գցել, որ պահեին 30.000-անոց զորք, և որ առավել ևս Անդրանիկի համար անհնարին կլինի նույնիսկ 10.000 «մուրացկան հայեր» հավաքել», որ հենց այդ պատճառով էլ «Հայաստանը չի կարողանա իրականացնել արևելյան վիլայեթների միացումը առանց դաշնակից տերությունների գործուն մասնակցության, որի համար հղված անվերջ խնդրանքները մնում էին անպատասխան»: Հենց այդ հանգամանքից «տագնապած» **Ա. Ահարոնյանը** ահազանգում է Փարիզի Հաշտության Վեհաժողովին, սակայն անարդյունք և անարձագանք, դա որևէ կերպ ազդեցություն չունեցավ Խորհրդային Ռուսաստանի և ազգայնական Թուրքիայի միջև հաստատվելիք վերահաս կապերի վրա:

Այդ կապակցությամբ դեռ 1920 թ. մայիսին Դեվոյանցը եկել էր այն եզրակացության, որ նկատի ունենալով ստեղծված պայմանները՝ ինքը անհավանական չի համարում, որ թուրքերը կսկսեն ռազմական գործողություններ Հայաստանի դեմ՝ խորտակելու համար հայկական պետականությունը: Նա նույնիսկ պնդում է, որ «ՀՀ պատերազմական նախարարությունը և Փարիզի Հայաստանի պատվիրակությունը դեռ 1920 թ. ապրիլին գիտեին տաճիկ-մեծամասնական հարձակումների մասին»:

Դատելով հետախուզական բաժանմունքի 1920 թ. սեպտեմբերի 25-ի ամփոփագրից՝ մինչև թուրք-հայկական պատերազմի սկսվելը, օգոստոսի 16-ին, Ք. Կարաբեքիրը հայտարարություն է արել այն մասին, որ իրենց դաշնակիցները՝ բոլշևիկները, իրենց շարունակ մատակարարել են զենք ու զինամթերք, որի շնորհիվ դժվար օրերը մնացել են ետևում: Հետևաբար, հարկ է արձանագրել, որ ՀՀ կուսակցական-քաղաքական ղեկավար շրջաններում լուրջ չէր ընդունվում քեմալաթուրքական-բոլշևիկյան համագործակցության հնարավոր և գործնական հեռանկարը, որովհետև անսքափ հաշվարկներ կային, որ հաղթանակած Անտանտան մոտ ապագայում վճռականորեն ու անվերապահորեն կայացնելու էր «հիվանդ մարդու»՝ Թուրքիայի դատավճիռը, որի հետևանքով էլ իրականացվելու էին սևրյան հույսերը և խոստումները: Կարելի է նաև փաստել,

հենվելով որոշ տվյալների վրա, որ անգամ Թուրքիայի նկատմամբ հաղթական 1919 թ. Անտանտի երկրները քողածածկված եզրեր էին պահպանում դեպքերի և իրադարձությունների ոչ շահավետ զարգացումների պարագաներում Թուրքիայի քեմալական առաջնորդների հետ հնարավոր համաձայնության գալու համար:

Այն, որ 1918-1920 թթ. ՀՀ հատուկ ծառայությունները իրենց ընձեռված հնարավորությունների շրջանակներում փորձել են աշխատել առավելագույնս արդյունավետությամբ, սակայն նրանք, հաղթահարելով ահռելի ֆինանսատեխնիկական և կադրային դժվարություններ, այդուհանդերձ, ի վիճակի չեղան կանխելու թշնամական պետությունների և, մասնավորապես, Թուրքիայի քայքայիչ գործունեությունը:

3. Պետք է իմանալ, որ ՀՀ-ն կազմակերպված պետություն էր ոչ միայն իշխանության կառույցների իրավական-քաղաքական կարգավիճակի և կազակերպման տեսանկյունից, այլև միջազգային իրավունքի տեսակետից: ՀՀ-ն ճանաչում էին աշխարհի 30-ից ավելի պետություններ, այդ թվում նաև՝ մեծ տերությունները:

Փորձենք պարզաբանել ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Այդ ուղղություններից մեկը հնարավորինս բարիդրացիական և բազմակողմանի դիվանագիտական ու ռազմաքաղաքական հարաբերությունների հաստատումն էր Հայաստանի Հանրապետության անմիջական հարևանների հետ, որոնք, սակայն, ամենևին էլ հարթ չընթացան: 1918 թ. դեկտեմբերի 13-31-ի ընթացքում տեղի ունեցավ հայ-վրացական կարճատև պատերազմ, որի ժամանակ **Դրոյի** գլխավորությամբ գործող 6 հազարանոց հայկական զորքը տպավորիչ հաղթանակ տարավ գեներալներ **Ցուլուկիձեի և Մազնիևի** գլխավորած 12 հազարանոց վրացական զորքի նկատմամբ, որի արդյունքները կարող էին արդյունավետ լինել Հայաստանի Հանրապետության համար, եթե չլիներ Անդրկովկասում գտնվող բրիտանական և ֆրանսիական ռազմաքաղաքական ներկայացուցչությունների վրացամետ դիրքորոշումը և վճիռը: Այն ավարտվեց **Լոռու «Չեզոք գոտու»** ստեղծմամբ: Անհամեմատ ավելի բարդ էին հարաբերությունները Թուրքիայի և Ադրբեջանի հետ, որոնք հավակնություններ ունեին անվիճելի հայկական տարածքների նկատմամբ և շարունակական ընդհանրումներ ու թուրքաբարական խառվությունններ էին կազմակերպում ՀՀ դեմ: Ե՛վ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի ռազմավարության նպատակն էր կազմաքանդել ՀՀ-ն և տարածքային առումով անդամահատել հայոց երկիրը:

Այս ենթագլխի մյուս կարևոր մասը հայկական հարցն էր, որն էլ **կազմել էր ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունը:** ՀՀ

կառավարությունը համոզվածություն ուներ, որ Առաջին աշխարհամարտում մեծ արհավիրքով անցած հայ ժողովուրդը դաշնակիցների՝ Անտանտի տերությունների օգնությամբ պարտված Թուրքիայից հետ կստանա Արևմտյան Հայաստանը և այն միավորելով ՀՀ հետ կստեղծվի միասնական հայկական պետություն՝ Միացյալ և Անկախ Հայաստան, ու դրանով արդարացի լուծում կստանա Հայկական հարցը:

Արևմուտքում ակտիվ գործում էին հայկական երկու պատվիրակությունները (**Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի**), կարծես, լուծվում էր Հայաստանի մանդատի (հովանավորության) խնդիրը, 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյում կազմվեց Թուրքիայի հետ կնքվելիք ապագա պայմանագրի նախագիծը, իսկ օգոստոսի 10-ին Սևրում ստորագրվեց պայմանագիրը (որով ՀՀ-ին էին միացվելու արևմտահայ 4 նահանգներ՝ շուրջ 90 հազար քառ.կմ տարածք դեպի Սև ծով ելքով. Հայաստանի տարածքը դառնում էր ավելի քան 160 հազար քառ. կմ), որը ՀՀ անունից ոսկե գրչով ստորագրեց Փարիզում ՀՀ պատվիրակության ղեկավար **Ա.Ահարոնյանը**, սակայն այդ պայմանագիրը մնաց թղթի վրա և այդպես էլ չկենսագործվեց աշխարհաքաղաքական բարդ զարգացումների հետևանքով: Այստեղ կարևոր է իրական փաստերի լույսի տակ, համադրելով այդ ժամանակաշրջանին վերաբերող կարևորագույն աղբյուրները, լուսաբանել ու գնահատել Արևմուտքի իրական քաղաքականությունը Հայաստանի և Հայկական հարցում: Թե ինչու՞ չիրագործվեց Սևրի պայմանագիրը, դրա բազմաբնույթ և ընդերքային պատճառները պետք է որոնել այդ ժամանակվա միջազգային հարաբերությունների, աշխարհաքաղաքական ուժերի դասավորության հորձանուտային ծալքերում, նաև մանրազնին վերհանելով Հայաստանի Հանրապետության կառավարության վարած արտաքին քաղաքականության անժխտելի սայթաքումները և աններելի սխալները, ինչպես նաև սխալ և անհեռանկարային քաղաքական հաշվարկները, քաղաքական կարճատեսությունը և Սևրյան որոշումներով չափից ավելի ոգևորվելը: Ահա նման հարցերի քննարկմամբ կարելի է ըստ էության լուծել ենթագլխում առաջադրված հիմնախնդիրների հանգամանալից պարզաբանումը:

4. Հայաստանի Առաջին հանրապետության անկախության հռչակումից հետո (1918 թ. մայիսի 28) ամենախճճվածը և արյունոտը դարձավ տարածքային խնդիրը: Հներին ավելացան նոր հիմնախնդիրներ: Ընդ որում, ակնթարթորեն վերակողմնորոշվեցին Անդրկովկասյան Սեյմի այսպես կոչված ազգային կուսակցությունները, հատկապես ադրբեջանականը, որից շատ ետ չէին մնում վրացական մենշևիկները: Առանձնակի սուր հակասություններ առաջացան Հայաստանի և Ադրբեջանի

միջև Արցախի և Սյունիք (Զանգեզուրի) հարցում, ինչպես նաև Նախիջևանի նկատմամբ, որոնց բնիկ ժողովուրդը հայերն էին: Արցախ-Զանգեզուրի շուրջ 300 հազար հայությունը աներկբա չընդունեց Ադրբեջանի գերիշխանությունը և պայքարի դուրս եկավ ազգային-տարածքային իրավունքների պաշտպանության և Մայր Հայրենիքի հետ վերամիավորվելու համար: Հարկ է սակայն ընդգծել, որ Արցախի համար պայքարի, բախման սկզբնական փուլում (1918 թ. երկրորդ կեսին) Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով ծանրագույն տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակում, ի վիճակի չեղավ շոշափելի օգնություն ցուցաբերել Արցախին և Զանգեզուրին, որից էլ չհապաղեցին օգտվել հակառակ ուժերը: Միաժամանակ ՀՀ կառավարությունը պաշտոնական հայտարարություններ արեց, որ Լեռնային Ղարաբաղը (սա նեղացված մոտեցում էր հարցին և մեր օրերում էլ նման ոչ համալիր մոտեցումը հարցին հանգեցրել է անկանխատեսելի հետևանքների հայ-ադրբեջանական հակամարտությունում) Հայաստանի Հանրապետության անբաժան մասն են և համապատասխան որոշումներ ընդունեց այդ շրջանները կառավարելու կարգի մասին: Այդ երկրամասի կառավարումը Հայաստանի կառավարությունը հանձնեց Զանգեզուրի Ազգային խորհրդին, որը վերակազմավորվեց Ղարաբաղ-Զանգեզուրի շրջանային խորհրդի և, որը գործելու էր Հայաստանի Հանրապետության անունից, նրանից ստանալով որոշակի ֆինանսառազմական օժանդակություն: Որպես կենտրոնի ներկայացուցիչ՝ տարածաշրջանի թեժ այդ կետը մեկնեց նշանավոր կապիտան **Արսեն Շահմազյանը**, որն իր վճռական և հաստատակամ գործողություններով շփոթության մեջ գցեց թշնամուն և կաշկանդեց նրա ուժերը՝ հակառակվելով անգամ Անդրկովկասի բարձրագույն անգլիական էմիսարներին: Նրան հետագայում փոխարինեց ոչ պակաս հայտնի **Սերգեյ Մելիք-Յոլչյանը**:

Եվ այնուամենայնիվ, կյանքը ցույց տվեց, որ այդ ամենը անբավարար էին կասեցնելու թշնամու գերակշռող ուժերը, որոնց օժանդակում էին անգլիացիները: Մասնավորապես ճնշումներ գեներալ Թոմսոնի կողմից,որն իր ոչ երկիմաստ քաղաքականությամբ օժանդակում էր Ադրբեջանի մուսավաթականներին: Միաժամանակ, Արցախի և Զանգեզուրի հարցում ՀՀ կառավարությունը առաջնորդվում էր արտաքին քաղաքականության այն խախուտ ակնկալիքով և վստահությամբ, որ Փարիզի խաղաղության հրավիրվելիք վեհաժողովը ազգերի ինքնորոշման արդարացի սկզբունքներով կլուծի նաև հայ-ադրբեջանական տարածքակոիվը, ուստի և ձեռնպահ էր մնում ուժային լուրջ գործադրումներից (ինչը կյանքը ցույց տվեց, որ քաղաքական շահերի ապահովման առումով ավազի

վրա կառուցված քաղաքականություն էր): Դրան հակառակ հարևան մուսավաթական Ադրբեջանը դիմում էր ամեն մի միջոցի տարածքին տիրելու (և կաշառքի, և սպանդի, և կողոպուտի, և առհասարակ ամեն քայլի):

Իսկ 1918 թ. ամռանը Ղարաբաղում ստեղծված իշխանության ինքնուրույն մարմինը՝ Ազգային խորհուրդը, երկար ժամանակ ոչ միայն չերկնչեց, այլև վստահությամբ պայքարում էր թշնամական գերազանցող ուժերին՝ հույս ունենալով մետրոպոլիայից օգնություն ստանալ: Ազգային խորհուրդը 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. ընկած ժամանակահատվածում իր հրավիրած 10 համագումարներում և դրանից հետո էլ՝ մինչև ՌԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեի բյուրոյի (Կովբյուրոյի) 1921 թ. հուլիսի 5-ի տխրահռչակ որոշումը, չի ընդունել և չի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, չնայած եղել էին նաև վտանգավոր շրջադարձեր, քաղաքական սայթաքումներ:

Այստեղ խոսք է գնում Արցախի և Զանգեզուրի հայության ազատագրական կռիվների մասին: Ադրբեջանը հավակնություններ ուներ ոչ միայն Արցախի և Զանագեզուրի, այլև Շարուր-Նախիջևանի և անգամ Սևանա լճի ավազանի նկատմամբ: Այս խնդրում երկդիմի, ադրբեջանամետ քաղաքականություն էր վարում Անդրկովկասում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանը համարվում էր Անտանտի «փոքր դաշնակիցը», իսկ Ադրբեջանը՝ ոչ: Անգլիայի միջամտությամբ էր, որ կասեցվեց **Անդրանիկի** զորախմբի առաջխաղացումը դեպի Շուշի և Արցախ, ստահող պատճառաբանությամբ, որ հակառակ դեպքում Փարիզում կայանալիք խաղաղության վեհաժողովում չեն պաշտպանի Հայկական Հարցը: Նույն Անգլիայի գիտությամբ էր, որ 1919 թ. սկզբներից Ադրբեջանը ջանում էր Լեռնային Ղարաբաղը միացնել Ադրբեջանին: Պատմաքաղաքական այդ վայրիվերումների ընթացքում տեղ գտած վտանգավոր շրջադարձերը և քաղաքական կոպիտ սայթաքումներն ունեցան իրենց բացասական աշխարհաքաղաքական հետևանքները.

1919 թ. օգոստոսի 12-ին կայացած Ղարաբաղի 7-րդ համագումարը, քննելով ստեղծված դրությունը և համոզվելով, որ դրսից ոչ մի օգնություն չի կարող ստանալ, անգլիացիներն էլ ըստ էության պաշտպանում են ադրբեջանցիներին, իր հերթին ՀՀ կառավարությունն էլ ի վիճակի չէ լուրջ ռազմաքաղաքական աջակցություն և իրական օգնություն հասցնելու, և այդ գործում կառավարության և մասնավորապես առանձին ռազմական գործիչների կողմից թույլ տրվեցին անուղղելի սխալներ ու քաղաքական սայթաքումներ, որոնցից փորձեր արվեցին դուրս գալ անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում, սակայն ապարդյուն:

Անդրանիկին ու Դրոյին, ինչպես նաև ադրբեջանցիների դեմ մի շարք հաղթանակներ տարած **Արսեն Շահմազյանին** ռազմաքաղաքական իրադարձություններում մասնակցությունից մեկուսացնելուց հետո մուսավաթական Ադրբեջանը անցնում է լայնածավալ գործողությունների Ղարաբաղի հայկական բնակչության, նրա օրինական ազգային-պետական իրավունքների նկատմամբ:

Ծանր ու թեթև անելով և կշռելով սեփական հնարավորությունները՝ Ղարաբաղի Ազգային խորհուրդը օգոստոսի 15-ին որոշեց ընդունել Բաքվի հետ համաձայնությունը, ինչի արդյունքում ստորագրվում է 1919 թ. օգոստոսի 22-ի տխրահռչակ համաձայնագիրը, «հուսալով», որ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը իբր թե «անվերապահորեն և արդարացիորեն» լուծվելու է մեծ տերությունների եվրոպական Հաշտության վեհաժողովում: Ստեղծված իրավիճակում **Վ. Թոմսոնը, Դ.Շատելվորտը** բացահայտ սիրաշահում էին Ադրբեջանին: 1919 թ. հունվարի կեսերին արցախցիներին և զանգեզուրցիներին է պարտադրվում հայտնի հայատյաց, հայության շրջանում դահճի համբավ ունեցող Խոսրով բեկ Սուլթանովի ռեժիմը: Բնականաբար, Ադրբեջանի քաղաքական գործիչ Սուլթանովը դա համարեց «նոր դարաշրջան» Ղարաբաղի կյանքում (Ադրբեջանի տեսանկյունից այսպիսի մոտեցումը միանգամայն ճիշտ էր և արդարացված): Եվ ինչպես միանգամայն իրավացիորեն նշում է ՀՀ հայտնի պետաքաղաքական և կուսակցական գործիչներից մեկը՝ **Ս. Վրացյանը**. «Նոր դարագլուխ, դժբախտաբար, չբացվեց, բայց Սուլթանովը իրավունք ուներ հպարտանալու, որովհետև, թեև ժամանակավոր կերպով, Ղարաբաղը դառնում էր Ադրբեջանի մաս: Հիրավի, «ժամանակավոր»-ը «մշտական» դարձնելը ապագայի հիմնահարց էր, և ազրբեջանցի գործիչները չէին հրաժարվում այդ մտքից»: Ադրբեջանն ամեն տեսակի որոգայթ լարեց՝ կոտրելու համար ղարաբաղցիների դիմադրական ոգին, օգտագործելով նաև ռազմուժ, որին հայերն, անշուշտ, պատասխանում էին, ինչպես կարող էին:Սուլթանովի և անգլիացիների խոստումը, համաձայն 1919 թ. օգոստոսի Ղարաբաղի Ազգային խորհրդի 7-րդ համագումարի որոշման, ապահովելու գնեն հայ բնակչության անվտանգությունը, չկատարվեց, ավելին կողոպուտներն ու խաղաղ բնակչության ջարդերն էլ ավելի ուժեղացան: 1919 թ. նոյեմբերին Ղարաբաղից անգլիացիների հապշտապ հեռանալուց հետո Սուլթանովը այնտեղ հրավիրեց նաև թուրքական զորքեր: Ինչպես տեսնում ենք, Սուլթան բեկ Սուլթանովին, այդուհանդերձ, հաջողվում է խաբեությամբ և նենգաբար հաղթահարել Արցախի հայության դիմադրությունը, և պարտադրել 1919 թ. օգոստոսի 22-ի իրավակարգը, որի համաձայն Արցախը պարտավորվում էր ժամանակավորապես ենթարկվել Ադրբեջանին՝ մինչև Փարիզի

Խաղաղության վեհաժողովի «արբիտրաժային» որոշումը, որի հայանպաստ որոշման մեջ, ցավոք սրտի, ՀՀ կառավարությունը ոչ մի կասկած չուներ, ինչն էլ, ըստ էության, հայկական կողմի քաղաքական սխալ հաշվարկների արդյունք էր, քաղաքական կոպիտ վրիպում, և վերջին հաշվով՝ պարտություն Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական հակամարտություններում: Այդ կապակցությամբ դիպուկ նկատում է **Ռ. Հովհաննիսյանը**. «Ժամանակավոր կառավարումը մի ազգու և խոշոր քայլ էր դեպի մշտական տիրապետություն: Ինչ մարտավարություն էլ ընդուներ ապագայում Հայաստանի Հանրապետությունը, նրան այլևս չէր հաջողվելու ստիպել Ադրբեջանին հեռանալու այդ հայաբնակ լեռնաշխարհից: Բացի իր կպչուն համառությունից, Ադրբեջանն օգտվեց բրիտանական հրամանատարների հովանավորությունից, Փարիզի Հաշտության Վեհաժողովի հապաղումներից՝ վիճելի տարածքի նկատմամբ գործնական միջոցներ ձեռք առնելու հարցում և հայկական կառավարության ընդհանուր անկարողությունից»:

Փետրվարի 19-ին Սուլթանովը պահանջեց Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի մաս: Իրադրությունն էլ ավելի շիկացավ այն բանից հետո, երբ 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 5 -ը տեղի ունեցած իր 8-րդ համագումարում Ղարաբաղի Ազգային խորհուրդը չեղյալ հայտարարեց իր 7-րդ չարաբաստիկ համագումարի որոշումը և կրկնեց 1-6-րդ համագումարների որոշումները ՀՀ հետ վերամիավորվելու համար: 1920 թ. փետրվարին համարյա ադրբեջանական ողջ բանակը՝ մոտ 10 հազար հոգի, կենտրոնացած էր Ղարաբաղի ճակատում: 1920 թ. մարտի 23-ին Սուլթանովը թուրք-ադրբեջանական միացյալ զորաճակատներով ներխուժեց Շուշի և այնտեղ կազմակերպեց կոտորած, որի զոհը դարձան ավելի քան 10 հազար մարդ: Ղարաբաղի հայերը, մերժելով Ադրբեջանի իշխանությունների բոլոր անօրինական պահանջները, ապստամբեցին՝ պաշտպանվելով ադրբեջանական իշխանությունների վայրագություններից: Ապրիլի 15-ի վիճակով հակառակորդը դուրս էր շպրտված Արցախի զգալի մասից: Սակայն հարկ է ընդգծել, որ կարծես թե այդ ապստամբությունը կազմակերպված էր անփորձ մարդկանց ձեռքով: Հետևանքները, ինչպես նշում է Ս.Վրացյանը, կարող էին լինել շատ ավելի աղետավոր, եթե ապրիլի 13-ին Ղարաբաղ չհասներ Դրոն իր էքսպեդիցիոն զորամասով: Նա իր ձեռքը վերցրեց շրջանի իշխանությունը, ապրիլի 15-ին զորահավաք հայտարարեց Վարանդայում և Դեզակում, ամրացրեց ճակատները և 45 օր մնաց Ղարաբաղում: Ապրիլի 22-ին Թաղավարդ գյուղում հրավիրվեց Ղարաբաղի Ազգային խորհրդի 9-րդ համագումարը, որը 44 ձայնով ընդդեմ մեկի մի անգամ ևս որոշեց մերժել Ադրբեջանի իշ-

խանության գերակայությունը և Ղարաբաղը համարել ՀՀ անքակտելի մաս, ելնելով այն կարևոր հանգամանքից, որ Շուշիի վրա ուխտադրուժ հարձակումով և կոտորածներով Ադրբեջանն ինքնին արդեն խախտել է կնքված վերընշյալ համաձայնագիրը, և այդ մասին տեղյակ պահել Մոսկվայում գտնվող ՀՀ ներկայացուցչի միջոցով Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը: Նահանգապետ Սուլթանովը չհամարձակվեց լրջորեն դիմադրել, և մնաց Շուշիում շրջափակված վիճակում, իսկ այդ նույն ժամանակ կազմվեց Արցախի ժամանակավոր կառավարություն, որի մեջ մտան քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչներ: Ավելին, ՀՀ կառավարության 1920 թ. ապրիլի 23-ին նիստում որոշվեց պաշտպանել մայր հայրենիքի հետ վերամիավորվելու արցախահայության պահանջը: Արցախի ժամանակավոր կառավարությունը որոշում է պաշտոնապես ընդունել ՀՀ դրոշը, զինանշանը, օրհներգը, դրամը, և ենթարկվել Զանգեզուրի նահանգապետությանը:

Սակայն ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումով իրադարձություններն այլ ընթացք ստացան՝ նոր սրացումների տեղիք տալով: Հեղկոմներ ստեղծվեցին Շուշիում, Կարյագինոյում, Աղդամում և այլ բնակավայրերում: Սուլթանովը սթափ գնահատելով ստեղծված վիճակը և խորհրդային զորքերի մուտքը Արցախ՝ որոշեց զգեստափոխվել, ստեղծեց Ղարաբաղի Հեղկոմ և իրեն հռչակեց նախագահ, սակայն այն լուրջ չընդունվեց, դրա դեմ բողոքեցին նաև արցախահայերը և այն մայիսի 14-ին լուծարվեց, Սուլթանովը ձերբակալվեց, տարվեց Բաքու, սակայն հանգամանքների բերումով ազատվեց և անցավ Պարսկաստան: Դրությունը նոր բարդացումներ ունեցավ: Ստանալով Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը՝ Ադրբեջանը ավելի հաստատակամ պահանջ դրեց Ղարաբաղից ՀՀ զորքերը դուրս բերելու համար: Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Հուսեյնովը բազմիցս առանց այլևայլության հանդես եկավ հակահայկական հայտարարագրերով՝ պահանջելով Արցախ-Ղարաբաղը համարել Ադրբեջանի անքակտելի մաս: ՌԽՖՍՀ-ի ներկայացուցիչներ **Ս.Օրջոնիկիձեն և Ս.Կիրովը** պահանջեցին հայկական զորքերը դուրս բերել Արցախից: Տեղի տալով՝ հայկական զորամասը Դրոյի հրամանատարությամբ նահանջեց դեպի Զանգեզուր: ՀՀ կառավարությունը Ռուսաստանի հետ օգոստոսի 10-ին կնքած պայմանագրով տվեց իր համաձայնությունը Կարմիր բանակի կողմից Ղարաբաղի, ինչպես նաև Զանգեզուրի և Նախիջևանի ժամանակավոր օկուպացման մասին: Սակայն այդ նույն ժամանակ Ադրբեջանի ղեկավար **Ն.Նարիմանովը** Ղարաբաղում ուժեղացնում էր դիրքերը, որին որոշակիորեն աջակցում էին անգամ հայ գործիչներ **Ա.Միկոյանը, Լ. Միրզոյանը, Հ.Նազարեթյանը** և ուրիշներ, իսկ Նարիմանովի դրածո Ասադ Կարաևը գնաց հայ պապաշտոնյաներին կաշառելու ճանապարհով, այդ նպատակի համար կառավարությունից ստանալով շուրջ 200 միլիոն ռուբլի:

1920 թ. մայիսի սկզբին 11-րդ Կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի զորամասերը Եվլախով մտան Արցախ, որին ներկայացնող պատվիրակությունը **Սահակ Տեր-Գաբրիելյանի** գլխավորությամբ գնաց հայերին ոչ այնքան ձեռնտու լուծումների ճանապարհով, և ընդհակառակը, Դրոյի հետ հանդիպման ժամանակ կտրականապես պահանջեց հայկական զորամասերը դուրս բերել Արցախից, որին ի պատասխան Դրոն հայտարարեց, որ նման պահանջը հակասում է իր իսկ բոլշևիկյան Ռուսաստանի կողմից ազդարարած ազգերի ինքնորոշման սկզբունքին, ելնելով այն կանխադրույթից, որ Արցախը վերամիավորվել է մայր հայրենիքի հետ: Ինքը՝ Դրոն, մայիսի 25-ին հարկադրված լքեց Արցախը և վերադարձավ Գորիս, իսկ մայիսի 26-ին Թաղավարդում կայացած Ազգային խորհրդի 10-րդ համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց խորհրդային, և ստեղծեց հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ:

Հայաստանի խորհրդայնացմամբ արցախահայության խնդիրն էլ ավելի խճճվեց: Չնայած 1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի նիստում Ադրբեջանի նախագահ **Նարիման Նարիմանովին** հանձնարարվեց հեղկոմի անունից հռչակագիր կազմել և դրանում ընդգծել Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային-տարածքային բոլոր տեսակի վեճերի վերացման մասին և Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարել Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մաս, որի մասին էլ ազդարարվում է Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում 1920 թ. դեկտեմբեր 1-ին՝ որպես եղբայրական քայլ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման առթիվ: Սակայն ինչպես պարզվեց, դա Ադրբեջանի ղեկավարների «հանճարեղ» մանևրն էր: Իսկ այդ ուղղությամբ առաջին քայլը կատարվեց այն ժամանակ, երբ Նարիմանովի ստորագրած հայտնի հռչակագիրը «Կոմունիստ» թերթում տպագրվեց միանգամայն նրբին աղավաղված տարբերակով, նրանում ընդամենը կտարվել էր սրբագրական բնույթի «ուղղում» այն մասին, որ արցախցիները կարող են իրենց հարցը վճռել հանրաքվեի միջոցով:

Հետևապես, կարելի է գալ եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունը չկարողացավ ցանկալի արդյունքների հասնել և ուժեղացնել ՀՀ դիրքերը՝ կանոնավոր բանակի զորամասեր մտցնելով երկրամաս: ՀՀ-ն ամրապնդվելով Զանգեզուրում, չկարողացավ հաստատվել Ղարաբաղում՝ կրելով ցավալի անհաջողություններ: Միաժամանակ,

անհրաժեշտ է փաստել, որ Արցախ-Սյունիքի խնդրի հայանպաստ լուծման խնդրում չափազանց բացասական եղավ Անդրկովկասում գտնվող բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության դերակատարումը, որն իր երկդիմի կիսամիջոցային բնույթի քաղաքական վճիռներով խոչընդոտեց հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա լարվածության թուլացմանը և ստատուս-քվոյի հաստատմանը:

Իրադրությունն ավելի բարդացավ, երբ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո տարածաշրջանի գործերին իր ռազմաքաղաքական միջամտությունը ունեցավ Խորհրդային Ռուսաստանը, որը հուլիսին Կարմիր բանակի զորամասերը կենտրոնացրեց Արցախի, Զանգեզուրի և Նախիջևանի դեմ՝ այն գրավելու և Թուրքիայի հետ անմիջական սահմանային կապ ստեղծելու նպատակով: Արցախը նույնպես խորհրդայնացվեց, որին հետևեց Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի տխրահռչակ բացահայտ հակահայկական որոշումը:

Բոլորովին այլ ընթացք ստացան դեպքերն ու իրադարձությունները հայկական Զանգեզուրում: Սյունիքի հայությունը շուրջ երեք տարի ազատագրական պայքար մղեց թուրք-թաթարական հրոսակների դեմ, և նրա պայքարը պսակվեց հաղթանակով: 1921 թ. հուլիսին Զանգեզուրը միավորվեց Խորհրդային Հայաստանի հետ: Ինչպես տեսնում ենք, տարբեր ճակատագրերի արժանացան Արցախը և Սյունիքը: Սյունիքը Հայաստանին միավորվելու հարցում մենք պարտական ենք նախ Կապար-Գողթի (Կապան, Գենվազ, Գողթանի) հայության ազատատենչ ոգուն, ինչպես նաև **Անդրանիկի, Ա.Շահմազյանի** ու, հատկապես, **Գ.Նժդեհի** թափած վիթխարի ռազմաքաղաքական կազմակերպչական ջանքերին:

5. ՀՀ պատմության հակասական էջերից է 1920 թ. մայիսյան ապստամբությունը: Այն իր բնույթով և էությամբ քաղաքացիական կռիվ էր, որի քաղաքական ազդակները դրսից էին: Ի՞նչ պետք է իմանալ այս հիմնահարցի վերաբերյալ:

1920 թ. Հայաստանի Հանրապետությունը թևակոխեց բավական կայունացած, և որոշակի ոգևորիչ տրամադրություններ էին իշխում: Մանավանդ, 1920 թ. հունվարի 19-ին Փարիզի Վեհաժողովի Գերագույն խորհուրդը դե-ֆակտո ճանաչեց հայկական պետությունը: Թվում էր, թե Անդրկովկասում և ՀՀ-ում ընթանում էին կայունացման միտումներ: Սակայն ռազմաքաղաքական իրավիճակը Անդրկովկասյան երկրամասում կտրուկ փոխվեց, երբ 1920 թ. ապրիլի 28-ին բոլշևիկները քեմալական Թուրքիայի և Ադրբեջանի մուսավաթական կառավարության աջակցությամբ մտան Բաքու, և Ադրբեջանը հայտարարվեց խորհրդային սոցիալիստական հանրապետություն, մուսավաթականն էլ վերազգեստավորվեց և մտավ բոլշևիկյան քողածածկույթի և հովանու տակ: Խորհրդային Ռուսաստանի ներկայությունը և բրիտանացիների հեռանալը Անդրկովկասից առաջ բերեց միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրավիճակ, ուր հարկավոր էր շատ շրջահայացորեն մանևրել՝ չկործանվելու համար: Սակայն, դժբախտաբար, այդ աշխարհաքաղաքական փոփոխությունները ոչ լիովին ըմբռնելի դարձան հայ քաղաքական ուժերի կողմից, որոնց մի զգալի մասը և, մասնավորապես, ՀՀ Դաշնակցությունն ուներ արևմտամետ կողմնորոշում: Հեղաշրջման հաջորդ օրը Ադրբեջանի հեղկոմը, 11-րդ Կարմիր բանակի սվինների տակ պատսպարվելով, ՀՀ կառավարությանը՝ Ղարաբաղ-Զանգեզուրը հայկական զորքերից ազատելու վերջնագիր ներկայացրեց՝ հակառակ դեպքում իրեն համարելով պատերազմական դրության մեջ: Ակնհայտորեն այս ամենը էական էր ՀՀ քաղաքական ուժերի նոր հաշվեկշռի առաջացման ու նրանց ենթադրվող գործողությունների առումով: Խորհրդային իշխանության հաղթանակը Ադրբեջանում ոգևորեց հայ բոլշևիկներին, որոնց թիվը, սակայն, Հայաստանում աննշան էր (ընդամենը 5-6 հարյուր մարդ): Իսկ ՀՀ խորհրդարանում կար միայն մեկ բոլշևիկ պատգամավոր: Նրանց գործունեությունը արգելված չէր, սակայն մեծ հեղինակություն ժողովրդի մեջ չունեին: Հայաստանի Հանրապետությունում նրանք չունեին բավարար սոցիալական հենարան, քանզի երկրում չկար արդյունաբերական պրոլետարիատ: Եվ այնուամենայնիվ, 1919 թ. բոլշևիկյան կազմակերպությունները միավորվել և ստեղծել էին ղեկավար կենտրոն՝ **Հայաստանի Կոմիտե *(Արմենկոմ)***, որից հետո Վրաստանի և Ադրբեջանի իշխանությունների կողմից հետապնդվող զգալի թվով հայ բոլշևիկներ սկսեցին քարոզչական գործունեություն ծավալել: 1920 թ. հունվարին Հայաստանի բոլշևիկների կոնֆերանսը որոշում էր ընդունել նպաստավոր իրադրության պայմաններում ապստամբել՝ իշխանությունը գրավելու համար: Եվ այդպիսի նպաստավոր իրադրություն համարվեց Ադրբեջանի խորհրդայնացումը, չնայած ռուսաստանյան Կենտկոմը այդպիսի նպատակադրում դեռ չուներ, և անժամանակ էր համարվում ՀՀ խորհրդայնացումը: Այնուհանդերձ, դա չխոչընդոտեց բոլշևիկ գործիչներին, առանց ժամանակաշրջանի իրողությունները խորապես հաշվառելու և իրապես գնահատել փորձելու՝ անժամանակ քաղաքական ավանտյուրաների և հենք չունեցող իրադարձությունների մեջ մխրճվելու:

1920 թ. մայիսմեկյան ցույցերը հանդիսացան մայիսյան իրադարձությունների սկիզբը (մասնագիտական գրականության մեջ կա այդ իրադարձությունների երկու տարբեր որակավորում. մի կողմից՝ այն դիտվում է որպես «խռովություն» օրինական իշխանության դեմ, որպես

հակաօրինական քայլ: Մյուս կողմից՝ այն ավելի լուսավոր կողմով է գնահատվում՝ որպես ապստամբություն, ըմբոստություն: Երկու դեպքում էլ այս գնահատականներին պետք է մոտենալ դրանց՝ պետական շահերի համապատասխանության տեսակետից, օգտակա՞ր, թե վնասակար է եղել ՀՀ շահերի տեսանկյունից,տեղի՞ն է եղել, թե ժամանակավրեպ, որին էլ կփորձենք պատասխանել): Վերհիշյալ ցույցերն ուղեկցվեցին հակակառավարական կարգախոսներով: Դրանք աստիճանաբար վերաճեցին ըմբոստության օջախների՝ ընդդեմ օրինական իշխանության, պետական հեղաշրջման որոշակի նպատակադրումներ հետապնդելով, ինչն ակնհայտ է, և հաստատվում է տեղի ունեցած իրադարձությունների անաչառ վերլուծությամբ և գնահատմամբ:

Օգտագործելով մայիսմեկյան օրերը՝ Ալեքսանդրապոլի բոլշևիկները, որոնք հայ ժողովրդի փրկությունը տեսնում էին դաշնակցական կառավարության տապալման մեջ՝ ուղղություն վերցրին դեպի ապստամբություն: Ալեքսանդրապոլի բոլշևիկներն իրենց ուժային կենտրոն դարձրին իրենց կողմն անցած «Վարդան զորավար» զրահագնացքը (ձեռք էր բերվել 1918 թ. հայ-վրացական պատերազմի ժամանակ) **Սարգիս Մուսայելյանի** գլխավորությամբ, որը առանձնապես կտրուկ միջոցների չդիմեց, հետագայում համոզվելով իրենց կողմից ձեռնարկված գործողությունների անհետանկարայնությամբ, ինքնակամ հանձնվեց ՀՀ իշխանությունների ողորմածությանը և պարզապես գնդակահարվեց, որի անհրաժեշտությունը զուցե և չկար: Բոլշևիկների Ալեքսանդրապոլի կոմիտեն դիմեց Հայաստանի կոմիտեին՝ խնդրելով նրա թույլտվությունը զինված ապստամբություն սկսելու համար: Հայաստանի կոմիտեն կողմ էր, որ ապստամբությունը սկսվի ոչ թե Ալեքսանդրապոլից, այլ Աղրբեջանին սահմանակից Ղազախի շրջանից, ուր կենտրոնացած Կարմիր բանակի զորամասերից նրանք ակնկալում էին ռազմաքաղաքական օգնություն: Սա զուցե և ավելի խելամիտ մոտեցում էր իրադրությանը: Սակայն Ալեքսանդրապոլի բոլշևիկները այդ տեսակետը չէին բաժանում, և նրանց պարագլուխն էր **Ավիս Նուրիջանյանը**, որը ծայրահեղականության դիրքերից էր հանդես գալիս, ինչը արտահայտվեց և նրա հետագա քաղաքական վարքագծում՝ մասնավորապես փետրվարյան (1921 թ.) իրադարձությունների՝ քաղաքացիական կռիվների ժամանակ:

Ի վերջո, Հայաստանի կոմիտեն իր ներկայացուցիչներին ուղարկեց Ալեքսանդրապոլ, որտեղ մայիսի 7-ին կայացավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որում որոշվեց ապստամբությունն սկսել մայիսի 10-ին, միաժամանակ Ղազախում և Ալեքսանդրապոլում, որից հետո ուղղակի շարժվել Երևան՝

այն գրավելու նպատակով: Ապստամբությունը ղեկավարելու համար ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ), որի ճյուղավորումները ստեղծվեցին տեղերում: Զինված ուժերի գլուխ կարգվեց **կապիտան Սարգիս Մուսայելյանը**: Ստեղծված իրադրությունում ՀՀ կառավարությունը բանակցությունների մեջ մտավ բոլշևիկյան ղեկավարների հետ՝ խուսափելու համար իրադարձությունների ոչ նպատակահարմար զարգացման հեռանկարից, սակայն որոշակի արդյունքների չհասավ: Իշխանության կենտրոնացման ու ամրապնդման նպատակով խորհրդարանը դիմեց արտակարգ իրավիճակներին հատուկ քայլերի: Խորհրդարանի որոշմամբ Ալ.Խատիսյանի կաբինետն ընդհատեց իր աշխատանքները և լիազորությունները հանձնեց այսպես կոչված բյուրո-կառավարությանը՝ (ՀՀ Դաշնակցության բյուրոյի ղեկավար կազմի մի մասը՝ 7 հոգի) **Համո Օհանջանյանի** գլխավորությամբ: Այդ կառավարությունը գործեց 1920 թ. մայիսի 5-ից մինչև նոյեմբերի 23-24 -ը: Առհասարակ, սույն կառավարությունը ստեղծվել էր որպես ժամանակավոր իշխանության մարմին, իրադրության կայունացումից հետո այն չպետք է գործեր, բայց այնպես պատահեց, որ ժամանակ առ ժամանակ այն չարաշահեց իր իրավասությունները, արհեստականորեն ընդլայնելով իր լիազորությունները, որը դժգոհություն առաջացրեց ինչպես ընդդիմության, այնպես էլ բուն Դաշնակցական կուսակցության միջին կառույցներում: Կառավարության որոշմամբ ստեղծվեցին արտակարգ դատարաններ, որոնց իրավասությունը լայն էր ու նպատակ էր հետապնդում պատժել պետական զանցանք գործածներին, խռովարարներին: ՀՀ վարչական կենտրոնացումը ևս նպատակաուղղվեց այդ խնդրի կարգավորմանը: Հանրապետությունը բաժանվեց 4 նահանգների՝ Արարատյան, Վանանդի, Ծիրակի և Սյունիքի: Կառավարության պաշտպանությամբ հանդես եկան ընդդիմադիր կուսակցությունները, հայրենակցական միությունները, որոնք կոչ արեցին հայրենիքի համար ծանր պահին սատար կանգնել պետությանը և կառավարությանը, վճռականությամբ դատապարտել մութ ուժերին և համախմբվել: Հայ ժողովրդական կուսակցությունը կառավարության տրամադրության տակ զինված խմբեր էր դրել: Դա գործնականում դիկտատորական վարչակարգ էր, որի անհրաժեշտությունը բխում էր իրավիճակից: Ապստամբությունը, սակայն, խաղաղ եղանակներով կասեցնել չհաջողվեց, մայիսի 10-ին սկսվեց, և տևեց մի քանի օր (մինչև մայիսի 14-ը): Բոլշևիկները Ալեքսանդրապոլում իշխանությունը իրենց ձեռքն էին վերցրել խաղաղ ձևով՝ չհանդիպելով կառավարական զորքերի կողմից ոչ մի դիմադրության: Սակայն հետաքրքիր է նշել, որ ապստամբները ևս (դա հաստատվում է բազմաթիվ փաստաթղթերով) առանձ-

նապես վճռական չգտնվեցին՝ իրենց հաջողությունները ամրապնդելու համար, չնայած արվեցին վեհերոտ փորձեր՝ իրենց ազդեցության տակ վերցնելու Կարսի մարզը, Շիրակի գյուղերը: Այն բանը, որ ապստամբությունը որոշ «դրական» արձագանք ունեցավ Կարսի մարզի մահմեդական բնակչության և վերաբնակիչ ռուս ազգաբնակչության մեջ, նույնպես հասկանալի է և իր պատճառներն ունի: Սակայն, առհասարակ, ապստամբության ընթացքում պարզ դարձավ նրա անկազմակերպվածությունը և անմտածվածությունը: Ակնհայտ էր, որ ղեկավարությունը թուլակամ էր, և ի վիճակի չեղավ կտրուկ քայլերի ու նպատակասլաց գործողությունների գնալու, որի հետևանքով էլ ապստամբները չկարողացան կառավարական զորքերին դիմադրություն ցույց տալ, և ասենք նաև, իսկ դա ևս կարևոր է, առանձնապես մեծ ջերմեռանդություն չդրսևորեցին այդ խնդրում: Ներքին գործերի և ռազմական նախարար **Ռուբեն Տեր-Մինասյանի** ձեռնարկած վճռական գործողություններով մեկուսացվեցին Կարսում ամրացած ապստամբները, որոնք անհաջող դիմադրությունից հետո սկսեցին նահանջել Ալեքսանդրապոլ:

Ալեքսանդրապոլի ապստամբական օջախը չեզոքացնելու խնդիրը դրվեց խմբապետ **Մեսրուի** ***(Արշակ Ներսիսյան)*** վրա, որը վերջնագիր ներկայացրեց ապստամբներին: Հատկանշական է, որ ապստամբության ալեքսանդրապոլյան ղեկավարները, ի վերջո, որոշեցին խելամիտ լինել, չդիմադրել և անձնատուր լինել: Ալեքսանդրապոլում վերականգնվեց օրինական իշխանությունը: Դրանից հետո ապստամբությունը պարտվեց նաև մյուս շրջաններում: Չնայած այն հանգամանքին, որ բռնկումներ տեղի ունեցան նաև Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադինում, Զանգեզուրում, սակայն դրանք արդեն ուշացած ելույթներ էին և արդեն ոչ մի կերպ չէին կարող ազդել ընդհանուր իրավիճակի վրա: Աղրբեջանից սպասվելիք օգնությունը ևս (Ղազախ-Շամշադինում ապստամբներին զինվորական օգնություն ցույց տվեցին կարմիրբանակայինները) բավարար և արդարացված դուրս չեկավ: Այդ ռազմաքաղաքական իրավիճակում տարածաշրջանային ուժերի հավասարակշռությունը հայաստանյան բոլշևիկների կողմը չէր, դեռ չէր եկել նրանց ժամանակը, ըստ երևույթին այդ մասին դեռ որոշակի և ուղղակի հրահանգ չկար, գուցե և համապատասխանության մեջ չէր գտնվում տարածաշրջանային ռազմաքաղաքական ուժերի և մասնավորապես քեմալա-բոլշևիկյան կողմերի հետամտած նպատակների հետ, և «ապստամբական-խառնվարարական» բնույթի ելույթը ձախողվեց: Այսպիսով, ապստամբությունը պարտվեց, և կառավարական ուժերը երկրում վերահաստատեցին հավասարակշռությունը, և օրինական իշխանության լիազորությունները:

Արդեն որոշակիորեն մատնանշվել է, որ այն ի սկզբանե դատապարտված էր անհաջողության, թե՛ իր անկազմակերպվածության և թե՛ այն հիմնախնդրային բնույթի պատճառով, որ Հայաստանի Հանրապետությունում այդ նախադրյալները չկային: Միայն դրսից զինված միջամտությունը կարող էր ապստամբների ակնկալիքները արդարացնել: 11-րդ Կարմիր բանակից սպասված օգնությունը անորոշ ժամանակով հապաղեց, ակնկալվող ռազմաքաղաքական աջակցություն չցուցաբերվեց, քանզի Կարմիր բանակի հարկավոր քանակի զորամասերը Անդրկովկասից ժամանակավորապես մեկնել էին այլ առաջադրանք կատարելու: Իսկ քանի որ ապստամբները որոշակի պայմանավորվածություն չունեին դրսի բոլշևիկյան ղեկավարության՝ Մոսկվայի հետ, կամ էլ վերջինիս դեռևս ձեռնտու չէր միջամտել ՀՀ գործերին, հետևաբար ապստամբների հետամտած պլանը նման էր քաղաքական արկածախնդրության, որը լավ հետևանքներ չունեցավ:

Արդյունքում, ապստամբությունը պարտվեց, արտակարգ դատարանի որոշմամբ որոշ ղեկավար բոլշևիկներ մահապատժի դատապարտվեցին (Ստ.Ալավերդյան, Բ.Ղարիբջանյան, Ս.Մուսայելյան, Ե.Սևյան, Ղ.Ղուկասյան, Հ.Սարուխանյան և ուրիշներ), իսկ մոտ 250 հոգի բանտարկվեց, մի մասը հեռացավ Հայաստանի Հանրապետությունից: Կառավարության որոշմամբ բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը Հայաստանում արգելվեց: Սակայն ապստամբության հետևանքները ՀՀ համար ծանր էին: Երկրի ներքին դրությունը վատացավ.

ա. Մայիսյան իրադարձությունների հետևանքով էլ ավելի սրվեց ՀՀ պարենային վիճակը: Բոլշևիկյան ապստամբության հետևանքով միջազգային պարենավորման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացված 42 հազար տոննա ալյուրը այդպես էլ չմտավ Բաթումի նավահանգիստ, որտեղից այն ՀՀ տարածք պետք է մտներ: Ֆրանսիացիները Կովկասի ֆրանսիական կոմիսար Դի Մարտելի կարգադրությամբ բռնագրավեցին 25 հազար փութ բամբակը, որ գտնվում էր Բաթումում և ֆինանսական տեսակետից մեծ կարևորություն ուներ ՀՀ համար (մի մասը արդեն վաճառվել էր Իտալիային), չնայած փորձեր արվեցին ընդդիմանալու այդ բռնագրավմանը: Օտար ձեռնարկատերերի առաջարկները՝ ՀՀ-ում տարբեր ձեռնարկումների վերաբերյալ, չեղյալ հայտարարվեցին:

բ. ՀՀ բազմաթիվ շրջաններում անդառնալի վնաս հասցվեց ցանքատարածություններին, և այդ տարվա հացահատիկի բերքը անբավարար եղավ, չնայած լավ բերք էր սպասվում, որը կարող էր ՀՀ սովյալ բնակ-

չության համար էական լինել: Գարնանացանի ձախողումը անուղղելի վնաս հասցրեց գյուղատնտեսությանը:

գ. Մայիսյան իրադարձությունները որոշակի առումով բարոյալքեցին ժողովրդին և բանակը, այն էլ՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, առաջ բերելով «ճշմարտանման» ու անպատեհ հույսեր և դառը հիասթափություններ: Հայկական բանակի մարտունակությունը և բարոյական ոգին խիստ անկում էր ապրել՝ քաղաքացիական կռվին մասնակցություն ցուցաբերելով: Ավելին, հայ հասարակությունը երկփեղկվեց, կառավարության հեղինակությունը բավականին խարխլվեց, և երկիրը կանգնեց ճգնաժամային վիճակի առաջ, որն այդպես էլ մինչև վերջ չկարողացավ հաղթահարել:

Սակայն, որպես հետգրություն, նկատի ունենանք նաև հետևյալը. որոշ ժամանակ անց անգամ ՀՀ կուսակցական-քաղաքական առաջնորդները 1920 թ. հայտնի իրադարձությունների՝ Մայիսյան ապստամբության կամ ավելի շատ խռովության տպավորություն թողնող դեպքերի գնահատումների հարցում այնքան էլ հստակ դիրքորոշում չեն ունեցել, անգամ ափսոսանքով խոստովանելով, որ եթե իրենք այդ օրերին բավականաչափ հեռատես ու խորաթափանց լինեին, և իրենց վստահված պետական իշխանությունը 1920 թ. հանձնեին բոլշևիկներին, ապա ՀՀ տարածքային ընդգրկումներն անհամեմատ ավելի մեծ կլինեին, ինչը հետադարձ հայացքով գուցե և կարելի է այդպես գնահատել, սակայն դրանով բոլոր հարցականները չեն վերանում: Եվ այնուհանդերձ, ինչպես ակնհայտ է դառնում Ռ. Զարյանի հուշերից, Ս. Վրացյանը, փոր-ձելով այդ կապակցությամբ արդարացումներ գտնել, ընդամենը իր ուշացած ափսոսանքն է արտահայտել, ինչի հետ իր խիստ որոշակի համակարծիքությունն է արտահայտում նաև Ռ.Հովհաննիսյանը՝ հենվելով հսկայական թվով փաստերի վրա, ելնելով աշխարհաքաղաքական այն հանգամանքի խոր հաշվառումից, որ Անդրկովկասի այս կամ այն մասի խորհրդայնացման խնդիրը ընդամենը ժամանակի հարց էր, ինչը տարբեր պատճառներով չէին ցանկանում և պարզապես չէին կարողանում ըմբռնել հատկապես հայ քաղաքական-կուսակցական, ռազմական առաջնորդները:

Սակայն, այդուհանդերձ, ընթերցողի առաջ կանգնած են միանգամայն վիճահարույց հարցեր. ա/ ի՞նչ իրական պատճառներ էին ընկած բոլշևիկների պարտության հիմքում, բ/ կա՞ր արդյոք իրական հնարավորություն 1920 թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունում հաստատելու խորհրդային կարգեր, և դրա արդյունքում կունենա՞ր, արդյոք, ավելի մեծ տարածք, քան ՀՀ ներկայիս սահմաններն են:

6. Պարզաբանել, թե ինչու 1920 թ. սկզբներին դենիկինյան զորքերի ջախջախումը և Կարմիր բանակի մուտքը Հյուսիսային Կովկաս ու Անդրկովկաս, փաստորեն, կանխորոշեցին Կովկասյան տարածաշրջանի ճակատագիրը: Այդ ժամանակաշրջանում ռուս-թուրքական հարաբերությունների պարադոքսն այն էր, որ մինչ այդ ավանդաբար իրար հակառակորդ ու թշնամի Թուրքիայի ու Ռուսաստանի շահերն այժմ՝ Անտանտի դեմ մղվող պայքարում, համընկան, նրանք դարձան «բնական դաշնակիցներ», իսկ փոքր և անզոր Հայաստանի Հանրապետությունը, որը ձգտում էր Անտանտի օգնությամբ լուծել իր ազգային-տարածքային հիմնախնդիրները, հայտարարվեց «Անտանտի իմպերիալիզմի գործակալ»: Բացի այդ, Խորհրդային Ռուսաստանը, առաջնորդվելով համաշխարհային հեղափոխության կարգախոսներով, նպատակ էր հետապնդում կապվել Թուրքիայի հետ և վերջինիս միջոցով Արևելքի մուսուլմանական աշխարհում տարածել հեղափոխության և կոմունիզմի գաղափարները: Բնականաբար, ՀՀ-ն, հայտնվելով Ռուսաստանի և Թուրքիայի արանքում, որպես խոչընդոտ, պետք է վերացվեր: Ահա այս հիմքի վրա Խորհրդային Ռուսաստանի գիտությամբ և համաձայնությամբ 1920 թ. սեպտեմբերի 23-ին քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Հայաստանի Հանրապետությունը ընդամենը երկու ամիս կարողացավ դիմադրել. ի վերջո կրեց շատ ծանր պարտություն:

Անհրաժեշտ է հանգամանալից թվարկել Հայաստանի Հանրապետության պարտության և քեմալական Թուրքիայի տարած հաղթանակի պատճառները: Դրանք բազմաթիվ են և մեր ժամանակների համար շատ ուսանելի, քանզի հայկական բանակի պարտությունը երկրում ռազմա-քաղաքական ճգնաժամ առաջ բերեց, հայ հասարակությունը երկփեղկվեց: Թուրքական մահաբեր սպառնալիքի պայմաններում Հայաստանի Հանրապետությունը հարկադրված կորցրեց իր անկախությունը և խորհրդայնացավ:

Պետք է հիշել 1920 թ. դեկտեմբերի 2-ի մասին հայ ժողովրդի պատմության մեջ, քանզի այդ օրն է համարվում Առաջին Հանրապետության անկախության կորստի օրը և միաժամանակ այդ նույն օրը ստորագրվեց Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը, որով Հայաստանի տարածքների մի զգալի մասը բռնակցվեց Թուրքիային: Այնուամենայնիվ, հետևությունը միանշանակ է. ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակում Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը այլընտրանք չուներ, որոշակի բացասական շերտանցվածքներով հանդերձ, այն գործնականում ճանապարհ թողեց այլ կարգի հեռանկարների համար, որոնք բարենպաստ էին հայ ժողովրդի համար:

ԹԵՄԱ 7. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920 -1939 ԹԹ.

1. *Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում: Հայհեղկոմի առաջին դեկրետները*
2. *Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը և նրա հետևանքները*
3. *1921 թ. փետրվարյան իրադարձությունները /քաղաքացիական կռիվները/*
4. *Խորհրդային կարգերի հաստատումը Լոռու «Չեզոք գոտում» և նրա վերամիավորումը Խորհրդային Հայաստանի հետ*
5. *Խորհրդային Հայաստանի քաղաքական-դիվանագիտական փոխառնչությունները հարևան երկրների հետ*
6. *1921 թ. մարտի 16-ի՝ Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի՝ Կարսի պայմանագրերը*
7. *Անցում ռազմական կոմունիզմից՝ նոր տնտեսական քաղաքականության*
8. *Սյունիք-Զանգեզուրյան հիմնախնդիրը 1920-1921 թթ. և վերամիավորումը Խորհրդային Հայաստանի հետ*
9. *Արցախ-Ղարաբաղյան հիմնախնդիրը խորհրդային կարգերի հաստատումից հետո ընկած ժամանակաշրջանում (1921 -1923 թթ.)*
10. *Անդրֆեդերացիայի հիմնումը և ԽՍՀՄ-ի կազմավորումը*
11. *Սոցիալիստական վերափոխումները 1920-1930-ական թթ. (երկրի ինդուստրացում, գյուղատնտեսության կոլեկտիվացում, մշակութային հեղափոխություն)*
12. *Վարչահրամայական համակարգի և կոմունիստական ամբողջատիրության ձևավորումը: Ստալինյան բռնաճնշումները*

1. Այս ենթագլուխը հստակ յուրացնելու համար պետք է կարողանալ հստակ տարբերակել սերտորեն փոխկապակցված երկու գործընթացներ: Պատմաքաղաքական նախորդ իրադարձություններից արդեն հայտնի է, որ 1920 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին տեղի ունեցած թուրք-հայկական պատերազմի հետևանքով Հայաստանի Հանրապետությունը ջախջախիչ ռազմաքաղաքական հարված ստացավ քեմալական Թուրքիայի զորքերից և պարտություն կրեց, որն էլ հանգեցրեց հանրապետության անկմանը, որն արձանագրվեց դեկտեմբերի 2-ին կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրում, իսկ մյուս կողմից՝ այդ նույն պատերազմը և Խորհրդային Ռուսաստանի ու նրա ներկայացուցիչ **Բ. Լեգրանի** գործադրած քաղաքական-դիվանագիտական ջանքերը որոշակի հող նախապատրաստեցին Հայաստանի Հանրապետության անարյուն և խաղաղ խորհրդայնացման համար: Անցումը Առաջին Հանրապետությունից Հայաստանի Խորհրդային Հանրապետության տեղի ունեցավ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում կնքված համաձայնագրի հիման վրա և հայտնի է նաև որպես **Դրոն-Միլին համաձայնագիր**: Դրանով նախկին կառավարությունը հեռացավ

իշխանության ղեկից, և Հայաստանը հայտարարվեց խորհրդային սոցիալիստական, երաշխիքներ տրվեցին բռնություններ չկիրառել գաղափարաքաղաքական հակառակորդների, զինվորականների և առհասարակ նախկին իշխանության կողմնակիցների նկատմամբ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո իշխանության գլուխ անցավ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՌՀԿ), հայտնի բոլշևիկ Սարգիս Կասյանի նախագահությամբ: Նոր իշխանության էությունը հասկանալու համար պետք է ցույց տալ, թե ինչպիսի քաղաքականություն է իրականացվել: Պետք է տեսնել խորհրդային քաղաքական և տնտեսական համակարգերի սկզբունքային տարբերությունը ոչ խորհրդայինից: Դա արտահայտվեց նրանով, որ համապատասխան դեկրետներով (օրենքի ուժ ունեցող հրամանագրերով) վերացվեցին նախկին իշխանության պետահիրավական և կառավարչական կառույցները, տնտեսական համակարգը և դրանց փոխարեն Հայաստանում արմատավորվեց Խորհրդային Ռուսաստանի օրենսդրությունը: Ամբողջովին պետականացվեցին հողը, ընդերքը, անտառները, ջրերը, գործարանները, բանկերը, անգամ ջրաղացները: Այդ դեկրետներով աստիճանաբար փոխվեցին սեփականատիրական հարաբերությունները, դատական համակարգը, վերաբերմունքը այլ կուսակցությունների հանդեպ և այլն:

Եթե ամփոփենք այս ենթագլուխը, ապա կարող ենք ասել, որ հայ ժողովուրդը խաղաղասիրաբար և ապագայի լավ ակնկալիքներով ընդունեց խորհրդային իշխանության հաստատման փաստը: Այդ փաստը հաստատագրել է նաև Առաջին հանրապետության վերջին վարչապետ **Ս.Վրացյանը**, գտնելով որ վարչածները չեն կարևորը, այլ ժողովուրդը, և փաստացիորեն ընդամենը անցում կատարվեց հանրապետությունից հանրապետություն: Սակայն խորհրդային իշխանության խոտորումները և առանձին քաղաքական գործիչների անխոհեմ և ոչնչով չարդարացված բռնարարքները **/Ա.Նուրիջանյան, Գ.Աթաբեկյան** և ուրիշներ/, վարած անհետևողական քաղաքականությունը որոշակի առումով անակնկալ ու հիասթափեցնող էին ժողովրդի շատ խավերի համար:

2. Հարկ է գիտենալ, որ «ռազմական կոմունիզմը» եղել է խորհրդային իշխանության առաջին տարիների տնտեսական քաղաքականության առանցքը: Բոլշևիկյան Ռուսաստանի նմանությամբ այդ քաղաքականությունը կիրառվեց նաև Խորհրդային Հայաստանում և չէր կարող չկիրառվել, քանզի սովորաբար Հայհեղկոմը պարտավորված պատճենահանում էր ռուսական փորձը և գործադրում տեղում: Ո՞րն էր ռազմական կոմունիզմի քաղաքականության էությունը: Ամենից առաջ դա տնտեսական-քաղաքական ու հարկային քաղաքականության մի համակարգ էր,

որի ժամանակ արտադրության միջոցների համընդհանուր, համաժողովրդական պետականացման պայմաններում պարենմասնատրում անվանումով գյուղացուց պահանջվում էր իր մթերքների ավելցուկը հանձնել պետությանը (բանակը կերակրելու համար), իսկ քանի որ հայ գեղջուկը /ոչ միայն հայ գյուղացին, դա այդպես էր համառուսական մասշտաբով/ համատարած չքավոր էր, ուստի ուժի միջոցով սկսեցին բռնագրավել նրա ունեցվածքի վերջին միջոցները, որն էլ, բնականաբար, պետք է առաջ բերեր բնակչության ընդհանուր դժգոհություն խորհրդային իշխանության նկատմամբ:

Այնուհետև անհրաժեշտ է ցույց տալ, որ ռազմակոմունիստական քաղաքականության մյուս բնութագրիչ կողմն այն էր, որ արգելվեցին ազատ առևտուրը, ապրանքադրամական հարաբերությունները, սահմանվեց շատ ապրանքատեսակների պետական մենաշնորհ, արտադրության և բաշխման հավասարարական (կոմունիստական) սկզբունքներ, մտցվեց պարտադիր աշխատանքային պարհակ («Ով չի աշխատում, նա չի ուտում» հանրահայտ սկզբունքով) և այլն: Այս բոլորի նպատակն էր՝ կապիտալիզմի շրջապատման պայմաններում գոյատևել և հաղթանակել, և խորհրդային երկրում շուտափույթ կառուցել սոցիալիզմ և կոմունիզմ:

Սակայն խորհրդային պետության ղեկավարների համար (Լենին, Տրոցկի, Ստալին և ուրիշներ)կարճ ժամանակ անց միանգամայն ակնհայտ դարձավ, որ նմանատիպ քաղաքականությունը երկիրը տանում է դեպի տնտեսական, ապա նաև քաղաքական փլուզման, վերանայեցին իրենց ռազմավարությունն ու տնտեսաքաղաքական դիրքորոշումները և 1921 թ. գարնանը հարկադրված հրաժարվեցին ռազմական կոմունիզմի քաղաքականությունից՝ հստակ անցում կատարելով նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ): Այն, ինչ կատարվեց Խորհրդային Ռուսաստանում, նույնը բառացիորեն պատճենահանվեց Խորհրդային Հայաստանում:

3. Հասարակական կյանքում ամեն մի երևույթ ունի իր ծագման պատճառները: Նույն կերպ 1921 թ. քաղաքացիական կռիվները լուսաբանելիս նախ պետք է բացահայտել դրանց պատճառները:

Ինչպես արդեն ասվեց նախորդ ենթագլխում, ռազմական կոմունիզմի խուզարկությունների, բռնագրավումների քաղաքականությունը մեծ դժգոհություն առաջ բերեց լայն ազգաբնակչության շրջանում և հասարակական տարբեր շերտերում, ինչպես նաև կուսակցական-քաղաքական շրջաններում: Խնդիրն այն էր, որ շատ բնակիչներից խլվում էր նրա ապրուստի վերջին միջոցը, անգամ տան վերջին իրը: Դժգոհությունների մյուս խումբը ծագեց քաղաքական բռնությունների, հալածանքների, ձերբակալություններ և գնդակահարությունների հետևանքով: Բավական է ասել, որ հանրապետության բանտերը լեփ-լեցուն էին նախկին իշխանության ներկայացուցիչներով, իսկ 1921 թ. հունվարին քաղաքական անվստահության հիման վրա Հայաստանի բանակի շուրջ 1500 նախկին սպաներ աքսորվեցին Բաքու և Ռուսաստանի խորքերը: Անողոք գործում էր Արտակարգ հանձնաժողովը՝ այսպես կոչված Չեկան:

Անցնելով իշխանության գլուխ՝ խորհրդային կառավարությունը բավականաչափ ճկուն և հեռատես չգտնվեց իր կողմից իրականացվող ներքին քաղաքականության բնագավառում, արդյունքում թույլտրվեցին զանազան զանցանքներ, ավելին՝ կիրառվեց ոչնչով չհիմնավորված, անհարկի բռնաճնշումների քաղաքականություն, որը բոլշևիկյան առաջնորդները պատճառաբանում էին հեղափոխական ժամանակների անհրաժեշտությամբ:

Այն առաջին հերթին վերաբերեց սպայական-հրամանատարական կազմին և կուսակցական-քաղաքական պատասխանատու աշխատողներին, որոնք իրենց կամքով ընդունել էին նոր իշխանության լեգիտիմիտությունը: 1920 թ. դեկտեմբերի 2-ին **Բորիս Լեգրանը Սերգո Օրջոնիկիձեին** ուղղված հեռագրում հայտնում էր, որ Հայաստանի Հանրապետության բանակի հրամանատարական կազմին և դաշնակցականներին երաշխավորված է անվտանգություն, և որ ինքը կարգադրել է ձերբակալել միայն նախկին վարչապետ Համո Օհանջանյանի կաբինետի վարած քաղաքականության անմիջական պատասխանատուներին: Հավանաբար դրա պատճառներից մեկն այն էր, որ Հ. Օհանջանյանը Հ.Հ.Դաշնակցության այն հոսանքի ղեկավարներից էր, որ գործնականում մերժում էր Խորհրդային Ռուսաստանի օգնությունը և կողմակից էր թեկուզ մեծ զիջումների գնով գնալ թուրքերի հետ հաշտության կնքման: Հենց այդ հանգամանքներն էլ պայմանավորեցին Հ.Օհանջանյանի և նրա կաբինետի մի շարք անդամների, և այդ թվում՝ կառավարության անդամներ Մարգիս Արարատյանի, Արտաշես Չիլինգարյանի, դոկտոր Տեր-Միքայելյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Գևորգ Ղազարյանի և Արշակ Ջամալյանի անունների հայտնվելը ձերբակալման ենթակաների ցուցակում: Ձերբակալման ենթակա անձանց շարքում էին նաև քաղաքական գործիչ Համազասպը, քաղաքական ոստիկանության պետ Լևոն Քալանթարյանը, արտակարգ դատարարանի դատախազ Բաղդասարովը, քաղաքական դեմքեր Նաջարովը, Բախշի Իշխանյանը և ուրիշներ: Համապատասխան հանձնարարականներ էին տրվել քաղաքացիական և զինվորական իշխանություններին՝ նպատակ ձերբակալություններին, իսկ խոչընդոտողներին պատժել հեղափոխական ժամանակի օրենքներով:

Կարելի է եզրակացնել, որ խորհրդային իշխանության կողմից ձեռնարկած այս քայլերը հակասում էին Դրոյի և Տերտերյանի հետ կնքած համաձայնագրի տառին և ոգուն, և ըստ էության արժեզրկում և լուծարում այն: Այդ անփույթ բռնաքայլը լուրջ դժգոհություններ առաջ բերեց հայ հասարակության մեջ և սկիզբ դրեց հակախորհրդային գործողությունների ու իրադարձությունների, որոնք տվյալ քաղաքական իրավիճակում խիստ անձեռնտու էին և հակասում էին Հայաստանի ու նրա ժողովրդի իրական շահերին: Եվ գուցե հենց այդ հանգամանքը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ որոշակի առումով այն ձեռնտու էր հակահայկական ուժերին, և ամենայն հավանականությամբ խրախուսվում էր դրսի զանազան ուժերի կողմից, ինչի ապացուցման համար, հավանաբար, առաջիկայում կհայտնաբերվեն համապատասխան փաստաթղթերը:

Մասնագետները կարծում են, որ երբ Ս.Կասյանի գլխավորած Հայհեղկոմը ժամանեց Երևան դեկտեմբերի 3-ի լույս 4-ի գիշերը, դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը պարզապես մոռացության տրվեց, որին հետևեցին նախկին հայկական բանակի հրամկազմի և քաղաքական կուսակցությունների անդամների նկատմամբ բռնարարքները, դրան ավելացրած նաև այն հանգամանքը, որ Հեղկոմի կազմի մեջ ոչ մի դաշնակցական չընդգրկվեց: Քաղաքական ասպարեզից աստիճանաբար հեռացվեց նաև հայտնի զորապետ Դրոն, որը հայտնի էր իր շրջահայաց և հավասարակշռված գործողություններով, Ռուսաստանի նկատմամբ լոյալ վերաբերմունքով, և այդ մեկուսացման արդյունքը եղավ այն, որ սկզբի համար կոմունիստական կուսակցության Անդրերկրամի 1923 թ. հուլիսի 23-ի որոշմամբ նրան չարգելվեց մեկնել արտասահման, և նման վերաբերմունքը էապես ազդեց Դրոյի ռազմաքաղաքական հետագա կողմնորոշումների և քաղաքական վայրիվերումների վրա: Այս կապակցությամբ տեղին է նշել, որ գուցե և Բ. Լեգրանը փորձել է գոնե մասնակիորեն կատարել դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը, ապա ըստ մասնագետների դա իրականություն չի դարձել, քանզի իրադարձությունների հետագա բացասական ուղղորդման վրա էապես ազդել է հայտնի քաղաքական-կուսակցական գործիչ Սերգո Օրջոնիկիձեն, իսկ Բ.Լեգրանը աստիճանաբար մեկուսացվել է և ետին պլան մղվել, ապա և դուրս մղվել Խորհրդային Հայաստանի հետ անմիջական քաղաքական-կուսակցական փոխհարաբերությունների դաշտից:

Քաղաքական պահի գնահատման և արժևորման տեսանկյունից հարկ է նշել, որ բոլշևիկյան իշխանության կողմից ձեռնարկած այս գործողությունների նկատմամբ հայ կուսակցական-քաղաքական ուժերի

շրջանում որոշ շփոթ էր իշխում, այլընտրանքի հնարավորությունները խիստ ցածր մակարդակի վրա էին գտնվում: Երկընտրանքը մեծ էր, և ըստ Ս. Վրացյանի, փրկության հնարավորությունների տարբերակները վայրիվերվում էին բոլշևիկներին ապավինելուց մինչև հնարավոր դաշնակիցների որոնումը արտերկրում, ավելացրած դրան՝ թուրքերի կողմից հայության գլխին կախված մշտական սպառնալիքը:

Եվ այդ լարված իրավիճակում Հայաստան մուտք գործած Հայհեղկոմի թույլ տված սայթաքումները և սխալները, նրա երերուն և քաղաքական կոպիտ սխալներով լի դիրքորոշումը ոչ բոլշևիկյան տարրերի նկատմամբ, որին հաջորդեցին դեկտեմբերի 6-ին կազմված և հապճեպ գործի անցած Չեկայի գործողությունները հանգեցրին նրան, որ եղան բազմաթիվ անհարկի ձերբակալություններ: Չեկայի կողմից ձերբակալվածների ցուցակում հայտնվեցին նախկին վարչապետ Համո Օհանջանյանը, նախկին նախարար Ռ. Չիլինգարյանը (Ռ.Դարբինյան), խորհրդարանի անդամներ բժ. Հ.Տեր-Դավթյանը, Վ.Նավասարդյանը, Վ.Բաբայանը, Երևանի քաղաքային խորհրդի անդամ Ա.Աստվածատրյանը, հայտնի սոցիալ-դեմոկրատ Բախշի Իշխանյանը (վերջինս հրապարակել է հետագայում իր նշանավոր բանտային հիշողությունները), խմբապետ Համազասպը, խորհրդարանի նախագահ Ավետիք Սահակյանը, Առաջին Հանրապետության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ Վահագն Մուրադյանը, նշանավոր հետախույզ Տիգրան Դեվոյանցը և ուրիշներ: Դեկտեմբերի վերջերին ցուցակագրվեցին հայկական բանակի բոլոր սպաները և 70 բարձրաստիճան զինվորականներ, որոնք փուլ առ փուլ աքսորվեցին Բաքու, իսկ արդեն հունվարի 10-ին այդ ճակատագրին արժանացավ նշանավոր զորապետ Դրոն (Դրաստամատ Կանայանը), որն իր զինակիցների հետ միասին աքսորվեց Ռուսաստան: Հունվարի 24-ին, ձմռան դաժան և խստաշունչ ցրտին Ռուսաստան աքսորվեցին Հայաստանի Հանրապետության բանակի մնացած սպաները՝ ավելի քան 1200 հոգի, որոնց մեջ էին սպարապետ Թովմաս Նազարբեկյանը, գեներալներ Մովսես Միլիկյանը, Հովհաննես Հախվերդյանը, Ղամազյանը:

1921 թ. սկզբին Հայաստանի Առաջին Հանրապետության բանակը կազմաքանդվեց, հայ զինվորականներից շատերը սկզբնական շրջանում արգելափակվեցին Բաքվի բանտերում, իսկ այնուհետև արտաքսվեցին և Ռուսաստանի Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբարներում արգելափակվեցին շուրջ 1400 սպաներ, որոնց մի մասը միայն հետագայում վերադարձավ: Նրանց մեջ էին 15 գեներալ և 25 գնդապետ: Երևանական թվականներին վերադարձածներից շատերը կրկին անար-

դարացիորեն և անհիմն դատապարտվեցին: Նախկին հայ սպաների և ֆիդայիների մի որոշ մասն անհիմն ձերբակալվեց՝ իր հանգրվանը գտնելով Երևանի բանտում: Անտեղի կալանվեցին և սպանվեցին Համազասպ Սրվանձտյանը, Արտուշ խանը, գնդապետ Նիկոլայ Կորգանովը և ուրիշներ:

Հետագա հետևողական և նպատակային քաղաքական բռնաճնշումների պայմաններում ձերբակալվեցին և խորհրդային բանտերը նետվեցին հայտնի գրող Լևոն Շանթը, Առաջին Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին, լուսավորության նախարար Նիկոլ Աղբալյանը, Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինյանը և ուրիշներ: Ձերբակալությունների մշտական ուղեկիցները դարձան անհարկի բռնագրավումները, որոնք մեծ դժգոհությունների տեղիք տվեցին և վարկաբեկեցին խորհրդային իշխանությունը, որից հայ ժողովուրդը լուրջ ակնկալիքներ և սպասելիքներ ուներ: Ավելորդ և անհարկի հեղափոխականությունը, որի լեյտմոտիվը դարձավ անխնա և վճռական բռնագրավումների անսանձ քաղաքականությունը, առանց խտրության և դասակարգային սկզբունքի, առանց հաշվի առնելու հայ գյուղացիության ընդհանուր թշվառ տնտեսական դրությունը և հոգեբանական վիճակը, առավելագույնս սրեց հասարակական-քաղաքական իրավիճակը հայ հասարակության մեջ, բևեռացրեց հասարակությանը և կանգնեցրեց գործնականում անկանխատեսելի հետևանքների առաջ: Կամայականություններով ուղեկցվող այդ բռնարարքները անհետևանք չանցան, առաջ բերեցին բնակչության որոշակի խավերի արդարացի լուրջ դժգոհությունը, ինչը ըստ էության հաշվառվեց և գործնական կիրառություն գտավ 1921 թ. փետրվարյան իրադարձությունների կազմակերպիչների կողմից:

Սակայն կարճ ժամանակ անց նոր իշխանությունները, ոտնահարելով 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի տառն ու ոգին, ենթագիտակցելով նոր կարգերի հետամտած քաղաքականությունը, իրենց դեմ հանեցին ինչպես հին կարգերի կողմնակիցներին, այնպես էլ խաղաղ, ոչ հեղափոխական բնակչությանը: Առաջին հերթին խախտվեց այդ համաձայնագրի այն կետը, ըստ որի Հայաստանի Հեղկոմում պետք է ընդգրկվեին նաև ձախ դաշնակցականներ: Սակայն ոչ միայն իշխանության կազմում չընդգրկվեցին ձախ դաշնակցականները, այլև կատարվեցին բռնարարքներ նրանց նկատմամբ: Դա գուցե դեռ ամենավատթարը չէր: Շուտով արգելվեց Հայ Հեղափոխական Դաշնակցության և մյուս կուսակցությունների գործունեությունը ՀՀ տարածքում, ինչը բխում էր նոր իշխանության կողմից առաջադրված խնդիրներից: Նոր կարգերի հաստատումով ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում նույնպես վերացվեցին Հայաստանի առաջին Հանրապետության պետահիրավական կառույցները՝ կառավարությունը, խորհրդարանը, դատահիրավական համակարգը, դիվանագիտական ներկայացուցչությունները տարբեր երկրներում, նահանգապետությունները, քաղաքային և տեղական ինքնակառավարման մարմինները, գավառային կառավարման համակարգը, և ստեղծվեցին նոր իշխանության մարմիններ: Նոր իշխանության 1920 թ. դեկտեմբերի 6-ի դեկրետով ստեղծվեց «Չեկան», այսպես կոչված հակահեղափոխության, շահամոլության և սաբոտաժի դեմ ակտիվ պայքարի համար նախատեսված արտակարգ հանձնաժողովը: Այն դարձավ ֆանատիկ և «ոչ խելամիտ» և բավականաչափ ճկուն գործիք բոլշևիկյան մի շարք արկածախնդիր ղեկավարների ձեռքին (Ա. Նուրիջանյան, Գ. Աթարբեկյան և ուրիշներ), որոնք իբրև թե բանվորների և գյուղացիների դասակարգային գիտակցությունը բարձրացնելու նպատակով, կիրառելով նոր իշխանությանը վարկաբեկող անհարկի խուզարկություններ, հալածանքներ, այլախոհների ձերբակալություններ, ստեղծեցին չափազանց լարված և տագնապալից վիճակ հասարակության մեջ: Անհանդուրժողական այդ քաղաքականության հետևանքով փաստորեն օրենքից դուրս հայտնվեցին Հ.Հ Դաշնակցությունը և ազգային մյուս կուսակցությունները: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի կոմկուսի հեղկոմի և Ռազմհեղկոմի անդամների մի մասը կողմնակից էր ավելի մեղմ վերաբերմունքի հայ մտավորականության և ժողովրդի մյուս խավերի նկատմամբ (զինվորականներ, քաղաքական գործիչներ), սակայն առավել ծայրահեղական գտնվեցին կոշտ քաղաքականության վերոհիշյալ կողմնակիցները, և փոքրիկ, սովից տուժած և գաղթականներով լի երկիրը կանգնեցրին ազգային աղետի՝ քաղաքացիական պատերազմի առաջ:

Նոր իշխանությունը տնտեսության կառավարման ռուսական փորձը մեխանիկորեն փոխադրեց՝ իրականացնելու Խորհրդային Հայաստանի պայմաններում: Չնայած «ռազմական կոմունիզմի քաղաքականությունը», որ իրեն Ռուսաստանում վաղուց սպառել էր, իսկ ռուս մուժիկն էլ ապստամբել էր հեղափոխական Պետրոգրադի դեմ, այնուամենայնիվ, Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրից սկսած, այդ վարկաբեկված քաղաքականությունը մուտք գործեց նաև հայ իրականություն: Թերուս հայ բոլշևիկների մի մասի (Ավ. Նուրիջանյանի խմբավորումը) ակտիվ ջանքերով «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը բռնությամբ մտցրին տնտեսության ոլորտ, զանգվածաբար բռնագրավվեցին առանց այդ էլ գոյությունը հազիվ քարշ տվող հայ գյուղացու, արհեստավորի և աշխատավորական մյուս խավերի գոյության վերջին կենսամիջոցները:

Այսպես կոչված «պարենմասնատրման» քաղաքականությունը կաշկանդեց ազատ առևտուրը և ապրանքադրամային հարաբերությունները, ձեռնարկությունների զգալի մասը պետականացվեց, մի շարք մթերքների ու ապրանքների գծով պետական մենաշնորհ մտցվեց, մտցվեց հարկադիր աշխատանք՝ պարտադիր աշխատանքային պարհակ և այլն:

Ինչպես պարզ է դառնում փաստագրական հարուստ գրականությունից, խորհրդային իշխանության առաջին քայլերը Հայաստանում խելամիտ չէին, հաճախ ուղեկցվում էին չհաշվարկված, քաղաքականապես լրջորեն չհիմնավորված, գործնականում արկածախնդրական գործողություններով, և վերջի վերջո հանգեցրին քաղաքացիական կռիվների, որը չտեսնված բան էր հայ ժողովրդի պատմության մեջ: Համաժողովրդական դժգոհությունը վերաճեց քաղաքացիական կռիվների, որոնք ընդգրկեցին մի շարք շրջանների, ինչպես Կոտայքը, Բաշ-Գյառնին (Գյառնի), Դարալագյազը, Բաշ-Ապարանը (Ապարան), էպիկենտրոնը այդ շարժումների Արարատյան դաշտն էր: Խորհրդային իշխանությունը Հայաստանի մեծագույն մասում տապալվեց: Ժողովրդական զինված տարերային պայքարի գլուխ էին կանգնել նախկին խմբապետեր Մարտիրոսը, Կարո Սասունին, Խնկոն և ուրիշներ: Նշանավոր Կոտռոն սպարապետն էր: Կոտայքում, Գառնիում, Ապարանում և այլուր խորհրդային իշխանությունը տապալվեց, շրջապատվեց Երևանը: Ամենևին էլ անհիմք չէ պնդել, որ հենց սկզբից էլ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը կուսակցությունը ստանձնեց ապստամբության ընդհանուր ղեկավարությունը այն ուղղորդելու նպատակով: Դրանով իսկ ամենևին էլ չեն հերքվում, այլ ավելի շուտ հաստատվում են այն տեսակետները, թե հակախորհրդային այդ ապստամբությունը նախօրոք պլանավորվել և կազմակերպվել է հակահեղափոխական ուժերի, ասել է՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության կողմից դեռ խորհրդային իշխանության առաջին օրերից սկսած (Հ.Հ.Դաշնակցության պատմագրությունը պնդում է, որ այն նախօրոք կազմակերպված ու պատրաստված չի եղել, այլ ծագել է տարերայնորեն, հանկարծակի, իսկ բոլշևիկյան պատմագրության պնդման համաձայն, այն դաշնակցության կողմից նախապատրաստվել է Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո), Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրից հետո, ինչը որոշակի իմաստով համապատասխանում է իրականությանը, քանի որ ապստամբները իրենց հայտարարությունների համաձայն հանդես էին գալիս հենց հայ ժողովրդի քաղաքական շահերին համապատասխան, իրենց գաղափարներին համապատասխանության դիրքերից, և ՀՀԴ-ն պարզպես չէր էլ կարող չգլխավորել հակախորհրդային այդ ելույթները: Ենթադրվում է նաև, որ նրան 1921 թ.

փետրվարյան կռիվներին դրդեցին ինչպես նոր իշխանությունը, այնպես էլ զանազան հատուկ ծառայություններ, քանզի դա որոշակիորեն ձեռնտու էր թե՛ Թուրքիային, թե՛ բոլշևիկյան Ռուսաստանին, որին չարժեր, որ կուլ գնային առաջին հերթին հայ քաղաքական ուժերը, և գլխավորապես հին իշխանության կողմնակիցները: Կարծում ենք, որ այս տեսանկյունից ամենևին էլ լուրջ հիմքեր չունի գիտականորեն և պատմաքննական առումով ոչ լիարժեքորեն ու բազմակողմանիորեն հիմնավորված հենց այն գիտատեսական պնդումը կամ վարկածը, թե իբր փետրվարյան իրադարձությունները համաժողովրդական ապստամբություն էին: Կարծում ենք, ելնելով առկա փաստերի որոշակի համախմբի փաստարկված վերլուծությունից, պետք է գալ հակառակ եզրահանգման, համաձայն որի զանազան կուսակցական-քաղաքական ուժերի կողմից խնամքով հրահրվեց և ոգեշնչվեց մի եղբայրասպան քաղաքացիական պատերազմ, որը թեկուզև արտաքուստ գեղեցիկ էր և ձևի տեսանկյունից համահունչ էր «ազգային» լոզունգներին և նպատակադրումներին, այդուհանդերձ, աշխարհաքաղաքական և տնտեսաքաղաքական առումով ծանրագույն այդ պահին, այն ամենևին էլ ձեռնտու չէր հայ ժողովրդին, և ներդաշնակության մեջ չէր գտնվում նրա հեռահար քաղաքական նպատակադրումների հետ: Պատմաքաղաքական իրողությունների համադիր վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ էության փետրվարյան այդ իրողությունների մեջ շահագրգիռ ուժեր կային բարիկադի տարբեր՝ հակադիր կողմերի ճամբարներում գտնվող քաղաքական ուժերի շրջանում: Այս կապակցությամբ տեղին է նշել, որ պատմաքաղաքական ճակատագրական այդ պահին, երբ Մոսկվայում վճռվում էին Անդրկովկասյան վարչաքաղաքական քարտեզի խմբագրման լուրջ և կարևորագույն ռազմաքաղաքական խնդիրներ, հարևան Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսն էլ, ըստ որոշ փաստերի, վերածվել էր Անդրկովկասի հակախորհրդային ուժերի հավաքատեղու, որոնց գործունեությունը ուղղորդում էին անգլիական հետախուզական ծառայության ներկայացուցիչները, նման ռազմավարություն ընտրելը հայ քաղաքական ուժերի մի մասի կողմից, շատ մեղմ ասած, չափազանց կոպիտ քաղաքական հաշվարկ էր, միանգամայն անթույլատրելի վրիպում և անխոհեմ քաղաքական վարքագիծ: Նմանապես տրամաբանական կարող են լինել նաև այն գիտական տեսակետները, համաձայն որոնց փետրվարյան իրադարձությունների որոշակի «խմբագրման» մեջ լիովին իրենց մասը կարող էին ունենալ քեմալական ազգայնական ուժերը, որոնք ոչ առանց լուրջ պատճառների վստահություն ունեին և հիմնավոր ակնկալիքներ, որ հանգամանքների բերումով պետական իշխանության գլուխ վե-

բաղարձած ՀՀԴ կուսակցությունը անվերապահորեն կճանաչի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը գործնական մերժումի էր արժանացել Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից:

Թույլ տրվեցին քաղաքական մի շարք կոպիտ սխալներ և շեղումներ, որոնց մեջ իրենց միջամտությունն ունեցան զանազան քաղաքական ուժեր, Դաշնակցությունն իր 1920 թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ մի ոտով հեռացավ Հայաստանից, սակայն մի ոտով էլ մնաց՝ թողնելով իր ներկայացուցիչը և հրահանգեց ընկերներին իրենց տեղական պայմանների համաձայն գործել և պահպանել կուսակցության փաստացի գոյությունը, դեկտեմբերի կեսերին Երևանում կազմակերպելով դաշնակցության գաղտնի կոմիտե՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ, և ըստ այդմ դարձավ գործող գլխավոր քաղաքական ուժերից մեկը փետրվարյան քաղաքացիական եղբայրասպան կռիվներում, ինչը անկախ ամեն ինչից, ձեռնտու չէր հայ ժողովրդին՝ նրա հետագա նպատակադրումների ռազմավարության ապագայի տեսանկյունից:

Խորհրդային իշխանության խոտորումները և բացահայտ սխալները, նամանավանդ՝ Ռուսաստանի փորձը մեխանիկորեն հայ իրականություն տեղափոխելը քաղաքացիական պատերազմի բովով անցնելու կտրվածքով, արհեստականորեն սրեց իրավիճակը և հուզումներ առաջ բերեց Երևանում ու գավառներում, տարերային հակադրություն առաջ բերեց ընդդեմ բոլշևիկյան իշխանությունների կողմից փետրվարի 9-10-ի գիշերը ձեռնարկված ձերբակալությունների, ակտիվացրեց դաշնակցականներին, և Երևանի Հայրենքի փրկության կոմիտեն չհապաղեց օգտվել այդ պահից և ծավալվող իրադարձություններին ընդհանուր բնույթ տալ, առանց խորամուխ լինելու Հայաստանում և նրա շուրջ ընթացող աշխարհաքաղաքական բարդագույն գործընթացների մեջ:

1921 թ. փետրվարին Կոտայքի շրջանի Չառ գյուղում տեղի ունեցավ Երևանի Փրկության կոմիտեի նախաձեռնությամբ հրավիրված խորհրդակցություն, որտեղ որոշվում է ընդհանուր ապստամբություն բարձրացնել, որի զինած ելույթի առաջին փորձարկումը տեղի էր ունենացել դեռևս 1921 թ. հունվարի 22-ին Կոտո Թարխանյանի՝ Սպարապետ Սուրենի գլխավորությամբ, սակայն այն ձախողվել էր:

1921 թ. փետրվարի 13-ի վիճակով հակախորհրդային ուժերի կողմնակիցների թիվը հասնում էր ավել քան 5 հազար մարդու, որոնց շուտով միանում է Գարեգին Նժդեհի հանձնարարականով Զանգեզուրից եկած բաշգառնեցի Մարտիրոսը /Մարտիրոս Աբրահամյան/, որը, կարծում ենք, լավ փոխպայմանավորվածության արդյունք էր և վկայում է ինչպես Գ.Նժդեհի տեղեկացվածության մասին փետրվարյան դեպքերի հնարավոր նախապատրաստվածության, այնպես էլ վերջինիս այդ խնդրում շահագրգիռ դերակատարման մասին: Իսկ արդեն փետրվարի 16-ին գնդապետ Կոտոյի և խմբապետ Մարտիրոսի գլխավորած խումբն անսպասելի հարձակվում է Կոտայքի շրջանում տեղակայված Մ. Մոչկալովի գլխավորությամբ գործող խորհրդային զորամասի վրա, և հարկադրում նահանջել, և ի վերջո փետրվարի 16-17-ին մոտենում Երևանի մատույցներին, որի ընթացքում զոհվում է խորհրդային զորքերի արևմտյան խմբավորման հրամանատար Երմոլենկոն: Միաժամանակ, արևմտահայերից բաղկացած խմբերը Սասունցի Մուշեղի, Չոլոյի, Մորուք Կարոյի և այլոց գլխավորությամբ պարտության են մատնում Կարմիր բանակի 2-րդ բրիգադի զորամասերին և գրավում Էջմիածինը, Աշտարակը և Փարաքարը: Այս փաստերը անուղղակիորեն վկայում են այն մասին, որ խորհրդային ուժերը բավականաչափ տեղեկացված չեն եղել հակախորհրդային տրամադրություններ ունեցող ուժերի շրջանում ընթացող նախապատրաստությունների, այդ թվում՝ հնարավոր ապստամբներ-Գարեգին Նժդեհ փոխառնչությունների կարևոր մանրամասնումների մասին, ինչն էլ պայմանավորեց խորհրդային ուժերի թուլությունը և Երևանի անկումը: Փետրվարի 18-ին Կարմիր բանակի զորամասերը 178-րդ գնդի, «Ազատամարտ» և «Մուսայելյան» /նախկին «Վարդան զորավար»/ զրահագնացքների պաշտպանության տակ նահանջեցին Ղամարլու.նրանց ուղեկցում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Հայհեղկոմի և ՀԽՍՀ մի շարք հիմնարկների ղեկավար աշխատողներ և աշխատակիցներ, ինչպես նաև 1664 մարդ հետևակ, 70 հեծյալ, 11 հրանոթ, երեք շոգեքարշ, 60 վագոն, որոնցից 11-ը՝ բեռնված պարենով և ռազմամթերքով: Ապա հաջորդեց Ղամարլու-Վեդիի շրջանում Կարմիր բանակի 45-օրյա շրջափակումը:

Երևանից նահանջելիս բոլշևիկների ծայրահեղական թևը դիմում է զազրելի արարքի՝ Երևանի բանտում կացնահարելով շուրջ 40 բանտարկյալների, այդ թվում Համազասպ Սրվանձտյանին, գնդապետ Ղորղանյանին, խմբապետ Մակեդոնին և այլոց: Դա որոշակի առումով կարմիր վենդետա էր՝ ի պատասխան մայիսյան դեպքերի ընթացքում տեղի ունեցած գնդակահարությունների, որոնք իրարից ընդհանուր առմամբ ձևական տարբերություններ ունեին, և գործնականում ամենևին էլ որևիցէ ձևով չէին բխում ամեն մի նոր իշխանության կազմակերպման բովանդակային ձևից, բնույթից և դեկլարատիվ սկզբունքներից:

Եվ այսպես, փետրվարի 18-ին ապստամբները մտան մայրաքաղաք՝ Երևան, և Հայաստանի հեղկոմի անդամներն իրենց մի խումբ համախոհներով երկու զրահագնացքով Երևանից հեռացան դեպի Ղամարլու (Արտաշատ), Շարուր-Նախիջևան՝ այնտեղից օգնություն ստանալու

ակնկալիքով: Հարկ է նշել, որ նաև այդ ժամանակ «ազատարար» 11-րդ Կարմիր բանակի զորամասերը դուրս էին բերվել Խորհրդային Հայաստանից, և զբաղված էին Վրաստանի դեմոկրատական հանրապետությամբ, ինչը նպաստավոր էր ապստամբների համար: Առաջին իսկ գործնական քայլերից մեկը եղավ Երևանի բանտից խորհրդային իշխանությունից դժգոհ կալանավորներին ազատելը. նրանց թվում էին Հովհ.Քաջազնունին, Համո Օհանջանյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը և ուրիշներ: Երևանում ստեղծվեց **«Հայրենիքի փրկության կոմիտե»՝ ՀՀ վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ**, և որը հրաման արձակեց Հայաստանում «բոլշևիկյան իշխանության» լիկվիդացիայի մասին: Նոր կառավարություն կազմվեց, որում հենց ինքը Ս.Վրացյանը արտաքին գործերի, գյուղատնտեսության և պետական գույքերի վարիչն էր: Կարգի բերվեցին զինված ուժերը, և զինվորական գործերի վարիչ նշանակվեց Արշակ Հովհաննիսյանը: Ներքին գործերի վարիչ դարձավ Կարո Սասունին, ելևմտական՝ Համբարձում Տերտերյանը, արդարադատության՝ Ա.Խոնդկարյանը, պարենավորման՝ նախ Հ. Տեր-Հակոբյանը (Իրազեկ), այնուհետև՝ Վահան Մինախորյանը, բանակի հրամանատար նշանակվեց գնդապետ Կոտռ Թարխանյանը: Ձեռնարկվեցին ներքին և արտաքին տնտեսական-քաղաքական, դիվանագիտական զանազան միջոցառումներ՝ Հայաստանի հանրապետությունը նոր աշխարհաքաղաքական իրադրությանը հարմարեցնելու համար: Սկսեց հրատարակվել «Ազատ Հայաստան» լրագիրը:

Կազմվեց նաև Վասպուրականի զինվորական մարմին, որի մեջ ընդգրկվեցին 1915 թ. Վան-քաղաքամեջի ինքնապաշտպանության ղեկավար Հայկակ Կոսոյանը, Փանոս Ժամհարյանը, Սամվել Մեսրոպյանը, Սամվել Մաքսապետյանը և ուրիշներ, որոնցից վերջին երկուսը դարձան նաև Հայրենիքի փրկության կոմիտեի անդամներ, ստեղծվեցին նաև մշեցիների և սասունցիների ջոկատներ: Արևմտահայերի մասնակցությունը փետրվարյան իրադարձություններին պայմանավորված էր այն բանի հետ, որ նրանց մոտ բոլշևիկները ներկայացվում էին որպես իրենց դարավոր թշնամու՝ թուրքերի բարեկամ և դաշնակից, ինչը, սակայն, կարծում ենք, միանշանակ չի կարելի ընդունել, քանզի այդ ամենի վրա իշխում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի ուրվականը, որն ստորագրողները ևս բարեկամության և եղբայրության խոստումներ են տվել նույն թուրքերին:

Ինչևիցե, առաջադրված խնդիրը՝ տապալել խորհրդային իշխանությունը Հայաստանում, մասամբ կատարվել էր և փետրվարի կեսերին Հայրենիքի փրկության կոմիտեի կողմնակիցները ակտիվորեն ձեռնամուխ էին եղել գավառներում և շրջաններում ենթակոմիտեների ստեղծմանը:

Կարևոր է նշել նաև այս իրողությունների նկատմամբ հայ քաղաքական ուժերի վերաբերմունքի մասին: Փետրվարյան քաղաքացիական կռիվներին գործուն մասնակցություն ունեցան էսէռները, կադետները /Հայ ժողովրդական կուսակցություն/, սպեցիֆիկները, ռամկավարները: Միևնույն տեղին է նշել, որ հնչակյանները այն համարեցին արկածախնդրություն, իսկ զորավար Անդրանիկը այն անտեղի համարեց: Ավելին, Անդրանիկը զգուշացնում էր, որ այն բոլոր պետությունները, որոնք դե ֆակտո կամ դե յուրե ճանաչեցին Հայաստանը, արտաքին համբույր է միայն, որ նվիրեցին նորածին հանրապետությանը՝ միմիայն աշխարհին խաբելու նպատակով, և երբ իրենց շահը պահանջի, ամեն ինչ զոհելու են Ռուսաստանին, որին էլ պատկանում է վերջին խոսքը:

Հարկ է նշել, որ խորհրդային վարչակարգը պահպանվեց միայն Համամլու (Սպիտակ)-Ղարաքիլիսա-Դիլիջան-Շամշադին (Տաուշ) գոտում, ուր ստեղծվեց Ղարաքիլիսա-Դիլիջանի տարածքի ղեկավարման ռազմահեղափոխական կոմիտե, որն այդ համաժողովրդային զայրույթն արհեստական ակտիվացնողներից էր իր հակաժողովրդական քայլերով և վարքագծով: Խորհրդային իշխանության դեմ ապստամբության դրոշ բարձրացրած ուժերի դեմ պայքարը կազմակերպելու նպատակով 1921 թ. փետրվարի 26-ին Դիլիջանում կազմակերպվեց Դիլիջան-Ղարաքիլիսա գավառների ռազմահեղափոխական կոմիտե՝ Գևորգ Աթարբեկյանի գլխավորությամբ, որի կազմի մեջ մտան Գևորգ Ալիխանյանը, Ասքանազ Մռավյանը, Ե.Շամախյանը, Գ.Թովմասյանը, Ա.Պոլյանսկին:

Սակայն ընդհանուր խանդավառությունը, ոգևորիչ-գոտեպնդիչ վիճակը սկսեց տեղի տալ տագնապին: Ակնհայտ դարձավ, որ նոր իշխանության վիճակը չափազանց անկայուն է, չունի լուրջ ներքին և արտաքին հենք: Չնայած այն հանգամանքին, որ համաժողովրդական այս ընդվզումը հենվում էր լայն զանգվածների բարոյաքաղաքական աջակցության վրա, սակայն դա անբավարար էր, առավել ևս ապստամբների զորքը հիմնականում անկանոն զորք էր և չէր կարող դիմագրավել անհամեմատ ավելի կազմակերպված և ռեսուրսներով հարուստ խորհրդային բանակին: Դրան պետք է ավելացնել նաև այն հանգամանքը, որ ժողովուրդն էլ առանձնապես ոգևորված չէր այդ իրողություններով: Ակնկալվող օգնությունը Վրաստանից թղթային էր, այն առավելապես դիտորդի դերում մնաց, շուտով այն խորհրդայնացվեց, իսկ նախօրյակին Լոռին (այսպես կոչված «չեզոք գոտին) միացվեց Հայաստանին: Ի դեմս Ս.Վրացյանի օգնության դիմումագիրը (Ս. Վրացյանը կապեր հաստատեց Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրի Երևանի ներկայացուցիչ Բահաէդդին բեյի հետ և վերջինիս միջոցով 1921 թ.

մարտի 18-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը ներկայացրեց դիմումագիր՝ օգնություն ստանալու մասին), խնդրանքը Թուրքիայից մնաց օդում կախված /Հայրենիքի փրկության կոմիտեի տեղեկատու բյուրոն փետրվարի 7-ին հրապարակել էր հաղորդագրություն, որտեղ հայտարարվում էր, թե ամբողջ թքությունն իրենց հետ է և բոլշևիկների դեմ/, այն պարզապես ձեռնատու չէր թուրքերին, նրանց լիովին բավարարում էր 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան դաշնագիրը, իսկ արկածախնդրության մղվել, նրանք պարզապես չցանկացան որպես խելացի քաղաքագետներ, ի տարբերություն նրանց հայ գործընկերների (Ավիս, Գևորգ Աթարբեկյան), որոնք պարզապես իրենց չափից ավելի կոշտ քայլերով, ոչ խելամիտ քաղաքական վարքագծով գրգռեցին հասարակ ժողովրդին և հանեցին նոր վարչակարգի դեմ: Առավել ևս, երբ այդ ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի գավառը դեռևս գտնվում էր թուրքերի ժամանակավոր օկուպացիոն ռեժիմի տակ: Իրանը չեզոք դիրք գրավեց և կամեցողություն չդրսևորեց աջակցել ապստամբներին: Ադրբեջանն էլ, ինչպես պարզվում է, կարծես հենց փետրվարյան այդ խառնաշփոթ և լարված, խճճված իրավիճակին էր սպասում, որպեսզի Ռուսաստանի օգնությամբ իր ճշգրտումները և ուղղումները մտցնի Հայաստան-Ադրբեջան տարածքային հակամարտությունում՝ իր օգտին լուծելով Նախիջևանի, Ղարաբաղի և անգամ Զանգեզուրի «վիճելի» տարածքների հարցը: Ներքին դաշտում էլ խնդիրներ կային. փետրվարյան իրադարձությունների սկզբին Ներքին Ախտային (Հրազդան) շրջանի Ռնդամալ և Քարվանսարա (Աթարբեկյան) գյուղերի բնակիչները զինված դիմադրություն ցույց տվեցին ապստամբական ուժերին և եռօրյա մարտերից հետո միայն նահանջեցին Եղեղնովկա (Սևան), և շուրջ 300 հոգի միացան Կարմիր բանակին: Խնդիրներ առաջացան նաև Թալինի շրջանի գյուղերում և այլուր:

Խորհրդային վարչակարգը վերախմբավորեց իր ուժերը, ինչպես նաև դրսից ստանալով օգնություն, որից հետո անցավ վճռական հակահարձակման: Ռազմական առճակատումը դարձավ անխուսափելի: Ապստամբությունը ճնշելու գործում արտաքին ուժերը վճռական դերակատարում են ունեցել: Հայհեղկոմն իր տրամադրության տակ ուներ երկու զրահանացք, կոմունիստական խմբեր, ռուսական բանակի 60-րդ բրիգադի երկու գնդեր: Մինչդեռ երկրի հյուսիսում Գ.Աթարբեկյանի գլխավորությամբ ստեղծված հեղկոմը գլխավորապես հենվում էր թուրք և ռուս-մոլոկան գյուղացիական խմբերի, կոմունիստների և ռուսական դիվիզիայան 18-րդ զորախմբի վրա: Շուտով 18-րդ և 20-րդ դիվիզիաների ուժերով կազմավորվեց Երևանյան զորքերի խորհրդային խմբավորումը

Մ.Վելիկանովի գլխավորությամբ, որն առաջադրանք ստացավ իրականացնել Երևանի գրավումը: Վելիկանովի գլխավորած «Երևանյան զորախումբը» իր կազմում ուներ ռուսական Կարմիր բանակի 179-րդ գունդը, 53-րդ և 54-րդ բրիգադները, 18-րդ կովկասյան գունդը, 20-րդ դիվիզիայի զորամասերը (58-րդ բրիգադի 172-րդ և 176-րդ գնդերը, 20-րդ կովկասյան գունդը): Նման պատկառելի ռազմական խմբավորման ֆոնի վրա կոմունիստներից կազմված խմբերի դերը հակախորհրդային փետրվարյան ելույթների ճնշման գործում չնչին էր, կարելի է ասել՝ գրեթե զրոյական: 1921 թ. փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերը Կարմիր բանակի զորամասերը Մ.Մալկաչանովի հրամանատարությամբ Ղամարլու-Վեղիի կողմից անցնում են հարձակման՝ Երևանը գրավելու համար, սակայն կռիվները ձգձգվում են: Մարտի 8-ին Ղամարլուի ճակատի հրամանատարությունը տեղեկատվություն է ստանում 11-րդ Կարմիր բանակի զորամասերի առաջխաղացման մասին Ելենովկա-Ախտա և Համամլու-Ապարան ուղղություններով: Դեպի Երևան Կարմիր բանակի զորամասերի առաջխաղացման ընթացքում Գ.Նժդեհի զանգեզուրյան զորուժը բազմիցս ձգտեց Դարալագյազի և Նոր Բայազետի դիրքերից ճեղքումներ կատարել և միանալ խորհրդային իշխանության դեմ ապստամբած երևանյան ուժերին, որոնք, այդուհանդերձ էական արդյունքներ չտվեցին և չէին էլ կարող տալ, քանզի ռազմաքաղաքական և այլ առավելությունները բացահայտորեն խորհրդային համակարգի կայունության մասին են վկայում: Մի շարք ուղղություններով 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին տեղի ունեցան եղբայրասպան համառ կռիվներ: Հատկապես համառություն դրսևորեցին Կոտռոն (Սուրեն Թարխանյանը՝ սպարապետ), խմբապետ Սմբատը, գառնեցի Մարտիրոսը, Յապոնը (Համբարձում Սարգսյանց), սակայն վերջի վերջո, այդ շարժումը դատապարտված էր, քանի որ ուժերը խիստ անհավասար էին: Հետագա արյունահեղությունից խուսափելու նպատակով 11-րդ Կարմիր բանակի ռազմական խորհրդի անդամ Գ.Օրջոնոկիձեն մարտի 20-ին վերջնագիր ներկայացրեց «Հայրենիքի փրկության կոմիտեին»:

Մարտի 20-ին 11-րդ Կարմիր բանակի ռազմական խորհրդի անդամ, բոլշևիկյան քաղաքական-կուսակցական հայտնի գործիչ Սերգո Օրջոնիկիձեն նամակով դիմեց Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս.Վրացյանին՝ առաջարկելով վերջ դնել անիմաստ, աննպատակ և ժողովրդի համար կործանարար պատերազմին և զենքերը վայր դնել: Մարտի 21-ին Երևան ժամանեց նշանավոր հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որը ծանոթանալով տագնապալի իրավիճակին, հեռագիր ուղարկեց Գ. Օրջոնիկիձեին, գրելով, որ ապստամբությունը ծագել է

տարերայնորեն, գյուղացիության շրջանում (վերջինս դժգոհ էր տխրահռչակ պարենմասնատրումից, գյուղացու նկատմամբ չափազանց դժնի վերաբերմունքից), որին միացել է մտավորականությունը, ապա ավելացնում էր, որ Կարմիր բանակը մղում է անմիտ պատերազմ և հարկավոր է շուտափույթ վերջ տալ արյունահեղությանը: Սակայն այդ առաջարկները մերժվում են, իսկ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ենթարկվում է տնային կալանքի:

Խորհրդային զինուժը վերջնագրային տարբերակով բոլոր կողմերից անցնում է վճռական գործողությունների: Ի վերջո, մարտի վերջին, խորհրդային զորքերը գրավեցին Էլարը (Կոտայք) և Բաշ-Ապարանը, իսկ ապրիլի 2-ին մտան Երևան, իսկ ապրիլի 3-ին կարմիր հեծելազորը մտնում է Էջմիածին՝ վերահաստատելով խորհրդային իշխանությունը: Ապստամբական ուժերը, հաշվի առնելով ուժերի խիստ անհավասարակշռությունը, նահանջեցին Դարալագյազ, ապա Զանգեզուր, ուր շարունակվում էին Գարեգին Նժդեհի ղեկավարած ապստամբական կռիվները: Երևանի անկումից հետո տասը հազարից ավելի հայ մարդիկ (մտավորականներ, զինվորականներ և այլն) բռնեցին արտագաղթի ուղին:

Ապրիլի 2-ին մտնելով Երևան, առաջին հերթին ձեռնամուխ եղան բանտերից Հայրենիքի Փրկության կոմիտեի կողմից ձերբակալվածներին ազատելու գործին, որոնց թիվն ամենևին էլ չէր զիջում դեռ փետրվարին Չեկայի կողմից բանտարկվածների թվին: 1921 թ. մարտի 5-ի դրությամբ Երևանի կենտրոնական բանտում բանտարկվածների թիվը հասնում էր 800 հոգու, իսկ զինվորական բանտում գտնվողներինը կազմում էր շուրջ 600 մարդ: Հետաքրքիր է նշել, որ բանտարկյալներով լեփ-լեցուն էին նաև Աշտարակի, Էջմիածնի, Կոտայքի, Ախտայի, Նոր Բայազետի բանտերը, որոնց համար ստեղծվել էր նույնչափ սոսկալի բանտային ռեժիմ, որքան և Չեկայի կողմից բանտարկվածների համար: Եվ դեռ ավելին: Հայրենիքի փրկության կոմիտեի արտակարգ դատարանի նախագահ Արծրունին մարտի 25-ին կարգադրագիր է ստանում Ս.Վրացյանից, որի հիման վրա առավել աչքի ընկնող 63 «դավաճան» կոմունիստների և կոմերիտականների (Ա. Բուդաղյան, Մ. Միկիչյան, Խ. Խաչյան և ուրիշներ) Երևանի կենտրոնական ու զինվորական բանտից դուրս են բերում և տեղափոխում Բաշ-Գառնի:

Խորհրդային իշխանությունը վճռականորեն վերահաստատվում է երկրում, իսկ ապստամբ հասարակ զինվորությունը և քաղաքական-կուսակցական «ջոջերը», ղեկավար այրերը Զանգեզուրի վրայով բռնում են արտերկրի ճանապարհը, և դրանց թվում էին Հովհ.Քաջազնունին, Սիմոն

Վրացյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը, Ռուբեն Դարբինյանը և շատ ուրիշներ:

Հետաքրքիր է նշել, որ խորհրդային իշխանությունից փախչողների մի ստվար թիվ էլ շարժվեց դեպի Մարգարայի կամուրջ՝ Թուրքիա անցնելու համար, սակայն հարևան պետության իշխանությունները վճռաբար մերժեցին նրանց, որից հետո նրանք ցրվեցին իրենց գյուղերում:

Այս տխուր ողիսականի վերջնամասում Հայրենիքի փրկության կոմիտեն մազաչափ անգամ չհապաղեց իր հետ վերցնել Հայաստանի նախկին հանրապետության արխիվների մի մասը և պետական գանձը՝ հայկական դրամ և արժեչեկեր, խորհրդային դրամներ, արտարժույթ. հայկական դրամը տեղաբաշխված էր 15 արկղերում՝ 9 միլիարդ 400 միլիոն ռուբլի արժողությամբ, իսկ խորհրդային դրամները կազմում էին 650 միլիոն ռուբլի, ինչպես նաև մեկ արկղ ոսկյա իրեր, զգալի քանակությամբ տարադրամ և այլն, ինչի մասին փաստում է հենց ինքը՝ Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս.Վրացյանը: Դրա թե քաղաքական, թե առավելապես բարոյական իրավունքը չունեին, և ոչնչով այն արդարացնել հնարավոր չէ: Այդ վերջին հանգամանքը խորհրդային իշխանությանը դրեց չափազանց դժվարին կացության մեջ, և հենց դրանից էլ ելնելով՝ Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը ռազմական ժողկոմ Ա.Նուրիջանյանի հետ միասին հեռագրով դիմեցին Ս. Օրջոնիկիձեին՝ խնդրելով իր մոտալուտ Երևան այցելության ժամանակ իր հետ բերել առնվազն մեկ միլիարդ խորհրդային ռուբլի:

1921 թ. ապրիլի 17-ին Ս.Օրջոնիկիձեն գալիս է Երևան և ապրիլի 20-ին Հայհեղկոմի անդամների և 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերի հետ միասին այցելում Երևանի կենտրոնական բանտ, որտեղ գտնվում էին շուրջ 1000 կալանավորված դաշնակցականներ և ապստամբության այլ մասնակիցներ: Ս.Օրջոնիկիձեի հրահանգով բոլոր բանտարկյալները ազատ են արձակվում, ինչը նրբին քաղաքական քայլ էր, պահի թելադրանք և քաղաքական հաշվարկ, իսկ Ս.Կասյանի գլխավորած Հեղկոմը վերջինիս կողմից արժանանում է խիստ քննադատության թույլ տված կոպիտ սխալների համար, որոնք նպաստել էին Փետրվարյան քաղաքացիական կռիվների հրահրմանը: Ստեղծված նոր իրավիճակի թելադրանքից ելնելով՝ Հայհեղկոմը քննեց Հայաստանի Հանրապետության բանակի աքսորված և բանտարկված սպաների հարցը՝ որոշում ընդունելով վերջիններիս ազատել ճամբարներից և բանտերից: Ապրիլի 22-ին Մոսկվայից ստացվեց հեռագիր, որում հայտնվում էր, որ Ռուսաստան աքսորված նախկին հայկական բանակի սպաներին թույլատրված է վերադառնալ հայրենիք:

Այսպիսով, ընդամենը 45 օր գոյատևեց «Հայրենիքի փրկության կոմիտե»- կառավարության գործունեությունը: Փետրվարյան կռիվների վախճանն անխուսափելի էր, քանի որ տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի իրական հաշվեկշիռը նրա օգտին չէր, բոլշևիզմը դարձել էր իրական համաշխարհային չափազանց ազդեցիկ միջազգային-քաղաքական ուժ, որի հետ հաշվի չնստել չէր կարելի (դա ըստ էության հրաշալի հասկացան թուրքերը և օգտվեցին թուրք-բոլշևիկյան զինակցության շնորհած բոլոր բարիքներից, ինչը սակայն չընմբռնեց Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Ս.Վրացյանը՝ «դիվանագիտական» իր «նրբին» քայլով օգնություն հայցելով թուրքական կառավարությունից. վերջինս Թուրքիան դիտարկում էր որպես Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական երաշխավոր և պաշտպան: Ս.Վրացյանի հայտնի դիմումագիրը, ըստ էության իբր թե խաբսխված էր այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմքը դրված էր դեռ Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած և քաղաքական այդ հանգամանքը խաթարված էր բոլշևիկյան իշխանության հաստատմամբ: Ինչևիցե, այնքան արտառոց էր Ս.Վրացյանի կողմից Թուրքիայից օգնություն հայցելու դիմումագրի հանգամանքը, որ դա անընդունելի և անհասկանալի եղավ նույնիսկ իրարամերժ կուսակցական-քաղաքական ուժերի կողմից: Այն չտեղավորվեց բարոյաքաղաքական նկատառումներից և որևիցե մեկի շրջանակում: Նման դիրքորոշումը գործնականում խլացվեց կուսակցական-քաղաքական և դասակարգային կույր ատելության մոլուցքում:

Փորձելով ընդհանուր գնահատումների գալ Փետրվարյան քաղաքացիական կռիվների հարցում՝ կարելի է գալ հետևյալ եզրահանգմանը. 1) մեծ վերապահումներով հանդերձ, գուցե և փետրվարյան քաղաքացիական կռիվների հիմքում կարելի է փորձել որոնել լուրջ պատճառահետևանքային արդարացումներ, սակայն ինքնին հայտնի պատմափաստերը, արխիվային վավերագրերը անառարկելիորեն վկայում են, որ գործնականում դրանց կազմակերպիչները կուլ գնացին իրենց հետամտած կուսակցական-քաղաքական եսասիրությանը, չդրսևորեցին անհրաժեշտ հեռատեսություն և անտեսելով առկա աշխարհաքաղաքական իրողությունները, պարզապես գնացին արկածախնդրության, գործնականում ոչնչի չհասան և հայ ժողովրդի կանգնեցրին աշխարհաքաղաքական փակուղու առաջ, 2) լայն իմաստով՝ կարելի է եզրահանգել, որ ռազմաքաղաքական արդյունքների տեսանկյունից միանգամայն անցանկալի աշխարհաքաղաքական հետևանքները հանգեցրին Խորհրդային Հայաստանի դիվանագիտական մեկուսացմանը մոսկովյան բանակցություններից սեղանից, 3) Թուրքիայի հետ հարաբերությունների նման ձևը ՀՀ նախկին վարչապետի կողմից հարցերի հանգուցալուծման անընդունելի տարբերակ եղավ, քանզի հենց իրենք՝ թուրքերը այն չափազանց անլուրջ ընդունեցին, ամենևին էլ պատրաստակություն չդրսևորելով խաթարել իրենց համար այնքան ցանկալի, արդյունավետ և գործնական բարեկամությունը բոլշևիկյան Ռուսաստանի հետ: Եվ այստեղ պետք է եզրահանգել, որ 1921 թ. փետրվարյան կռիվներում, և առավել ևս՝ Ս.Վրացյանի գլխավորած Հայրենիքի փրկության կոմիտեի գործունեությունում որոնել հերոսական, առավել ևս ընմբռնելի որևիցե պատմաքաղաքական փաստարկում և արդարացում՝ պատմագիտական և ազգային-քաղաքական շահերի հաշվառման առումով հիրավի անշնորհակալ զբաղմունք է, անընդունելի քաղաքական վարքագիծ, որը պետք է ըստ էության և սկզբունքորեն դատապարտել:

4. Հայտնի է, որ Լոռու «չեզոք գոտին» առաջացավ 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա վրաց-հայկական պատերազմի հետևանքով: Պատերազմի ավարտամասում, 1919 թ. հունվարի 9-17-ին Թիֆլիսում գտնվող բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Ստյուարտի նախագահությամբ հրավիրվեց հայ-վրացական հաշտության կոնֆերանս, որի որոշումների հիման վրա ստեղծվեց «չեզոք գոտին» և նշանակվեց խառը վարչություն՝ իր կազմում ունենալով ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, ներկայացուցիչներ. վարչությունը գոտին պետք է կառավարեր Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների կողմից նշանակված կոմիսարների օգնությամբ: Տարածքային առումով «չեզոք գոտու» մեջ էին մտնում նախկին Բորչալուի գավառի Ալավերդու, Օձունի /Ուզունլար/ և Վորոնցովկայի /Տաշիր/ շրջանները՝ 41 գյուղերով, որոնց թիվը վրացիները ավելացրին հայկական գյուղերի նոր անօրինական բռնակցումներով այդ գոտուն, որի հետևանքով դրանց թիվը հասավ 53-ի:

Իրադրությունը հետագայում էլ ավելի բարենպաստ գտնվեց վրացական իշխանությունների համար, և հատկապես 1920 թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմի ժամանակ: Վրացիներն օգտվելով Հայաստանի Հանրապետության համար ստեղծված ծանրագույն ռազմաքաղաքական իրավիճակից, հայկական իշխանություններին առաջարկեցին թույլ տալ վրացական զորք մտցնել «չեզոք գոտի»՝ իբր թե Թուրքիայի կողմից Վրաստանին սպառնացող վտանգը կանխելու համար, ինչը, սակայն, գործնականում չէր համապատասխանում իրականությանը: Արդյունքում, այլընտրանքային հնարավորություն չունենալով, 1920 թ. նոյեմբերի 13-ին ՀՀ-ն կնքեց հայ-վրացական մի համաձայնագիր, ըստ որի վրացական զորքերին թույլատրվեց մուտք գործել «չե-

զոք գոտի»: Սակայն շուտով վրացիներն այնքան վստահ և անպատիժ զգացին, որ նույնիսկ իրենց թույլ տվեցին սպառնալիքների միջոցով հարկադրել հայ բնակչությանը ընդունել վրացական քաղաքացիություն:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո, իրադրությունը շարունակեց բարենպաստ մնալ վրացական կողմի համար, որը փորձեց շարունակել հետագա առաջխաղացումը Հայկական լեռում և նրան հարակից տարածքներում: Վրացական զորամասերը մտան Շահալի, այնուհետև՝ գրավեցին Ջալալօղլին /Ստեփանավան/, Լոռուտը, Աթանը և մի շարք այլ գյուղեր: Ամենօրյա կողոպուտները և ամեն տեսակի սանձարձակությունները, կողոպուտները և դրամաշորթությունները, պարենային անհարկի բռնագրավումները դարձան վրացական զորաջոկատների կողմից ձեռնարկված գործողությունների անփոխարինելի ուղեկիցը: Շուրջ 7 հազարանոց վրացական զորքը գոյատևում էր հայկական Լոռու գյուղերի ալան-թալանի հաշվին:

Վրացիներն բազմիցս փորձում են նորից Հայաստանը տնտեսաքաղաքական օղակման մեջ առնել, և վերահսկել դեպի Խորհրդային Հայաստան տանող երկաթգիծը: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ամենևին էլ չձգտելով առկա վիճարկելի հարցերը առճակատամամբ լուծելուն, 1920 թ. դեկտեմբերի 7-ին հատուկ նոտայով դիմեց Վրաստանի կառավարությանը՝ առաջարկելով վրացական զորքերը դուրս բերել «չեզոք գոտուց», բացել երկաթուղագիծը և բանակցություններ սկսել վիճելի տարածքային խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու համար, ինչը սակայն մերժվում է Վրաստանի իշխանությունների կողմից, և ավելին՝ նրանց կողմից կալանքի է առնվում Թիֆլիսի կայարանում կանգնած Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ.Լեգրանի միսիայի վագոնը՝ 32 ուղեկիցներով:

Վրաստանը խոչընդոտներ էր հարուցում նաև դեպի Հայաստան այն տրանզիտային բեռների առաքման ճանապարհին, որոնք գալիս էին Խորհրդային Աղրբեջանից: Դեռ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Գ.Կ.Օրջոնիկիձեն Վրաստանում ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Շեյմանին հանձնարարական է տալիս վրացական կառավարությունից տարանցիկ հաղորդակցության իրավունք ստանալ Խորհրդային Աղրբեջանից Խորհրդային Հայաստան ուղևորվող ապրանքատար շարժակազմի համար, սակայն ինչը մերժվում է վրացիների կողմից, որոնք ընդհատում են նաև հեռախոսային և հեռագրական կապը: Այսպես կոչված ուղիների «նորոգումը» ընթանում է ձգձգումներով և ընդատումներով, որոնք ընդգծված հակահայկական երանգներ ունեին: Որոշակի աշխարհաքաղաքական շահերից ելնելով՝ այս լարված իրադրությունը հանգուցալուծելու համար

հայ-վրացական հարաբերությունների կարգավորման արբիտրաժային ***/իրավաբանական-միջնորդական առաքելություն/*** դեր է ստանձնում մոսկովյան Կրեմլը. 1920 թ. դեկտեմբերի 13-ին Վ.Լենինն ընդունում է Վրաստանի ներկայացուցիչ Մախարաձեին և պահանջում բաց թողնել Խորհրդային Ռուսաստանից դեպի Հայաստան ուղարկվող գնացքները:

Իրադարձությունները զարգանում են գլխապտույտ խորհիմաստ ընթացքներով: Արդեն 1920 թ. դեկտեմբերի 18-ին Հայհեղկոմը Վրաստանի կառավարությանն ուղարկված նոտայով իր հստակ հրաժարումն է արտահայտում 1920 թ. նոյեմբերի 13-ի հայ-վրացական համաձայնագրից և բավականին կոշտ առաջարկում վրացական զորքերը դուրս բերել «չեզոք գոտուց» և Հայաստանի պատկանող այլ գրավյալ տարածքներց: Այդ պահանջագիրը մերժվում է Վրաստանի մենշևիկյան հանրապետության կողմից, սակայն Հայաստանի Հեղկոմը դեկտեմբերի 29-ին նոր նոտա է ներկայացնում, որը դարձյալ արժանանում է մերժողական պատասխանի: Եվ այստեղ հանուն պատմական ճշմարտության հարկ է արձանագրել, որ այս քայլերով Հայաստանի խորհրդային իշխանությունները իրենց՝ նախորդ հանրապետության ժառանգության իրավահաջորդներ էին համարում, և դա է կարևոր, քանզի զանազան «իզմերը» միշտ էլ որոշակի պատմական իրադրությունում մնում են ոչինչ չարտահայտող «կցաններ»:

Կարճ ժամանակ անց, ամենևին էլ ոչ պատականորեն, Լոռու «չեզոք գոտում» ստեղծվում այնպիսի իրադրություն, և մթնոլորտն այնքան է շիկանում, ինչին նպաստում են վրացական իշխանությունները իրենց մշտական բռնություններով և բռնագրավումների քաղաքականությամբ, որ հայկական գյուղերի բնակչությունը վրդովված այդ անտանելի վիճակից դիմում է արտակարգ միջոցառումների և նախապատրաստությունների՝ Վրաստանի իշխանությունների հովանու տակից դուրս գալու համար: 1920 թ. դեկտեմբերի 1-10-ը Լոռում հրավիրվում է գյուղացիական երեք համագումար, որտեղ հայ գյուղացիությունն իր վճռական և միանշանակ պատրաստակամությունն է հայտնում միանալ Խորհրդային Հայաստանին, իսկ ապստամբության դեպքում օգնել պարենով և կենդանի ուժով: Շատ կարևոր տեղ է հատկացվում զինված խմբերի ստեղծմանը՝ ինքնապաշտպանության նկատառումներից ելնելով. յուրաքանչյուր գյուղում հաշվվում են 50-200 զինված մարդիկ, իսկ ընդհանուր զինված գյուղացիության թիվը Լոռում հասնում էր 2500 մարդու:

Իրադրությունը աստիճանաբար ավելի է բարդանում, տեղի են ունենում հաճախակի ընդհարումներ վրացական զորամասերի հետ, որոնք Լոռու հայկական գյուղերում բնակչության նկատմամբ բռնարարք-

ներ էին կատարում, դիմելով կողոպուտների և ալան-թալանի, հարկադրելով հայ մարդկանց ընդունել վրացական քաղաքացիություն և այլն: Դեկտեմբերի 12-ին վրացական այսպես կոչված «ժողովրդական գվարդիայի» սանձարձակ զինվորները բախում են ունենում Շնող գյուղի գյուղացիների հետ, որոնք քաջաբար ընդդիմանում են վրացական զորամասին, և այդ առթիվ Վրաստանի կառավարությունը գյուղացիության դիմադրությունը կոտրելու համար զրահագնացք է ուղարկում Սանահին: Շարունակում է իր հերոսական դիմադրությունը Օձունի գյուղացիությունը՝ չընկճվելով մշտական հալածանքներից և անօրինական ձերբակալություններից: Կարևոր մի փաստաթղթից նաև պարզ է դառնում վրացիների մտադրության մասին՝ իրենց զորքերը շարժել դեպի Խորհրդային Հայաստանի խորքերը, այդ նպատակի իրագործման համար ականապատելով Շահալիի /Ջամալուի և Սատանի/ կամուրջները: Դեկտեմբերի 17-ին, Ղարաքիլիսայի գավառի Նովոպոկրովկա գյուղի բնակիչները բազմաթիվ գրություններով լի դիմումագիր են ուղարկում Խորհրդային Հայաստանի և ՌԽՖՍՀ կառավարությանը՝ խնդրելով իրենց ազատել «դեմոկրատական» Վրաստանի լկտի բռնատիրությունից: Նման ժողովներ են տեղի ունենում նաև Վորոնցովկայում, Պրիվոլնոյեում, Նովո-Միխայլովկայում, ռուսական Ջալալօղլիում, Գյառգյառում և այլ բնակավայրերում:

1920 թ. դեկտեմբերի 28-ին **Բ. Լեգրանը** Խորհրդային Ռուսաստանի կառավարությանն է ներկայացնում զեկուցագիր «չեզոք գոտու» հարցում Խորհրդային Հայաստանի ձեռնարկած միջոցառումների և դրանց ի պատասխան վրացական զորամասերի՝ դեպի Ղարաքիլիսա շարժվելու մասին: Հայաստանում ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանը առաջարկում է պարտադրել Վրաստանին՝ ընդունելու Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը, հակառակ դեպքում՝ զորք մտցնել «չեզոք գոտի»: Վերջ ի վերջո օրակարգային է դառնում «չեզոք գոտում» զինված «ապստամբության» նախապատրաստման հարցը, որի գործնական նախապատրաստման և կազմակերպչական խնդիրների իրականացման համար ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն այնտեղ է գործուղում կուսակցական-քաղաքական ղեկավար աշխատողներ Գ. Առուստամյանին, Ս. Լիսինին և ուրիշների:

Որոշակի իրական շահագրգռվածություն ունենալով խնդրո առարկայի շուրջ վճռման գործում՝ Կովկասյան բյուրոյի հրահանգով Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը կոնկրետ քայլերի է անցնում և 1920 թ. դեկտեմբերի 20-ին Ղարաքիլիսայում կազմակերպում է «ապստամբության» կազմակերպման շտաբ՝ Կովկասյան բյուրոյի ներկայացուցիչ **Հովսեփ Լազյանի** ղեկավարությամբ: Ապստամբական շտաբը Հ.Լազյանի

կարգադրությամբ «չեզոք գոտին» բաժանում է 5 գավառամասերի՝ Վորոնցովկայի, Դսեղի, Ուզունլարի, Ջալալօղլու և Շնողի, միաժամանակ կազմակերպվում են գավառամասային ընդհատակյա հեղկոմներ: 1921 թ. հունվարին Ղարաքիլիսայում տեղի է ունենում Լոռու բոլշևիկների կոնֆերանս, որի աշխատանքները ղեկավարում էր Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և Հայհեղկոմի անդամ **Ասքանազ Մռավյանը**: Կոնֆերանսի ավարտից անմիջապես հետո հրավիրվում է հատուկ խորհրդակցություն, որը մշակում է ապստամբության կազմակերպման մանրամասն պլան, և այն փաստացի իրագործելու համար գավառամասերին են կցվում ռազմական գործի մասնագետներ: Վերջապես, 1921 թ. փետրվարի 7-ին կազմակերպվում է Լոռու ռազմահեղափոխական կոմիտեն՝ **Հովսեփ Լազյանի** գլխավորությամբ, անդամներն են դառնում Սիմոն Էվոյանը և Սեդրակ Սարգսյանը:

Ըստ սահմանված ժամանակի՝ 1921 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը Լոռու «չեզոք գոտում» սկսվում է ապստամբություն՝ ուղղված Վրաստանի իշխանություններիդեմ: Սակայն վրացական զորամասերը հրետանային ուժեղ գնդակոծման են ենթարկում Վորոնցովկա, Պրիվոլնոյե և շրջակա գյուղերը, և ստեղծված լարված իրադրությունում ապստամբության ղեկավարման շտաբը ուղերձով դիմում է Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի օգնությանը: Դրան հետևում է Գ.Օրջոնիկիձեի անմիջական կարգադրությունը՝ 11-րդ Կարմիր բանակի զորամասերը մտցնել «չեզոք գոտի», ինչը կատարվում է փետրվարի 12-ին:

Շուտով ապստամբության ղեկավարման շտաբը, գործնական նկատառումներից ելնելով, Ղարաքիլիսայից տեղափոխվում է Սանահին, որպեսզի պայթեցումից փրկվի վրացական իշխանությունների կողմից ականապատված Ջամալիի /Շահալիի/ երկաթուղային կամուրջը, ինչի կապակցությամբ նույնիսկ Գ.Օրջոնիկիձեն անձամբ Հ. Լազյանին խիստ կարգադրություն էր արել, քանզի կամուրջը բացառիկ ռազմավարական արժեք ուներ: Խնդիրն այն էր, որ կամրջի պայթեցումը անմիջականորեն կվնասեր Խորհրդային Հայաստանի կապը արտաքին աշխարհի հետ և կմեկուսացներ նրան՝ դնելով շրջափակման վտանգի առաջ, նաև մեծապես կվնասեր Վրաստանի՝ արդեն նախատեսված և ծրագրավորված խորհրդայնացման քաղաքականապես պահից բխող խնդրի իրագործմանը, ինչը նախապատրաստված և խնամքով մշակված էր «չեզոք գոտու» ազատագրմանը զուգահեռ:

Չնայած այն հանգամանքին, որ կամրջի պահպանության մանրամասները վրացիների կողմից խնամքով մշակվել էին, և կարգված էր հատուկ պահպանություն, որը վերահսկվում էր անձամբ Վրաստանի ռազ-

մական նախարարի կողմից, բոլշևիկ Հովսեփ Լազյանը հայտնաբերում է թույլ կետեր կամրջի պահպանության խնդրում: Ավելին, նրան հաջողվում է կամրջի պարետ կապիտան Շատիլովից թույլտվություն ստանալ կամրջի մոտ բուֆետ բացելու մասին, որտեղ որպես բուֆետապան են նշանակվում հեղափոխական աշխատանքի մեծ փորձ ունեցող Արտաշես Ստեփանյանը և Սեդրակ Գևորգյանը, ինչն էլ հենց հանդիսացավ խնդրի հանգուցալուծման կարևոր բանալիներից մեկը: Այս հնարամտության շնորհիվ էլ հաջողվում է իմանալ ականապատման ողջ մեխանիզմը, և Լոռում ընդհանուր ապստամբությունն սկսվելուց մի քանի ժամ առաջ վնասազերծել կամուրջը, զինաթափել շուրջ 400 հոգուց բաղկացած վրացական կայազորին, ձերբակալել պահակներին և ճանապարհ բացել առաջխաղացող զորքի առաջ: Ապստամբական ջոկատներում ընդգրկվածների թիվը հասնում էր 10 հազար, իսկ վրացական զորքերի թիվը 7 հազար մարդու: Այս ամենն էլ հենց ապստամբներին հնարավորություն է տալիս մեկը մյուսի ետևից գրավել Շահալին, Կուրթանը, Գյուլագարակը, Ալավերդին, Հաղպատը և երկաթուղային մյուս կայարաններն ու գյուղերը: Լոռու «չեզոք գոտում» ապստամբությունը տևեց երեք-չորս օր, ավարտվեց հաղթանակով և գործնականում Խորհրդային Հայաստանի և հայ ժողովրդի համար բարենպաստ ելքով, գերի վերցվեցին շուրջ 3000 զինվոր ու սպա:

Այս իրադարձություններին զուգընթաց՝ բոլշևիկները խնամքով նախապատրաստեցին ու իրականացրին պլանավորված «ապստամբություն» Բորչալուի գավառում, որն արագորեն տարածվեց ամբողջ Վրաստանում՝ Գորիում, Դուշեթում, Գուրիայում, Աբխազիայում, Աջարիայում, Հարավային Օսեթիայում և այլուր: Այն ուղղորդելու և նպատակին հասցնելու համար 1921 թ. փետրվարի 16-ին Բորչալուի գավառի Շուլավեր /հետագայում՝ Շահումյան քաղաք/ գյուղում ստեղծվեց Վրաստանի հեղափոխական կոմիտեն, որին աջակցեցին բոլշևիկյան Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի զորամասերը, ինչն էլ ըստ էության ապահովեց Վրաստանում ծրագրավորված ապստամբության հաղթական ելքը: 1921 թ. փետրվարի 25-ին Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում ազդարարվեց խորհրդային իշխանության հաստատման մասին, որն արագորեն տարածվեց ողջ երկրում: Այդ ամենը գործնականում գտնվում էր բոլշևիկների կողմից Անդրկովկասի քաղաքական նոր քարտեզագրման և նոր աշխարհաքաղաքական իրողությունների ձևավորման շրջանակներում:

5. Հարկ է նշել, որ խորհրդային կարգերի հաստատումով (1920 թ. դեկտեմբերի 2) չեղյալ հայտարարվեցին Հայաստանի առաջին հանրապետություն դիվանագիտական կապերը մի շարք երկրների հետ, վերացվեցին դիվանագիտական կառույցները: Լիարժեք իմաստով արտաքին փոխհարաբերությունների համակարգ կառուցվեց ընդամենը մի շարք երկրների հետ, հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ նոր հիմունքներով: Դեսպանների մակարդակով կապերի հաստատումը չօրինականացվեց: Հայաստանի լիազոր-ներկայացուցիչների համակարգ ստեղծվեց ՌԽՖՍՀ-ում, Վրաստանում, Ուկրաինիայում և Ադրբեջանում: Ըստ էության, Մոսկվայի Հայկական ներկայացուցչությունը երկար տարիներ միայն տնտեսական և այլ կարգի փոխհարաբերությունների կոորդինատորի (ուղղորդողի) դերում հանդես եկավ: Բացի այդ, Հայաստանի Խորհրդային Հանրապետության հյուպատոսարաններ էին գործում Սուխումիում, Բաթումում, Վլադիկավկազում (լեռնային հանրապետություններ), Տաշքենդում (Թուրքեստան), որոնք հետո կամայական որոշումների հետևանքով դադարեցին գոյություն ունենալուց, կամ ձևական դարձավ նրանց գործունեությունը:

Սկզբնական շրջանում Հայաստանի հետ կապ հաստատած երկրներից առավել գործունյա կապեր պահպանվեցին Պարսկաստանի հետ, իսկ Թավրիզում գտնվող հայկական հյուպատոսարանը զգալի աշխատանք կատարեց հայ գաղթականության հայրենադարձության կազմակերպման բնագավառում: Մի շարք երկրների հետ գործում էին տնտեսական-առևտրային հարաբերություններ: Առևտրական պայմանագիր էր կնքվել Մակուի (Պարսկաստան) խանության հետ, որտեղից հացահատիկ էր բերվում ՀԽՍՀ:

Կոստանդնուպոլսում Հայաստանի տնտեսական ներկայացուցչի միջոցով տնտեսական-առևտրային գործառնություններ էին իրականացվում Եվրոպայի և Ամերիկայի մի շարք երկրների հայկական շրջանների հետ, իրականացվում էր ՀԽՍՀ-Սփյուռք կապը: Խորհրդային Հայաստանում գործում էր իտալական «Սագո» ընկերությունը: Դիվանագիտական հարաբերությունների գոյությունը անկախության, պետականության բաղադրիչ է, և ինչպես տեսնում ենք այդ համակարգը իր բոլոր թերություններով հանդերձ ՀԽՍՀ-ում գործել է:

6. 1921 թ. փետրվարյան քաղաքացիական կռիվներն իրենց ցավալի կնիքը թողեցին նաև մոսկովյան խորհրդաժողովին Խորհրդային Հայաստանի հնարավոր մասնակցության վրա, որի պատվիրակությունը փորձառու դիվանագետ Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ (Բեկզադյանին ուղեկցում էր Առաջին Հանրապետության Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի նախկին պետերից մեկը՝ կադրային փորձառու զինվորական կապիտան Վահագն Մուրադյանցը) իր հետ վերցրել էր անհրաժեշտ

քարտեզներ, վիճակագրական նյութեր և այլ փաստաթղթեր, որոնք վերաբերում էին Կարսի մարզի հայ բնակչության կազմին և նրա իրավական պահանջներին: Կարծում ենք, որ ամենևին էլ ոչ պատահաբար, հենց մոսկովյան խորհրդաժողովի բացման օրը Մոսկվա է ուղարկվում Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանի հեռագիրը, որում հավատարմություն էր արտահայտվում հայ-թուրքական սահմանի մասին Ալեքսանդրապոլի դաշնագրին տառին և ոգուն, որը զինաթափ արեց Խորհրդային Հայաստանի պատվիրակությանը, կանաչ ճանապարհ բացեց թուրքական կողմի շահարկումների համար, և մի խոսքով հայկական կողմին դրեց փակուղային քաղաքական իրավիճակում, որը հրաշալի հասկացան թուրքերը, որպես նվեր ընդունեցին և օգտվեցին դրա բոլոր բարիքներից՝ կաշկանդելով նաև Մոսկովյան իշխանավորներին իրենց հնարավոր քայլերում: Նմանատիպ արդյունքներ ստացվեցին նաև Լոնդոնյան խորհրդաժողովի ժամանակ:

Թուրք-հայկական պատերազմում (1920 թ. սեպտեմբեր - դեկտեմբեր) կրած ռազմական ծանր պարտությունից հետո Հայաստանի Հանրապետությունը տխուր մայրամուտ ապրեց: Հայաստանը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով խորհրդայնացվեց, սակայն նրա առաջ ծառացան բարդ տարածքային-քաղաքական հիմնահարցեր, որոնց հանգուցալուծումը սերտորեն առնչվում էր Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի հետ: Դեռ 1920 թ. նոյեմբերի 27-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն համերաշխվել էր **Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի** առաջարկի հետ՝ Մոսկվայում հրավիրել ռուս-թուրքական խորհրդաժողով, որը պետք է ներդաշնակեցներ երկու պետությունների հետամտած շահերը տարածաշրջանում: Եվ որպես արդյունք, 1920 թ. դեկտեմբերի 8-ին Թուրքիայի կառավարությունը հայտնեց Մոսկվա ուղարկվող պատվիրակության կազմը՝ Յուսուֆ Քեմալ, Ռիզա Նուրի, Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադ:

Դեկտեմբերի 9-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, ողջունելով ռուս-թուրքական խորհրդաժողով հրավիրելու վերաբերյալ թուրքական առաջարկը, դրա հետ մեկտեղ անհրաժեշտ գտավ, որ դրան իրենց մասնակցությունը ցուցաբերեն նաև իրենց պետությունների հետ տարածքային խնդիրներ ունեցող Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների ներկայացուցիչները: Սակայն այն ոչ միայն մերժվեց թուրքական պետության կողմից, այլև վերջինս կտրուկ և անառարկելի պահանջ դրեց, որ հրավիրվելիք խորհրդաժողովին բացառվի անգամ բոլշևիկյան Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ, հայազգի Լևոն Կարախանի մասնակցությունը: Դեկտեմբերի 15-ի նոտայում՝ ուղղված Ռուսաստանի կառավարությանը, Անկարան մտահոգություն էր արտահայտում կնքվելիք հաշտության վերաբերյալ, չցանկանալով, որ Մոսկվան հանկարծ ցանկություն արտահայտի վերանայել Հայաստանի Հանրապետության դաշնակցական կառավարության հետ կնքած իրենց ձեռնտու պայմանագիրը և պահանջի Հայաստանին վերադարձնել այսպես կոչված «թուրքական բնակչությամբ տարածքները»: Դեկտեմբերի 19-ին պատասխան նոտայում խորհրդային արտաքին գործերի ժողկոմ **Գեորգի Չիչերինը** գտնում էր, որ Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք հաշտությունը պետք է հենված լինի ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի վրա, միաժամանակ նաև հույս հայտնելով, որ թուրքական բանակն անհապաղ դուրս կգա Ալեքսանդրապոլի շրջանից և բոլոր այն բնակավայրերից, որոնք գտնվում են Կարսի շրջանից հյուսիս և արևելք:

Նախապատրաստվելով Մոսկվայում հրավիրվելիք ռուս-թուրքական խորհրդաժողովին, անշուշտ, խորհրդային կառավարությունը, չնայած արտաքուստ երկուստեք ցույց տրվող դրացիական-բարեկամական վերաբերմունքի դրսևորումներին, քաջածանոթ էր քեմալական Թուրքիայի իրական մտադրություններին, սակայն ամենևին էլ չտրվեց զգացմունքներին և կայացրեց իր շահերից բխող տարածաշրջանային մոտեցումներ և լուծումներ, որոնք որոշակիորեն զսպվածության մեջ էին պահում հակաբոլշևիկյան դիրքորոշում որդեգրած եվրոպական պետություններին. նրանց համար ավելի շատ ձեռնտու էր ունենալ թեկուզև Թուրքիայի հետ բարեկամ, սակայն ոչ չափից ավելի ուժեղ Գերմանիա, բայց ամենևին էլ ոչ չափազանց զորեղ և ինքնիշխան Ռուսաստան, կարևոր չէր այն բոլշևիկյան, թե այլ տեսակի կլիներ: Եվ ըստ այդմ, բոլշևիկյան Ռուսաստանը պատրաստ չէր չափից ավելի կարծր լինել Թուրքիայի նկատմամբ Հայաստանի հարցում, առավել ևս ռազմաքաղաքական հնարավորությունները բավարար չէին՝ լուծելու նման մակարդակի աշխարհաքաղաքական խնդիրներ:

1921 թ. փետրվարի կեսերին Հայաստանում տեղի ունեցած հակախորհրդային իրադարձություններն իրենց բացասական կնիքը դրեցին թե՛ Լոնդոնյան և թե՛ մոսկովյան բանակցությունների վրա, որոնցում շոշափվում էին Հայաստանի և նրա հետ սերտորեն առնչվող սահմանային-տարածքային հարցերը, նամանավանդ որ Ս.Վրացյանի գլխավորած Հայրենիքի փրկության կոմիտեն գործնական պատրաստակամություն հայտնեց ճանաչել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի արդյունքները, այսինքն՝ **քեմալական Թուրքիայի կողմից հայկական հողերի զավթումը հենց պետք**

է «օրինականացներ» 1921 թ. փետրվար - մարտ ամիսներին Մոսկվայում տեղի ունեցած խորհրդային - թուրքական կոնֆերանսը:Հայ ժողովրդի համար միշտ էլ կենսական նշանակություն է ունեցել տարածքային-սահմանային խնդիրը: Այս առումով անհրաժեշտություն կա կանգ առնել կոնֆերանսի նախապատրաստության վրա: Եվ ահա 1921 թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 16-ը երկու բարեկամ երկրներ՝ բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի պատվիրակությունների մասնակցությամբ Մոսկվայում գումարվեց կոնֆերանս, որտեղ էլ, առանց Հայաստանի գիտության ու մասնակցության, որոշվեց հայ-թուրքական սահմանը: Այդ սահմանագիծը դարձան Ախուրյան և Արաքս գետերը, իսկ Նախիջևանի մարզը հանձնվեց Ադրբեջանին: Ստացվեց այնպես, որ Մոսկվայի պայմանագիրը, ըստ էության, հաստատագրեց Ալեքսանդրապոլի դաշնագրի թալանչիական պայմանները, իսկ մի քանի ամիս անց այլ ստորագրություններով (նաև Հայաստանի մասնակցությամբ) կնքված Կարսի պայմանագիրը տառացիորեն կրկնեց Մոսկվայի պայմանագիրը, և դրանով էլ վճռվեց Հայաստանի անբաժանելի մասը կազմող Կարսի մարզի, Սուրմալուի գավառի և Նախիջևանի մարզի կորուստը: Ինչու՞ Հայաստանը չկարողացավ պաշտպանել իր շահերը, դա պետք է մանրազնին և բազմակողմանիորեն պարզաբանել:

Թուրքական պատվիրակությունը Մոսկվա ժամանեց փետրվարի 18-ին, Մուստաֆա Քեմալից ունենալով ցուցում՝ հնարավորինս խուսափել հայ-թուրքական տարածքային հարցերը քննարկելուց և գլխավորապես ձգտել միայն ռազմաքաղաքական դաշինք կնքել Ռուսաստանի հետ, պատճառաբանելով դա նրանով, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը տարածքային խնդիրները գործնականում լուծել է: Կոնֆերանսն իր աշխատանքները սկսեց փետրվարի 26-ին, այն օրերին, երբ Հայաստանում թեժ պայքար էր գնում խորհրդային իշխանության և փետրվարի 18-ի «ապստամբների» միջև, որոնք ստեղծել էին ժողովրդական դժգոհության այդ ընդվզումները ղեկավարող մարմին՝ «Հայրենիքի փրկության կոմիտե», որը փորձում էր որպես իշխանություն ամրապնդվել, կապեր հաստատել և ճանաչվել տարբեր երկրների կողմից, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի հայ-տաճկական պայմանագրի հիման վրա՝ Քեմալական Թուրքիայի հետ:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի խորհրդայնացումը թվում է, թե պետք է որոշ էական շտկումներ և փոփոխություններ մտցներ ստեղծված ներքաղաքական իրավիճակում, և հայ–թուրքական հարաբերությունները դներ ավելի լիարժեք, իրավահավասար հիմքերի վրա և նույնիսկ վերանայել տար Ալեքսանդրապոլի տխրահռչակ պայմանագիրը, որի մասին ուղղակի նշվում էր 1920 թ. դեկտեմբերի 10-ին Թուրքիային հղած ՀԽՍՀ հայտարարության մեջ:

Հայաստանը, ինչպես նաև Խորհրդային Ադրբեջանը հրավիրված էին մասնակցելու Մոսկվայում հրավիրված ռուս–թուրքական կոնֆերանսին, որը նախապատրաստական աշխատանքներ էր իրականացնում երկու երկրների՝ կնքելու բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հետ երկկողմ պայմանագիր: Բացահայտորեն այս կոնֆերանսում բացահայտորեն իշխում էր ստալինյան թելադրանքը, փոխարենը արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը գործնականում իջել էր իր հայանպաստ դիրքերից և որդեգրել առաջին հայացքից անհասկանալի և անորոշ դիրքորոշում, ինչը շփոթության մեջ էր գցել հայկական խնդրի լուծման մեջ շահագրգիռ քաղաքական ուժերին: Եվ չնայած այս ամենին՝ Հայաստանի պատվիրակությունը մեկնեց Մոսկվա, սակայն նրան թույլ չտրվեց մասնակցել բանակցությունների գործընթացին: Հայկական պատվիրակությունը Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ, որին ուղեկցեցին Մոսկվայում Խորհրդային Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ա.Կարինյանը և Ս.Տեր-Գաբրիելյանը, նախապատրաստվել էր վեհաժողովին ներկայացնելու «Հայաստանը մինչև վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» փաստաթուղթը, որը պահանջում էր Հայաստանին վերադարձնել Կարսի մարզը, Ալեքսանդրապոլը և Սուրմալուի գավառը: Սակայն իր հետապնդած մտադրությունները հայկական պատվիրակությունը չկարողացավ իրագործել, քանի որ թուրքական կողմը նպատակահարմար գտավ պարզաբանելու, որ հայկական պատվիրակությունը լիազորություններ չունի կոնֆերանսին ներկայացնելու Հայաստանը: Խելամտորեն օգտագործելով այն հանգամանքները, որ փետրվարի 18-ին Հայաստանում տապալվել է հեղկոմը, Թուրքիայի ներկայացուցչությունը գտավ, որ հետևապես Բեկզադյանը լիազորություններ չունի, և արդյունքում նրան արգելվեց մտնել կոնֆերանսի դահլիճ: Այդ ընթացքում հայկական պատվիրակությունը իր ժամանակն անցկացնում էր Մոսկվայի հյուրանոցներում՝ հրավեր ստանալու զուր հույսերով: Ավելացնենք նաև, որ 1921 թ. մարտի 12-ին «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանը Մոսկվա, ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ.Չիչերինին հեռագիր է ուղարկում խորհրդաթուրքական կոնֆերանսի կապակցությամբ, ուր շեշտվում էր այն մասին, որ քանի որ խորհրդային վարչակարգը Հայաստանում տապալված է, հետևաբար Ալ. Բեկզադյանը այլևս լիազորված չէ կոնֆերանսում ներկայացնելու Հայաստանը, որից ևս հենց օգտվեցին թուրքերը: Սիմոն Վրացյանի հեռագիրը թուրքական կողմը պարզապես օգտագործեց, որպեսզի էլ ավելի

համառորեն պնդի հայկական պատվիրակությանը կոնֆերանս չթողնելու իր տեսակետի վրա: Մեկ այլ հեռագիր էլ մարտի 26-ին Ս.Վրացյանի կողմից ուղարկվում է Լոնդոնի կոնֆերանսին, որում խնդրվում էր, որ Լոնդոնի կոնֆերանսի որոշումները փոխադարձ անվստահության առիթ չտան Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև:

Անհրաժեշտ է ավելացնել, որ դիվանագիտության մեջ առհասարակ մանրուքներ չկան և չեն էլ կարող լինել: Սակայն, հարկ է նաև նշել այն պատմաքաղաքական իրողության մասին, որ անկախ Ալ. Բեկզադյանի մասնակցությունից, մեծ քաղաքականության շահերը պարզապես իրադարձությունների զարգացման ողջ ներքին ընթացքը ուղղակիորեն տարան և հասցրեցին այն հանգուցալուծմանը, ինչ-որ եղավ արդյունքում: Մնում էր արտաքին պաճուճապատանքը՝ կատարվածին անմեղ տեսք տալու և արդարացումներ, *«հիմնավոր»* պատճառաբանություններ գտնելու համար:

1921 թ. փետրվարին Մոսկվայում հրավիրված ռուս-թուրքական խորհրդաժողովին զուգահեռ, Լոնդոնում փետրվարի 21-ին հրավիրվեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Բելգիայի, Գերմանիայի, Թուրքիայի ներկայացուցիչների մասնակցությամբ խորհրդաժողով, որին ներկա էին նաև վտարանդի հայության ներկայացուցիչները, իսկ թուրքական պատվիրակությունը գլխավորեց Բեքիր Սամի բեյը, որը փետրվարի 26-ի նիստում հրավիրված մասնակիցներին կոչ արեց ճանաչել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ուխտը և չեղյալ հայտարարել Սևրի պայմանագիրը, իսկ հայ-թուրքական սահմանները ճանաչել ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի:

Հարկ է նշել, որ 1920 թ. աշնանից սկսած՝ արդեն բոլշևիկները զորեղ գործոն էին Անդրկովկասում և առհասարակ աշխարհում, իսկ քեմալաբոլշևիկյան զինակցության պայմաններում Անտանտին արդեն մնում էր հեռանալ Կովկասյան տարածաշրջանից՝ տեղը զիջելով նոր տերերին: Ակնհայտորեն հայերն ուշացան իրենց հարցերը ժամանակին լուծելու հնարավորությունների օգտագործման բոլոր քիչ թե շատ իրատեսական տարբերակներից, և իրադարձությունները տրամաբանորեն հանգեցրին Մոսկովյան արդյունքին, իսկ համաշխարհային հեղափոխության հաղթանակի մասին թեզը պարզապես լավ մտածված և հարմար քողածածկույթ էր որոշակի շահերի ապահովման տեսանկյունից: Ամենևին էլ պատահական չէր, որ խորհրդաժողովի առաջին լիակազմ նիստին Գ. Չիչերինը հայտարարեց Արևելքի ժողովուրդների պատմության մեջ նոր էջի բացման մասին, պարսավեց Սևրի պայմանագիրը, իսկ Թուրքիային դասեց բոլշևիկյան Ռուսաստանին բարեկամ պետության շարքում:

Եվ արդեն մարտի 10-ի լիակազմ նիստում Գ. Չիչերինը հայտարարեց, որ Ռուսաստանը ճանաչում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի կողմից ընդունած ուխտը, դրա հետ մեկտեղ նշելով, որ այն որոշակի սրբագրումների պետք է ենթարկվի, ըստ որի Բաթումը՝ որպես սնծովյան նավահանգիստ, անառարկելիորեն բացառիկ արժեք է ներկայացնում խորհրդային երկրի համար: Իսկ ինչ վերաբերում է Կարսի վերաբերյալ Չիչերինի 1920 թ. դեկտեմբերի 14-ի՝ Վ. Լենինի հարցումների կապակցությամբ հնչած տեսակետին, թե Կարսը Բաթումի բանալին է և կարևոր է Խորհրդային Հայաստանի համար, ապա այն Մոսկովյան խորհրդաժողովի ժամանակ արմատական ուղղման ենթարկվեց, և պատճառաբանելով փետրվարյան դեպքերը, որոնք իբր թե կարող էին ուժեղացնել դաշնակցականների դիրքերը, Ռուսաստանը հրաժարվեց Կարսը Հայաստանին վերադարձնելու մտադրությունից:

Ինչ վերաբերում էր Խորհրդային Հայաստանի սահմաններին, այդ կապակցությամբ խորհրդաժողովում ունեցած հայտարարության ժամանակ Չիչերինն ընդգծեց, որ Հայաստանին են մնում Աղբաբայի և Ղզըլ-Դաղի լեռները, ինչպես նաև Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի Հանրապետությանը թողնված տարածքները, որը նաև փոխպայմանավորվածության արդյունք էր:

Թուրքերի համար բացառիկ կարևորություն էր ներկայացնում Նախիջևանի հարցը, որն առաջարկվում էր ինքնավարության մակարդակով հանձնել Ադրբեջանին, որի համար փաստարկման հիմք էր նաև այն հանգամանքը, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով այն արդեն զիջվել էր Թուրքիային, իսկ Հայրենիքի փրկության կոմիտեն էլ հենց այդ պայմանագիրն էլ համարում էր հայ-թուրքական հարաբերությունների հիմք:

Եվ այսպիսով, 1921 թ. մարտի 16 (18)-ին ՌԽՖՍՀ-ի և Թուրքիայի կառավարության պատվիրակությունների ղեկավարները ստորագրեցին «Բարեկամության և եղբայրության» մասին պայմանագիր, որը ՌԽՖՍՀ կողմից ստորագրել էին արտգործժողկոմ Գեորգի Չիչերինը, ՀԿԳԿ անդամ Ջելալ-Էդդին Կորկմասովը, Թուրքիայի կողմից՝ ժողտնտեսության կոմիսար, Ազգային ժողովի պատգամավոր Յուսուֆ Քեմալ բեյը, լուսավորության ժողկոմ, պատգամավոր, դոկտոր Ռիզա Նուրի բեյը, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անդամ Ալի ֆուադ փաշան: Ռուս-թուրքական պայմանագիրը բաղկացած էր 16 հոդվածներից և 3 հավելվածներից: Առաջին հոդվածով կողմերը համաձայնվում էին չճանաչել որևիցե հաշտության պայմանագիր, եթե կողմերից որևէ մեկին ուժով հարկադրեն դրանք ընդունել, միաժամանակ ՌԽՖՍՀ-ն իրեն պարտա-

վոր էր համարում չճանաչել Թուրքիային վերաբերող և նրա կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ, ինչը պարզապես վերաբերում էր առաջին հերթին հենց Սևրի պայմանագրին: Տվյալ հոդվածում ընդգծվում էր, որ «Թուրքիայի» հասկացության տակ սույն պայմանագրում հասկացվում են բոլոր այն տարածքները, որոնք մտցված են 1920 թ. հունվարի 28-ի թուրքական ազգային ուխտի մեջ, ինչը ըստ էության վերաբերում էր Արևմտահայաստանի վեց վիլայեթներին:

Երկրորդ հոդվածով Թուրքիան Վրաստանին էր «զիջում» Բաթումի մարզը, իսկ երրորդ հոդվածով նախատեսվում էր Նախիջևանի մարզը որպես ինքնավար տարածք դնել Ադրբեջանի խնամակալության տակ, պայմանով, որ Ադրբեջանն այդ խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության, նկատի ունենալով Խորհրդային Հայաստանին, ինչի հիման վրա էլ 1924 թ. փետրվարի 9-ին կազմավորվեց Նախիջևանի ինքնավար հանրապետությունը՝ Ադրբեջանի հանրապետության կազմում:

Պայմանագրում ոչ մի խոսք անգամ չկար Արևմտյան Հայաստանի մասին: Սույն պայմանագիրը ըստ էության վավերացրեց նաև 1920 թ. թուրք-հայկական պատերազմի արդյունքները: Խորհրդային կողմին հաջողվեց ընդամենը Խորհրդային Հայաստանին վերադարձնել միայն Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը, իսկ մնացած բռնազավթման ենթարկված տարածքները՝ Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Կաղզվանի, Արդահանի, Օլթիի (օկրուգները) մարզերը և ուրիշ տարածքներ, ընդամենը 19215 քառ. կիլոմետր անցան Թուրքիայի տիրապետության տակ:

Կարևոր է նաև նշել, որ Սուրմալուն անցնում էր Թուրքիային պայմանով, որ Բաթումն էլ Թուրքիան հանձներ Վրաստանին: Ստացվում էր, որ Ստալինի ճնշման տակ Վրաստանի տարածքային խնդիրները լուծվում էին Հայաստանի հողերի հաշվին՝ խնդիր դնելով ստեղծել մուսուլմանաբնակ բնակչությամբ Աջարական ինքնավար հանրապետություն: Սակայն թուրքական կողմի համար առանձնակի կարևորություն էր ներկայացնում Նախիջևանի հարցը, որը կապող օղակ էր Թուրքիայի և Ադրբեջանի, Թուրքիայի և Մեծ Թուրանի միջև, սակայն այս հարցում քաղաքական այլ խաղարկում տեղի չունեցավ: Մոսկովյան պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանը, որը գտնվում էր Հայաստանի կենտրոնում, կտրվեց նրանից և բռնակցվեց Ադրբեջանին՝ դրվելով վերջինիս պրոտեկտորատի տակ: Բացի այդ, Շարուր-Դարալագյազի գավառից անջատվեց Շարուրի ողջ տարածքը և միացվեց Նախիջևանի գավառին: Այլ խոսքով, պայմանագրի 3-րդ հոդվածով Հայաստանը անդամահատվեց և նրանից խլվեց ևս 5,5 հազար քառ. կմ տարածք: Եվ այսպիսով, 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով Հայաստանը կորցրեց իր տարածքի

շուրջ կեսը՝ ավելի քան 25 հազար քառ կմ տարածք: Խորհրդային Հայաստանը սահմանագծվեց 29 հազար քառակուսի կիլոմետրի սահմաններում: Ավելացնենք նաև, որ 1923 թ. հունվարի 23-ին Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի միջև կնքվեց հատուկ համաձայնությամբ տարածքների փոխանակում կատարվեց Արարատ սարի ստորոտում, որով Թուրքիան անմիջականորեն կապվեց Նախիջևանի հետ, որը դարձավ 42 կմ-ոց սահմանագիծ:

Այսպիսով, 1921 թ. մարտի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի ամբողջականությունը, թուրք-հայկական սահմանագիծը անցնելու էր Ախուրյան-Արաքս գծով: Թուրքիան նաև պարտավորվում էր ազատել Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթուղագիծը: Խորհրդային Ռուսաստանը այդ պայմանագրի 15-րդ կետով իր վրա պարտավորություն վերցրեց ջանքեր գործադրել՝ նմանատիպ պայմանագիր ստորագրելու Անդրկովկասյան երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև կնքելու համար: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ռուս-թուրքական պայմանագիրը վավերացրեց մարտի 20-ին, իսկ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը՝ հուլիսի 22-ին: Եվ արդեն մարտի 31-ին Անդրկովկասի հանրապետությունները Մոսկվայից ստացան ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված սահմանների քարտեզը: Պայմանագիրն ուժեղացրեց Թուրքիայի դիրքերը տարածաշրջանում:

Բոլշևիկյան Ռուսաստանի դիրքորոշման հնարավոր վայրիվերումների և այս կամ այն դիրքորոշման ռազմավարական մոտեցման ընտրությունները, մասնավորապես Հայաստանի խնդրում նրանց ոչ կարծր դիրքի պատճառները ըստ երևույթին պետք է որոնել ինչպես արդեն նախօրոք կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրի խորքային ծալքերի մեջ, այնպես էլ Ռուսաստանի համար ստեղծված անբարենպաստ պայմաններում և տնտեսական ճգնաժամի մեջ, Կրոնշտադտի խռովության, Հայաստանում փետրվարին տեղի ունեցած հակախորհրդային զանգվածային իրադարձություններում, այդ թվում տարածաշրջանում խաղաղության հաստատման անհրաժեշտությամբ և արևելքում խորհրդային քաղաքականության ընդհանուր հեռանկարներում, և այլն:

Խորհրդային Հայաստանում պայմանագիրը որոշակի դժգոհությամբ ընդունվեց, Մոսկվայի բանակցությունների ավարտից հետո Ա. Բեկզադյանը բողոք ներկայացրեց ՌԽՖՍՀ կառավարությանը իր պատվիրակությանը Մոսկովյան կոնֆերանսին մասնակցությունից զրկելու և հակահայկական պայմանագիր ստորագրելու համար: Սակայն դա որևիցե էական արդյունք չտվեց: Դրականը գուցե այն էր, որ գործնականում չեղյալ հայտարարվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայ-

մանագիրը, իսկ ապրիլի 4-ին Չիչերինը հրահանգեց Օրջոնիկիձեին՝ ամենակտրուկ հակահարված տալ Ալեքսանդրապոլի հրեշավոր պայմանագրի ամեն մի վկայակոչմանը և ուղղակի հայտարարել թուրքերին, որ Ռուսաստանը ոչ մի բանի առաջ կանգ չի առնի, եթե կրկնվեն Ալեքսանդրապոլի պայմանագիրը Հայաստանին ստիպողաբար պարտադրելու և ճանաչել տալու փորձերը: Իսկ արդեն ապրիլի 6-ի Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում Չիչերինը նշելով, որ Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադը իրեն խոստացել է անհապաղ ազատել Ալեքսանդրապոլ քաղաքը և համանուն գավառը, դրա հետ մեկտեղ ընդգծում էր, որ հակառակումը կհանգեցնի պատերազմի Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև: Թուրքերն ամեն հնարավորն արեցին, որ խուսափեն Ալեքսանդրապոլից դուրս գալուն, եթե հանգամանքները թույլ տային, սակայն Խորհրդային Ռուսաստանի վճռական դիրքորոշումը ունեցավ իր կարևոր նշանակությունը այդ խնդրում: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հրահանգ տվեց 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը՝ զորքերը շարժել դեպի Ալեքսանդրապոլ, և միայն 1921 թ. մայիսի կեսերին թուրքական զորքերը վերջնականապես դուրս բերվեցին Ալեքսանդրապոլի գավառից՝ երկրամասը ձերբազատելով շարունակական բնույթ կրող ոճրագործություններից, թալանից ու կողոպուտից:

Այսպիսով, 1921 թ. մարտի 16 (18- վկայակոչելով Գ.Չիչերինի 1921 թ. մարտի 17-ի նամակը՝ հասցեագրված Վ.Լենինին, պատմաբան Ռեմ Ղազանջյանը ապացուցում է, որ Մոսկվայի պայմանագիրն իրականում ստորագրվել է մարտի 18-ին, բայց թվագրվել մարտի 16-ով, որովհետև դեռ հայտնի չէր, թե ինչ պայմանագիր է ստորագրելու Կրասինը Անգլիայի հետ) Մոսկովյան պայմանագրով վավերացվեցին Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ թուրքական շովինիստների կողոպտչական քաղաքականության արդյունքները: Հայաստանը պարզապես զոհաբերվեց մեծ տերությունների շահերին:

7. Խորհրդային պետության 70-ամյա պատմության մեջ շատ ուշագրավ և յուրահատուկ տեղ է գրավում Նոր տնտեսական քաղաքականությունը (*ՆԷՊ*): Այն բանից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը երկիրը հասցրել է տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի, կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը և խորհրդային կառավարությունը 1921 թ. գարնանը որոշում ընդունեցին անցում կատարել Նոր տնտեսական քաղաքականության: Բացահայտել ՆԷՊ-ի էությունը: Մասնավորապես, այս քաղաքականությամբ հրաժարվում էին պարենմասնատրման ու բռնագրավումների կուրսից և դրա փոխարեն նախապես գյուղացու վրա սահմանվում էր համեմատաբար ցածր հարկ (պարենհարկ): Բերքահավաքից հետո գյուղացին վճարում էր պարենային հարկը, իսկ ստացված եկամուտի ավելցուկը կարող էր տնօրինել իր հայեցողությամբ՝ կուտակել, վաճառել շուկայում կամ փոխանակել: Նման հարկային քաղաքականությունը, ինչ խոսք, խթանում էր մարդկանց անձնական, աշխատանքային շահագրգռվածությունը և լիովին նպաստում տնտեսության վերականգնմանը և զարգացմանը: Կարևոր է նշել, որ ՆԷՊ-ը նպաստեց ապրանքա-շուկայական, վարձակալական հարաբերությունների աշխուժացումը, քաղաքի ու գյուղի միջև կապի ամրապնդումը: ՆԷՊ-ի քաղաքականության շնորհիվ Խորհրդային Հայաստանը մի քանի տարվա ընթացքում կարողացավ վերականգնել տնտեսությունը և հասցնել նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին: Սակայն արդեն 1920-ական թվականների երկրորդ կեսից աստիճանաբար կասեցվեց այդ կուրսը (մտավախելով, որ դա կտանի դեպի կապիտալիզմ) և անցում կատարվեց համատարած կոլեկտիվացման:

Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ 1921 թ. փետրվարյան փոթորկահույզ իրադարձություններից, ասել է թե՝ քաղաքացիական կռիվներից հետո նոր իշխանությանը՝ Հայհեղկոմը որոշ դասեր, այնուամենայնիվ, քաղեց, և սկսեց վարել համեմատաբար ավելի մեղմ քաղաքականություն: Անշուշտ, իրավացի են այն հեղինակները, որոնք կարծում են, որ 1920 թ. դեկտեմբեր- 1921 թ. փետրվար ամիսներին Հայհեղկոմի և մի շարք բոլշևիկների կողմից արհեստականորեն դասակարգային պայքար հրահրելու, քաղաքացիական պատերազմի իմիտացիա անելու փորձեր եղել են: Բայց դրանք ավելի շատ հայ բոլշևիկների ինքնահաստատման ձգտման և ռուսական հեղափոխության անցած ուղին Խորհրդային Հայաստանում կրկնելու դրսևորումներ էին: Վերացվեց Հայհեղկոմը և այն փոխարինվեց Ժողովրդական կոմիսարների խորհրդով (ԺԿԽ), որի նախագահ նշանակվեց շատ ավելի լիբերալ և լոյալ, խելամիտ և հեռատես քաղաքագետ, հայտնի պետաքաղաքական գործիչ Ալ. **Մյասնիկյանը *(1886-1925 թթ.)***, որը փոխարինեց արկածախնդիր և թերուս Ավիս Նուրիջանյանին: Նա ուներ ավելի մեծ կենսափորձ, որ ձեռք էր բերել Բելառուսում և Ռուսաստանում ղեկավար աշխատանքի տարիներին /Ա. Մյասնիկյանը Բելոռուս պետության հիմնադիրն է/: Չնայած իր կարճատև գործունեությանը և կյանքին, նա զգալի դեր խաղաց Խորհրդային Հայաստանում բարոյաքաղաքական մթնոլորտի բարելավման, երկիրը խաղաղ տնտեսական-մշակութային շինարարության ուղին փոխադրելու գործում: Վերջապես, նոր իշխանությունը վերացրեց իրեն լիովին սպառած և հասարակ ժողովրդի աչքին բավականաչափ վարկաբեկած ռազ-

մական կոմունիզմի քաղաքականությունը (որն անժամանակ, անտեղի կիրառվում էր Խորհրդային Հայաստանում) և մտածված անցում կատարվեց նոր տնտեսական քաղաքականությանը:

Պարենմասնատրումը փոխարինվեց պարենհարկով, թույլատրվեցին ազատ առևտուրը, սեփականության ձևերի բազմազանությունը և այլն: Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները որոշ չափով հիշեցնում են 1921 թ. սկզբին տեղի ունեցած կրոնշտադտյան իրադարձությունները, որոնք ևս նոր իշխանությունից դժգոհության հետևանք էին, այն նաև քաղաքական բռնությունների արձագանքն էր: Խորհրդային Հայաստանը նույնպես անցավ այդ փոթորիկով և տնտեսաքաղաքական լարվածության ուղիով, և արդեն փոփոխված հասարակական-քաղաքական մոտեցումների պայմաններում իրեն վարկաբեկած հին իշխանությունները փոխարինվեցին ավելի ճկուն վարչակարգով, որը վերահաստատեց երկար սպասված խաղաղությունը, իսկ ժողովուրդը ձեռնամուխ եղավ քիչ-թե շատ խաղաղ տնտեսական շինարարության: Որոշ կարևոր վերապահումներով հանդերձ, ընդհանուր առմամբ ահա այս տեսանկյունից պետք է դատել 1921 թ. փետրվարյան-մարտյան իրողությունների մասին:

8. Հայաստանում և Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատումը առաջադրեց որակական նոր փոփոխություններ քաղաքական քարտեզում, ազգամիջյան փոխհարաբերությունների նոր խճանկար և աշխարհաքաղաքական մանևրումների նոր նրբերանգներ և հայտնի հարցերի հանգուցալուծման որոշակի տարբերակներ: 1920 թ. դեկտեմբերի 1-ին հրավիրված Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը, կապված Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման իրադարձությունների ընդհանուր համայնապատկերի հետ, ճկունորեն մանևրելով հրապարակեց Ադրբեջանի հեղկոմի դեկլարացիան, որով Զանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքները համարում էր Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս, իսկ Լեռնային Ղարաբաղի պարագայում արտահայտվում՝ այդ տարածքի աշխատավոր գյուղացիության ինքնորոշման լիակատար իրավունքի օգտին: Նիստին ներկա Ս.Օրջոնիկիձեն ողջունեց այդ քայլը, այն պատմական մեծ կարևորություն ունեցող ակտ համարելով, հեռագիր ուղարկելով Վ.Ի.Լենինին՝ նշելով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման և Ադրբեջանի որոշման մասին Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու վերաբերյալ: Հայաստանի հեղկոմի նախագահ Ս.Կասյանն էլ իր հերթին ողջույնի հեռագիր է հղում Ն.Նարիմանովին

հայտնի տարածքները Խորհրդային Հայաստանին հանձնելու կապակցությամբ, չնայած պատմաքաղաքական իրադարձությունները շատ շուտով հակադարձ ընթացք ստացան, և ակնհայտ դարձավ ադրբեջանական իշխանությունների «տրոյական» մանյովրը՝ ժամանակ շահելու և Հայաստանին ռազմաքաղաքական խճճված իրավիճակի մեջ գցելու համար:

Այդ նույն ժամանակահատվածում պատմաքաղաքական իրադարձություններն այլ զարգացումներ ստացան Զանգեզուրում, որտեղ **Գ.Նժդեհը**, ելնելով այլ իրողություններից, ավելի սթափ և հավասարակշռված, հեռատես գործողությունների դիմեց, անգամ հակադրության եզրեր պահպանելով Խորհրդային Հայաստանի ղեկավարության հետ, որոնք գործնականում իրենց արդարացրին: Զանգեզուրում իրադրության նկատմամբ բավարար վերահսկողություն ապահովելու և անվտանգության նկատառումներից ելնելով Գարեգին Նժդեհը 1920 թ. դեկտեմբերի 15-ին Զանգեզուրը հայտարարեց ռազմական դրության մեջ և կոչ արեց լինել արթուն և աշխատել օրական 24 ժամ:

Այդ նույն ժամանակամիջոցում, 1920 թ. դեկտեմբերի 16-ին Խորհրդային Հայաստանի զինվորական կոմիսար **Ավիս Նուրիջանյանը** և կարմիր զորքերի հրամանատար **Դրոն** կոչով դիմեցին զանգեզուրյան ապստամբներին դադարեցնել կռիվները, խորհրդային իշխանության անունից համաներում խոստանալով և կանգնել Խորհրդային Հայաստանի դրոշի տակ, ենթարկվել նրա իշխանություններին, հակառակը դիտելով որպես թշնամական գործողություն՝ ուղղված Խորհրդային Հայաստանի և նրա դաշնակից Ռուսաստանի դեմ: Խորհրդային Հայաստանի ղեկավարների այս կոչը որոշակիորեն խորացրեց հակասությունները Գ.Նժդեհի և Դրոյի միջև, որոնց միջև տարակարծություններ կային ընդհանուր ռազմավարության հարցերում:

Գարեգին Նժդեհի անմիջական նախաձեռնությամբ 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթև վանքում հրավիրվեց Համազանգեզուրյան առաջին համագումարը, որին ներկա էին երկրամասի 65 գյուղերից ընտրված պատգամավորները, գավառի շրջանային խորհուրդների ներկայացուցիչները՝ 118 մարդ: Համագումարի նախագահ ընտրվեց **Գեղեռն Տեր-Մինասյանը**, որը հրապարակեց համագումարի օրակարգը, որտեղ գլխավորը ինքնավար Սյունիքի հռչակման և նրա իշխանության կազմակերպման հարցն էր: Համագումարում արտահայտվեց այն ուշագրավ տեսակետը, համաձայն որի Խորհրդային Հայաստանի նորաստեղծ իշխանությունը առկա իրադրության մեջ անզոր է Զանգեզուրի գավառն ընդգրկելու Հայաստանի Հանրապետության կազմի մեջ, ուստի ելնելով

այդ կանխադրությից, առաջարկվում էր Զանգեզուրն անջատված համարել Խորհրդային Հայաստանից, գավառը հայտարարել անկախ ինքնավար երկրամաս՝ մինչև որ կայուն երաշխիքներ տրվեն այն Խորհրդային Հայաստանի տարածքային կազմի մեջ մտցնելու համար:

Համագումարի կողմից ընդունված բանաձևի համաձայն որոշվեց «Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար՝ մտցնելով հանրապետական իրավակարգեր, լինելով անկախ, մինչև քաղաքական հնարավորություն կունենան միանալու մայր երկրի՝ Հայաստանի հետ»:

Ինքնավար Սյունիքի սահմանները են համարվում Զանգեզուր գավառի նախկին սահմանները: Համագումարը միաձայն որոշեց Ինքնավար Սյունիքի ինքնակառավարման բարձրագույն օրենսդրական մարմին ճանաչել պառլամենտ-խորհրդարանը: Խորհրդարանն ընտրեց ինքնավար Սյունիքի կառավարություն՝ պրեզիդիում-դիվան՝ վեց ամսով, կազմված 9 մարդուց: Պրեզիդիում-դիվանն ուներ 10 վարչություններ՝ ներքին, արտաքին գործերի, պարենավորման, արդարադատության, ֆինանսական, լուսավորության, առևտրաարդյունաբերական, հողային, ճանապարհների, հաղորդակցության, խնամատարության:

Համագումարը Գարեգին Նժդեհին ընտրեց որպես Սյունիքի սպարապետ: Սյունիքը վարչական տեսանկյունից բաժանվեց վեց շրջանների՝ բուն Զանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան և Գենվազ, իսկ ինքնավար Սյունիքի կենտրոն՝ Գորիս քաղաքը: Այս որոշումները ոչ թե պահի թելադրանքից բխող գործողություններ էին, այլ խորապես հավասարակշռված, աշխարհաքաղաքական իրադրության նրբերանգների ճշգրիտ գնահատման արդյունք, որոնց նպատակն էր Սյունիք-Զանգեզուրը պահպանել և փրկել Աղրբեջանին բռնակցումից հանուն Հայաստանի հեռահար շահերի և տարածքային ամբողջականության հնարավորինս լիարժեք ապահովման: Դա արդյունք էր նաև այն հանգամանքի, որ հավանաբար Խորհրդային մոսկովյան իշխանությունների կողմից արդարացված է եղել ռազմաքաղաքական համագործակցությունը Գ.Նժդեհի հետ, վերջինիս հետ հաստատելով համագործակցության եզրեր, նրան դիտարկելով այդ պահի համար ամենահարմար ռազմաքաղաքական գործիչը՝ տարածաշրջանում Խորհրդային Ռուսաստանի առջև ծառացած հիմնախնդիրները լուծելու ռազմավարության տեսանկյունից:

Տարածքային հարցն այստեղ առաջնային էր, և յուրաքանչյուր քաղաքական ուժ դա յուրովի էր հասկանում, և այս առումով դիտարժան է այդ պահին Բաքվում գտնվող և Մոսկվայի բռնի ուղևորության ճանապարհին գտնվող Դրոյի դիրքորոշումը, որը Զանգեզուր՝ Գ.Նժդեհին և

գյուղացիական խորհրդին ուղարկված իր երկու նամակներում պարզապես առաջարկում էր Սյունիքը հայտարարել խորհրդային և դադարեցնել ապստամբությունը Ղարաբաղում, գտնելով որ հանգամանքների բերումով և դառը փորձից ելնելով տարբեր հարցերի լուծումը պետք է կապել հեղափոխական Ռուսաստանի հետ:

Միաժամանակ, Գ.Նժդեհի հետ իր բանակցություններն են վարում Հայհեղկոմը և 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը՝ իրենց կողմից ստեղծված հինգ հոգուց կազմված պատվիրակության միջոցով, որի մեջ մտնում էին նախկին հնչակյան, կոմունիստ Գրիգոր Վարդանյանը, Սամսոն Թյունիկը / Թունյանը /, փոխգնդապետ Արմենակ Օրբելյանը, Արտաշես Հովհաննիսյանը և Շմավոն Քոչարյանը: Սակայն Գ.Նժդեհի հետ սկսված բանակցությունները մտան փակուղի, երկխոսությունը չստացվեց, մերժվեցին նաև Դրոյի կողմից արված առաջարկները և այսպիսով, փետրվարի 2-5-ին ընթացած զրույցներն ավարտվեցին անարդյունք, որոնք կրկնվեցին 1921 թ. հունվարի սկզբին:

Գ.Նժդեհը կտրուկ մերժեց Զանգեզուրը խաղաղ ճանապարհով խորհրդայնացնելու բոլոր առաջարկները, և դրա փոխարեն բացահայտորեն հանդես եկավ Ղարաբաղում գործող խմբապետ Թևան Ստեփանյանին ռազմական աջակցություն ցույց տալու անհրաժեշտությամբ: Արդյունքում, արդեն 1921 թ. հունվարի վերջերին Թևանը իր 800 հոգանոց զինված խմբով հարձակման անցավ, գրավեց Դիզակի (Հաղրութ) և Վարանդայի (Մարտունու) շրջանները, ինչը հնարավորություն ընձեռեց այդ տարածքները, որտեղի հայ ազգաբնակչությունը դժգոհ էր Կարմիր բանակից և խորհրդային առաջնորդներից, միացնել Ինքնավար Սյունիքին:

Սակայն շուտով խորհրդային գերակշռող զինուժը հարձակման է անցնում, այդ թվում զգալիորեն նեղը գցում Թևանին և մյուս զինատար խմբերին, և վերականգնում իր խարխլված դիրքերը, վերականգնում հավասարակշռությունը և ընդհուպ մոտենում Վայոց ձորի մատույցներին: Այս իրադարձությունների անմիջական ականատեսը և ուղեկիցը դարձան ապրիլին այս վայրերով 1921 թ. հայաստանյան փետրվարյան քաղաքացիական կռիվների պարտության հետևանքով հապճեպ, խուճապահար փախչող Հայաստանի փրկության կոմիտեի անդամները, զինվորականությունը, ինչպես նաև շարքային գյուղացիության խմբերը:

Երևանի բանտերից դուրս բերված 63 կոմունիստ բանտարկյալների և գերի ընկած ռուս կարմիրբանակայինների դաժանաբար ոչնչացումը Բաշ-Գյառնիի և Վեդիի մոտ, ինչպես նաև ապրիլի 13-ին Գնդևազ գյուղի մոտ ժայռից 12 բանտարկյալների ցած նետելը, ինչպես նաև տարբեր

այլ վայրերում մի քանի տասնյակ քաղբանտարկյալների, այդ թվում կարմիրբանակայինների գնդակահարությունը էլ ավելի են շիկացնում փոխհարաբերությունները Խորհրդային Հայաստանի և Ինքնավար Սյունիքի միջև, վիճարկվող հարցերի հնարավոր հանգուցալուծման խնդրին տալիս անզիջում բնույթ: Սա ցավալի վրիպում էր, որի մասին, թեկուզև որոշակի դժվարությամբ և չկամությամբ, հետագայում, 1923 թ. խոստովանում է նաև Ս.Վրացյանը, գտնելով, թե իբր Զանգեզուրում ավելի քան 60 կոմունիստների և կարմիրբանակայինների սպանությունը «հակասում էր թե իրենց գործունեությանը, և թե քաղաքական դավանանքին», ինչը սակայն փաստերով ամենևին էլ չի հաստատվում, դեռ ավելին՝ նույն թվականի մարտի 16-ին «Զարյա Վոստոկա» ամսագրին ուղարկված նամակում Հայաստանի փրկության կոմիտեի արտակարգ հանձնախմբի կամ արտակարգ դատարանի նախագահ Ավետիս Օհանջանյանը հերքում է Ս.Վրացյանի պնդումը, հավաստելով, որ հենց Ս. Վրացյանի կարգադրությամբ է Գ. Նժդեհը հրամայել գնդակահարել պատանդներին, որը կատարվել է Տաթև վանքի բակում, հետո դիակները նետվել են մոտակա ձորը, իսկ Վրացյանը կույր անտարբերությամբ է վերաբերվել այդ ամենին: Կույր վրեժխնդրությունը դարձավ քաղաքական երկու կողմերի գործողությունների անմիջական ուղեկիցը:

Հետաքրքիր է նշել ևս մեկ կարևոր և հիշարժան պատմափաստ.. Հայրենիքի փրկության կոմիտեն իր ողջ կազմով և Ս.Վրացյանի անմիջական ղեկավարությամբ Տաթև հասավ 1921 թ. ապրիլի 20-ին, երբ դեռ զորքի և ճակատագրի բերումով իրեն պարտադրված գաղթի դառը ուղին բռնած բնակչության մի մասը դեռևս գտնվում էր Զանգեզուրի ճանապարհին: Սակայն դա վերջիններիս իրենց նոր քաղաքական ծրագրերում խոչընդոտ չդարձավ նոր, կիսատ-պռատ և քաղաքական տեսակետից անհեռանկարային, անհաշվենկատ մտայնությունների իրագործման համար: 1921 թ. ապրիլի 21-ին Հայաստանի փրկության կոմիտեն որոշեց ինքնալուծարվել և Զանգեզուրում ստեղծել ու ունենալ երկու կառավարություն՝ Ինքնավար Սյունիքի և Հայաստանի Հանրապետության, և վերջինիս կազմակերպումը հանձնարարվեց Ս.Վրացյանին, որը կյանքի կոչեց նախաբոլշևիկյան կաբինետը՝ երկու նոր նախարարների համալրումով: Միաժամանակ խնդիր դրվեց, որ Ս.Վրացյանի նոր կաբինետը ամենևին չպետք է խառնվի Ինքնավար Սյունիքի կառավարության ներքին գործերին:

բ/ Լեռնահայաստանի հռչակումը- Սյունիք-Զանգեզուրի հետագա ճակատագրում կարևոր էր 1921 թ. ապրիլի 26-ին Տաթևի վանքում հրավիրված ինքնավար Սյունիքի երկրորդ արտակարգ համագումարը, որին

ներկա էին 64 գյուղերի 95 պատգամավորներ: Համագումարի նախագահ ընտրվեց Սերգեյ Մելիք-Յոլչյանը: Համագումարում սովի հաղթահարմանն ուղղված զեկուցումով հանդես եկավ Գ.Նժդեհը: Համագումարն ընդունված բանաձևում որոշեց Ինքնավար Սյունիքը հռչակել անկախ պետություն՝ Լեռնահայաստան անվանումով, որն իր կազմում ընդգրկեց Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազը) և Լեռնային Ղարաբաղը, իսկ Գորիսը հռչակվեց որպես Լեռնահայաստանի մայրաքաղաք: Համագումարը Լեռնահայաստանի կառավարման հիմքում դրեց վարչապետական համակարգը՝ նախարարների խորհուրդը, իսկ որպես վարչապետ ընտրվելը վերապահվեց սպարապետին, որն էլ ընտրելու էր կառավարության կազմը:

Համագումարը որոշեց գնդապետ Նժդեհին շնորհել զորավարի /գեներալի/ աստիճան և պարգևատրել «Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով: Նժդեհի կողմից կյանքի կոչված կառավարության մեջ Նժդեհը ստանձնեց վարչապետի և արտգործնախարարի, Ս.Մելիք-Յոլչյանը՝ ներքին գործերի նախարարի, Հ.Տեր-Հակոբյանը՝ պարենավորման, Մ.Մինասյանը՝ խնամատարության, Հովհ. Տեճյանը՝ արդարադատության և լուսավորության, Ավ.Օհանջանյանը՝ հաղորդակցության և փոստ-հեռագրի, Ս.Եղիազարյանը՝ ֆինանսների նախարարի պաշտոնները:

1921 թ. մայիսի 1-ին Լեռնահայաստանի կառավարությունն իր կողմից հռչակած դեկլարացիայում նորաստեղծ պետության առաջնահերթ խնդիրը համարեց Լեռնահայաստանի ինքնապաշտպանության ապահովումը, ինչպես նաև բարեկամական և բարիդրացիական հարաբերությունների հաստատումը թուրք, պարսիկ և տաճիկ ժողովուրդների հետ:

Այդ ընթացքում Խորհրդային Հայաստանի կառավարությունը համառորեն փորձում էր խաղաղ ճանապարհով լուծել Զանգեզուրի խորհրդայնացման և մայր երկրի հետ միավորելու հարցը՝ այդ նպատակով 1921 թ. ապրիլի 23-ին հրապարակելով Հայհեղկոմի նոր դեկրետը համաներման մասին, որը տարածվում էր բոլորի, այդ թվում նաև Հայաստանի փրկության կոմիտեի անդամների վրա, միաժամանակ այդ խնդրի իրագործման համար ստեղծելով հատուկ հանձնաժողով՝ Արտաշես Կարինյանի գլխավորությամբ: Դեկրետի հրապարակմանը զուգահեռ Խորհրդային Հայաստանի կառավարությունը նոր բանակցություններ նախաձեռնեց Լեռնահայաստանի հետ, ստեղծելով հինգ հոգուց բաղկացած պատվիրակություն՝ **Արտաշես Կարինյանի** գլխավորությամբ, որին անդամակցեցին Վասիլի Մելնիկովը որպես Կարմիր բանակի ներկայացուցիչ, Դավիթ Անանունը /Տեր-Դանիելյան- հարել է հնչակյան, ապա ՀՀԴ-ին, իսկ արդեն 1905 թ.-ից հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կու-

սակցությանը՝ «սպեցիֆիկներին»/, Ա-Դոն /Տեր-Մարտիրոսյան Հովհաննես/ և Հ.Մելիքյանը: Որոշ անտեղի քաշքշուկներից հետո, որում միջնորդական առաքելություն էր կատարում Վայոց ձորի գավառապետ և դաշնակցական զորքերի հրամանատար Յապոնը, բանակցությունների վայր ընտրվեց բարձրլեռնային տեղանքում գտնվող Ղալաջուղ գյուղը:

Բանակցությունների համար գործնական հիմք դարձան Ռկ(բ)Կ Կենտկոմի կողմից Հայհեղկոմի նախագահ նշանակված Ալ.Մյասնիկյանի կողմից առաջադրված պայմանները՝ ուղղված Լեռնահայաստանի կառավարությանը, համաձայն որոնց Լեռնահայաստանի իշխանության մարմինները պետք է լուծարվեին և Խորհրդային Հայաստանի կառավարությանը հպատակություն հայտնեին, հայտարարվում էր համաներում բոլորին՝ ապստամբությանը մասնակցած շարքային մարդկանցից մինչև ղեկավարներ: Լեռնահայաստանի պատվիրակությունը գլխավորում էր Գեղեռն Տեր-Մինասյանը: Վերջ ի վերջո, Լեռնահայաստանը բանակցությունները փակուղի մտցրեց, խորհրդային կողմի առաջարկները Զանգեզուրի խորհրդայնացման մասին մերժվեցին և Ա.Կարինյանի պատվիրակությունը ձեռնունայն վերադարձավ Երևան:

Այդ ժամանակամիջոցում Խորհրդային Հայաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցան որոշ փոփոխություններ, 1921 թ. մայիսի 18-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը քննարկեց Հայհեղկոմը Խորհրդային Հայաստանի կառավարության վերակազմելու մասին հարցը և այն անվանվեց Ժողովրդական կոմիսարների խորհուրդ, մայիսի 21-ին նրա առաջին նախագահը և ռազմական ժողկոմը դարձավ բոլշևիկյան կուսակցության հայտնի գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը, արտաքին գործերինը՝ Ասքանազ Մռավյանը, ներքին գործերինը՝ Պողոս Մակինցյանը և այլն: ՀԽՍՀ Ժողկոմխորհը Զանգեզուրի հարցում բռնեց կոշտ գիծ, այն համարելով հայկական հող և գտնելով, որ այն շուտափույթ պետք է միացվի Խորհրդային Հայաստանին՝ իբրև վերջինիս անբաժան մաս, և այդ հիմնախնդիրը հանգուցալուծելու համար նպատակահարմար գտնելով կիրառել ինչպես խնդրի լուծման խաղաղ, այնպես էլ բռնի՝ ռազմական եղանակը:

1921 թ. մայիսի 29-ին 11-րդ Կարմիր բանակը վերանվանվեց Կովկասյան առանձին բանակ, որի ռազմահեղափոխական խորհրդի կազմի մեջ մտան Ս. Օրջոնիկիձեն, Ս.Կիրովը, Ալ.Մյասնիկյանը, կարմիր բանակի հրամանատար Ա.Հեկկերը և ուրիշներ:

1921 թ. հունիսի 1-ին Գորիսում Գ.Նժդեհի և Ս.Վրացյանի գլխավորած կառավարությունները կայացրին համաձայնություն միասնական կառավարություն կազմելու մասին, և ըստ այդմ Լեռնահայաստանը վերանվանվեց Հայաստան՝ Գորիս մայրաքաղաքով, և որի նախարարների խորհրդի նախագահ առաջադրվեց Ս.Վրացյանը, իսկ ռազմական ուժերի հրամանատար՝ Գարեգին Նժդեհը: Այն ուներ տասնմեկ նախարար, որոնց թվում Արշ. Հովհաննիսյանը, Գ.Նժդեհը, Ս.Մելիք-Յոլչյանը, Վ.Մինախորյանը և ուրիշներ, ընդ որում դրանցից մեկն անկուսակցական էր, երկուսը՝ էսէռ, ութը՝ դաշնակցականներ: Փաստական առաջնորդը Գարեգին Նժդեհն էր: Սակայն ձեռնարկված այս գործողությունները առանձնահատուկ ոգևորություն առաջ չբերեցին բնակչության շրջանում, որը խիստ հոգնած էր կռիվներից և երազում էր խաղաղ կյանքի մասին, լուրջ տպավորություն չթողեցին նաև Գ. Նժդեհի ձեռնարկած պատժիչ գործողությունները մասնավորապես ռուս-մոլոկանների Ռազարչայ և Բորիսովկա գյուղերում, ինչպես նաև բանտարկված կարմիրբանակայինների և հայ բոլշևիկների գնդակահարությունը և ուղղակի ժայռերից ցած գլորելը:

1921 թ. հունիսի սկզբին պատերազմին վերջ դնելու նպատակադրումով Վայոց ձոր եկան Ա.Կարինյանը և Վ.Մելնիկովը, որոնց Գնդեազում դիմավորեց Գորիսի կառավարության ներկայացուցիչ Գառնիկ Շահինյանը:

Այդուհանդերձ, չձգտելով գնալու փոխզիջումների Խորհրդային Հայաստանի հետ, Գորիսի կառավարությունը, ընդհակառակը, անգամ տենդագին քայլեր ձեռնարկեց հակախորհրդային ուժերի համախմբման ուղղությամբ, և անգամ չխորշեց դիմել Ադրբեջանի տարածքում դեռևս գործող մուսավաթական ուժերին, Քուրդիստանի քրդերին և պարսկական խաներին, որոնք էական արդյունքներ չտվեցին և երկրամասում ու նրա շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի հետևանքով չէին էլ կարող արդարացնել Գ.Նժդեհի կառավարության սպասելիքները: Առկա սովն էլ իր քայքայիչ դերն էր կատարում, ավելացրած դրան շուրջ 7 հազարանոց գաղթականությունը, դեպի Արաքս գնացող երևանյան զորամասերի անկարգությունները և մառզերիզմը, ընդհարումները արևմտահայ զինվորների և տեղացիների միջև: Սակայն Գորիսի կառավարությունը շարունակում էր Խորհրդային Հայաստանի հետ առճակատման եզրեր որոնել, չհրաժարվելով իր նպատակադրումից կրկին վերահաստատվել Երևանում և վերացնել Խորհրդային կարգերը, որի արդյունքը եղավ հնարավորինս խնամքով նախապատրաստված հարձակումը Դարալագյազի վրա:

գ/ Զանգեզուրյան զինուժի հարձակումը Դարալագյազի (Վայոց ձոր) վրա, պարտությունը և Սյունիք-Զանգեզուրի խորհրդայնացումը. - Հացի և զինամթերքի պաշարների համալրման, զորուժի խնդիրները լուծելու միջոցով Գ.Նժդեհը մշակեց նոր ռազմավարություն և օպերատիվ

պլան Երևանը գրավելու՝ դրա համար առաջնահերթ դարձնելով հարձակումը Դարալագյազի վրա: Այդ խնդրի իրագործման համար Գ.Նժդեհի կարգադրությամբ Յապոնի (Հովհաննես Պարոնյան) շուրջ 1900-ի հասնող զորուժը 1921 թ. հունիսի 15-ի լույս 16-ի գիշերը Որոտանի լեռնանցքում հանկարծակի հարձակում ձեռնարկեց Վայոց ձորում տեղաբաշխված խորհրդային զորամասերի վրա, որոնք անակնկալից ընկան ծանր վիճակի մեջ, 700 կարմիրբանակայիններ գերի ընկան, մի մասն էլ դասալքեց և անցավ զանգեզուրցիների կողմը:

ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը օբյեկտիվորեն գնահատեց ստեղծված վիճակը, միջոցներ ձեռնարկվեցին վիճակը շտկելու, նոր պատերազմի պատասխանատու համարվեց Զանգեզուրի կառավարությունը, և հաստատ համոզմունք հայտնվեց, որ որոշ վերախմբավորումներից հետո Կարմիր բանակը վճռականորեն կձեռնարկի Զանգեզուրի ազատագրման գործը: Զանգեզուրյան կառավարությունները կրում էին ժամանակավոր բնույթ, քանզի ուժերի ընդհանուր գերակշռությունը Խորհրդային Հայաստանի կողմն էր այն հասկանալի պատճառով, որ այն գործում էր Մոսկվայից ստացված հրահանգների հիման վրա, շարունակաբար ստանալով ռազմական աջակցություն և զենքի, զինամթերքի ու պարենի անհրաժեշտ համալրումներ: Գործնականում Նժդեհի գլխավորած զանգեզուրյան կառավարության հետագա գոյության հարցը կախված էր աշխարհաքաղաքական իրավիճակի հետագա սրացումներից, այն ըստ էության դատապարտված էր, և ընդամենը ժամանակի հարց էր, թե երբ բոլշևիկները կգրավեն Գորիսը: Խորհրդային կողմին հարմար պատրվակ էր պետք Զանգեզուրի գրավման խաղաղ մեթոդներից և միջոցներից անցնելու խնդրի հանգուցալուծման ռազմական եղանակի, և դա Զանգեզուրի կառավարությունը ընձեռեց խորհրդային կողմին՝ սկսելով հարձակում Դարալագյազի վրա: Խորհրդային ռազմաքաղաքական մեքենան ավելի հզոր էր, և դա էլ պայմանավորեց Զանգեզուրի գրավումը Խորհրդային Հայաստանի կողմից:

Դեռ 1921 թ. մայիսի կեսերին Ալ.Մյասնիկյանը Կարմիր բանակի հրամանատար Ա.Հեկկերի հետ համատեղ մշակել էր Զանգեզուրի գրավման նախնական ռազմաօպերատիվ պլան, որն էլ ընկավ կովկասյան առանձին բանակի հրամանատարության շտաբի հունիսյան վերջնական պլանի հիմքում, և Զանգեզուրի վրա հարձակվելու համար ստեղծվեցին երկու զորախմբեր՝ Ղարաբաղ-Զանգեզուրյան և Երևանյան: Ղարաբաղ-Զանգեզուրյան զորախմբավորման մեջ ընդգրկվեցին Կովկասյան առանձին բանակի առաջին կորպուսը և մի շարք այլ զորախմբեր: Կորպուսի հրամանատար Ալ. Տոդորսկին համատեղությամբ նշանակվեց այդ խմբավորման հրամանատար, իսկ կոմիսար նշանակվեց Ի.Սվիրիդովը: Ռազմական այդ խմբավորումն իր կազմում ուներ 5000-ից ավելի սվին, ավելի քան 400 թուր, 12 թնդանոթ, 100 գնդացիր, 7 օդանավ, որն իր հարձակումը Զանգեզուրի վրա ձեռնարկեց միաժամանակ հյուսիսից, արևելքից և հարավ-արևելքից: Ռազմաքաղաքական այս հարվածը իրագործվեց հունիսի վերջերին: Երևանյան խմբավորումը **Մ.Վելիկանովի** ղեկավարությամբ Զանգեզուրի վրա հարձակումը ձեռնարկեց արևմուտքից և հարավ-արևմուտքից: Եվ այսպիսով, Զանգեզուրի ուղղությամբ խորհրդային իշխանությունները կենտրոնացրին շուրջ 10 հազար զինվոր:

1921 թ. հունիսի կեսերի տվյալներով, զանգեզուրյան զինված ուժերը կազմված էին տեղական կաղրային զորամիավորումներից, փետրվարյան քաղաքացիական կռիվներից հետո Զանգեզուր անցած զորախմբերից, արևմտահայ խմբերից, որոնք հոգնել էին այդ կռիվներից և անիմաստ էին համարում խորհրդային իշխանության դեմ պայքարելը, ինչպես նաև գյուղացիներից կազմված աշխարհազորային խմբերից, որոնք ևս չկամություն դրսևորեցին դիմադրություն ցույց տալու Կարմիր բանակի զորամասերին, և գործնականում պատրաստ էին առաջին իսկ նպաստավոր պահին անցնելու Խորհրդային Հայաստանի կողմը, ինչը էապես դյուրացրեց Զանգեզուրի գրավման խնդիրը: Եթե Ղարաբաղ-Զանգեզուրյան ռազմաճակատի ուղղությամբ սահմանամերձ Կոռնիձոր, Տեղ, Խնածախ, Վերիշեն և մի շարք այլ գյուղերի պաշտպանական կառույցների հատվածում կենտրոնացրել էին մոտ 3 հազար մարդ, 11 հրանոթ, 27 գնդացիր, ապա Շարուր-Վայոց ձորի, Սիսիանի և Օրդուբաղի ուղղությամբ Զանգեզուրի կառավարությունն իր տրամադրության տակ ուներ 7 հազարից ավելի սվին, 1600 թուր, 16 հրանոթ, 50 գնդացիր, և այսպիսով, Լեռնահայաստանի զինուժի ընդհանուր թիվը կազմում էր շուրջ 12 հազար մարդ, որոնք իրենց տրամադրության տակ ունեին 16 հրանոթ, 100 գնդացիր:

Պատերազմը Խորհրդային Հայաստանի և Զանգեզուրի միջև անխուսափելի դարձավ, և 1921 թ. հունիսի 20-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհրդի նախագահ, Կովկասյան առանձին բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Ալ. Մյասնիկյանի և Երևանյան ռազմական խմբավորման հրամանատար Մ. Վելիկանովի կարգադրագրով հարձակումն սկսելու հրամանագիրը անմիջական օրակարգ մտավ և դարձավ գործողության ծրագիր: Հունիսի 22-ին խորհրդային զորուժի երևանյան խումբը կարճատև դիմադրությունից հետո գրավեց Վայոց ձորի Ամաղու, Չիվա,

Արփա գյուղերը՝ գերի վերցնելով ավելի քան 3 հազար զինվոր և սպա: Որոշ ժամանակ անց խորհրդային զորամասերը այլ բնակավայրերի հետ միասին գրավեցին նաև Գնդևազ, Հերհեր գյուղերը, Լեռնահայաստանի վայոցձորյան ռազմական խմբավորումը ջախջախվեց: Իսկ արդեն հունիսի 29-ին խորհրդային զորամասերը գրավեցին Անգեղակոթը: Կարմիր զորամասերը ջախջախիչ հարվածներ հասցրեցին Կոռռ Թարխանյանի և Գերասիմ Աթանջանյանի գլխավորած զորախմբերին, չնայած Գորիսի կառավարությունը խստագույնս կարգադրել էր ամեն կերպ դիմադրել բոլշևիկյան զորամասերին, սակայն ապարդյուն, դրան չօգնեց նաև «կացնավոր բոլշևիկների» մասին տարածվող քարոզչությունը: Իսկ արդեն հուլիսի 1-ին Գարեգին Նժդեհը Գորիսում անցկացրեց Նախարարների խորհրդի նիստ, որում որոշվեց թողնել Գորիսը, որի մատույցներին էին արդեն մոտեցել խորհրդային երևանյան խմբավորման զորամասերը, որոնք էլ հուլիսի 2-ին գրավեցին Խնածախ, Բայանդուր, Խոզնավար գյուղերը և մտան Լեռնահայաստանի մայրաքաղաք: Գ.Նժդեհը ետ քաշվեց Ղափան, իսկ արդեն հուլիսի 4-ին Տաթևը նույնպես գրավվեց կարմիրների կողմից: Այնուհանդերձ, այս ամենից հետո էլ, Գ.Նժդեհը վճռում է շարունակել ըստ էության հեռանկար չունեցող պատերազմը, նամանավանդ, որ դրության տերը գործնականում խորհրդային ուժերն էին, և համոզմունք արտահայտել, որ ինքը Հանքեր կոչված վայրից բոլորովին էլ չի պատրաստվում նահանջել և ջարդելու է թշնամուն: Չենք կարծում, որ դա գործնականում և բարոյապես արդարացված էր, սակայն Գ. Նժդեհը որոշում է նաև Երևանի պետական գանձարանից դուրս բերված տարադրամը փոխադրել Մեղրի, 5 միլիարդ հայկական նոր դրամները հորել հողում, իսկ 100 միլիոն հայկական ռուբլին, ինչպես նաև խորհրդային 120 միլիոն ռուբլին և եղած ոսկի տարադրամը պահել իր մոտ. նմանապես որոշվում է Կապարգողթի տարբեր վայրերում թաքցնել զենքի և զինամթերքի մի մասը՝ հետագա նպատակների համար:

Հուլիսի 5-ին տեղի է ունենում կարևոր իրադարձություն. Նժդեհի գլխավորությամբ Հանքերում տեղի ունեցած Ղափանի շրջանի ներկայացուցիչների և ճակատների պետերի ժողովը, Նժդեհի սպասելիքներին հակառակ, վճռում է դադարեցնել դիմադրությունը և ընդունել խորհրդայնացման պահանջը, և առանց հետագա կռիվների հանձնվել խորհրդային իշխանության ողորմածությանը, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ դեռ հուլիսի 3-ին առանձին հրամանով ՀԽՍՀ Ժողկոմխորհրդի նախագահ Ալ. Մյասնիկյանը պահանջել էր մարդասիրական վերաբերմունք դրսևորել Զանգեզուրի բնակչության նկատմամբ և բռնությունների չդիմել: Հուլիսի 5-6-ին կարմիր զորամասերը գրավեցին Զեյվա, Տանձավեր, Եղվարդ, Ագարակ, Ուժանիս և մի շարք այլ գյուղերը, և ստեղծված իրավիճակում, հուլիսի 6-ին Գ.Նժդեհը որոշեց անհապաղ հեռանալ Հանքերից, և կարճ ժամանակ անց ուղղություն վերցրեց դեպի Մեղրի՝ բարձրանալով Խուստուփն ի վեր: Հուլիսի 7-ին՝ ճանապարհին, Նժդեհը մի դիմումագիր հղեց Հայաստանի իշխանություններին, արտահայտելով իր նկատառումները Հայաստանի տնտեսական և քաղաքական զարգացումների միտումների վերաբերյալ, սակայն լինելով դրության տերը, խորհրդային կողմը անընդունելի համարեց վերջինիս առաջարկները, ընդունելով իրավիճակի լարվածության պարպման միայն մի եղանակ՝ անվերապահորեն հանձնվել նոր իշխանություններին:

1921 թ. հուլիսի 8-ին Գորիսում Զանգեզուրի արտակարգ կոմիսար նշանակված Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, զորաբանակի հրամանատար Տոդորսկին և զինվորական կոմիսար Սվիրիդովը ստորագրեցին հրաման Զանգեզուրում խորհրդային իշխանության հաստատման միջոցառումների մասին: Իսկ արդեն հուլիսի 9-10-ի վիճակով ամբողջ Լեռնահայաստանը փաստորեն գրավված էր բոլշևիկյան զինուժի կողմից, իսկ զանգեզուրյան նժդեհյան հայ զորքի և փախստականների մնացորդները հապճեպ Արաքսով գետանցեցին դեպի Պարսկաստան. նրանց թիվը կազմեց ավելի քան 8 հազար հոգի: Հուլիսի 13-ին խորհրդային զորքերը գրավեցին Գենվազի կենտրոն Մեղրին, Զանգեզուրը լիովին ընկավ Խորհրդային Հայաստանի վերահսկողության տակ: 1921 թ. հուլիսի 15-ին Կովկասյան 1-ին կորպուսի զինկոմ Սվիրիդովը Ալ.մյասնիկյանին ուղղված հեռագրում հայտնում էր Զանգեզուրում հեղափոխական կարգի վերականգնման մասին: Այդ կապակցությամբ Կովկասյան առանձին բանակի հրամանատար Հեկկերը, Կովկասյան կորպուսի հրամանատար Տոդորսկին, 20-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Վելիկանովը, ՀԽՍՀ հրաձգային բրիգադի հրամանատար Միրիմանյանը պարգևատրվեցին ՀԽՍՀ Կարմիր Դրոշի շքանշանով: Եվ այսպես, իրադարձությունների զարգացման ողջ այս ընթացքը հանգեցրեց Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելուն: Որոշ փաստեր հիմք են տալիս ենթադրելու, որ Զանգեզուր-Սյունիքի համար մղված պայքարում խորհրդային իշխանությունների կողմից կարծես թե մշակվեց մի ռազմավարություն, որ հիմքում ընկած էր ինչպես Գ.Նժդեհի հետ ներքին փոխպայմանավորվածության ձեռք բերումը Սյունիք-Զանգեզուրի ճակատագրի որոշման, այն է՝ Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորման վճռման խնդրում, այնպես էլ սեփական գործողությունների վրա ապավինելը, որպեսզի Անդրկովկասում ձևավորվեր այնպիսի մի քաղաքական քարտեզ, որը ձեռնտու լիներ բոլշևիկյան կայսրության տա-

բաշրջանային աշխարհաքաղաքական շահերի ապահովման տեսանկյունից:

9. Ռազմաքաղաքական իրադարձությունները դրամատիկ զարգացումներ ունեցան նաև Ղարաբաղ-Արցախում: 1921 թ. հունիսի 3-ին Տեղի ունեցավ ՌԿ (բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը, որին մասնակցում էին Ս.Օրջոնիկիձեն, Ֆիլիպ Մախարաձեն, Ն. Նարիմանովը, Ալ.Մյասնիկյանը և ուրիշներ, միաձայն որոշում է Հայաստանի Հանրապետության դեկլարացիայում նշել, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Հայաստանին, որով Նարիմանովի նախկինում հռչակած սկզբունքը հանրաքվեի մասին կարծես թե դեն էր նետվում և կրկին վերահաստատվում էր լենինյան ազգերի ինքնորոշման սկզբունքը: Սակայն ինչպես գիտենք, դրան հետևեցին քաղաքական նոր խարդավանքներ, մասնավորապես Ի.Ստալինի կոշտ միջամտությունը և արդյունքում՝ Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի տխրահռչակ բացահայտ հակահայկական որոշումը: 1921 թ. հունիսի 12-ին Խորհրդային Հայաստանի ընդունած և հունիսի 19-ի «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակված դեկրետում հայտարարվեց Լեռնային Ղարաբաղի Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մաս կազմելու մասին: Իսկ Ադրբեջանը գնաց երկակի քաղաքականության կիրառման: Մի կողմից՝ Ադրբեջանի հեղկոմը նորընծա նախագահ հայտնի Խոսրով Բեկ Սուլթանովի գլխավորությամբ որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս հայտարարելու մասին, իսկ մյուս կողմից ամենևին չխորշելով իր գործունեության ստոր մեթոդներից, կտրուկ փոխեց իր վերաբերմունքը՝ հրաժարվելով ընդունել իրենց իսկ ստորագրությամբ կայացված որոշումները, և ՀԽՍՀ-ի իշխանությունների կողմից Ղարաբաղի արտակարգ կոմիսար նշանակված Ասքանազ Մռավյանի լիազորությունները, որը «Կարմիր աստղ» թերթում հայտարարագրեց Ղարաբաղի և Զանգեզուրի՝ Խորհրդային Հայաստանին պատկանելու անքակտելի հիմնաղրույթի մասին, սակայն որի գործունեության դեմ խոչընդոտներ հարուցվեցին ադրբեջանական իշխանությունների կողմից, որին հատկապես ակտիվ էր ձայնակցում հայտնի հայատյաց Ասադ Կարաևը:

Ավելին, հունիսի վերջին, հուլիսի սկզբին Ն.Նարիմանովը բացեիբաց և լկտիորեն հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը պետք է մնա Ադրբեջանի կազմում, որից ելնելով հունիսի 26-ին Ս.Օրջոնիկիձեն և Ս.Կիրովը հեռագրեցին Նարիմանովին՝ հունիսի 27-ին շտապ հրավիրել քաղբյուրո և ժողովմխորհ և լուծել Ղարաբաղի հարցը. «Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելիս պետք է ղեկավարվել այսպիսի սկզբունքով.

ըստ որի ոչ մի հայկական գյուղ չպետք է միացվեր Ադրբեջանին, ինչպես և ոչ մի մուսուլմանական գյուղ չէր կարելի միացնել Հայաստանին»: Ի վերջո, Ս.Կիրովի նախագահությամբ ստեղծվեց հանձնաժողով՝ անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանահարցերը վճռելու համար: Սակայն այս անգամ ևս, 1921 թ. հունիսի 25 -27-ը Թիֆլիսում կայացած հանձնաժողովի նիստերում Ադրբեջանի իշխանությունները կտրուկ մերժեցին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հայկական առաջարկությունը: Այնուհետև անընդունելի համարվեցին այդ խնդրի վերաբերյալ Ալ. Բեկզադյանի հարցադրումները: Ադրբեջանն անընդունելի էր համարում նաև էթնիկական սկզբունքով տարածքային սահմանաբաժանումը: Կարևոր է նաև ընդգծել, որ էթնիկական սկզբունքով սահմանաբաժանումը ևս գործնականում մերժելի դարձավ, որի հիմքում ընկած էր ազգերի ինքնորոշման սկզբունքը: Անհետաքրքիր չէ նշել նաև, որ Ադրբեջանը սպառնում էր իր տեսակետը չընդունելու դեպքում կառավարության հրաժարական տալը, ինչի մասին չի կարելի ասել Խորհրդային Հայաստանի կառավարության առումով: 1921 թ. հունիսի 27-ին, անտեսելով տրված ցուցումները, որոնց մեջ սողանցքներ կային, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոն և կառավարությունը համատեղ նիստում որոշում ընդունեցին Ղարաբաղը չհանձնել Հայաստանին՝ այդ ապօրինի որոշման իբրև հիմնավորում պատճառաբանելով տնտեսական գործոնի կարևորությունը, հակառակ դեպքում Նարիմանովը իրեն պատասխանատու չէր համարում հնարավոր հետևանքների համար, ինչը քողարկված սպառնալիք էր հիշեցնում:

Ի վերջո, սահմանավեճի լուծումը փոխադրվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրո, որը 1921 թ. իր հուլիսի 2-7-ի Թիֆլիսում հրավիրված նիստերում (ուր ակնհայտ էր ադրբեջանա-վրացական քողարկված միասնությունը, և նպատակների ներդաշնակությունը) ի թիվս այն հարցերի (Ախալքալաք, Լոռի, Զանգեզուր, Զաքաթալա) քննարկվեց նաև Լեռնային Ղարաբաղի հարցը, որի բնակչության շուրջ 90 տոկոսը հայեր էին, և որը տնտեսական ոչ մի հանգուցակապ չուներ Ադրբեջանի հետ: Հուլիսի 4 -ի նիստում, որին մասնակցում էին Հայաստանի և Ադրբեջանի կառավարության նախագահներ Ալ. **Միասնիկյանը և Ն.Նարիմանովը, Ս.Կիրովը, Ս.Օրջոնիկիձեն** և ուրիշներ, որոշվեց Լեռնային Ղարաբաղը մտցնել Խորհրդային Հայաստանի կազմի մեջ: Սակայն Ն.Նարիմանովի վճռական բողոքարկումից հետո ընդունվեց նոր որոշում՝հարցի լուծումը փոխադրել Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմ: Ստեղծված իրավիճակում **Թիֆլիս ժամանեց ՌԽՖՍՀ ազգությունների գործերի կոմիսար Ի. Ստալինը,** որը ակտիվ միջամտություն ցուցաբերեց քննարվող հարցի հանգու-

ցալուծմանը: Եվ այս երկդիմի խաղը ավարտվեց նրանով, որ հուլիսի 5 -ին կայացավ Կովբյուրոյի նոր նիստ, որը վերանայեց նախորդ օրն ընդունված որոշումը: Ընդունվեց հայտնի տխրահռչակ որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում: Որոշման ընդունման նպատակահարմարությունը պատճառաբանվում էր հայերի ու մուսուլմանների միջև խաղաղության անհրաժեշտությամբ, ինչպես նաև այսպես կոչված Վերին ու Ներքին Ղարաբաղների՝ Ադրբեջանի հետ դրանց մշտական կապով: Որոշումից խիստ դժգոհեցին և արցախցիները, և նաև Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը, որը 1921 թ. հուլիսի 16-ին կայացած նիստի կողմից ընդունված որոշման մեջ հստակորեն արձանագրեց, որ ինքը համաձայն չէ Կովկասյան բյուրոյի հուլիսի 5 -ի որոշման հետ, և որի մասին արտահայտվեց Ալ. Մյասնիկյանը Հայաստանի Կոմկուսի 1922 թ. հունվարի կեսերին հրավիրված 1-ին համագումարում. «Ադրբեջանն ասում էր, որ եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա նավթ չենք տա»: Այդ որոշման ապօրինությունը ինքնին ապացուցվում է պատմաքաղաքական մեծաքանակ փաստերով: Հարկ է նաև ընդգծել, որ այս պարագայում գործադիր մարմնի որոշումը ակնհայտորեն նենգափոխվել էր կուսակցական մարմնի որոշմամբ, որն իրավասու չէր առանց հաշվի առնելու տարածքի արմատական բնակչության կամքը նման փոփոխություններ կատարելու տարածաշրջանի վարչատարածքային քարտեզում:

1922 թ. բռնությունը Արցախի վրա շարունակվում է, ճնշում է գործադրվում բոլոր խորհուրդների նախագահների և քարտուղարների, հասարակ բնակչության վրա, և ի վերջո ընդունված որոշման մեջ նպատակահարմար է գտնվում Արցախը թողնել Ադրբեջանի տարածքային-վարչական կազմում՝ ինքնավար մարզի իրավունքով: Խնդիր է դրվում Արցախի լեռնային շրջանները միավորել և ստեղծել առանձին հայկական մարզ, որի գերակշռող մեծամասնությունը հայեր էին: 1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի Կենտգործկոմի նախագահի տեղակալ Կասումովի ստորագրությամբ հրապարակվեց դեկրետ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ կազմելու մասին», որի ժամանակավոր հեղկոմի նախագահ դարձավ Ա.Ղարագյոզյանը: 1924 թ. հուլիսին «Խորհրդային Ղարաբաղ» թերթում հրապարակվեց մարզի Սահմանադրությունը, որում նշվում էր այն մասին, որ Արցախը Ադրբեջանի բաղկացուցիչ նասն է կազմում, ունենալով 440 հազար հեկտար տարածք՝ 248 բնակավայրերով: 1923 թ. սեպտեմբերի 20-ին Խանքենդը վերանվանվեց Ստեփանակերտ, որը դարձավ մարզկենտրոն, միաժամանակ մարզի անվանումից հանվեց «հայկական» բառը, Արցախի սահմաններն այնպես մտածված և հաշվենկատորեն քարտեզագրվեցին, որ Լեռնային Ղարաբաղը անջատվեց Խորհրդային Հայաստանից:

10. Այս ենթահարցին անդրադառնալիս նախ պետք է պարզել, թե ինչ էր իրենից ներկայացնում Խորհրդային Հայաստանը որպես պետություն և ինքնիշխանության ինչպիսի սահմաններ ու հնարավորություններ ուներ: Ցույց տալ, որ 1921 թ. Զանգեզուրի միացումից հետո Խորհրդային Հայաստանն ուներ 29,8 հազ. քառ.կմ տարածք, որը վարչական տեսանկյունից բաժանված էր 9 գավառի և 39 շրջանի: 1921 թ. դեկտեմբերին իշխանության ոչ ընտրովի մարմիններին՝ հեղկոմներին, փոխարինելու եկան ընտրովի բանվորագյուղացիական խորհուրդները: 1922 թ. հունվար-փետրվարին տեղի ունեցավ Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարը, որտեղ ընդունվեց Խորհրդային Հայաստանի առաջին Սահմանադրությունը: Սակայն պետք է ընդգծել, որ որոշակի առումներով և բնութագրիչ հատկանիշներով այն ուներ ձևական բնույթ և ըստ էության կրկնօրինակում էր Խորհրդային Ռուսաստանի 1918 թ. Սահմանադրությունը:

Այս ենթագլխում ուշադրություն պետք է դարձնել Ռուսական նախկին կայսրության տարբեր ժողովուրդների, և այդ թվում՝ հայերի ազգային հարցի լուծմանը: Այս բազմաբարդ հիմնախնդիրը լուծվեց, հիմնվելով ազգերի իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի կոմունիստական կարգախոսների հենքի վրա, փաստորեն նախկին Ռուսական կայսրությունը վերականգնելու միջոցով՝ ԽՍՀՄ անվանումով: Ցույց տալ, որ ԽՍՀՄ կազմավորման կազմակերպական-քաղաքական գործընթացները սկսվել են Անդրկովկասից: 1922 թ. գարնանը (մարտի 12-ին) Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միավորումով ստեղծվեց Անդրկովկասյան դաշնությունը՝ Անդրֆեդերացիան, որը գոյատևեց մինչև 1936 թ.: 1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում գումարվեց խորհուրդների համամիութենական առաջին համագումարը՝ Ռուսաստանի դաշնության, Ուկրաինայի, Բելառուսի և Անդրֆեդերացիայի ներկայացուցիչների մասնակցությամբ: Սրանց ընդունած հռչակագրով և ստորագրած պայմանագրով ստեղծվեց ԽՍՀՄ-ը (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը): Այսպիսով, Խորհրդային Հայաստանը իր ունեցած անկախության մի շարք հիմնարար սկզբունքներ փոխանցեց միութենական ընդհանուր բնույթի մարմիններին, համապետական քաղաքական-կուսակցական կառույցներին, ղեկավարվելով մի կենտրոնից՝ իրագործելով համատեղ պաշտպանական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականություն: Վերջում անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահան-

գումը. ԽՍՀՄ-ը ունիտար (միաձույլ), կենտրոնացված, բազմազգ ամբողջատիրական կայսրություն էր, որը գոյատևեց շուրջ 70 տարի և ինքնալուծարվեց 1991 թվականին: ԽՍՀՄ կազմավորումով յուրովի լուծվեց ազգային հարցը, իսկ փլուզումով՝ այն այլ ընթացք ստացավ՝ իր բոլոր բացասական շերտանստվածքներով հանդերձ:

11. Թեև այս ենթահարցը առնչվում է երկրի տնտեսական, մշակութային խնդիրներին, սակայն իրականում այն ունի քաղաքական բովանդակություն: 1920-1930-ական թվականները իրավամբ համարվում է խորհրդային պետության ու այդ թվում՝ Խորհրդային Հայաստանի պատմության ամենաբարդ, խճճված ու ցավագին ժամանակահատվածներից մեկը, որովհետև այդ շրջանում իրականացվեց մի քաղաքականություն, որը կոչվեց սոցիալիզմի կառուցում, իսկ սոցիալիզմի կառուցման տակ հասկացվեց. 1) երկրի սոցիալիստական ինդուստրացումը, 2) գյուղատնտեսության կոլեկտիվացումը և 3) մշակութային հեղափոխությունը: Բացահայտել և բնութագրել սոցիալիզմի կառուցման այդ երեք փոխմիասնական և փոխկապակցված խնդիրները:

Ինդուստրացումը նշանակում էր՝ ստեղծել արդյունաբերական նոր ճյուղեր, կառուցել գործարաններ, ֆաբրիկաներ, երկաթուղիներ, այլ ձեռնարկություններ ու օբյեկտներ, հասնել այն բանին, որ տնտեսության մեջ արդյունաբերությունը գերիշխող լինի գյուղատնտեսության նկատմամբ: Եվ պետք է ասել, որ երկու-երեք հնգամյակների ընթացքում դրվեց Խորհրդային Հայաստանի ինդուստրիայի հիմքը:

Խորհրդային երկրի համար շատ ավելի ցավագին հետևանք ունեցավ ՆԷՊ-ի կասեցման և գործնականում բռնի ճանապարհով անհատական գյուղացիական տնտեսությունների միավորման միջոցով գյուղատնտեսական կոլեկտիվացումը դարձավ խորհրդային հասարակարգի կայացման հայտնի իրողություններից մեկը: Տնտեսավարման այդ ձևը, փաստորեն ի չիք դարձրեց աշխատավորների անձնական շահագրգռվածությունը, և արդյունքում գյուղատնտեսությունը անկում ապրեց: Իր մեջ բռնության տարբեր պարունակող կոլեկտիվացման քաղաքականության բացասական հետևանքներ դեռ երկար ժամանակ իրենց զգացնել տվեցին: Եվ, վերջապես, մշակութային հեղափոխությունը վերաբերում էր հոգևոր ոլորտին՝ մարդկանց վերափոխմանը («նոր՝ սոցիալիստական մարդու ձևավորմանը») և նրանց դաստիարակմանը սոցիալիստական ու կոմունիստական ոգով: Իսկ այդ դաստիարակության և նոր՝ սոցիալիստական մշակույթի արմատավորման ընթացքում դարձյալ գործադրվեցին անհարկի բռնություններ: Ընդհանրացնելով՝ ամփոփել, որ խորհրդային ժողովրդի հերոսական աշխատանքի, մեծ զոհողությունների, ուժի ու

բռնությունների ճանապարհով 1920-1930-ական թթ. մեր երկրում հիմնվեց (կառուցվեց) մի հասարակարգ, որը կոչվեց սոցիալիզմ: Սակայն հետագա մի քանի տասնամյակների փորձը ցույց տվեց, որ նման հասարակարգը կենսունակ չեղավ և չունեցավ այն ապագան, որն ակնկալվում էր: Մեկ այլ վարկածի համաձայն, ԽՍՀՄ-ը, որոշակի խորքային գործառույթների ռազմավարությունից ելնելով, պարզապես ինքնալուծարվեց և ընտրեց զարգացման այլ ուղղվածություն և հեռանկարներ, ինչն առավելապես ձեռնտու էր սլավոնական-ռուսական տիրույթի մեջ գտնվող պետությունների խմբի համար, ելնելով այն կարևոր կանխադրույթից, որ ռուսական կայսրությունը միշտ էլ կգտնի այլ հնարավորություններ իր դիրքերը և ռազմաքաղաքական ազդեցությունը աշխարհի տարբեր անկյուններում, և առաջին հերթին՝ անդրկովկասյան տարածաշրջանում և դրա շուրջն ապահովելու համար:

12. Այս ենթահարցում արծարծվող նյութը խորհրդային 70-ամյա քաղաքական պատմության, թերևս, ամենացավագին ու մռայլ էջերից է: Ցույց տալ, որ 1920-ական ու, հատկապես, 1930-ական թվականները հայտնի են որպես խորհրդային բռնությունների ժամանակաշրջան, որովհետև սոցիալիստական հասարակարգի կառուցումը, բնականաբար, իր հետևից պետք է բերեր անհանդուրժողականություն ու պայքար այլ կուսակցությունների ներկայացուցիչների, այլախոհների, նախկին հարուստների, հոգևոր ծառայողների, ազատ մտածողների նկատմամբ և այլն: Փաստական նյութերի իմացության հիման վրա հատուկ ընդգծել, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո, մի քանի տարվա ընթացքում, լուծարվեցին և հանրապետությունից վտարվեցին հայ ազգային և ոչ ազգային մնացած կուսակցությունները: Այնուհետև ցույց տալ այդ կուսակցությունների հետագա ճակատագիրը: Մյուս կողմից բացահայտել և հիմնավորել այն իրողությունը, որ 1920-ական թվականներին հետզհետե ամրապնդվում էր կոմունիստական կուսակցության մենիշխանությունը: Փաստերով ապացուցել, որ կոմկուսը անսահմանափակ կերպով տնօրինում էր երկրի քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքը՝ փոխարինելով և՝ պետական, և՝ տնտեսական, և՝ հասարակական մարմիններին ու կազմակերպություններին, ինչը գործնականում կարելի է վերագրել պատմաքաղաքական բոլոր ժամանակաշրջաններին և քաղաքական համակարգերին՝ անկախ դրանց դեմոկրատական կամ տոտալիտար հակվածությունից:

Քաղաքական պատմության և քաղաքագիտական կարևոր հասկացություններից են ամբողջատիրությունը և ժողովրդավարությունը: Խորհրդային Հայաստանի կոմկուսի 20-30-ական թվականների գործու-

նեության օրինակով կարելի է ամբողջական պատկերացում կազմել կոմունիստական ամբողջատիրության (տոտալիտարիզմի) և մենիշխանության մասին, կառավարման մի ձև, որը հակոտնյա է ժողովրդավարական սկզբունքներին: Հատուկ կանգ առնել 1930-ական թվականների վրա: Մասնավորապես նշել, որ խորհրդային-կոմունիստական համակարգին մշտապես ուղեկից հալածանքներն ու բռնությունները նոր թափ ստացան 1930-ական թվականներին ու, հատկապես, իրենց գագաթնակետին հասան 1937 թվականին: Ժողովրդի թշնամու, նացիոնալիստի, դաշնակցականի, տրոցկիստի, կուլակի, իմպերիալիստական գործակալի և այլ շինծու մեղադրանքներով, գրեթե առանց դատ ու դատաստանի բանտարկվեցին, աքսորվեցին կամ էլ գնդակահարվեցին 25 հազար մարդ, և մեծամասամբ կուսակցական-քաղաքական ղեկավար գործիչներ: Դա պարզապես ներսում ընթացած կուսակցական-եսամոլական մրցապայքարի և իշխանակովի հետևանք էր, որը Ի. Ստալինի հետ էական առնչություններ չուներ: Նշված ժամանակաշրջանում հասարակական-քաղաքական մթնոլորտն այնքան անառողջ էր, որ փոխադարձ անվստահության, վախի, զրպարտանքի, քծնանքի ու կարիերիզմի պայմաններում բռնաճնշումների զոհ էին գնում ականավոր գրողներ, գիտնականներ, զորահրամանատարներ և անգամ կոմունիստական կուսակցության ու խորհրդային պետության ղեկավարներ, որոնք շատ դեպքերում հենց իրենք էին տուրք տալիս կամ նպաստում նման մթնոլորտի ստեղծմանը՝ դառնալով այդ համակարգի զոհերը: Իսկ քանի որ այդ ժամանակաշրջանում խորհրդային կայսրության միանձնյա ղեկավարը Ի.Ստալինն էր, որի անձի շուրջ արդեն ստեղծվել էր յուրահատուկ պաշտամունք, ուստի այդ բռնությունները միակողմանիորեն, առանց հաշվի առնելու խորքային առավել ճիշտ պատճառները, վերագրում էին Ստալինին: Դա այնքան էլ ճիշտ չէ: Այն պետք է վերագրել խորհրդային-կոմունիստական ամբողջատիրական համակարգին, քանզի, եթե Ստալինը չլիներ, ապա այդ գործը ավել կամ պակաս հետևողականությամբ և «հաջողությամբ» կիրականացնեին Լ.Տրոցկին, Գ.Զինովևը, Ն.Բուխարինը, Ս.Կիրովը կամ մեկ այլ ուրիշը:

ԹԵՄԱ 8. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939 - 1945 ԹԹ.)

1. *Աշխարհամարտի պատճառները և սկիզբը: Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա*
2. *Խորհրդահայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին: Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին*
3. *Սփյուռքահայերի մասնակցությունը պատերազմին*
4. *Հայ ժողովրդի ավանդը ֆաշիզմի ջախջախման գործում: Հայ զորահրամանատարները և հերոսները*

1. Ենթաթեմայում բացահայտել երկրորդ աշխարհամարտի պատճառները՝ վեր հանելով Վերսալյան պայմանագրով պարտադրված պայմանները Գերմանիային, ինչպես նաև Արևմուտքի խոշոր տերությունների դիրքորոշումը միջազգային հարաբերությունների այս կամ այն խնդրի նկատմամբ: Ցուց տալ, որ հենց առկա հակասությունները Վերսալյան համակարգով ձևավորված իմպերիալիստական տերությունների միջև անխուսափելի դարձրին Երկրորդ աշխարհամարտի բռնկումը: Նշել, որ դեռ Մյունխենյան գործարքի ժամանակներից սկսած (1938 թ.), Արևմուտքի որոշ քաղաքական շրջաններ, Հիտլերին վերակողմնորոշելով դեպի Արևելք՝ ԽՍՀՄ, փաստորեն հող նախապատրաստեցին ագրեսիայի սանձազերծման համար: Անդրադառնալ 1939 թ. օգոստոս-սեպտեմբերին Մոսկվայում կնքված խորհրդագերմանական չհարձակման, բարեկամության ու սահմանների մասին այսպես կոչված «Մոլոտով-Ռիբենտրոպի» հայտնի պակտին (պայմանագրին), վերհանել այն խորքային պատճառահետևանքային կապերը, որոնք հարկադրեցին գերմանական և խորհրդային կողմերին կնքելու վերոհիշյալ համաձայնագիրը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառները բացահայտելուց հետո նշել, որ այդ պատերազմն սկսվեց 1939 թ. սեպտեմբերի 1-ին, և իր շրջապտույտի մեջ առավ 64 պետությունների, երկրագնդի բնակչության 80 տոկոսը և տևեց ուղիղ վեց տարի՝ մինչև 1945 թ. սեպտեմբերի 2-ը:

2. Անդրադառնալով երկրորդ աշխարհամարտին՝ ցույց տալ, որ 1941 թ. հունիսի 22-ին Գերմանիայի հարձակումով ԽՍՀՄ-ի վրա սկիզբ դրվեց Հայրենական մեծ պատերազմին, որը տևեց 1418 օր և ավարտվեց այն 1945 թ. մայիսի 9-ին:

Պատճառաբանել, որ այդ պատերազմը պատահականություն չէր, որ այն Գերմանիայի կողմից նախապատրաստվել էր վաղուց, որ այն

Անգլիայի և Ֆրանսիայի, այսպես կոչված, բացահայտ թաղտվության կամ խրախուսման քաղաքականության արդյունքն էր: Թեմայում հատուկ ուշադրություն դարձնել կայծակնային պատերազմի գերմանական այսպես կոչված «Բարբարոսա» պլանի բացահայտմանը՝ նշելով դրա սնանկությունը և դատապարտվածությունը:

Նշել նաև, որ այդ պատերազմը բացահայտ ուխտադրուժ էր Գերմանիայի կողմից: Անդրադառնալ պատերազմի սկզբնական շրջանում խորհրդային կողմի ռազմաքաղաքական անպատրաստվածության իրական պատճառներին, ցույց տալ Ստալինի, ինչպես նաև նրան շրջապատող ռազմաքաղաքական գործիչների սխալները, և չփորձել ողջ մեղքը միակողմանիորեն բարդել Ստալինի վրա կամ նրանով պայմանավորել: Անդրադառնալ այն ռազմաքաղաքական միջոցառումներին, որ ձեռնարկեցին խորհրդային կառավարությունը և պետությունը երկիրն այդ ծանր վիճակից դուրս բերելու, ԽՍՀՄ զինված ուժերում վերափոխումներ կատարելու ուղղությամբ և թշնամուն հակահարված տալու համար: Հատուկ նշել Խորհրդային Միության ժողովուրդների ընտանիքի համախմբվածության և կազմակերպվածության մասին, ցուց տալով, որ այն կարևոր դեր խաղաց թշնամուն կասեցնելու հարցում:

Այս ենթաթեմայում առանձնապես կարևորել խորհրդահայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին, նրա ներդրումը գերմանական ագրեսիան կանգնեցնելու և թշնամուն ջախջախելու գործում: Բացահայտել Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի ակտիվ մասնակցության, համաժողովրդական մղումների գլխավոր պատճառները: Հանգամանորեն լուսաբանել հայ ժողովրդի դերը այդ պատերազմում, հատուկ նշել այն փաստը, որ Խորհրդային Հայաստանից շուրջ 600 հազար մարդ մասնակցեց այդ ահեղ պատերազմին, որից կեսը ետ չվերադարձավ:

Ընդգծել այն, որ պատերազմի հենց առաջին օրերին Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության քաղաքներում ու գյուղերում տեղի ունեցան գերմանական ագրեսիան դատապարտող բազմահազարանոց միտինգներ, որոնք ուղեկցվեցին հազարավոր երիտասարդ մարդկանց զորակոչով ռազմաճակատ: Նշել, որ 1942 թվականից Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները անցան ռազմական արտադրանքի զանգվածային թողարկման՝ խորհրդային բանակին տալով շուրջ 300 տեսակի արտադրանք:

Բացահայտելով հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին՝ ընդգծել, որ հենց պատերազմի սկզբնական փուլում խորհրդային զինված ուժերի կազմում ձևավորվեցին հայկական վեց

ազգային դիվիզիաներ՝ 76-րդ հրաձգայինը, որը կազմավորված էր տակավին Հայաստանի խորհրդային առաջին տարիներից և 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ, 409-րդ դիվիզիաները: Առանձնապես աչքի ընկավ 89-րդ Թամանյան դիվիզիան, որը փառավոր մարտական ուղի անցավ Կովկասյան լեռներից մինչև Բեռլին, գերմանական ռայխստագի (պառլամենտի) շենքի սյուների մոտ առնական «քոչարի» պարը կատարեց, որը շատ խորհրդանշանական էր: Իր մարտական ճանապարհին Թամանյան 89-րդ դիվիզիան ազատագրեց ավելի քան 900 բնակավայր, մասնակցեց Նովոռոսիյսկի, Կերչի, Սևաստոպոլի համար մղված մարտերին:

Ընդգծել, որ պատերազմում իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան Հայաստանի աշխատավորները՝ պաշտպանության ֆոնդին մուծելով 216 միլիոն ռուբլի: Նշել, որ նրանց միջոցներով կառուցվեցին «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական» տանկային շարասյուները: Նշել, որ արտաշատցիների միջոցով պատրաստվեց «Խորհրդային Հայաստան» զրահագնացքը, սննդամթերքի և տաք հագուստի ավելի քան 200 հազար նվեր-ծանրոց ուղարկվեց Հայաստանից ռազմաճակատի մարտիկներին: Նշել նաև, որ ռազմաճակատը Հայաստանից միայն որպես նվեր ստացավ 45 վագոն պարենամթերք:

Կատարել ընդհանրացումներ՝ ցույց տալով, որ հայ ժողովուրդը թե՛ թիկունքում և թե՛ ռազմաճակատում իսկական հերոսականության օրինակներ ցույց տվեց երկրորդ աշխարհամարտի և Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Նշել հայերի ակտիվ մասնակցությունը պարտիզանական շարժմանը, որն իրականացվում էր թշնամու թիկունքում: Անդրադառնալ հայ պարտիզանների կոնկրետ մասնակցության փաստերին Ուկրաինայում և Բելոռուսիայում գործող պարտիզանական ջոկատներում: Նշել հատկապես **«Հաղթանակ» և Ա. Միկոյանի** անվան պարտիզանական ջոկատների մասին:

Ամփոփելով ենթաթեման՝ եզրակացնել, որ Հայաստանի զավակները պատերազմի տարիներին աչքի ընկան բոլոր ռազմաճակատներում՝ Կովկասյան և Կարպատյան լեռներում, Բրեստի ամրոցի պաշտպանության, Օդեսայի և Սևաստոպոլի ծովային ճակատամարտերում, Մոսկվայի մատույցներում, Լենինգրադի, Ստալինգրադի, Նովոռոսիյսկի մոտ, Կերչում, Օրյոլ-Կուրսկի աղեղում, Դնեպրի վրա մղած վիթխարի ճակատամարտում:

3. Կարևորել սփյուռքահայության մասնակցության հարցերը երկրորդ համաշխարհային պատերազմին: Առանձնապես նշել, որ հակահիտլերյան խմբավորման երկրների զորքերի և պարտիզանական առան-

ձին խմբերի շարքերում կռվել են մոտ 100 հազար սփյուռքահայեր, որոնցից միայն 20 հազարը՝ ԱՄՆ-ի զինված ուժերի կազմում: Նշել հազարավոր հայերի ակտիվ մասնակցությունը Ֆրանսիայում ծավալված դիմադրական շարժմանը և «Ազատ հրաձիգներ» ընդհատակյա մարտական խմբերի գործունեությանը: Մասնավորապես նշել **Միսակ Մանուշյանի** անունը, որը դարձավ ազատ Ֆրանսիայի փառքն ու պատիվը: Ցույց տալ հայ պարտիզանների ակտիվ մասնակցությունը Բալկաններում՝ Բուլղարիայում, Հունգարիայում և այլուր ծավալված դիմադրական շարժմանը, տալ անուններ (Հերմինե Ռազկրատյան, Մկրտիչ Դաշտոյան, Գևորգ Քոլոզյան և շատ ուրիշներ):

Բացահայտելով հարցը՝ պարզաբանել, որ Սփյուռքի մասնակցությունը դրսևորվում էր նաև նյութական-դրամական օգնության կազմակերպման ձևով, որ Սփյուռքում հանգանակություն կազմակերպելու միջոցով ստեղծվեցին և խորհրդային ռազմաճակատ ուղարկվեցին «Սասունցի Դավիթ» երկու տանկային շարասյուները, իրանահայերը միջոցներ հավաքեցին «Զորավար Բաղրամյան» տանկային շարասյան համար և այլն: Նշել, որ այդ երկու հանգանակություններին էլ ակտիվ մասնակցություն է ունեցել հայ եկեղեցին, որ իր նյութական միջոցներից զգալի ներդրումներ է կատարել:

Պարզաբանելով այս թեման՝ հատուկ նշել նաև այն մասին, որ սփյուռքահայության մասնակցությունը պատերազմում միանշանակ չի եղել, որ սփյուռքահայության մի մասը ՀՀ Դաշնակցության ղեկավար գործիչների գլխավորությամբ, աշխատեցին լոյալ վերաբերմունք ցուցաբերել Գերմանիայի նկատմամբ, որպեսզի որոշ չափով ապահովագրեն խորհրդային ռազմագերիների շարքերում գտնվող հայերի անվտանգությունը: Նշել 1942 թ. Բեռլինում հիմնված «Հայ ազգային խորհրդի» կազմում ընդգրկվածների մասին (**Գ. Նժդեհ, Դրո** և ուրիշներ): Առանձնահատուկ նշել 1942 թ. ստեղծված Հայկական լեգեոնի մասին, որի հրամանատարը դարձավ Դրոն: Ներկայացնել այդ լեգեոնի անցած ուղին, նրա հետագա ճակատագիրը:

Բացահայտել հայերի՝ գերմանական զորքերի կազմում ԽՍՀՄ-ի դեմ պատերազմին մասնակցության իրական դրդապատճառները և հետևանքները: Ամփոփելով պարզաբանել, որ այնուամենայնիվ հայերի այդ շրջանների քաղաքական ուժերի ձգտումները հիտլերականների օգնությամբ ազատագրվելու խորհրդային վարչակարգից, անհիմն էին ու պատմության կողմից վաղուց դատապարտված:

4. Առանձնահատուկ նշել հայ ժողովրդի ավանդի մասին երկրորդ համաշխարհային պատերազմում: Ցույց տալ, որ հայ ժողովուրդն իր

ծանրակշիռ ավանդն ունեցավ համամարդկային արժեքների պահպանման ու խաղաղության համար ողջ առաջադեմ մարդկության մղած պայքարում: Նշել, որ պատերազմն ավարտվեց հակաֆաշիստական խմբավորման (ԽՍՀՄ, Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ և այլն) վճռական հաղթանակով: Նշել, որ 104 հայ ռազմիկներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, որոնց թվում՝ **Նելսոն Ստեփանյանը և Հովհաննես Բաղրամյանը**՝ կրկնակի, 27-ը դարձան փառքի երեք աստիճանների ասպետներ, մոտ 70 հազար մարտիկներ և հրամանատարներ պարգևատրվեցին շքանշաններով և մեդալներով:

Նշել, որ Մեծ հայրենականի պատմության մեջ անմոռաց էջ է գրել հայ տաղանդավոր զորահրամանատարների մի ստվար փաղանգ: Ցույց տալ, որ հրամանատարական բարձր պաստեր են զբաղեցրել ավելի քան 60 հայ զորավարներ, այդ թվում՝ **մարշալներ Հովհաննես Բաղրամյանը, Արմենակ Խանփերյանցը (Խուդյակով), Համազասպ Բաբաջանյանը, ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը** և ուրիշներ:

Ամփոփելով, ցույց տալ, որ Մեծ հայրենականում հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը փրկվեց թուրքական հարձակման վտանգից, որ դրանով ձախողվեց Թուրքիայի համաթուրքական «Մեծ Թուրան» ստեղծելու ծրագիրը: Բացի այդ, ցույց տալ, թե ինչպիսի կործանարար հետևանք կունենար հայ ժողովրդի համար թուրքական հարձակումը: Ամփոփելով տալ իրատեսական գնահատականներ, անել եզրահանգումներ:

ԹԵՄԱ 9. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1945-1990 ԹԹ. ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒԶՈՒՄԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1. *Հայկական հողերի հարցը և մեծ հայրենադարձությունը*
2. *Հասարակական-քաղաքական կյանքը հետպատերազմյան տասնամյակներին: 1960-ական թթ. ազգային ինքնագիտակցության նոր զարթոնքը*
3. *Լճացման ու ճգնաժամային երևույթների խորացումը երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում*
4. *«Վերակառուցման» հռչակումը և նրա հետևանքները*
5. *Արցախյան շարժման սկզբնավորումը*
6. *1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը*
7. *ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի անկախության հռչակումը: Պետական իշխանության նոր մարմինների ձևավորումը: ՀՀ միջազգային ճանաչումը*
8. *Խորհրդային տնտեսական և քաղաքական համակարգի քանդումը և դրա հետևանքները*
9. *Արցախյան համաժողովրդական ազատագրական շարժման հետագա ծավալումը: ԼՂՀ անկախության հռչակումը*
10. *ՀՀ բարեփոխումների իրականացման և ժողովրդավարության հաստատման դժվարությունները*
11. *Երկրորդ հանրապետության քաղաքական համակարգը*

1. Նշել, որ երկրորդ աշխարհամարտի ավարտը նշանավորվեց միջազգային-քաղաքական իրադրության մեջ կայացած արմատական հեղաբեկումներով: Ցույց տալ, որ նոր իրադրությունը հուսադրեց նաև Հայկական հարցի լուծման տեսանկյունից, այն վերաբացելով հետպատերազմյան տարիներին, օգտագործելով նաև այն կարևոր հանգամանքը, որ 1945 թ. սկզբներից սփյուռքահայության մեջ լայնածավալ շարժում սկսվեց հայկական հողերի վերադարձման համար: Նշել, որ այդ նպատակով զանազան ազգային մարմիններ ու անհատներ դիմեցին մեծ տերությունների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) ղեկավարների Պոտսդամի վեհաժողովին, նրանց արտաքին գործերի նախարարների խորհրդակցություններին՝ Լոնդոնում (1945 թ. սեպտեմբեր), Մոսկվայում (1945 թ. դեկտեմբեր) ու Փարիզում (1946 թ. ապրիլ): Բացատրել, թե ինչու ստեղծվեց սփյուռքահայ ուժերի կողմից Ազգային խորհուրդը և ինչ գործունեությամբ զբաղվեց:

Մասնավորապես անդրադառնալ Էջմիածնի կաթողիկոսության ջանքերին Հայկական հարցի բնագավառում, նշել նրա 1945 թ. հունիսի դիմումի մասին՝ խորհրդային կառավարությանը: Հանգամանորեն բացատրել, թե ինչու, ինչ դրդապատճառներից ելնելով, խորհրդային ղեկավարությունը Ի.Ստալինի գլխավորությամբ մեծ տերությունների քննարկմանը և դատին ներկայացրեց հայ ժողովրդի արդարացի պահանջը՝ հայկական մի շարք տարածքներ ետ վերադարձնելու մասին: Բացատրել խորհրդային ղեկավարների վարքագծի իրական պատճառները: Ցույց տալ, որ դրանով խորհրդային կառավարությունը Ի.Ստալինի գլխավորությամբ նպատակ ուներ առաջին հերթին պատժել Թուրքիային պատերազմի տարիներին հակախորհրդային թշնամական գիծ վարելու համար /***հարկ է նշել 1945 թ. հուլիսյան օրերին ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Մոլոտովի հայտարարության մասին, ըստ որի 1921 թ. թուրքական կողմն օգտվեց խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը, և հայերն իրենց վիրավորված են զգում: Այդ իսկ պատճառով էլ խորհրդային կառավարությունը պահանջում էր օրինականորեն իրեն պատկանող տարածքների վերադարձը***/, և երկրորդ՝ Թուրքիայից վերցնելիք հողերի մի մասը՝ այն է Կարսի մարզի մի մասը՝ Խորհրդային Հայաստանին, իսկ մյուս մասը Վրաստանին վերադարձնելու վերաբերյալ: Իրականում Խորհրդային Միության պահանջատիրության հիմքում ընկած էին ռուսաստանյան կայսրությանը հատուկ և դարերով արմատավորված մեծապետական զավթողականությունը:

Նշել, որ այդ առումով միանգամայն պատահական չէր, որ Պոտսդամի վեհաժողովին Ստալինի խորհրդատուների մեջ էր նաև վրաց պատմաբան, ակադեմիկոս Ջանաշիան:

Նշել, որ 1945 թ. մայիսի 19-ին խորհրդային կառավարությունը շեղյալ հայտարարեց 1925 թ. կնքված խորհրդաթուրքական պայմանագիրը՝ բարեկամության և չեզոքության մասին, որ չէր համապատասխանում նոր ստեղծված իրադրությանը: Ցույց տալ փոփոխված աշխարհաքաղաքական իրադրությունում ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի քաղաքական դիրքորոշումը խորհրդա-թուրքական հարաբերությունների նկատմամբ: Անդրադառնալ Պոտսդամի կոնֆերանսում (1945 թ. հուլիսի 17 - օգոստոսի 2) քննարկված հարցերի, խորհրդային կողմի դիրքորոշմանը Թուրքիայի հետ նոր բարեկամության և չեզոքության մասին պայմանագիր չկնքելու մասին, դրա նկատմամբ ԱՄՆ-ի և Անգլիայի վերաբերմունքին: Ցույց տալ, որ կոնֆերանսում Հայկական հացի քննարկումները և լուծման հնարավորությունները ձախողվեցին անգլո-ամերիկյան զինակցության հետևանքով:

Անդրադառնալ հայկական քաղաքական շրջանների հետագա ջանքերին՝ հայկական հողերի վերադարձման պահանջատիրության հար-

ցում: Մասնավորապես հանգամանալից անդրադառնալ ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Հարությունյանի ելույթին՝ աշխատավորության հավաքում 1946 թ. փետրվարի 1-ին, ուր վերջինս հայտարարություն արեց այն մասին, որ Խորհրդային Հայաստանը պատրաստ է ընդունել հազարավոր սփյուռքահայերի, որ նրանց տեղավորման համար կա անհրաժեշտ պահանջվող տարածքը: Իր հայտարարության մեջ Գ.Հարությունյանը նաև հատուկ ընդգծում է այն մասին, որ քանզի Խորհրդային Հայաստանում բավարար ազատ տարածքներ չկան, ուստի դրանից ելնելով իրենց կողմից բարձրացվում է Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերը օրինական տիրոջը վերադարձնելու հարցը:

Ենթաթեմայում նշել նաև 1947 թ. ապրիլի 30-ին Նյու-Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսի մասին, որը Հայկական հարցի լուծման իրական հույսեր էր ներշնչում՝ դիմելով ՄԱԿ-ին և խոշոր տերություններին: Նշել, որ Հայկական համաշխարհային կոնգրեսի կողմից ընդունված դիմումում պահանջվում էր Խորհրդային Հայաստանի սահմանի մեջ ներառել արևմտահայ հողերը՝ դեռևս ԱՄՆ-ի Վ.Վիլսոնի կողմից կանխանշած հայ-թուրքական սահմանագծով:

Ցույց տալ, թե ինչու հետպատերազմյան այդ տարիներին հնարավոր չեղավ Հայկական հարցի վերջնական լուծումներ գտնել, բացահայտել դրա ձախողման պատճառահետևանքային կապերը: Ներկայացնել այդ իրադրությունում իրականացված հայրենադարձության արմատները և հետևանքները: Նշել, որ հայրենադարձությունը սկսվել է դեռևս 20-30-ական թվականներին, երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո. այն ուժեղացավ՝ կապված 1945 թ. նոյեմբերին ԽՍՀՄ կառավարության պահանջի հետ՝ Թուրքիայից ետ վերցնելու հայկական հողերը՝ դրանցում ներգաղթած հայերին վերաբնակեցնելու նպատակով:

Նշել, որ մեծ հայրենադարձությունը սկսվեց 1946 թ. հուլիսին, և երեք տարվա ընթացքում Սիրիայից, Իրաքից, Իրանից, Լիբանանից, Պաղեստինից, Հունաստանից, Եգիպտոսից, Ֆրանսիայից, Ամերիկայից և այլ երկրներից Խորհրդային Հայաստան ներգաղթեցին մոտ 100 հազար հայեր, որոնց համար ստեղծվեցին կյանքի կազմակերպման որոշակի պայմաններ, իրականացվեց լայն բնակարանային շինարարություն և տրվեց վարկ:

Ամփոփելով նշել, որ դրսի և ներսի օգնությամբ հայրենադարձությունը իրականացնելով հանդերձ, Թուրքիայից պահանջվելիք հայկական հողերի խնդիրը չլուծվեց:

Պարզաբանել, որ հետպատերազմյան փուլում միջազգային լարվածության կտրուկ մեծացումը, «սառը պատերազմի» առաջացումը,

խորհրդա-ամերիկյան ռազմաքաղաքական հակամարտության ուժեղացումը, միջուկային սպառնալիքը և այլ անբարենպաստ հանգամանքներ խափանեցին Հայկական հարցի լուծումը: Նշել 1947 թ. մայիսին ԱՄՆ-ի պրեզիդենտ Հ.Տրումենի արած ոչ հայանպաստ հայտարարության մասին, որով պաշտպանության տակ էր առնվում Թուրքիան, և պաշտպանվում էր նրա տարածքային ամբողջականությունը «Խորհրդային Միության» վտանգից, ինչը սակայն չի կարելի պարզունակորեն բացատրել կոմունիզմի և ԽՍՀՄ վտանգից պաշտպանվելու ամերիկյան ցանկությամբ, այլ ավելի խորքային գործոններով և պատճառներով, որոնց հիմքում ընկած էին համայն աշխարհում գերտերության վիճակ ապահովելու ԱՄՆ-ի մեծապետական աշխարհաքաղաքական շահերով:

Ամփոփելով՝ մատնանշել այն պատճառները, որոնցից ելնելով՝ կարելի է հասկանալ Խորհրդային Միության վերջնական հրաժարումը Հայկական հարցից և Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից: Ցույց տալ, որ ստեղծված իրավիճակում, բնականաբար ներգաղթած հայությունը հարկադրված էր դարձյալ ներպարփակվել Խորհրդային Հայաստանի սահմաններում: Նշել նաև այն զրկանքների և դժվարությունների մասին, որ ենթարկվեցին հայրենադարձները Խորհրդային Հայաստանում:

2. Անդրադառնալով այս հարցին՝ ներկայացնել հետպատերազմյան Խորհրդային Հայաստանի դժվարությունները, կուսակցական կազմակերպությունների և կառավարության ջանքերը պատերազմի վերքերը բուժելու, ժողովրդական տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ ցույց տալ հասարակական քաղաքական կյանքում տեղ գտած բացասական երևույթները և քաղաքական-կուսակցական բռնությունները, գաղափարախոսական հաշվեհարդարները մտավորականության նկատմամբ հետպատերազմյան առաջին տասնամյակում: Անդրադառնալ կուսակցության քաղաքականությանը գիտության նկատմամբ, հանգամանալից ցույց տալ 1947-1951 թթ. փիլիսոփայության, պատմագիտության,կենսաբանության, ֆիզիոլոգիայի, լեզվաբանության, քաղաքատնտեսության և այլ բնագավառների հարցերի շուրջ ծավալված անառողջ, կուսակցական վերնախավի կողմից հրահրված բանավեճերի նպատակամղումը: Անդրադառնալ քաղաքական այլախոհների նկատմամբ կիրառված բռնությունների ու քաղաքական-կուսակցական անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը: Մասնավորապես հատուկ ուշադրություն դարձնել այն հարցերի բացահայտմանը, որոնք կապված են ՀԿԿ Կենտկոմի 1949 թ. հունիսի 11-ի գաղտնի խորհրդակցության հետ, որտեղ որոշվեց հանրապետության քաղաքական տեսանկյու-

նից անբարեհույս տարրերին աքսորել Սիբիր՝ Ալթայի երկրամաս: Նշել, որ այդ գծով դատապարտվածների թիվն անցել է 12 հազարից, որոնցից մի մասն էլ հայրենադարձներ էին: Ընդգծել, որ միայն **Ի.Ստալինի** մահից հետո 1953 թ. բռնադատվածները իրավունք ստացան վերադառնալ հայրենիք: Նշել, որ Ստալինի մահով ավարտվեց մարդկային և ազգային արժանապատվության ոտնահարման, զանգվածային բռնությունների ու գնդակահարությունների, հասարակական բարոյական այլասերման մի ժամանակաշրջան: Նշել, որ իշխանության գլուխ անցավ **Նիկիտա Խրուշչովը**, որով ամբողջ երկրի, այդ թվում նաև Խորհրդային Հայաստանի կյանքում 50-ական թվականների կեսերից էական կազմակերպական-քաղաքական բնույթի քայլեր արվեցին օրինականության, իրավակարգի քիչ թե շատ առողջացման ու ամրապնդման ուղղությամբ:

Ցույց տալ ԽՄԿԿ 20-րդ համագումարի, նրա կողմից անհատի պաշտամունքի դատապարտման մասին որոշման կարևոր պատմաքաղաքական դերը երկրի և հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի որոշ ազատականացման ու առողջացման, հասարակական հարաբերությունների կազդուրման բնագավառում: Հատուկ անդրադառնալ 1956 թ. հունիսի 30-ին ԽՄԿԿ Կենտկոմի կողմից ընդունված «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին» որոշմանը, տալ նրա պատմաքաղաքական գնահատականը: Նշել նաև այն մասին, որ դրանով իսկ արդարացվեցին տասնյակ հազարավոր անմեղ մարդիկ, որոնք հանիրավի դատապարտվել էին ստալինյան կամայական վարչահրամայական մեքենայի կողմից: Նշել կուսակցական մարմինների կողմից ձեռնարկված այն կոնկրետ կազմակերպական-քաղաքական միջոցառումները, որոնք ձեռնարկվեցին տնտեսական-մշակութային կյանքում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ:

Այսպես կոչված «խրուշչովյան հալոցքի» ժամանակաշրջանը բնութագրել որպես կարևոր փուլ ԽՍՀՄ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի կյանքում:

Ցույց տալ, որ հասարակական-քաղաքական կյանքի տարբեր կողմերի վերափոխման հետ միաժամանակ լուրջ քայլեր արվեցին տնտեսական քաղաքականության մեջ, կատարելագործվեցին տնտեսության, և առաջին հերթին՝ արդյունաբերության կառավարման մեթոդները, նշել այդ նպատակով կազմակերպված ժողտնտխորհների մասին:

Միևնույն ժամանակ նշել այն բացթողումները ու սայթաքումները, վոլյունտարիզմի դրսևորման երևույթները, որոնք տեղ գտան հասարակական-քաղաքական և մասնավորապես տնտեսական ոլորտներում, հատկապես գյուղատնտեսության բնագավառում «Խրուշչովյան հալոցքի»

ժամանակաշրջանում և որից օգտվեցին իշխանության դեկում 1964 թ. հոկտեմբերին Խրուշչովին փոխարինած Լ.Ի. Բրեժնևի պահպանողական կառավարությունն ու կուսակցական ընտրախավի ներկայացուցիչները և գրավեցին կարևորագույն վարչաքաղաքական պաշտոնները՝ ձևավորելով նոր խորհրդային կաբինետ:

Ցույց տալ, որ որոշ հիրավի առաջադիմական քայլերի հետ միասին այդ ժամանակաշրջանում իրականացվեցին գործողություններ՝ 50-ական թթ. կեսերին սկսված առանձին դրական ձեռարկումների և քաղաքական-տնտեսական գործընթացների կանխման և կասեցման ուղղությամբ:

Նշել, որ 1965 թ. Բրեժնևյան վարչակարգը վերականգնեց արդյունաբերության կառավարման կենտրոնացված համակարգը, որից համարյա հրաժարվել էին Ն. Խրուշչովի ժամանակ, լուծարվեցին ժողտնտխորհները և վերականգնվեցին ճյուղային նախարարությունները:

Անդրադառնալ արդեն 60-ական թթ. տնտեսության մեջ կուտակվող բացասական, արգելակող երևույթների վերհանմանը, ցույց տալ երկրի աճի տեմպերի դանդաղումը կասեցնելու, մարդկանց ու կոլեկտիվների աշխատանքային-հասարակական ակտիվությունը բարձրացնելու նպատակադրումով ձեռնարկված բարեփոխումների նոր փորձերի ուղղվածությունը, տալ դրանց ձախողման քաղաքական պատճառները, գնահատել 1960-ական թվականների կեսերի այդ գործընթացները: Խորհրդային Հայաստանի օրինակով պարզաբանել հարցը, տալով ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումների ողջ նկարագիրը:

Բացի այդ, պետք է նշել նաև, որ այդ ամենի կողքին, սկսած հենց 1960-ական թվականներից, Խորհրդային Հայաստանում նկատվեցին ազգային զարթոնքի որոշ նախադրյալներ, որոնք զգալի չափով կապված են ժամանակաշրջանի ազատականացման ու մասնավորապես ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար **Յակով Զարոբյանի** գործունեության հետ (1960-1966 թթ.): Հատուկ նշել այն մասին, որ նրա անմիջական նախաձեռնությամբ Երևանում սկսվեցին 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան կոթողի կառուցման աշխատանքները, ինչը չէր խրախուսվում կենտրոնական իշխանությունների կողմից, և ինչը պատմաքաղաքական մեծ նշանակություն ունեցող իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում:

Հատուկ նշել, որ 1960-ական թթ. սկսված ազգային զարթոնքին մեծապես նպաստեցին արձակագիր-հրապարակախոս Հրաչյա Քոչարի, բանաստեղծներ՝ **Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի, Սիլվա Կապուտիկյանի, պատմաբան Ջոն Կիրակոսյանի, լրագրող Զորի Բա-**

լայանի և ուրիշների ստեղծագործությունները, աշխատությունները ու հասարակական-քաղաքական գործունեությունը:

Հատուկ անդրադառնալ 1965 թ. ապրիլյան իրադարձություններին, որպես ազգային ոգու հուժկու պոռթկման արտահայտություն և հոգևոր-քաղաքական ինքնագիտակցության դրսևորման երևույթ: Նշել մեծ եղեռնի 50-ամյա տարեդարձի կապակցությամբ ապրիլի 24-ին Երևանում սկսված համազգային ցույցի մասին, որը աննախադեպ երևույթ էր խորհրդային երկրի պատմության մեջ:

Որպես ազգային զարթոնքի արտահայտություն նշել 1968 թ. Երևանի 2750-ամյակի տոնակատարությունը, ինչպես նաև տարբեր կարևոր հոբելյանների անցկացումը (Թումանյանի, Կոմիտասի և ուրիշների): Կարևոր նշանակություն տալ նաև ազգային զարթոնքի բովում առաջացած ազգային-քաղաքական կազմակերպությունների (Ազգային միացյալ կուսակցություն և այն) գործունեությանը:

Ամփոփելով, ցույց տալ, որ 1960-ական թվականները հայ ժողովրդի կյանքում եղել են հասարակական-քաղաքական և ազգային վերելքի տարիներ, որ այդ բովով են անցել ներկա սերնդի բազմաթիվ ներկայացուցիչներ, որ հայրենասիրական ոգով է դաստիարակվել հայ մարդկանց մի ամբողջ սերունդ: Ցույց տալ, որ 1960-ական թվականների ազգային զարթոնքը խոր հետքեր է թողել հասարակական-քաղաքական գիտակցության մեջ, դարձել երիտասարդության՝ հայրենասիրական ոգով դաստիարակության կարևոր միջոց և խթան: Եզրահանգումներ անել՝ բացահայտելով հարցի կարևորությունը այսօրվա հիմնահարցերի լուծման տեսանկյունից:

3. Բացահայտել 70-ական թվականներից սկսված լճացման ու ճգնաժամային երևույթների խորացման պատճառները Խորհրդային Միության ու Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքում: Նշել, որ լճացման երևույթները, բացասական գործընթացները ակնհայտորեն դրսևորվում էին կյանքի բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, սոցիալական, մտավոր-մշակութային: Անդրադառնալ 1970-1980-ական թվականներին հասարակական-քաղաքական կյանքում մեծ տարածում գտած հովանավորչության, կաշառակերության, կոռուպցիայի երևույթներին, նշել, որ ձևավորված ստվերային էկոնոմիկան, ղեկավար աշխատողների բարոյական-քաղաքական և հոգևոր անկումը և այլ բացասական երևույթներ էլ ավելի սրեցին սոցիալ-տնտեսական, բարոյական ճգնաժամը, խորացրին լճացման երևույթները:

Կարևոր եզրահանգում անել այն մասին, որ 1970-ական թվականներին սկսված և 1980-ական խորացած ճգնաժամային իրավիճակը

ակնհայտ դարձրեց, որ շուրջ 70 տարի երկիրը միահեծան ավտորիտար եղանակներով և մեթոդներով կառավարող կուսակցական-պետական վարչաբյուրոկրատական վերասերված համակարգը արդեն իրեն լիովին սպառել է, և կարիք է զգացվում տնտեսաքաղաքական և հոգևոր-բարոյական արմատական բարեփոխումների: Պարզաբանել, որ վարչահրամայական համակարգի վրա հիմնված այսպես կոչված սոցիալիստական ուղղվածության հասարակարգը այլևս բավարար չափով կենսունակ չէր, որ այն, վերջ ի վերջո, դատապարտված էր կործանման: Ցույց տալ, որ միակուսակցականությունը դարձել էր չարիք, որ նրանով էր չափվում ամեն ինչ, իսկ հետևանքներն աղետալի էին: Նշել գաղափարական-քաղաքական և կուսակցական թելադրանքով տեղի ունեցող հաշվեհարդարների, առանձին մարդկանց, գիտնականների ու հասարակական գործիչների նկատմամբ կիրառված բռնությունների մասին, բերել կոնկրետ օրինակներ նրանց գործունեությունից:

Ամփոփելով, ցույց տալ այդ հասարակարգի դատապարտվածության և բացասական երևույթները ու ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու վճռական անհրաժեշտությունը, հասարակական գիտակցության մեջ կատարված հեղաբեկումները: Խորհրդային Հայաստանի օրինակով ցույց տալ վարչահրամայական համակարգի տիրապետության բացասական հետևանքները՝ հանրապետության բնակչության սոցիալական ապահովվածության, ազգային նկարագրի ձևավորման և, առհասարակ, հասարակական-քաղաքական կյանքի ողջ համալիր գործընթացների զարգացման վրա: Կատարել անհրաժեշտ եզրահանգումներ, բերել բնութագրիչ և իրական պատմափաստեր՝ ցույց տալով լճացման ժամանակաշրջանից դեպի նոր ժամանակաշրջան վճռական անցման անհրաժեշտությունը:

4. Անդրադառնալ 1985 թ. մարտին ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության կազմում կատարված փոփոխություններին, որով ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար դարձավ Մ. Գորբաչովը, որի անվան հետ էլ պետք է կապել վերակառուցման քաղաքականության թե՛ սկիզբը և թե՛ հետագա գործընթացները: Նշել այն մասին, որ քաղաքական նոր ղեկավարությունը, գիտակցելով երկրում տիրող ճգնաժամային իրավիճակը, ձեռնամուխ եղավ բարեփոխումների՝ նպատակ հետապնդելով վերակառուցել խորհրդային կայսրությունը: Հատուկ նշել 1985 թ. ապրիլին հռչակված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման և խորհրդային հասարակության, այսպես կոչված, արմատական վերակառուցման ուղեգիծը: Նշել նաև այն, որ «վերևից» հռչակված այդ վերակառուցումը փաստորեն առկա քաղաքական համակարգի գեղահարդարման,

նրան ավելի նորացված բնույթ տալու մի փորձ էր, վերահսկողությամբ իրականացվելիք բարեփոխումների մի ծրագիր, գուցե և կոսմետիկ մոդեռնիզացիայի ու սովետական պետաքաղաքական և տնտեսական մեքենայի վերանորոգման նախօրոք պլանավորված «փլուզում», քաղաքական ռազմավարություն, որը սակայն մնաց սոսկ դեկլարատիվ հայտարարություն և բնավ չկենսագործվեց: Նշել վերակառուցման ծրագրի և քաղաքականության ձախողման պատմաքաղաքական պատճառները, ցույց տալ, որ գորբաչովյան վերակառուցումը ի սկզբանե դատապարտված էր ձախողման այն պարզ, հասկանալի պատճառով, որ փորձում էր վերևից երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացումը և վերակառուցումը իրագործել՝ պահպանելով նախկին իրեն սպառած տնտեսական և քաղաքական կարգերը, հին մոդելի պետաքաղաքական կառույցները, որոնք իրենց գործառույթները իներցիայով կառուցում էին հին մտածելակերպի և աշխատանքի կազմակերպման իրենց սպառած ոճի, մտածելակերպի և մեթոդների վրա: Նշել, որ նմանատիպ պատճառներով ձախողվեցին նաև տնտեսական (1987 թ.) և քաղաքական (1988 թ.) բարեկորոգումների ծրագրերը:

Նշել վերակառուցման առավել բացասական հետևանքները Խորհրդային Հայաստանի համար: Պարզաբանել, որ պատճառն այն էր, որ Հայաստանի Խորհրդային Հանրապետության կուսակցական-պետական ղեկավարությունը դրսևորեց ավելի մեծ պահպանողականություն կյանքի բոլոր ոլորտների նորացման հանդեպ: Նշել, որ վերևից թելադրված «վերակառուցումը» Խորհրդային Հայաստանում պարզապես տեղապտույտ տվեց, հանդիպեց կուսակցական-պետական բյուրոկրատիայի խուլ դիմադրությանը, որն անընկալունակ գտնվեց դարակազմիկ գործընթացների խորքային զարգացումների իմաստն ու հնարավորինս կանխատեսելի հեռանկարներն զգալու տեսանկյունից:

Ցույց տալ, որ 1980-ական թթ. կեսերից Խորհրդային Հայաստանում լճացման և ստվերային երևույթները ավելի խոր դրսևորվեցին, որոնց շուտով գումարվեցին մի շարք նոր և ավելի խորքային բացասական շերտանստվածքներ և ներքուստ առկա բացասական երևույթներ՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, Սպիտակի երկրաշարժի (1988 թ. դեկտեմբեր) ծանր հետևանքները, տնտեսաքաղաքական շրջափակումը, բազմահազար բռնագաղթվածների և փախստականների առկայությունը, էկոլոգիական իրավիճակը, ԱԷԿ-ի փակումը և այլն:

Որպես օրինակ նշել, որ Խորհրդային Հայաստանում աշխատանքի արտադրողականության աճի միջին տեմպերը 1986-1987 թթ., 1984-1985 թթ. համեմատությամբ ընկան ավելի քան երկու անգամ:

Ամփոփելով նշել, որ չնայած գորբաչովյան վերակառուցման տարիներին տեղի ունեցավ հասարակության քաղաքական կյանքի զարթոնք (ցույցեր, հանրահավաքներ, գործադուլներ և անգամ՝ զինված ընդհարումներ, հասարակարգը աստիճանաբար անցում կատարեց միակուսակցականից բազմակուսակցական համակարգին), այնուամենայնիվ, դրանց զուգընթաց աստիճանաբար էլ ավելի խորացան նաև փլուզման երևույթները:

Նշել, որ առաջինը փլուզվեց հետպատերազմյան տարիներին Խորհրդային Միության ռազմաքաղաքական և գաղափարական էքսպանսիայի հետևանքով ստեղծված սոցիալիզմի լագերը, իսկ 1991 թ. դեկտեմբերին, նախկին Խորհրդային Միության փլատակների վրա 11 ինքնիշխան հանրապետությունների, այդ թվում՝ նորանկախ Հայաստանի Հանրապետության (Հայաստանի Երրորդ հանրապետությունը ինքնին անկախ է հռչակվել 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեով) ստորագրած համաձայնագրով, հիմնվեց Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ):

Եզրահանգում կատարել այն մասին, որ դրանով իսկ անգամ, պատմության արխիվանոցը գնացած /դա ակնհայտ դարձավ Բելովեժյան պատմական հայտարարությունից հետո/ պետության ղեկավար Մ.Գորբաչովը ստիպված էր ինքնաբացարկ տալ, որով վերջ տրվեց ԽՍՀՄ-ին և թվացյալ վերակառուցմանը:

5. Հարցի հենց սկզբնամասում ընդգծել, որ վերակառուցման քաղաքականության անխուսափելի հետևանքներից մեկը եղավ ազգային քաղաքական և հոգևոր-մշակութային ինքնագիտակցության նոր հզոր վերելքը և Արցախյան պատմական շարժման ծավալումը: Հատուկ կրկին նշել այն մասին, որ դեռ 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անօրինական որոշմամբ Լեռնային Ղարաբաղը միացվել էր Ադրբեջանին: Նշել, որ դրան հաջորդել էր 1923 թ. վարչական բաժանումը, որով ստեղծվել էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ (ԼՂԻՄ) և տեղի 94 տոկոս կազմող հայ ազգաբնակչությունը շուրջ 70 տարի, փաստորեն, ընկել էր Բաքվի տիրապետության տակ: Բացատրել, որ արցախահայությունը այդ տարիներին լուռումունջ չի կրել այդ լուծը, այլ երբեմն-երբեմն բողոքել է, ընդվզել անարդարությունների դեմ՝ պահանջելով իր ինքնիշխան վիճակի վերականգնում, որ դրանով իր ժամանակին զբաղվել են հանրահայտ մտավորականներ և կուսակցական-քաղաքական գործիչներ: Նշել, որ արցախցիները պարզապես օգտվեցին վերակառուցման ընձեռած քաղաքական հնարավորություններից և ընդվզեցին Ադրբեջանի իշխանությունների դեմ՝ պահանջելով նրա կազ-

մից Ղարաբաղի դուրս բերում և ինքնորոշման իրավունքի կենսագործում՝ վերջնական նպատակադրում ունենալով վերամիավորվել մայր հայրենիքի հետ: Հատուկ ընդգծել 1988 թ. փետրվարի 20-ի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատգամավորական խորհրդի նստաշրջանի որոշման մասին, որով ԼՂԻՄ-ը դուրս էր բերվում Ադրբեջանի կազմից և վերամիավորվում Հայաստանի Հանրապետության հետ:

Նշել ցույցերի, դասադուլների, գործադուլների և համաժողովրդական պոռթկման այլ երևույթների մասին, այն կարգախոսների մասին, որոնք արտահայտվում էին համաժողովրդական ընդվզման այդ պոռթկուն օրերին:

Անդրադառնալով ադրբեջանական իշխանությունների ոճրագործություններին և, մասնավորապես 1988 թ. փետրվարի վերջի սումգայիթյան եղեռնագործությանը, վերհանել դրանց պատճառները, հետևանքները: Անդրադառնալ Գանձակի, Բաքվի, Շամխորի, Գետաշենի, Խանլարի և այլ վայրերի հազարավոր հայերի արտաքսմանը՝ միաժամանակ վերհանելով դրանց իրական շարժառիթները: Ցույց տալ, որ բռնագաղթը առանձնապես ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար, նշելով, որ դրանով իսկ հազարավոր հայեր բռնագաղթվեցին իրենց պապերի հարազատ բնակության վայրերից, ինչը ցեղասպանություն էր հայերի նկատմամբ և ինչին պետք է տալ իրավական-քաղաքական գնահատական:

Այնուհետև անդրադառնալ համաժողովրդական արցախյան շարժումը ղեկավարելու նպատակով ստեղծված «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի» կամ «Ղարաբաղյան կոմիտեի» մասին՝ նշելով նրա ղեկավարներին: Ցույց տալ կոմիտեի գործունեությունը, նրա հետամտած իշխանատենչական նպատակները, աթոռակռիվը, վերհանել բացթողումները և թույլ տված քաղաքական կոպիտ սխալները, որոնց հետևանքով Հայաստանի Հանրապետությունը կանգնեց քաղաքական ծանր խնդիրներիառաջ, ինչպես նաև ունեցավ անդառնալի կորուստներ Հայ-ադրբեջանական հակամարտությունում /հատկապես տարածքային և բռնագաղթվածների խնդրում/, տնտեսաքաղաքական ոլորտներում:

Նշել նաև ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների կողմից Ղարաբաղի հատուկ կառավարման կոմիտեի ստեղծման մասին՝ Ա.Վոլսկու գլխավորությամբ, տալ նրա գործունեության արդյունքների գնահատականը, ինչպես նաև վերհանել հայկական կողմի քաղաքական վրիպումները և բացթողումները այդ բնագավառում:

Հատուկ ուշադրություն դարձնել հայ-ադրբեջանական ռազմական դիմակայության հարցերին, նշել այն էական խորքային դրդապատճառները, որոնք հանգեցրին պատերազմի՝ 1991 թվականից սկսած: Նշել ռազմական գործողությունների, Հայաստանի Հանրապետության ղեկավարության դիրքորոշման ու գործունեության մասին: Հատուկ շեշտել և բացատրել, որ Ադրբեջանի կողմից դա զավթողական պատերազմ էր, որով որտանահարվում էին հայ ժողովրդի օրինական պատմաքաղաքական իրավունքները, և ընդհակառակը՝ հայկական կողմից այն կրում էր ազատագրական բնույթ, քանզի ԼՂԻՄ-ը արդարացիորեն ձգտում էր ինքնորոշվել և վերամիավորվել մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության հետ: Մանրամասն նշել հայրենիքը պաշտպանելու նպատակով ստեղծված ինքնապաշտպանության մարտական խմբերի մասին, տալ նրանց գործունեության գնահատականը, բերել կոնկրետ օրինակներ: Անդրադառնալ աշխարհազորային խմբերի ու ջոկատների գործունեությանը: Ամբողջական ձևով վեր հանել Երկրապահ կամավորական ջոկատների գործունեությունը, նշել անուններ՝ Ա.Տեր-Թադևոսյան, Վազգեն Սարգսյան, Սերժ Սարգսյան, Ալբերտ Բազեյան, Վահան Շիրխանյան, Մոնթե, Մ.Գորգիսյան, Թ.Կրպեյան, Շ.Մեղրյան, և շատ ուրիշներ, որոնցից ոմանք այսօր կառավարական ու այլ բարձր պաշտոններ են զբաղեցնում, ղեկավարում հանրապետության կյանքի այս կամ այն կարևոր բնագավառը: Հատուկ նշել 1992 թ. մայիսի 9-ին Շուշի քաղաքի ազատագրման մասին: Տալ հետագա իրադարձությունների ընդհանուր նկարագիրը:

Անդրադառնալ նաև այն դիվանագիտական-քաղաքական ջանքերին, որոնք ձեռնարկեց հայկական կողմը Արցախի հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ, նշել հայկական իշխանությունների դիմումների մասին ՄԱԿ-ին, Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդին (ԵԱՀԽ) և այլն: Ամփոփել, տալ այդ ուղղությամբ ձեռք բերված արդյունքների գնահատականը, նշելով, որ հայ-ադրբեջանական հակամարտության ողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը կարողացավ վարել հիմնականում հավասարակշիռ և կայուն քաղաքականություն:

6. Մանրամասն անդրադառնալ նաև 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմտյան շրջաններում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժին, նշել որ այն ընդգրկեց հանրապետության տարածքի 40 տոկոսը, մեկ միլիոն 130 հազար բնակչությամբ, որի հետևանքով ավերվեցին քաղաքներ և բազմաթիվ գյուղեր և ավաններ, Սպիտակի, Ստեփանավանի, Ախուրյանի, Գուգարքի, Արագածի, Տաշիրի շրջաններում: Տարերային աղետը խլեց շուրջ 25 հազար մարդկային կյանք, 530 հազարը մնաց անօթևան: Նշել, որ երկրաշարժի հետևանքով

դադարեցին գործել ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություններ, Հայաստանի Հանրապետության տնտեսությանը հասցվեց 13 մլրդ. ռուբլու վնաս:

Ցույց տալ ԽՍՀՄ ժողովուրդների և արտասահմանյան երկրների օգնությունը աղետի գոտին վերականգնելու և աղետյալներին օգնելու խնդրում: Փաստել, որ Խորհրդային Միությունում արդեն սկսված բազմաբարդ գործընթացները ձգձգեցին, իսկ այնուհետև ԽՍՀՄ փլուզումը գործնականում հետին պլան մղեցին վերականգման աշխատանքները:

Նշել Սփյուռքի օգնության մասին: Ցույց տալ սփյուռքահայերի կողմից ստեղծված «SOS Արմենի», «Ազնավուրը Հայաստանին» և այլ կազմակերպությունների գործունեությունը, ձեռք բերված արդյունքները: Ամփոփելով հարցը՝ տալ ընդհանուր գնահատականներ՝ դրանք զուգակցելով կոնկրետ օրինակներով՝ այս կամ այն խնդրի մասին:

7. Նշել, որ վերակառուցման անխուսափելի հետևանքներից մեկն էլ եղավ ազգային-պետական անկախության հաստատումը: Անդրադառնալ Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացին, ցույց տալով, որ դա միանգամայն օրինաչափ երևույթ էր, որի հետ զուգահեռաբար զարգացան արցախյան, բնապահպանական, սոցիալական-քաղաքական և այլ հիմնահարցերը: Կանգ առնել «Հայոց համազգային շարժման» (ՀՀՇ) առաջացման վրա, նշելով սակայն, որ այն չդարձավ իսկապես համազգային և չէր էլ կարող դառնալ, որովհետև գործնականում անհնար էր հասարակական բոլոր շերտերի շահերը, մտածումները և ձգտումները, նպատակադրումները համադրել և միացնել, շաղկապել իրար: Նշել, որ հենց այդ պատճառներով էլ ՀՀՇ-ն վերածվեց սոսկ մի հասարակական-քաղաքական կազմակերպության, որն այնուհետ գնաց անհարկի և իրեն չարդարացրած քաղաքական վայրիվերումների ճանապարհով, և ի վերջո, քաղաքականապես սպառեց իրեն: Բացատրել, որ սկզբնական շրջանում ՀՀՇ-ն վայելում էր ժողովրդի մեծամասնության վստահությունը, և դա էլ պայմանավորեց նրա հաղթանակը 1990 թ. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի (խորհրդարանի) այլընտրանքային ընտրություններում: Այստեղ ցույց տալ, որ դրանով դրվեց շրջադարձային փոփոխությունների սկիզբը հանրապետության հասարակական-քաղաքական և տնտեսական ու հոգևոր-մշակութային կյանքում: Կարևորել 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից «Հռչակագիր՝ Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունման փաստը, որով դրվեց անկախության գործընթացների սկիզբը: Նշել նաև ՀԽՍՀ-ն ՀՀ վերանվանելու կարևորությունը, ինչպես նաև այն մյուս կարևոր գործառույթների մասին, որոնք ընդգրկեցին հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը, սահմանադրական փոփոխությունների բնագավառը: Նշել շուկայական տնտեսության անցման մասին, դրա առաջ բերած դժվարությունները, ինչպես նաև թույլ տրված խոտորումները, սխալները և բացթողումներն այդ բնագավառում: Բացատրել միակուսակցական համակարգի փլուզման պատճառները և բազմակուսակցական համակարգի (Հայ հեղափոխական դաշնակցություն, սոցիալ-դեմոկրատ հնչակյան, ռամկավար-ազատական և այլ կուսակցություններ) վերահաստատման կարևորությունը՝ ժողովրդավարական գործընթացների անշրջելիության ապահովման տեսանկյունից: Նշել մի քանի տասնյակից ավելի քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների ձևավորման մասին, բերելով օրինակներ, զուգահեռաբար տալով դրանց առաջադրած ծրագրերի բնութագիրը:

Ցույց տալ ԽՍՀՄ-ի փլուզման անխուսափելիությունը և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման օրինաչափությունը: Նշել, որ Հայաստանի Հանրապետությունը իրավապես անկախացավ 1991 թ. սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով: Բացատրել, որ Հայաստանի Հանրապետությունում մտցվեց կառավարման նախագահական համակարգ: Նշել, որ Հայաստանի Հանրապետությունը ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում, անդամագրվեց ՄԱԿ-ին և ճանաչվեց աշխարհի շատ պետությունների կողմից, որոնց հետ հաստատվեցին դիվանագիտական կապեր:

8. Այս ենթաթեմայում անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում խորհրդային տնտեսական համակարգի կազմաքանդման պատճառներին և հետևանքներին: Ցույց տալ, որ հինը արագ քանդվեց, սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների թելադրանքով (հնի իներցիան, նոր մտածողության պակասը, պարտադրված պատերազմական իրավիճակը, շրջափակումը, աղետի գոտին, Ատոմակայանի, Նաիրիտի և այլ ձեռնարկությունների փակումը կամ կանգ առնելը, ինչպես նաև ղեկավարության թույլ տված լուրջ քաղաքական սխալներն ու բացթողումները) դանդաղեց, իսկ տեղ-տեղ նույնիսկ արգելակվեց նոր տնտեսական հարաբերությունների, ժողովրդավարական կառույցների արմատավորումը, շատ հիմնահարցերում դրսևորեցին ծայրահեղական, չկշռադատված և շահամոլական մոտեցումներ, գլուխ բարձրացրին այլ բացասական երևույթներ: Նշել, որ այդ ամենի հետևանքով խիստ ընկավ ժողովրդի կենսամակարդակը, և նա հայտնվեց սոցիալ-տնտեսական աննկարագրելի ծանր կացության մեջ:

Մանրամասն բացատրել, որ այստեղ, անշուշտ, բացասական դեր խաղացին նաև հանրապետության քաղաքական ղեկավար (ՀՀԾ) կազմակերպության մեջ առաջացած ռազմավարական և մարտավարական բնույթի տարաձայնությունները, որոնք հանգեցրին նրա պառակտմանը և նոր հասարակական-քաղաքական կազմակերպությունների առաջացմանը:

9. Նշել, որ ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով սկսած անկախացման գործընթացները չէին կարող անտարբեր թողնել արցախահայությանը: Մինչև բուն հարցին անցնելը բացատրել անկախության հռչակմանը նախորդած իրադարձությունների իմաստն ու բովանդակությունը: Ցույց տալով ազգային-ազատագրական պայքարի հետագա վերելքը՝ անդրադառնալ Արցախ-Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցած իրադարձություններին:

Անդրադառնալ 1988 թ. հուլիսի 18-ին Ղարաբաղի խնդրի շուրջ Մոսկվայում հրավիրված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստի աշխատանքներին, ուր սուր բանավեճ ծավալվեց հակամարտ կողմերի միջև նշված խնդրի շուրջ: Այնուհետև անդրադառնալով մի շարք հարցերի լուսաբանմանը, նշել 1989 թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի կողմից ընդունված որոշման կարևորության մասին, որով հռչակվեց Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը, որը պատմական կարևոր քայլ էր:

Այս և այլ հարցերի պարզաբանումից հետո հատուկ անդրադառնալ Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների խորհուրդների 1991 թ. սեպտեմբերի 2-ի նստաշրջանին, որն արտահայտելով Արցախի հայության կամքը, ընդունեց հռչակագիր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) կազմավորման մասին, իսկ ավելի ուշ՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին, արցախահայությունը, օգտվելով ինքնորոշման սահմանադրական իրավունքից, անցկացրեց համաժողովրդական հանրաքվե և ժողովրդի միահամուռ քվեներով հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Նշել, որ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը, որի կյանքը, սակայն, 1992 թ. ապրիլին ողբերգական մահով ընդհատվեց:

Դրանից հետո անդրադառնալ նաև Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում անցկացված ժողովրդական ընտրություններին, որոնց հիման վրա կազմվեցին խորհրդարան և կառավարություն, պաշտպանության գերագույն մարմին, ընդունվեցին դրոշ, զինանշան, օրհներգ, պետականության այլ խորհրդանիշներ:

Ամփոփելով, տալ ընթացած պատմաքաղաքական գործընթացների բնութագիրը, անել անհրաժեշտ եզրահանգումներ:

10. Ենթաթեմայում տալ պարզաբանումներ այն մասին, թե ինչպիսի դժվարություններ էր ստիպված հաղթահարել Հայաստանի Հանրապետությունը՝ ժողովրդավարության հաստատման դժվարին ճանապարհին, որի բարձրակետը դարձավ ՀՀ Սահմանադրության ընդունումը: Հատուկ ընդգծել, որ Հայաստանի ժողովրդավարացման համար շատ կարևոր էր ունենալ պետության հիմնական օրենքը: Նշել, որ Սահմանադրության ընդունմանը նախորդեցին քաղաքական տարբեր ուժերի բանավեճերը, հետո միայն այն դրվեց համաժողովրդական քվեարկության:

Տալ այդ քվեարկության արդյունքները, և դրա ընդունումը դիտել որպես համաժողովրդական կարևորության գործ, միաժամանակ շեշտելով տվյալ փաստաթղթի և դրա ընդունման գործում տեղ գտած լուրջ թերությունները: Նշել նաև այդ նույն ժամանակ կատարված Ազգային ժողովի ոչ արդար ընտրությունների մասին, երբ իշխող վարչախմբի պարտադրանքով բացարձակ միամասնություն ստացավ ՀՀԾ կուսակցության գլխավորած «Հանրապետություն» բլոկը:

Կանգ առնել նաև 1996 թ. սեպտեմբերի նախագահական ընտրություններում թույլ տրված կեղծիքներին և բացթողումներին, քաղաքական շահարկումներին, ՀՀԾ-ական իշխանավորների գործադրած բռնաճնշումներին, ընդդիմության հալածանքներին, ինչպես նաև 1998 թ. իշխանափոխության հարցերին:

Ամփոփելով հարցը՝ նշել, որ չնայած դժվարություններին, այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունը ոտք դրեց անկախ պետականության ուղին և որպես միջազգային հանրության լիարժեք և լիիրավ անդամ-երկիր՝ նպատակ ունի կերտել անկախ, բարգավաճող, ժողովրդական և իրավական ազգային պետություն:

11. Պարզաբանելով այս ենթահարցը՝ ցույց տալ Հայաստանի նորանկախ հանրապետության քաղաքական համակարգի էությունը, ուշադրություն դարձնել նրա բաղադրիչներին: Բացատրել, որ քաղաքական համակարգի էությամբ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական տիպի պետություն է, ուր իշխում է նախագահական կառավարման համակարգը, օրենքով գոյություն ունի իշխանության երեք օղակների տարանջատում և այլն: Նշել 1991 թ. խորհրդարանը ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը, որով պայմաններ ստեղծվեցին բազմակուսակցական համակարգի ձևավորման համար: Բացատրել այդ օրենքի ընդունման նշանակությունը, որով հայրենիքում գործունեության իրավունք ստացած ավանդական

հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցության, ռամկավար-ազատական կուսակցությունները և բազմաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններ, ինչպիսիք են՝ ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), Հայաստանի հանրապետական կուսակցությունը, «Ազգային ինքնորոշում» միավորումը (ԱԻՄ), սահմանադրական իրավունք միությունը և այլն: Անդրադառնալ նաև քաղաքական համակարգի մյուս օղակները կազմող կուսակցությունների մի այլ համախմբի (հայոց համազգային շարժում, Հայաստանի կոմունիստական կուսակցություն և ուրիշներ):

Ամփոփելով նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի բովանդակության գլխավոր արտահայտիչը հանդիսացավ 1995 թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրությունը՝ իր բոլոր թերություններով հանդերձ, որը հետագայում նոր փոփոխությունների ենթարկվեց և վերահաստատվեց: Բացատրել մանրամասն, որ հենց այդտեղ իրավական ձևակերպում տրվեց քաղաքական նոր համակարգին, հռչակվեց սեփականության բոլոր ձևերի հավասարություն, սահմանվեցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները և պարտականությունները: Ամփոփիչ խոսքով նշել, որ ըստ Սահմանադրության, Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Հ. Հայկական հարցը 1918 թվականին.-Եր.,«Բարձրագույն Դպրոց» հրատ., 1997. - 436 էջ:
2. Ավետիսյան Հ. Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս. - Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ.-տի հրատ., 1998. - 302 էջ:
3. Արծրունի Վ. Հայ-տաճկական պատերազմը. Հայ սպայութիւնը. Շատախ.- Եր., «Մուղնի», 2002. - 456 էջ:
4. Զոհրաբյան Է.Ա. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները. - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 1997. - 368 էջ:
5. Զոհրաբյան Է.Ա. Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ. - 1920 թ. ապրիլ). - Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2002. - 265 էջ:
6. Գալոյան Գ.Ա. Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ. - Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999. - 539 էջ:
7. Գևորգյան Հ. Մ. Դրո: Դրաստամատ Կանայանի կյանքն ու գործունեությունը. - Եր., Հեղինակային հրատարակություն, 2007 թ. - 670 էջ:
8. Դանիելյան Է.Լ. Մելքոնյան Ա.Ա. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը. -Եր., «Զանգակ - 97» հրատ., 2008. - 352 էջ:
9. Իշխանեան Ե. Լեռնային Ղարաբաղ (1917 -1920). - Եր., «Հայաստան», 1999. - 730 էջ:
10. Լանգ Դ.Մ. Ուրարտու Ք.Ջ. Հայերը: [Հայ ժողովրդի պատմություն: / խմբ. Կ. Մ. Խուդավերդյան. - Եր., «Հայկ. Հանրագիտար. գլխ. խմբագր.» , 1992. – 86 էջ:
11. Լեո, Անցյալից (Հուշեր, Թղթեր, Դատումներ).- Թիֆլիս, Հրատ. «Խորհրդային Կովկաս»-ի, 1925. - 477 էջ, նույնի՝ Եր., «Շեմ» հրատ., 2009. - 498 էջ:
12. Խատիսեան Ալ. Հայաստանի Հանրապետութեան ծագումը և զարգացումը. - Բ. Տպ.- Պէյրութ, տպ. «Համազգայինի», 1968. - 487 էջ:
13. Կարապետյան Մ.Ս. Հայաստանը 1912-1920 թվականներին. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար. - Եր., «Զանգակ -97» հրատ., 2003. - 399 էջ:
14. Կարապետյան Մ.Ս. Գևորգյան Է Գ. Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար.- Եր.,«Զանգակ-97» հրատ., 2007.- 448 էջ:
15. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը /Դասագիրք բուհերի համար (Մ.Ա.Կատվալյան, Պ.Հ.Հովհաննիսյան, Է.Գ.Մինասյան և ուրիշներ): Պրոֆ. Հ.Ռ.Սիմոնյանի խմբագրությամբ.-Եր., 2012. էջ 3-282:
16. Հակոբյան Ա.Մ. Հայաստանի Հանրապետություն (1918 -1920 թթ.).- Եր., «Հայաստան» հրատ., 1992.- 35 էջ:
17. Հակոբյան Ա. Սարգսյան Ա. Հայոց պատմություն (Հնագույն շրջանից մինչև մեր օրերը). Ուսումնական ձեռնարկ, լրամշ. հրատ.- Եր., «Ճարտարագետ» հրատ., 2004.- 352 էջ:
18. Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում.փաստաթղթերի ժող./ Մ. Ներսիսյանի խմբ.).- Եր., 1991.- 758 էջ:

19. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Պատ. խմբ. Գ.Գալոյան, Վ. Ղազախեցյան. - Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000.- 455 էջ:
20. Հովհաննիսյան Ռ.Գ. Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին Տարին, 1918-1919. - Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005. - 604 էջ:
21. Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ. Փաստաթղթեր և նյութեր//«Բանբեր Հայաստանի Արխիվների», 1 (95) - 2(96), 1993 թ.- Եր., ՀՀ կառավարության առընթեր Արխիվային Գործի Վարչություն, 1993. - 391 էջ:
22. Ս.Պողոսյան, Ա.Ասրյան, Խ.Ստեփանյան, Է.Հովհաննիսյան, Հայոց պատմություն: Ուսումնական ձեռնարկ.- Եր.,ՎՄՎ Պրինտ, 2009, էջ:
23. Սիմոնյան Ա. Հր. Զանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.).-Եր., ԵՊՀ հրատ., 2000. - 672 էջ:
24. Սարդարյան Կ. Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., «Նաիրի» հրատ., 2002. - 204 էջ:
25. Սարդարյան Կ. Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում (ինչպե՞ս կործանվեց Հայաստանի Հանրապետությունը). -Եր., «Նաիրի» հրատ., 2007. – 256 էջ:
26. Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն.- Եր., «Հայաստան» հրատ., 1993. - 704 էջ:
27. Վիրաբյան Վ.Հ. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից). - Եր., ՀՊՃՀ հրատ., 1999. - 64 էջ:
28. Վիրաբյան Վ.Հ. Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին.- Եր., «Ասողիկ» հրատ., 2003. - 228 էջ:
29. Վիրաբյան Վ.Հ. Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը (1918-1920 թթ.).-Եր., «Լուսակն» հրատ., 2006.- 288 էջ:
30. Վիրաբյան Վ.Հ. Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ.- Եր., «Լուսակն» հրատ., 2007.- 100 էջ:
31. Վիրաբյան Վ.Հ. Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918 -1920 թթ. - Եր., «Լուսակն» հրատ., 2009. - 416 էջ:
32. Վիրաբյան Վ.Հ. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար.- Եր., ԵՊՀ հրատ., 2011.- 204 էջ:
33. Քաջազնունի Յովհ. Հայաստանի Հանրապետութիւն.- Երևան, «Մ. Վարանդյան» հրատ., 1993. - 32 էջ:
34. Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян. - Ереван, Изд-во АН Армении, 1992.-756 с.
35. Ованнисян Р. Г. Международные отношения Республики Армения, 1918-1920 гг. – Ер.,: Изд-во "Тигран Мец", 2007. - 912 с.
36. Hovannisian Richard G. Armenia on the road to Independence, 1918. - Berkeley, Los Angeles: Univers. of California Press, 1967. - 364 p.
37. Hovannissian R. G. The Republic of Armenia. From Versailes to London, Vol. II. 1919 - 1920. Berkeley, Los Angeles, London: Univers. of California Press, 1982.-603p.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

ԹԵՄԱ 1. - Հին և Միջնադարյան Հայաստանի պետաքաղաքական զարգացման պատմության համառոտ ակնարկ 5

ԹԵՄԱ 2. - Հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կացությունը 1800-1870-ական թվականներին 20

ԹԵՄԱ 3. - Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Օսմանյան բռնապետության դեմ 19-րդ դարի վերջին քառորդին: Հայ քաղաքական միտքը, ազատագրական խմբակները և կազմակերպությունները: Հայ ազգային կուսակցությունների ձևավորումը 26

ԹԵՄԱ 4. - Հայաստանը 1900 -1914 թթ. 32

ԹԵՄԱ 5. - Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին (1914 -1918 թթ.): Հայոց Մեծ Եղեռնը 43

ԹԵՄԱ 6. - Հայաստանի Հանրապետությունը 1918 -1920 թթ. 56

ԹԵՄԱ 7. - Խորհրդային Հայաստանը 1920 -1939 թթ. 78

ԹԵՄԱ 8. - Հայ ժողովուրդը Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939 - 1945 թթ.) 133

ԹԵՄԱ 9. - Խորհրդային Հայաստանը 1945-1990 թթ.: ԽՍՀՄ-ի փլուզումը: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակումը 138

Գրականություն 155

ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

Խմբագիր՝ Ն. Ա. Խաչատրյան
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ Վ. Հ. Վիրաբյանի

Ստորագրված է տպագրության՝ 05.06.2013
Թուղթը՝ «օֆսեթ»: Տպագրությունը՝ ոիզո, Ֆորմատ՝ (60×84) 1/16:
Շարվածքը՝ համակարգչային:
Տառատեսակը՝ Times Armenian: 10 տպ. մամ.:
Պատվեր՝ 150 Տպաքանակ՝ 120

Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի տպարան
Երևան, Տերյան 105 Հեռ. 52-03-56

Типография Государственного Инженерного Университета Армении
Ереван, ул. Теряна 105 Тел.: 52-03-56